հատուցանելոյ ես զանանցական
վրէժս տանջանաց յանշէջ հուր
ապառնալեաց գեհենին՝ հանդերձ
ամ՟ գործակցօք քովք. առաջնովք
միջնովք և վերջնովք: Այլ մեք
այսպէս գիտեմք զած՟, և 'ի սոյն հա
ւատամք յանկերկեայս: Ահ՝ որ ա-
րար զաշխարհս, նոյն եկն և ծնաւ
'ի սուրբ կուսէն մարիամայ, յառա
ջագոյն նկատելով Մարգարէից,
առանց իրիք պատճառանաց մարմ՟
նաւոր կարգի: Որպէս յոչ ինչէ
զայս մեծամարմին աշխարհս, սոյն-
պէս առանց իրիք մարմնական միջ-
նորդի էառ մարմին յանխորձ 'ի
կուսէն: Ճշմարտիւ՝ և ոչ ստուե-
րական երևմամբ. էր ած՟ Ճշմարիտ.
ոչ 'ի լինելն մարդ՝ կորոյս զած՟ու-
թիւնն. այլ նոյն է մի: Այլ
քանզի ոչ որ կարէր տեսանել զան
տեսանելին, և մերձենալ յանմեր-
ձենալին, եկն եմուտ ընդ մերով
մարդ-

մարդկութեան, զի մեք մտցուք ընդ նորա ածութիւն. Մէ ինչ անարգանս համարեցաւ զգենուլ զիւր ստեղծուած մարմինս. այլ մեծարեց եւս զածաստեղծ զիւր գործ. Մէ առ սակաւ սակաւ շնորհեաց ինչ սմա զանմահութեան պատիւն եւս զանմարմին հրեշտակաց, այլ միայնգամայն զբոլոր բնութիւն՝ մարմնոյ շնչոյ եւ հոգւոյ զգեցաւ եւ միաբանեաց ընդ ածութեն միութիւն, եւ ոչ երկուութիւն։ Որ է այսուհետեւ մի գիտեմք զՔրիստոսն, որ էր յառաջ քան զաշխարհս, նոյն եւ այսօր. Յս. Քս. որ միմնով փրկեաց զբոլոր աշխարհս, սա՛ եկն կամաւ ի մահ. եւ որպէս ինքն Ոձութիւնն գիտէ՝ թանձրացաւ յանարատ կուսէն. ծնաւ եւ պատեցաւ ի խանձարուրս եւ եդաւ ի մսուրս. եւ շարժեաց էած զմոգսն յարեւելից յերկրպագութիւն. սնաւ եւս զողայ կաթամբ. աճեաց եւ մե

մեծացաւ ամս երեսուն. մկրտեցաւ 'ի Յովհաննէ յամենորդւոյն 'ի յորդանան գետ. արար նշանս և արուեստս մեծամեծս 'ի մէջ հրէից. մատնեցաւ քահանայից. դատեցաւ 'ի պիղատոսէ պոնտացւոյ. խաչեցաւ. մեռաւ. թաղեցաւ. յարեաւ յաւուր երրորդի. երևեցաւ երկոտասան աշակերտացն, և այլոց բազմայն աւելի քան զհինգ հարիւրոցըն երևէր նոցա ցանկ զաւուրս քառասուն. վերացաւ 'ի լեռնէն ձիթենեաց յերկինս՝ յանդիման երոց Աշակերտացն. եւ և նստաւ 'ի հայրենի աթոռն. խոստացաւ երկրորդ անգամ՝ գալ ահաւոր զօրութեամբ՝ յարուցանել զմեռեալս, նորոգել զբոլոր աշխարհս, առնել դատաստան արդար 'ի մէջ արդարոց և մեղաւորաց, տալ պարգևս արժանաւորաց, և հատուցանել պատիժս չարագործաց. Որ այսմ ամենայնի բարերարութեանց ոչ

հա

հաճոյանս, յայսմ հաճոյոյ զմեզ ոչ ոք կարէ խախտել․ ոչ հրեշտակք, ոչ մարդիկ, ոչ սուր, ոչ հուր, ոչ ջուր, և ոչ ամենայն ինչ և են դառն հարուածք : Ամենայն ինչք և ստացուածք մեր 'ի ձեռս քո, և մարմինք մեր առաջի քո կան իբր կամաց քոց․ արա զինչ և կամիս Եթէ սոյլն հաճոյականք Թողուս, ոչ յերկրի, այլ Տէր փոխանակեսցէ ընդ քեզ : և ոչ յերկինս, այլ Ես փոխանակեսցէ ընդ Յի Քի, որ չէ այլ ած բաց 'ի նմանէ : Արդ եթէ յետ այսր մեծի վկայութեան՝ այլ ինչ հարցանես, աճապիկ կամք զորոր մարմինս մեր տուեալ 'ի ձեռս քո․ փոփոխադակի արա զինչ և կամիս․ 'ի քէն սանձանք, և 'ի մէնջ յանձնառութիւնք․ սուր քո, և պարանոց մեր : Չեմք ինչ մեք լաւ քան զառաջինսն՝ որ յայսր վկայութեան վերոյ եղեն զինչս և զստացուածս և զմարմինս իւրեանց : Ոչ եթէ

և

և անմահ իսկ էաք, մարթ էր և
մեռանիլ մեզ վասն սիրոյն Քի․
քանզի նա անմահ էր և այնչափ սի-
րեաց զմեզ, մինչև զմահ յանձն
էառ, զի մեք նորա մահուամբն՝
յաւիտենական մահուանէն ապ-
րեսցուք։ Եւ եթէ նա յիւր անմա-
հութիւնն ոչ խնայեաց, մեք զի
կամօք եղաք մահկանացուք, կամօք
մեռցուք վասն սիրոյ նորա, զի կա-
մօք յանձն առցէ զմեզ յիւր ան-
մահութիւնն։ Մեռցուք իբրև
զմահկանացուս, զի ընկալցի զմեր
մահն իբրև զանմահից։ Նմա դու-
յեա այսր ամենայնի՝ զմեզ բանիճ
այլ մի հարցանեք․ զի ոչ եթէ էր
մարդոյ է ուխտ հաճառոյ մերոց
եթէ պատրիցիմք իբրև զօղս,
այլ՝ անյուծութեր ընդ նմ․ որում
չէք հնար քակել և 'ի բաց ելանել․
ոչ պժմ և ոչ առ յապայ և ոչ
յաւիտեանս և ոչ յաւիտենից յա-
ւիտեանս։ Ի սմին մեծի հաւանու-
թե

թէ՝ ո՛մ բազմութեան միաբանեաց 'ի մեծամեծաց մինչև 'ի փոքունս. անսուտ երդմամբ եդին վկայութ՛ կենօք և մահու 'ի նմին կալ հաս-տատուն: Ո՞չ իբրև եհաս նամակն յարքունիսն և ընթերցան 'ի մեծի խորաստանին, բազումք այնոքիկ էին, որ իբրև լսէին, դողէին զպա-տասխանին: Ոչ պէտ և երկնչէին յահէ տէրութեան, սակայն ծածուկ առ միմեանս զնոյն վկայութիւնս գովութեանց տային. առաւել քան ընդ ճարտարաբանութիւնն՝ և ըզ համարձակութիւն աներկիւղու-թեան զարմանային: Ո՛չ բազումք աշարեկեալ՝ սկսան զրահել այն դապէս. և զնոյն շշնջիւն լսէին յամենայն շրթանց:

Յաղագս այնր պատճառի թէ ՚ի հասանելն պա-
տանեկական նամակին հաճախագոյնս,
Գրգռեալ լինագանոյն ՚ի մոգպետեանն ազա-
նակէօխ խոշորագոյն զնոսա յերկրպագութիւն ա-
րեգական.

Իսկ չարաչար մոզպեան հան-
դերձ մեծ հարստութեան՝
ընչեաց չարախօսութիւն և բորբո-
քեաց զթագաւորն իբրև զհուր
անշիջանելի։ Եւ սկսաւ կրճնել
զատամունս իբրև զօրհասական վի-
րաւոր. Եւ յայտ յանդիման ձայն
արձակեաց առ մեծ հրապարակն և
ասէ. զխաւեմ ես զչարութիւն բազ-
մութեան մարդկանս՝ որ թերահա-
ւատ են ՚ի մերոց օրինացս, և զկնի
կախարդութեան մոլորեալ անդար-
ձութիւ. և իմ եղեալ է ՚ի մտի, ե-
թէ ոչ թողացուցից ՚ի մեծամեծաց
հարուածոցն, մինչև ակամայ ՚ի
բաց կացցեն յայնպիսի վրիպակ
օրինաց. և եթէ կարէ ոք ՚ի մերձա-
ւորաց իցէ, զնոյն անցս և ընդ նա

 ան

անցուցից։ Յայնժամ ծերն դառ-
նացեալ՝ բանս 'ի ներքս ընկէց և
ասէ ցԹագաւորն, առ ի՞նչ է քո
այդ մեծ տրտմութիւնդ․ զի եթէ
կայսր ո՛չ եղանէ ըստ քո հրաման,
և հո՛նք կան քեզ 'ի ծառայութե՛,
ո՞ր մարդ է յերկրի՝ եթէ կարօղ է
ընդդէմ՝ դառնալ քում հրամա-
նիդ։ տիրաբար հրաման տուր 'ի
ներքս, և զի՞մ՝ որ ինչ ասես՝ վաղ
վաղակի կատարի։ Եւ Թագաւորն
անդէն 'ի ներքս կոչեցեալ զդպրա
պետն՝ հրամայէր գրել հրովարտակ
ո՛չ ըստ սովորութե՛ն, այլ բանս
զայրալինս լիրբ և առ ատելիս և
անպիտանս, չյիշելով ամենևին
մեծամեծ վաստակս տիրանէր մարդ-
կանն. այլ միայն կոչելոյ հրաման
տայր յականէ յանուանէ՝ զորս
ինքն ճանաչէր։ որոց անուանքն են
այսոքիկ։ 'Ի տոհմէն Արծրունեց՝
Մերշապուհ անուն։ 'ի տոհմէն
Սիւնեաց Վասակ անուն։ 'ի տոհ-

 մէն

մէն Ռշտունեաց Ատակ անունն․
'ի տոհմէն Խորխոռունեց Գադէ
շոյ անուն․ 'ի տոհմէն Մամիկոնէից
Վարդան անուն․ 'ի տոհմէն Մո-
կաց Արտակ անուն․ 'ի տոհմէն
Ապահունեաց Մանէճ անուն․ 'ի
տոհմէն Ամատունեաց Վահան
անուն․ 'ի տոհմէն Վահաւունեաց
Գիւտ անուն․ 'ի տոհմէն Անձե-
ւացեաց Շմաւոն անուն․ Զայս
նախարարքս յականէ յանուանէ
կոչեցին 'ի դուռն արքունի․ եւ
կէսքն առ նմա լոկ էին անդէն 'ի
կարաւանին․ եւ այլք՝ 'ի կողմանց 'ի
հիւսիսոյ 'ի հոնաց պահակին Թո-
ղեալ էր զոմանս 'ի նախարարացն
անդէն յաշխարհին Հայոց․ Արդ՝
Թէպէտ ոչ համագունդ 'ի միոջ
վայրի դիպեցան ամենեքեան, սա-
կայն յառաջագոյն գիտացեալ ըզ-
խորհուրդ չարաբարոյ բռնաւորին,
եւ զհեռաւորսն իբրեւ զմերձաւոր՝
'ի միջոց վայրի առ միմեանս համա

րէ

րէին։ Եւ 'ի ձեռն սոյն Յովսեփայ Եպիսկոպոսի նովին ուխտիւ հաստատեալ, խաղային գնային յերաքանչիւր տեղեաց 'ի դուռն արքունի։ Եւ յայնժամ փութային վասն եղբարց և որդւոց և սիրելի դայեկասուն բնակչացն՝ որ չարաչար կային 'ի մեծի նեղութ̃ն։ Վասն որոյ և նոքա զանձինս 'ի մահ մատնեյին ոչ ինչ զանդիտելով երկեզանալի վատասիրտս. այլ՝ յոյժ քաջութ̃բ պնդեցին զանձինս, զի թերևս կարասցեն փրկել զնոսա 'ի մեծամեծ հարուածոցն։ Եւ երև հասին 'ի դուռն արքունի, և 'ի մեծի շփոթու զատկին յանդիման լինէին թագաւորին։ Բայց թէպէտ և տեսանէին զեղբարս իւրեանց 'ի մեծ վիշտս տառապանաց՝ (որ վասն անուանն Քրի ճգնեալք էին պնդապէս) ոչ ինչ տրտում և տխուր զերեսս ցուցանէին հրապարակին։ Եւ որչափ նոքա զուարթագին երև

րևէին ամենեցուն, առաւել զար-
մանալին չարասէրքն։ Այ՜ զի օրէնք
էին յառաջ ժամանակաւ, յորժամ
'ի Հայոց այրուձի 'ի դուռն երթայր
'ի ձեռն պատուաւոր զօրագլխի ու-
րուք, այր ընդ յառաջ յղէր և
հարցանէր զողջոյն և զխաղաղութն
աշխարհին Հայոց. և երկիցս և ե-
րիցս անգամ զնոյն առնէր. և ըզ-
հանդէս զնդին տեսանէր ինքնին.
և յառաջքան 'ի գործ պատերազ-
մին հասանել, զգալն առ նա՝ մեծ
շնորհակալութիւն համարէր, և
առաջի թագաւորացն և ամ մեծա
մեծացն՝ գովութիւն մատուցանէր,
և յիշէր զնախնեացն վաստակս, և
զառն առն քաջութիւն պատմէր
նցա։ Իսկ այն օր և մի ինչ ամենևին
յայնմանէ ոչ յիշեաց. այլ իբրև
զչարադև մի ոչ դադարէր յուզել
և շարժել զբուք ձմերայնոյ. ո՛չ և
Նմանեալ իսկ էր ծովածուփ ալե-
կոծ խռովութեն. ոչ դուզնաքեայ
վէր

վեր 'ի վերոյ, այլ անդստին յանդն
գոց բարձրանալ փրփրալ կուտա-
կել՝ վիշապաձայն որոտալով, գա-
ղանաբար գոչելով՝ առհասարակ
դողացուցանէր զտեսղերակն զիւր
իշխանութիւնն, որպէս զի փլեալ
տարածանիցի՝ համատարած ամ̃'ի
վերայ լերանց՝ խորոց ձորոց, ապա
կանել միանգամայն և զլայնութի̃
դաշտային մայրլչութեն. Ո՛ռնչելով
բարբառ արձակեաց և ասէ, երդու-
եալ իմ յարեգակն 'ի մեծն ած.
(որ ճառագայթիւքն իւրովք լու-
սաւորէ զամ̃՝ տիեզերս, և ջերմու-
թ̃ը կենդանածնէ զամ̃ գոյացեալս)
եթէ վաղիւ ընդ առաւօտս ընդ
երեւումն սքանչելւոյն՝ ընդ իս զիւ-
րաքանչիւր ծունր նմա ո՛չ կրկնես
ջիք խոստովանելով զնա ած, ոչ
ինչ թողացուցից ձեր զամ̃ ներդու-
թ̃իս չարչարանաց 'ի վերայ ածելով.
մինչ ակամայ կատարեսջիք զկամս
հրամանաց իմոց.

Յաղագս այնր պատճառի ըստ ո՞րպէսի բանս
’ի մէջ բերեալ համառօտութեան՝ յորդորելով
զորդին կամաց, չղանձրանալով բանա՛ ընծանէ։

Իսկ հաճատացեալքն հաստա-
տեալք ’ի Քն, ո՛չ ’ի սառնամա
նեաց ձմերայնոյն հովանային, և
ո՛չ ’ի տապոյ խորշակին ջեռնուլին,
և ո՛չ յահագին ձայնէն սարսէին,
և ո՛չ սպառնալեաց տանջանացն
զանգիտէին,. այլ ’ի վեր հայեցեալք՝
զօրութիւնն Քի յօգնութիւն ե-
կեալ տեսանէին. և զուարթագին
դիմօք և համեստ բանիւք՝ յառաջ
մատուցեալ տային պատասխանի
Թագաւորին։ Խնդրեմք ’ի քէն
ա՛րքայ քաջ, ո՛ւնկն դիր սակաւիկ
մի բանից մերոց, և քաղցրութե՛
լուր՝ զոր ասելոց եմք։ Քանզի յի-
շեցուցանեմք քեզ զժամանակն
Շապհոյ արքայից արքայի, որ էր
հայր հա՛ւոյ քո յազկերտի. և ետ
նմա Տր զերկիրն հայոց ’ի ծառայ-

ութիւն։ Սովին օրինօք՝ որով և ծնք մեք և վարիմք այժմ, և հարքն մեր և հաւք հարանց մերոց կացին նմա 'ի ծառայութեան վաստակս, և սիրով կատարէին զամ հրամանս բանի նորա, և բազում անգամ 'ի նմանէ մեծապատիւ լինէին։ Եւ յայնց ժամանակաց մինչև 'ի քո հայրենի աթոռդ՝ և մեք զնոյն ծառայութիւն ծառայեցաք. բայց թերևս քեզ լաւագոյն քան զառաջնոյն։ Զայս ասելով ցուցանէին զքաջութիւն արութեանց լաւագոյն քան զառաջնոցն՝ ըստ զինուորական կարգին։ Իսկ զմաքսից և զսակից և որ այլ ևս են հարկք աշխարհին, բազմագոյն քան առ հարցն նորա երթայր յարքունիս։ Նաև 'ի նր եկեղեցեացն՝ որ էր ազատ 'ի ԲԺ ՃԾ կարգի նախնեացն մերոց իսկզբանէ, և դու ընդ հաւ կաւ եղեր, և մեք առ սէր քոյդ տէրութեանդ՝ ոչ ինչ ընդդիմացաք։

Արդ

Արդ՝ վասն է՞ր յուղեալ իցէ ցասուցմունս այս ձեր՝ 'ի վերայ մեր. ասա դու մեզ զպատճառ վնասուն՝ եթէ օրէն մեր իցեն պատճառք անվաստակ լինելոյ առաջի քո: Իսկ չարադեւն լի ձեր նենգութեամբ՝ զերեսս 'ի միւս կողմն դարձուցեալ ասէ, վնաս համարիմ ընդունել 'ի գանձ արքունի զհարկ աշխարհին ձերոյ, և անօգուտ զքաջութիւն արութեան ձերոյ. քանզի տգիտաբար մոլորեալ էք 'ի մեր ճշմարիտ օրինացս: զաստուածս անարգէք, և զկրակ սպանանէք, և զջուրս պղծէք, և զմեռեալս 'ի հող թաղեալ՝ զերկիր ապականէք, և քրտիկար չառնելով՝ տայք խարամանւոյն, և որ մեծն է քան զամենայն՝ համապատ 'ի կանայս ոչ մերձենալով: Մեծապէս լինի դիւացն խնդութիւն՝ չխրատելով ձեր՝ չպահելով զամենայն կարգս մոգացս: Տեսանեմ զձեզ իբրև զխաշինս ցրուեալս և վարատեալս յանապա-

տի

տի. և յայժ զեղջէ մտաց իմոց՝ ե-
թէ դուցէ պծքն բարկացնել վասն
ձեր 'ի մէնջ վրէժս առնուցուն.
Այլ դուք թէ կամիք կեալ և կե-
ցուցանել զանձինս ձեր, և մեծա-
րանօք անդրէն յուղարկել, զոր
ասացի՝ վաղիճ վաղվաղակի կատա-
րեցէք: Յայնժամ երանելի Նախա
րարքն՝ առ հասարակ զձայնս իւ-
րեանց բարձին և ասեն յանդիման
ամենեցուն. մի դու ո՛րքայ՝ և մի
դու զայդ բանդ այլ առ մեզ ասեր.
քանզի ոչ է եկեղեցի շինուած
մարդկան. որպէս դուդ այլ ընդ
այլոյ կարծես թէ արեգակն ած է.
ոչ միայն զի ած չէ, այլև ոչ կեն-
դանի: Իսկ՝ եկեղեցիք ոչ են պար
գևք թագաւորաց և արուեստք
ճարտարութեան. և ոչ գիտաք ի-
մաստնոց և աճար քաջութեն զինո
ճորաց. և ոչ պատիր խաբէութի
դիւաց. Նաև ընաւ իսկ ամենևին
զինչ և ասես յերկրաւորացս կամ
'ի

’ի վեհից կամ ’ի վատթարաց, ընաճ
ուրուք ’ի նոցանէ եկեղեցի ոչ_
գոյի ։ Ո՛րչ՝ շնորհք են մեծին
Ո.Տ. ոչ միում ումեք ’ի մարդկա_
նէ տուեալ, այլ՝ ամ բանաւոր ազ_
գաց՝ որք վիճակեալք են ’ի բնա_
կութիւն ներքոյ արեգական։ Հի_
մունք նորա եղեալ են ’ի վերայ
հաստատուն վիմի. ոչ ներքինք շար_
ժել կարեն, և ոչ վերինք դղրդե_
ցուցանեն։ Ի՞նչ զոր երկինք և եր_
կիր ոչ դողացուցանէ, մի՛ որ ’ի
մարդկանէ խրոխտասցի յաղթել
նմա։ Հապայ, որով օրինանակաւ
զինչ կամիս տանել՝ կատարեա՛.
պատրաստ եմք ամենեքեան տա_
ամ՝ մեքենայս հարուածոց տանջա_
նաց՝ զոր սպառնայցես. ոչ միայն ’ի
չարչարել, այլև ’ի մեռանել։ և
եթէ դարձեալ զնոյն բան հարցցես,
’ի միջէ միջէ լռեցես առաւել
քան զդոյն պատասխանի։ Յայն_
ժամ՝ դառնայցէ թագաւորն քան

գլողի, փլուզանէր անդէն 'ի փորի գծով կամաւոր մաղձոյն իւրոյ. և ընդ քիթն և ընդ բերանն առ հասարակ գոլորշի ջերմախառն ելանէր՝ իբրև 'ի սաստիկ հնոցէ՝ ծուխ թանձրացեալ. Այլ առ չհանդուրժել սրտին՝ կոտորէր զջլութիւն մարմնոյն, և ծակոտէր զքաղմամբ թեր աման խորհրդոյն. Ցրուէր և վատնէր զամ խորհուրդն նենգութն. և զոր ո՛չ երբէք կամէր իւրոց սիրելեացն յայտնել, ակամայ առաջի ծառայիցն Քի մերկանայր և ցնէր զամ կարգաւ Երեքկնէր և չորեքկնէր զանսուտ երդումն յարեգակն և ասէր այսպէս. ո՛չ կարէք աճերել դուք զանխար ամուրս իմ. և ո՛չ որում ցանկացեալ էք՝ վաղվաղակի տամ գտանել ձեզ. այլ զամենեսեան զձեզ և որ 'ի գնդիս են՝ չարաչար կապանօք 'ի սաստատան տամ անցուցանել Ը անձանապարհ տեղիս, ուր և բա-

զումք 'ի ձէնջ 'ի խորշակէ սատա-
կեսցին յերթալն. և մնացեալքն
անկցին 'ի բերդս ամուրս և 'ի
բանտս անելս։ Եւ 'ի ձեր աշխարհն
առաքեցից զօրս անթիւս հանդերձ
բազում փղօք. և զկնի և զորդիս
'ի խուժաստան խաղացուցանել.
և զեկեղեցիս՝ և զոր անուանէք
վկայարանս, քակեցից քանդեցից
և յապականութիւն դարձուցից։
Եւ եթէ ոք ընդդէմ դարձեալ
գայի, կախան եղեալ գազանաց
անողորմ մեռցի։ Եւ եւ զոմ ա-
սացեալս արարից, և կատարեցից
առ մնացորդս աշխարհին։ Եւ վաղ
վաղակի հրամայեաց հանել զպա-
տուական նախարարն՝ մեծաւ ան
արգանօք յերեսաց իւրոց, և զգու-
շութիւ հրամանն տուեալ դահճա-
պետին, առանց կապանաց յիւրա-
քանչիւր վանս պահել։ Եւ ինքն
զառածեալ՝ անդրէն դառնայր ան
մխիթար տրամութիւ յօթևանս

ան

անկանէր։ Իսկ հաճատայեալքն ճշմարտութեն 'ի Քս՝ ոչ ինչ թե բաւհաճատէին յառաջին խրատու նը վարդապետացն իւրեանց․ այլ տակաւին խնդիր էին հնարիցն, թէ որպէս զանձինս և զիւրեալս հանցեն 'ի մեծ նեղութենէն։ Ոմն բազում անգամ ջանալով, և մեծամեծայն՝ որ օգնական էին նոցա 'ի դրանն արքունի, խոստմունս մեծամեծս առաջի դնէին նոցա՝ առ 'ի յոյս կարասց և ոչ սակաւ զանձըս առժամայն ծախէին 'ի նոսա։ Ոմն իբրև յամ կողմանց եկն փակեցան անել արդելանն նը, յայնժամ զխորհուրդն արքահամու 'ի մէջ առեալ աղաղակէին և ասէին 'ի սիրտս իւրեանց։ Մենեցուն մեր նուէրեալ զերդքարս և զորդիս և զմեզ սիրելիս ըն կապանօք իբրև զսահակ 'ի վերայ սուրբ սեղանոյն. ընկալ զը զբանաւոր պատարագս մեր. և մի տար զեկեղեցի քո յայլն

կատականաց անօրէն իշխանին այսորիկ.

Յաղագս այնր պատմէ թէ մինչ զգայէն զներքին խորհուրդս չարին, յառաջել յՄ. որ զծածուկս գիտէ՝ ոչ լսողացն վախ ճան՝ որպէս թէ յառաջագոյն զիմաս նոյն յեբնոյթ: ստոյգ պատրաստեալ չարեն հեղոյր ստալջէ նոցա զվարքնս ծածկաձևոյս, և հրաման տայր մեզ աց՝ ՀՐՋԵԼ զԲրիտանացւոյն յաղանդն եւրեանց.

Մի ոմն ներքինի 'ի խորհրդակցացն արքայի՝ 'ի ծածուկ ունէր զանքակտէրն Բ́րէ. քանզի մի կրտսեալ իսկ էր յաճազանն կենդանի, և մեծապէս հոգատանէր հնարից կենաց վշտացելոցն. Նա՛ երբեստուգեաց ճշմարտիւ եթէ զոր սպառնացաւ Թագաւորն զնմ չարեան, կամի անցուցանել ընդ աշխարհն հայոց, (թէպէտ և ոչ ամենեցուն, այլ՝ սակաւուց 'ի նոցանէ) խրատ ետ և ուսոյց ելս հնարից

րից, զի անգամ մի 'ի նեղութենէ զանձինս ապրեցուսցեն. Իսկ մինչ դեռ գունդն կազմէին որ ընդսա չկօթակ արասցեն յանդարձ ստա֊ րութիւն, (որպէս և բազում նա֊ խարարս 'ի վրաց աշխարհէն արա֊ րին) 'ի նմին ժամանակի դուժկան հասանէր 'ի կողմանցն քուշանաց, թէ գունդ հատաւ 'ի թշնամեացն՝ որ եկին աւերել զբազում գաւառս արքունի. և այս լինէր մեծ օգնու֊ թիւն նմա յերկնից. Իսկ անօրէնն՝ Յեպեաղ տագնապէր զպյրուձին յառաջ արձակել. և ինքն փութով տոէպ զհետ երթայր. և խոր խո֊ ցեալ՝ զխորհուրդն ցրուէր զառա֊ ջին հաստատուն երդմանն. Իսկ երկիւղածայն Տեառն զայս տե֊ սեալ, մեծաւ յուսով ազօթս առ֊ նէին և ասէին միաբան. դու Տէր ամի՝ որ գիտես զծածուկս սրտից մարդկան, և յայտնի են առաջի քո ամ՝ աներևոյթք խորհրդոյ, և ոչ

ինչ

ինչ խնդրես վկայութիւն յերևելեացս, որպէս զի և զանգործս մեր տեսանեն աչք քո։ Արդ՝ առաջի քո հեղումք զխնդրուածս. ընկալ Տէր զծածուկ աղօթս մեր, և կատարեա զմեզ 'ի հաճոյս պատուիրանաց քոց, զի ամենայն չարն, որ խրոխտեալ մարտնչի ընդ մեզ իշխանութիւն անօրէնս։ Շարժեա Տէր զկամակոր խորհուրդս նենգաւորին, և խափանեա զկամս ամբարշտութեան. և դարձո զմեզ խաղաղական խորհրդով անդրէն 'ի սուրբ եկեղեցին, զի մի՛ յանկարծակի յափշտակեալ աւերեսցի չարաչար 'ի թշնամեաց։ Եւ անձամբ իւրեանց զայս ուխտ եղեալ անքակութիւն ընդ Ա. Յ, հաստատուն կային ըստ առաջին խորհրդոյն. պատգամ 'ի ներքս յղէին զնոյն խրատուին իւրեանց. իբրու թէ կատարեսցին կամք անօրէնութեան նորա։ Զայն իբրև լուաւ, յոյժ ցնծացեալ

 բարձ

քարձրացած Թադաւորին, կարծե-
ցեալ զգլխն հասանել նմա յօգնու-
Թիւն՝ շրջել և աճերել զհաստա-
տուն խորհուրդս ծառայիցն Ս.Յ
Ո՜ ահա մատուցանէին երկրպա-
գուԹիւն արեգական՝ պատուեալ
զնա զոհիւք և ամ՝ օրինօք մոգու-
Թեն։ Ո՜ զայս ոչ կարաց իմանալ
ցնորեալն, Թէ անստուեր լոյս արե-
գականն արդարուԹեն՝ սպառէր
և մաշէր զխաւար խորհուրդս նր,
և եղծեալ ապականէր զամ՝ խեղա-
Թիւր կամս նորա։ Ո՜ կուրացեալ
'ի ճշմարիտ յայտնուԹէն, ոչ իմա-
ցեալ զպատրանս խորէուԹեանն՝
որով վրիպեաց. հեղոյր առաջի
նոցա զպարգևս երկրաւորս. և վե-
րատին զպատիւ և զգահս ամենե-
ցուն նորոգէր յառաջ մատուցա-
նելով երևելի առնել ընդ ամ՝ տիե-
զերական իշխանուԹեն. և անբաւ
առատուԹբ ազարակս և աւանս
միում միում նոցա յարքունուստ

շնորհէր. և սիրելիս և բարեկամս կոչեալք զնոսա. և առ հոլոս յանդգնութեան միայն կամակորութեան՝ կարծէր թէ փոխանակեսցի ճշմարտութիւնն ընդ ստութեան: Իսկ զայս արարեալ՝ բազում այրուձի գումարէր ընդ նոսա. և ՚ի մտօք ոչ սակաւս աճելի քան զեօթն հարիւր մարդապետս յղէր ՚ի նոսա. և զմեծ ոմն իշխան՝ մեղապետ կացուցանէր ՚ի վերայ նոցա: Խոնարհէր և աղաչէր պատուիրելով, եթէ մինչ ես ՚ի պատերազմէս դարձեալ դայցեմ խաղաղութիւն, ձեր արարեալ և կատարեալ լիցի զամենայն բան կամաց իմոց: Իսկ այսպէս շքով և պատուով առաջնորդէր նոցա զեր կայնութիւն ճանապարհին յանդրէն յերկիր հայոց: Իսկ իւքն աճե տիս խնդալից առաքէր յաղթուշանս բազում: գրէր և ցուցանէր մօղաց և մեղապետաց և ամենայն
մե

մեծամեծ կողմանց կողմանց աշխար-
հաց, որպէս դից օգնականութիւն
գործ քաջութեան իմոյ յառաջ
մատուցեալ։ Իսկ խորհրդականքն
այնուհետև յարուցեալք յիւրա-
քանչիւր խաճարպյին դարանացն,
իղձք լինէին փափլաղակլի զհրաման-
ըն կատարել։ Զայն աւարեալ
յաշխարհս հեռաւորս, մինչդա-
մայն խաղալ գնալ յերկիրն արև-
մտից։ Եւ մինչև հասեալ էին
յաշխարհն մեծ հայոց, փայտս ըն-
կենուլին և զլիծակս արկնէին եթէ
ո՞ր լինը՝ որում դասու հասցէ
յաշակերտութիւն։ զի առհասա-
րակ հրաման առեալ էր յարքու-
նուստ, որպէս հայոց աշխարհին,
նոյնպէս վրաց և աղուանից և լփ-
նաց. աղձնեաց և կորդուաց և ծօ-
փէից և առաւասան. և այլ և որ ևս
ուրեք ուրեք 'ի ծածուկ յիշխանու-
թեան պարսից ունէին զքրիստոնէ-
ութիւն։ Եւ անդէն յարձակ-
մամբ

մամբ յաճախ առնուլ փութային զգանձս որ եկեղեցեայն. և այնու հետև միմեանց պատահէին իւրև զևս, և լինէր գունդ զօրաց բազմաց ։ Եւ չարասէրն սատանայ՝ իւրև զզօրավար 'ի մէջ նոցա երևէր, և անդադար յորդորելով զամենեսեան ձեպեալ փութացուցանէր ։ Մէտ եղեալ զժամանակն զամին վեցերորդ՝ տագնապէին և տխրէին արքունի հրամանաւ մինչև 'ի նաւաստարդէ 'ի նաւաստիդ ։ Դաէ, յորժամ տեղիս որ էին ընդ իշխանութիւն թագաւորին մեծի, բարձցին կարգ եկեղեցւոյ. փակեացին և կնքեցին դրունք որ տաճարաց. գրով համարեցին նուիրել ապաքէն յարքունիս ։ Լռեցին ձայնք սաղմոսաց. և դադարեցին ընթերցուածք անսուտ մարգարէիցն ։ Քահանայք մի իշխեցին 'ի տունս իւրեանց ուսուցանել զժողովուրդս ։ Եւ հաւատացեալք 'ի

քո՛ արք և կանայք՝ որ բնակեալ_
են յեւրաքանչիւր մենարանս, փո
խեսցեն զհանդերձս իւրեանց՝ ըստ
աշխարհական կարգաց։ Դարձեալ
և կանայք նախարարացն՝ կացցեն
զուսումն վարդապետութեան մոգուց։
Ուստերք և դստերք ազատաց և
շինականաց՝ կրթեսցին 'ի հրահան
գս նոցուն մոգուց։ Վարժեսցին
և արգելցին օրէնք որ ամուսնութե,
զոր ունէին 'ի նախնեացն ըստ կարգի
Քրիստոնէութե։ Այլ՝ փոխանակ
միոյ կնոջ՝ բազում կանայս արաս_
ցեն ազգ հայոց։ Դստերք՝ հարց
լինիցին. և քորք՝ եղբարց. և մարք
մի ելցեն յորդւոց. այլ և թոռունք
ելցեն յանկողինս հաւուց։ Պատ_
րուճակք՝ անյապաղ մի մեռցին. ե_
թէ յօդեաց և եթէ յայծեաց և
եթէ յարջառոց, եթէ 'ի հաւուց
և եթէ 'ի խոզից։ Հուր ատանց
փանդամի մի զանկցին։ Ձեռք և
քակոյք 'ի կրակ մի եկեսցեն։
Ջեռք

Ձեռք տասանց կոխմիզդ մի լուծա-
ցին. Ընձըլք և աղուէսք և նապաս-
տակք մի մեռցին. Օձք և մողէզք՝
գորտք և մրջմունք՝ և որ այլ ևս
խառնաբնդոր բազմածնիք են, մի
կացցեն. այլ՝ թուով և համարով
'ի մէջ բերցեն ըստ արքունի չա-
փոյն. Եւ որ այլ ևս ինչ սպառք
լիցին կամ՝ զոհից կամ՝ սպանդից
ըստ սոնականին և ըստ կապծաթիէ
մեխրաչափ կարգին։ Զայս ամ՝
զոր ասացաք, առ ժամանակ մի մին
չև 'ի գլուխ տարւոյն կատարեսցեն
ամենեքեան. և զայն ամ՝ առ յապա
պատրաստեսցեն։ Իսկ՝ զայս ամ՝
հրաման պատուիրանաց առեալ
մոգաց և մոգպետաց, զտիւ և զգի
շեր փութային հասանել յաշխարհն
հայոց. և յոյժ խնդութեամբ՝ ոչ եր
բէք յագէին երկայնութեան ճանա-
պարհին։

## Գլուխ Գ.

[illegible]

Թէպէտ և ոչ կարեմք բաւական առնել զմտաւ՝ չարեացն՝ որ անցք անցին անդէն ՚ի կարաւանին ընդ դուռնդն Հայոց, ապա և ոչ լռել կամիմք ծածկելով զվիշտս նեղութեան. այլ՝ աստացուք փոքր ՚ի շատէ, զի ձայնակից լիցուք այնոցիկ՝ որք դառնապէս զմեզ ողբային. զի և դու երբեք լռեցես, ոչ սակաւ արտասուս հեղուս ՚ի վերայ ազգիս թշուառութեան: Օ՜ի ահա անդէն ՚ի մեծ բանակին պարսից՝ յազգաց ազգաց որք էին հաւատացեալ ՚ի նա ահեաբանն

րանն ՚ԲՆ, իբրեւ տեսին զչար յանձ-
նառութիւնն հայոց, յոյժ հարան
՚ի միտս իւրեանց. եւ կործանեցան
անկան ՚ի վերայ երեսաց իւրեանց.
Բազումք ՚ինոցանէ թախծեալ ՚ի
սուգ ծանրութեն, հարեալք յոգիս
եւ զառանցեալ յարտասուս, եկին
յանդիմանեցին զնախարարսն. եւ
յոյժ զսրտմեցին զուխտ քահանայ-
ութեան: Օ զոչէին զամենեսեան
եւ ասէին, զի՞ առնիցէք զոր կտա-
կարանոդ. եւ յո՞ տանիցէք զպա
տէրունեան սեղանոյն: Ստանայ
ցէ՞ք արդեօք զհոգեւոր օրհնութիւն.
եւ կամ՝ լսեալ դադարիցէ՞ք ՚ի մեր
գործակալն ձայնիցդ. կափուցէ՞ք
զաչս յընթերցուածոց. եւ խցէ՞ք
զականջս ՚ի լսելոյ. Ս՞ի թէ զմտա-
ցրդ անմտացութիւն ոչ յիշիցէք.
զի՞նչ առնիցէք զպատուիրեալն
՚ի մնէ, որ ուրասցի զիս առաջի
մարդկան, յուրասցի եղէց եւ ես
զնմանէ առաջի Հօր իմոյ յերկինս
եւ

և հրեշտակաց մէջ։ Մարդասպանք էիք առաքելական քարոզութեան. արդ աշակե՞րտք լինիցիք մոլար խաբէութեան։ Ուսուցիչք էիք ճշմարտութեան, արդ ուսանի՞ք զպատիր խաբէութիւնն մտաց։ Քարոզք էիք արարչական զօրութեան. արդ զարարե՞րս ած խոստովանիք։ Յանդիմամնիչք էիք ստութեան. արդ և քան զսուտն ստագո՞յնք լինիցիք։ Ի հուր և 'ի հոգի էիք մկրտեալք. արդ 'ի մոխիր և յաճի՞ւն թաւալիցիք։ Կենդանի մարմնով՝ և անմահութի էիք անեալ. արդ 'ի ճենճերս և 'ի շարաւս աղտեղի՞ս մրճոտիցիք։ Տաճար էիք Հոգւոյն սրբոյ. արդ զոհարին դիւա՞ց լինիցիք։ Քսազգեացք էիք 'ի մանկութէ. արդ մերկացեալ 'ի փառաց, դիւաբար՝ արեդակա՞ն կաքաւիցէք։ Որդիք և ժառանգ էիք արքայութեան. արդ անձամբ զանձինս որդի՞ք ժառանգք գեհենի։ Ոյժ էր սպանողեալ

ջհուրն

զհուրն անշէջ. ընդէ՞ր դուք ընդ նոսա այրեցեալ տոչորիք: Նոցա պարարի որդն անքուն. իսկ արդ դուք պարարիցէ՞ք զմարմինս ձեր նմա կերակուր: Խաւարն արտաքին թանձրացեալ պահի նոցա. դուք լուսազգեստքդ ընդէ՞ր յուղարկեցայք ընդ նոսա 'ի նոյն խաւարն: Նոքա 'ի վաղնջուց իսկ էին կուրացեալք. զհետ կուրայն և դուք կուրայա՞յք: Նոցա էր փորեալ զխորխորատն. դուք ընդէ՞ր յէք յառաջագոյն: Արդ ուսանիցիք զբազմութիւն անօրէնութեանց նոցա, (այն՝ որ չէք ուրեք 'ի միջի և ոչ մի) թեթևացեալք 'ի ծանր բեռանց, անձամբ անձին առէ՞ք զբեռն ծանրութեն: Ազատեալքդ 'ի ծառայութենէ, չարաչար մտէ՞ք յանազատելի ծառայութիւնն: Եթէ գիտէիք դուք և երևէր ձեզ յայտնի, [illegible] [illegible] երկինք 'ի վերայ ձեր. և թախծեցան երկիր 'ի ներքոյ ոտից

ձերոց։ Հրեշտակք 'ի վերուստ են
ձեզ բարկացեալ. և յերկրէս՝ մար-
տիրոսքն են ձեզ ցասուցեալ։ Ողոր-
մի՛մ՝ ողորմի՛մ՝ սիրելեաց ձերոց. և
բազում անգամ՝ ողորմի՛մ՝ անձանց
ձերոց։ Օ՜ի եթէ մարդ փրկեալ
էր զձեզ 'ի ծառայութենէ, և դուք
անձամբ զանձինս այլում 'ի ծառայ-
ութիւն արկանէիք, 'ի մեծ բար-
կութն բորբոքէք զառաջին տէրն ձեր։
Իսկ արդ՝ զի՞նչ առնիցէք զԱ՜ծա-
սաստ հրամանն, ես եմ Ա՜ծ, և չի՛ք
այլ որ բաց յինէն. և ո՛չ գիտի իմ՝
այլ լիցի ա՜ծ. Ա՜ծ նախանձոտ եմ՝
ես. հատուցանեմ զմեղս հարց
յորդիս, մինչև ցըեօթն դարս։ Իսկ
եթէ որդիքն արդարք՝ վ՜ն հարցն
մեղաց ընդունին զպատուհասն,
յորժամ կնքեանք իսկ որդիքն մե-
ղիցեն, ո՞չ ապա միանգամայն զան-
ձինս և զհարցն տայցեն 'ի մասին։
Դուք էիք մեր ամուր ապաստանի.
յորժամ ատի վտանգ հասանէր
մեզ

մեզ, առ ձեզ յանդորր երանէաք· որդ մեծ ամուրդ այդ՝ հեռի 'ի մեր տապալեցայ։ Դուք էիք մեր պարծանք առ Թշնամիսն աշխարհաւն· որդ դուք եղէք մեզ նախատինք առ նոյն Թշնամիսն։ Յայժմ վասն ձերոյ աշխարհիս համատոցն՝ և 'ի մեզ փոքր 'ի շառէ խնայէին· որդ 'ի պատճառս ձեր՝ և զմեզ անողորմ դատեն։ Ոչ միայն զանձանց դատապարտն տալոց էք առաջի ահեղ ատենին այ, այլև բազմաց ամենեցուն, որ 'ի ձեր պատճառս գնասեմս չարչարեսցին։ Զայս և առաւել քան զայն՝ խօսեցան ընդ մեծամեծաւ աճապանոյն, և յաւելին ցաւս 'ի ցաւոց մերոց։ Յայտնել և ցուցանել նոցա զխորհուրդն ոչ կարէին. լռել և չառնել պատասխանի անհնար էր։ Հեղձամղձուկ եղեալ մեծապէս յարտասուս հարկանէին։ Ընդ նոսին դառնացեալ բօղք և ուխտք, յանմխիթար սուգ լինէին ամենեքեան։

Յաղագս այնր պատմէ թէ, աղօթամբ
զգուշէին պահպանէին հաւատացելոց՝ ժողո-
վեալ գունդն հայոց՝ 'ի յետ նահատակու-
թեան և աղօթից յաղթեցին չարաց։

Յայնմ ժամանակի քահանայք՝
(որ էին անդէն 'ի զօրուն)
առ չժուժել սրտից բարկուն՝ քա
կեալ որոշեցան 'ի նախարարացն
և յամ բազմութենէ. և զմի ոմն
դեսպան՝ ձիով փութապէս առա-
քեցին յաշխարհն հայոց. գոյժ 'ի
բերան առեալ, և զօձիս պատառ-
եալ, հասեալ 'ի ժողովս եպիսկո-
պոսացն, մեծապէս յարտասուս
հարեալ կայր, և պատմէր զամ
անցս չարչարանացն, այլ ոչ յայտ-
նէր նոցա զծածկութիւն խորհր-
դոյն։ Յայնմ ժամանակի սփռե-
ցան եպիսկոպոսքն յիւրաքանչիւր
յիշխանութիւնս, 'ի գեօղս և յա-
գարակս, և 'ի բազում ամուրս
լեռնայինս փախստեան. դրդեցին
ժողովեցին զբազմութիւն արանց
և

և կանանց. զ չէնականաց և զաղա-
տաց. զքահանայից և զմիայնակե-
ցաց. խրատեցին սնդեցին և արա-
րին զամենեսեան զինաւորս Քրի։
Եւ առաջին բան խորհրդին՝ այս
հաստատեցաւ. Զեռն եղբօր հա-
րազատի՝ 'ի մերձաւոր խուր լինել, որ
անցեալ է ըստ ուխտ պատուիրա-
նին նց. Մի խնայեսցէ հայր յոր-
դի. և մի ակնն առնուցու որդի
հօր պատուոյ. և ծառայ՝ դարձցի
ընդդէմ տեառն իւրոյ. Օրէնք
Ածայինք կացցեն Թագաւոր 'ի մե-
րայ նմ. և 'ի նմին օրինաց ընկալ-
ցին յանցաւորք զպատիժ դատա-
պարտութն. Եւ երբև այս այսպէս
հաստատեցաւ կազմեցաւ, երևե-
ցան ամենեքեան զինեալք և սա-
ղաւարտեալք. սուր ընդ մէջ, և
վահան 'ի ձեռին. ոչ միայն արանց
քաջաց, այլև կանանց առնակնանց,
Իսկ զունդն հայոց՝ ամենայն օգնա-
կանօքն հանդերձ և նմ մնդուցն

բաղ

բազմութիւն՝ յամենայնն չորրորդի եկին հասին յաշխարհն Հայոց. 'ի գեղաքաղաք մի որում անուն էր Ընդեղ։ Բնակեցան բոլորեցան զետեղեցան յիմ՝ կողմանց անդր. ժողովեցան և եղեն անթիւ բազմութիւն։ Ւրէ եղև յետ աճուրց քսան և հինգից, մեղսեան ինքնին մորօքն համանէր մեծաւ զօրուն՝ քակել զդրունս եկեղեցւոյն յաճոր միաբանութեան. գիտուն առնուլ կամէր զաւաջարկութն դոր ծոյն։ Իսկ ոչ Պետոս երէց՝ միաբանութե անաջին խորհրդոյն՝ բաղում ուխտին 'ի տեղւոջ անեպատրաստական գնացեալ. Թէպէտ և ոչ էր ամենակայն մտայն ամենեցուն նախարարացն, և ոչ ուժ ոյ մաղպետին զօրութն։ Ոչ եկաց մեաց նմ եպիսկոպոսացն. և ոչ առ սակաւիկ մի համբերեալ՝ անօրէն իշխանին թուլացուցանել. այլ՝ բաղում ամբոխիւ ալաղակի՝

կը

զօրացն և մողացն հասուցանէր։ «Բանգլի վերգս 'ի ձեռս առեալ՝ զկառափունս մողացն և մողպետին ջարդէին։ փախստական յիւրաքսն ջուր վանս արկանէին, և ինքեանք զպաշտօնն բարձրացուցեալ յեկեղեցւոյն՝ զՏէրունի կանոնն կատարէին՝ մինչև 'ի նոյն միաշաբաթի անդադար լինելոյ։ Եւ յայս տագնապ խռովութ̃եց՝ ամենայն կողմանց յաշխարհէն հայոց՝ բազմութիւն արանց և կանանց 'ի տեղւոջն համանէին։ Եւ անդ էր տեսանել զմեծ աղէտ տարակուսին։ Ոմանք զարտօսրն արձակելով յաչացն՝ իբրև աղբերականց հոսէին։ և այլք բարձրաձիչ աղաղակաւ՝ իբրու այն թէ զերկինս դողացուցանէին։ Իսկ կէսքն խիզախելով և 'ի գէն ընթանալով՝ զմահ քան զկեանս ընտրէին։ Իսկ ոմանք 'ի մ̃ր ուխտէ եկեղեցւոյն՝ զաւետա-
րանն 'ի ձեռն առեալ՝ աղօթիւք

առ Մ՚ծ կարգային ։ Եւ՛ այլք ըղձայ-
յին զպատառուամն երկրին, զի ան-
ձանց լիցի գերեզման ։

Յաղագս այսր պատճառի, տագնապեալ մոգպետն 'ի զինուորացն չէ՛ առ 'ի բաց թողուլ զմեծն ըստ ջերմապաշտութեան՝ հայհոյէ զնոսա առ մարզպանն. որ ոչ անսայեալ նմա՝ յամառէ 'ի նոյն.

Նո՛ այսպէս շտապ տագնապէ 'ի
վերայ մեղադրելոյն հաւատացա-
նելին ։ բազում՝ անձամբ աղաչէր
զօգնականսն իւր, զի 'ի մահուանէ
կարասցեն զնա ապրեցուցանել,
և անդէն յարքունիս ողջանդամ
հաւատացանել ։ Նոյն վասն գործոյն՝
(զոր նկատեալ էր) տանջէր զնա և
ասէր, թող զբեմ և ցուցանեմ
մեծ թագաւորին, զի 'ի բաց թող-
ցէ զպայմանն իւրոյ առաջարկութեանն։
Ո՛չ եթէ լինքեանք ազգն մեր ե-
կեսցեն մեզ յօգնութիւն, չէ՛
հնար օրինաց մնութեն՝ 'ի հայս



առ

առնուլ զհաստատութիւն. որպէս
զխորձ առ ի միաբանութեան ուխտին
եկեղեցւոյն։ Ոչ ի թէ և էին զօրք
աշխարհիս մոգ, ոչ ինչ խնայէին
'ի նոսա սատակմամբ, ոչ միայն զար
տաքինսն, այլ և զերզարս և զօրդիս
և յամ մերձաւորս իւրեանց. նաև
ոչ յանձինս իւրեանց։ Մարդք՝ որ
ոչ 'ի կապանաց զանգիտեն, և ոչ
'ի տանջանաց երկնչին, և ոչ 'ի
ստացուածոց պատկառեն. և որ
յետին չարն է քան զամ չարիս,
զմահ քան զկեանս ընտրեն։ ո՞ է
որ կարէ դոցա դիմակաց լինել։
Վաճեալ իսկ էր իմ 'ի նախնեաց
մերոց, եթէ յաւուրսն շապհոյ ար
քային արքայի, իբրև սկսաւ ուս-
մունք այդ անել և բազմանալ և
լնուլ զամ երկիրն պարսից, և ես
անդր յարևելս անցանել, (իսկ որ
վարդապետք էին օրինացն մերոց,
յորդորեցին զթագաւորն՝ զի մի
քնաւ բարձցին օրէնք մոգութեան
աշխ

յաշխարհէն) եւ հրաման սաստիկ,
զի լռեալ դադարեսցէ Քրիստոնէ-
ութիւն. Եւ որչափ նա կարծելով
արգելուլ կամեցաւ, եւս քան զեւս
աճեցին եւ բազմացան եւ հասին մին
չեւ յաշխարհն քուշանաց, եւ անտի
հարաւակողմն մինչեւ 'ի Հնդիկս
տարածեցան։ Եւ այսպէս աներ-
կիւղ եւ համարձակ էին յաշխար
հին պարսից, մինչեւ յամ քաղաքս
աշխարհին՝ եկեղեցիս մեծամեծս
շինեցին, որ զանցուցանէր պայծա-
ռութբ զթագաւորականն ապարքուն
եօքն։ Շինէին եւ վկայարանս իմն
անուանեալ, եւ միոյն զարդ՝ եկե-
ղեցեացն զարդարէին։ Եւ յամ տե
ղիս եւ յանապատս միայնանոցս շի-
նէին։ Իբրեւ ոչ ինչ երեւէր օգ-
նականութիւն ուստեք, յայտնի
աճելով աճէին եւ բազմանալով
բազմանային. եւ մարտնաւոր մեծու
թեամբք մեծանային։ Զպատճառս
հարստութեան՝ մեք ինչ ոչ գիտէաք.

բայց

բայց այսչափ ինչ՝ ճշգրտիւ խմա֊
նայաք, զի տեսցուք ո՛ր զինի ուս֊
ման նոցա գնացին։ Թէպէտ և
էարկ 'ի նոսա Թագաւորն զձեռս
իւր խստութե, և զրաղումն կալաւ
'ի նոցանէ և չարչարեաց, և զեւ
բազումս մահուամբ սատակեաց,
դառնացաւ և ձանձրացաւ յանձն
իւր, և ընդ ոչ կարաց նուազե֊
ցուցանել 'ի բազմութենէ։ Վար֊
ձեալ՝ Թէպէտ փակեաց և կնքեաց
զգրուածս եկեղեցեաց ընդ ամենայն
աշխարհն պարսից, նոքա զա՛մ տուն
եկեղեցի արարին, և յա՛մ տեղւոջ
զհուրեանց օրէնքն կատարեցին. և
զանձինս իւրաքանչիւր՝ վկայարանս
համարէին. և լաւագոյն՝ զ չինա֊
ճածս մարդկեղէնս քան զհոգե֊
ղէնս հաշուէին։ Սուրբ սպանո֊
ղացն բթեցան, և նոյն պարանոցքն
ոչ ձանձրացան։ Ճճարտաւուք բա֊
տարածանոց նոցա՝ աշխատեցան, և
ածարն՝ ոյք քան զօր անձեցեալ բազ֊
մա

մանայր։ Սրտմտեալ էր Թագաւորն, և յոյժ դառնացեալ դահիճք բարկութն, իսկ նոքա արթունք և զուարթունք, և խնդալից ընդունէին զմահ հարուածս տանջանաց, և սիրով տանէին զմահ յափշտակութն ընչից իւրեանց։ Իբրև ետես թագաւորն թէ գրոհ տուեալ դիմեցին ՚ի մահ՝ իբրև խաշինք սուրբք յաղն երկնաւոր, արգել և ձախրեաց ՚ի նոցանէ զհարուածս տանջանացն. և հրաման ետ մոգաց և մոգպետաց զի մի ամենեւին որք խոճեսցէ զնոսա. այլ հաստատեալ կացցեն անխռովութեամբ յիւրաքանչիւր ուսմունս. մոգն և անդիկն՝ հայն և քրիստոնեայն՝ և որ այլ բազում կեշտք են ՚ի կողմանս կողմանս աշխարհին պարսից։ Ոչ է ապա էառ երկիրն զխաղաղութիւն հաստատութն, և լռեալ դադարեցին ամ խռովութիւնք յուզմանցն։ Վան զի ընդ մեր աշխարհին շարժման՝

և

և արեւմուտք ես մեծապէս շարժե-
ցան, և ամ՝ Տաճկաստան ընդ նոսա
խռովեցան ։ Զայն ահա 'ի լսելոյ
գիտեմք , բայց այս՝ զոր ես ինձէն
աչօք տեսի, թուի ինձ թէ մեծա-
գոյն ես լինի քան զառաջինն։ Արդ՝
դու որ մարզպանդ ես աշխարհիս,
պարտ է քեզ փոյթ յանձին ունել՝
գրել և ցուցանել յարքունիս զմիա-
բանութիւն բռնութեանս՝ թէ ո՞րք
աներկիւղութեամբ առ ոչ ինչ համա-
րեցան զհրամանս արքունի։ Եթէ
չէր մեր աճապարել և 'ի փախուստ
դարձեալ, միում՝ 'ի մէնջ ոչ տային
ապրել։ Եւ եթէ անդէն մարդիկք
այսպէս բռնեցան, եթէ յանկարծ՝
զինուորսն ես ընդ ինքեանս միա-
բանեցուսցեն, ո՞կարէ կալ առաջի
դոցա յանդուգն յարձակմանդ ։
Ես ահա՛ անտեղեակ էի անքակ
ուխտի եկեղեցւոյդ 'ի միմեանց.
(զի այլ է որ լսէ մարդ, և այլ է զոր
տեսանէ հաստատուն իւրովք ա-

ջօք) դու որ 'ի մանկութեան յայդմ՝ օրէնս անեալ էիր և ճշմարտեալ գիտէիր զպնդումն մարդկանդ, եթէ առանց բազում՝ արեան հեղլոյ՝ դոքա մեզ ո՛չ տան ձեռնարկանել յեկեղեցիսդ, ընդ է՞ր ոչ զայդ ամ հաստատեալ յանդիման չառացեր ցթագաւորին: Քանզի ամ՝ նախարարացն ահագ՝ դո՛ւ էիր, և զբոլոր աշխարհս քեզ յանձն արարեալ էր մարզպանութիւն. ընդէ՞ր ոչ մեծապէս հոգ տարար յանձն քո: Ո՛չ յայլ ժամս իմաստո՛ւն էիր, և ես գիտէի. զայս գործ՝ ո՛չ իմաստուն գործեցեր. այլ թէ ոչ յա՛յտ է թէ և դու 'ի նոցա բանիս, և քո խորհրդովդ անցուցին զայս անցս ընդդեմ և ընդ զօրս: Արդ՝ եթէ այդպէս է, և քեզ կամք չեն ունել զմիաբանութիւնդ: մի՛ նոչ պատկառեր դու երկիւղիւ յարքայէ: Ես դրեմ՝ և ցուցանեմ 'ի դուռն՝ մովպետան մովպետ և դեր անդերձապետի և

մեծ

մեծ հազարապետին, զի անցին զարքայ 'ի հաճանութիւն, որպէս զի 'ի բաց թողացուցէ ըստ առաջին հրամանին, և 'ի կամս մարդկան ապստամբ արասցեն, զի առ սակաւ սակաւ ընտելցին ընդ օրէնս մոգութեան: Ոչ որք կալցեն սիրով, երևեսցին կատարել զհրամանն արքունի: Քանզի մեր ձեռն է յաշխարհս, դուցէ յորժամ վնաս ինչ առնիցեն, և ինքեանք ցրուեալ վատնիցին յատարութիւն: Յորժամ աշխարհս թափուր լինի 'ի մարդկանէս, յայնժամ քեզ իսկ զլինելն վնաս հասանէ յարքունուստ: Նա պատասխանի մարզպանն մոգպետին և ասէ. Զիմ բանք խրատուզոր դու ասացեր՝ ճշմարիտ են. բայց զառաջին զոր չիմացաք, տեսեր և մեծապէս զզջացաք այժմ: Այց արդ՝ դու զոր ասեմս, բերեք թուեսցի քեզ. սակաւիկ մի երկայնամիտ լեր և զխորհուրդս քո

արդէն 'ի բազմաց. բայց արանց որոց ես ասեմ, նոցա յայտնեալ, մինչև ես ինձէն ժողովեցից զօր 'ի Թիկունս ածելոյ. և զուխտ եկեղեցւոյդ Թերևս կարացից երկփեղկել. Իբր եթէ զայդ այսպէս արարից, գիտեմ ապա թէ և զհրամանն արքունի կարող եմ կատարել. Իբր անդէն հրոս հանեալ 'ի սիւնեաց աշխարհէն, զիւր գունդն ստաճարացոյց 'ի Թիկունս օգնականութեն մոգաց և մոգպետին. Իբր սկսաւ ասել, ա՛ղէ դու առ անգամ մի հրովարտակ 'ի դուռն արքունի տուր վասն պրուձիոյն՝ (որ 'ի յաղոճանման է տասն հազար) զի 'ի ձմերոց 'ի հայս եկեացեն. և յորժամ զնոսա 'ի ձեռին ունիցիք, չիք ոք՝ որ եղծանել կարէ զհրամանն արքունի. Պատասխանի ետ մոգպետն և ասէ ցմարզպանն. այդ խորհուրդ՝ դարձեալ իմոց բանից ընդդէմ է. քանզի յորժամ բռնու-

Թի

թէ կռուեսցուք ընդ աշխարհիս, աշխարհս 'ի բաց քանդի և մեք 'ի պատուհասէ չարչրիմք. անձանց վնաս, և արքունի մեծապէս վնասու։ Ուր ոչ ինչ կամեցաւ ամենևին ունկն դնել նմա մարզպանն. զի սրտի մտօք ընկալեալ էր զպարսկին օրէնսն։ Սկսաւ այնուհետև պատրել զոմանս կարասեաւ, և զոմանս ողոքական բանիւք. զաւագին նմ ահեղ բանիւք սպառնացեալ՝ սրտաթափ առնէր։ Հանապազորդ առատացուցանէր զառաջիկս տաճարին. և յերկարէր զնուագս ուրախութեն՝ մաշելով զերկայնութի զգիշերայն յերգս արբեցութե. և զկաքաւս լկտութե քաղցրացուցանէր ամանց, զկարգս երաժշտին և զերգս հեթանոսական՝ մեծամ̃ գովուես մատուցանէր օրինաց թագաւորին։ Ներեալ և յարքունուստ պարգևութիւն կորուսոյ, և միում միում կաշառաբար գաղտ խթէր 'ի պատ

ճա

Ճառս պատուէի և պարգևաց. և բա
զում՝ նենգութեամբ զանմեղ մարդիկ
հրապուրէր և յինքն արկանէր ։

Յաղագս անոր պատմի, թէ զինչ օգնան որէս
հանել զչարութեան մեղքիսեդեկեա, համառօտ
ցեալն խօսակցութեան՝ մեծանուն թեամբ և
արութեամբ յաղթեցին չարեացն, առնլով պա-
տուր 'ի սաղմոս սուրբ Ներսիսեցւոյն ։

Իսկ՝ զայս ամ՝ իբրև տեսին նե
եպիսկոպոսքն, ևս քաջ յոր-
դեալ յորդորեցան 'ի նոյն միա-
բանութիւն. և հնարագէտ իմաս
տութեամբ ընդ երկուս բաժանեցին
զբանակն ։ Մանաւանդ իբրև հաս
տատել գիտացին 'ի միտս իւրեանց՝
եթէ անօրէն իշխանին սեններայ՝
զօրհասական վէրս յոգին ընկա-
լեալ էր, խորշեցան մերժեցան և
'ի բաց փախեան 'ի նմանէ. խոր-
հուրդ արարեալ 'ի գիշերի միում
ամենայն ուխտին բազմութեամբ,
կոչեցին և զապարապետ զօրուն 'ի
խորհ.

խորհուրդն, հարցին և քննեցին և 'ի վերայ հասին մտացն անշարժութեն. որոյ ոչ ես առ ստակ մի թերացեալ էր 'ի սիրոյն Քի: Սկս բան ազօթս արարեալ 'ի վերայ նր, վերստին ընկալան զնա յառաքինութիւն, և նովաւ որսացան զբազումս 'ի նոյն միաբանութի. որք ոչ էին բաւեալ յառաջին միաբանութենէն, Նկին ժողովեցան դունդ զօրաց բազմաց. և ես հեռագոյն զատեան 'ի մոգացն և 'ի մոգպետէն և յանօրէնն վասակայ: Իսկ նա այնչափ յիմարեցոյց ապշեցոյց զմիտս մոգպետին, մինչև չեա նմա իմանալ զելս իրացն: Սկսաւ բաշխել մոգս 'ի տունս նախարարացն, և մեծամեծ ռոճիկս կարգել. զոհել պատրուճակս, և բանաւոր կերածոր մարդկանն տան ուտել մեռ յաղածոյ և երկիրպագանել արեգական: Իբրև սկսաւ բազմանալ ընդ ամ աշխարհն ղյամեսի պղծագործ խառ-

նա

նաւութիւն, յանդգնեցան ևս կա-
նայք փշտխպանայն՝ յաւուրն կիւ-
րակէի անցուցանել զծիրադունս
եկեղեցւոյն և պատուել զհան-
դերձս հաւատաւոր կանանց: Այս
գուժկան եղև տեսին միաբանել
նր եպիսկոպոսքն, զԱճետարանն
'ի ձեռն տուեալ հասին և անկան
առանց հարցանելոյ 'ի վանս սպա-
րապետին, ուր ժողովել էին զօրքն
հայոց: Համբարձին զձայնս իւրեանց
և ասեն, աղաչեմք զձեզ զամենե-
սեան սուրբ Աճետարանաւս, ե-
թէ ձերով խորհրդիւ գործեն
զայն անօրէնութ՟ չարիս մարդկանն
և մնդպեան, նախ զմեր պարանոցս
հատէք, և ապա յեկեղեցիսն ձեռ-
նարկեցէք: Ապա եթէ առանց ձեր
կամաց նոքա զայն չարիս գործե-
ցին, այսօր իսկ խնդրեսցի վրէժդ-
այդ 'ի նոցանէ: Իսկ որ էին 'ի ներ
քըս 'ի վանս սպարապետին, յոտն
կացին համբարձին միաբան զձայնս
իւ-

իւրեանց առ Ա՟ծ և ասեն, դու որ
սրտագէտ ամենեցուն՝ ոչ ինչ պի-
տոյ է քեզ վկայութիւն 'ի մարդ-
կանէ. եթէ խոտորեալ իցեմք 'ի
քէն սրտիւ և մտօք, (զայն դու
ինքնին քաջ գիտես) այսօր իսկ դու
ինքնին դատեա՛ զմեզ ըստ մեղաց
մերոց. ապա եթէ հաստատուն
կամք յուխտի սուրբ Աւետարա-
նիս, դու Տէր՝ լեր մեր օգնական
այսօր, և տուր զթշնամին ճշմար-
տութե՟ 'ի ձեռս մեր, զի արասցուք
ընդ նոսա ը՟ կամաց մերոց: Զայս
իբրև ասացին, ամենեքին զգլուխս
'ի գետնի հարկանէին. և ողջունե-
ցան յաւետարանէն և յեպիսկոպո-
սացն. Իսկ մի ոմն 'ի նախարարացն՝
(որ անդ դիպեցաւ) էր 'ի նորա
խորհրդի և ոչ միաբանեաց ընդ
նոսա 'ի մեծ վկայութիւնն. և ան-
դէն առժամայն 'ի տեղւոջն քար-
կոծեցաւ 'ի նոցունց. և ահ մեծ
անկաւ 'ի վերայ ամենեցուն: Յայն
ժամ

ժամ՝ ամենեքեան 'ի նախանձ բար
կութեն գրդեցան, մինչև ամենայն
տեսողացն երիկամունք դողային.
որք առ ոչ ինչ համարեցան զպար
գևս արքունի, և առ ոտն հարկա-
նէին զհրամանս ահագինս։ Ընթա
ցեալ վաղվաղակի 'ի զէնս իւրենց.
վառեցան կազմեցան զգիշերին ժամ,
և յէ ծագել արեգականն զգունդն
յերիս մասունս բաժանեալ՝ 'ի բա
նակն արկանէին։ Գունդն առա-
ջին՝ յարևելից կուսէ, և գունդն
երկրորդ՝ յարևմտից կուսէ, և
գունդն երրորդ՝ 'ի հիւսիսոյ կող-
մանէ, շուրջանակի 'ի մէջ առեալ
փակեցին զբազմութիւն բանակին.
և զևս բազմագոյնս կապեցին զե-
րևելի մարդիկ և արկին 'ի բերդս
ամուրս ընդ իւրեանց իշխանութ՟։
Ո՛ւր զառագայուր և զամ՛ար բանա-
կին 'ի մի վայր ժողովեալ պահէին
իբրև արքունի հրամանաւ։ Իսկ
զմարզպանն ձեռբակալ արարեալ.
և

և միաբանէր ընդ նոսա երդմամբ՝
հաստատուն կալ յուխտին. և զղ_
ջանայր զառաջին քակտումն ՚ի նո_
ցանէ. անկանէր ապաշխարութբ̃
յոտս եպիսկոպոսայն և աղաչէր
խաղաղատելով զի մի մերժեալ
ընկեսցի առ ՚ի նոցանէ. Արկնէր և
երեքկնէր զանսուտ երդումն առա
ջի բազմութ̃ն ՚ի ձր Ճեմարանն.
Գրէր և կնքէր զերդումն, և կա_
պէր պաՃեմարանէն. և աղաչէր զԱ
ծոյ վրէժխնդրութիւնն յայտնեսցի.
և մի նոքա մարդաբար սատակես_
ցեն զնա. Իսկ նոքա թէպէտ և
հաստատուն գիտէին զնենգութ̃ն
կեղծաւորութ̃ն նորա, եթէ խա_
բէութ̃բ դառնայ անդրէն ՚ի հին
մոլորութիւնն, ոչ ինչ փոյթ առ_
նէին ձեռնարկել ՚ի նա վասն առա
ջին յանցանացն. այլ՝ ՚ի ձր Ճեմա_
րանին թողին զվրէժխնդրութ̃ն.
Իսկ որք եկեալ էին յաՃարի առ_
ծուլ զնր գանձս եկեղեցւոյն, ա_

կամաց եղին զանձինս խրեանց ա-
ռաջի որ եպիսկոպոսացն և ամ՛ զօ-
րացն. և եղծաւ ապականեցաւ հր-
րամանն թագաւորին. Եւ յաջողեալք
զօրութբն այ, աղաղակէին և ասէ-
ին գոհանալով առ Քս և կանայք և
ամ՛ ռամիկ բազմութիւնն, պատ-
րաստ եմք 'ի հալածանս և 'ի մահ
և յամ՛ նեղութիւնս վասն սուրբ
եկեղեցւոյ, զոր առաւնդեցին հայ-
քըն մեր առաջինք՝ զօրութբ գալս-
տեան Տն մերոյ Յի Քի, որով
վերստին ծնաք 'ի մի յոյս հաւա-
տոյ՝ մկրտութբ 'ի Քն Յս, ըստ
նմին նմանութե կամիմք չարչարա-
նօք և արեամբ նորոգել զանձինս
մեր. Այլ զՄ՛ծեստրանն փախուցի՛ք
մեզ հայր. և զառաքելական կաթո-
ղիկէ Եկեղեցի սուրբ մայր Ա՛ւ ոք
չար անջրպետ 'ի մէջ անկեալ,
զմեզ քակեսցէ 'ի նմանէ. Եւ այ-
նուհետև երևէր որ առաւել քան
զծառայ. և ոչ արտ փափկացեալ


քան

քան զգեղջուկ վշտացեալ. և ո՛չ ոք քան զոք նուաղեալ ՚ի յարիութէ։ Մի սիրտ յօժարութեան էր ամենեցուն. արանց և կանանց, ծերոց և տղայոց, որ՛ միաբանելոցն ՚ի քս։ «Քանզի առհասարակ զմի զինուորութիւն զինուորեցան. և զմի ագան զզրահս հաւատոյ պատուիրանին Քի. և միով զօտեաւ ճշմարտութեանն պնդեցին զմէջս արք և կանայք։ Ընկեցեալ կայր այնուհետև ոսկի, և ո՛չ ոք առնոյր իւր առանձինն արծաթ, և արհամարհեալ առանց ագահութեան. անարգեալ պատուական հանդերձք առ ՚ի զարդս մեծարանաց։ Նա և իւրաքանչիւր ումեք ստացուածք՝ ոչ ինչ համարէին յաչս ստացողաց իւրեանց։ Տեսանէին զանձինս իւրեանց իբրև մեռեալ դիակունս, և զիւրաքանչիւր գերեզմանս ինքեանք փորէին. և կեանք իւրեանց ՚ի մահ համարէին, և մահք իւրեանց

եանց՝ անշուշտ կեանք։ Բայց այս
բարբառ՝ ստէպ ստէպ ընթանայր
քաջուէր, միայն մեռցուք՝ զանուն
և զհողիս և եթ ժառանգեսցուք։
զի կենդանիցէ 'ի մեզ Քրս. որում
դիւրին է միւսանգամ՝ նորոգել
զմեզ 'ի հողս, (զմեզ և զմամ յա-
ռաջագոյն վնջեցելոյն) և հատու-
ցանել իւրաքանչիւր ըստ գործս
իւր։ Զայս և առաւել քան զայն
խօսելով և մխիթարելով զանձինս
և զվիճակս, դարձեալ միւսանգամ
զինուորքն պատրաստեցին զզէնս
իւրեանց. և աղօթականքն անդա-
դար լինէին յաղօթս իւրեանց. և
պահօղքն ճգնէին 'ի պահս իւրեանց։
Ձայնք պաշտօնէից 'ի տուէ և 'ի
գիշերի անհատ էին 'ի պահս և 'ի
սուրբ սաղմոսն Ընթերցուածք
Ընծայլին կտակարանայն ոչ երբէք
առնուին դադարումն յամենայն
ժամ։ Այնպէս և մեկնիչք՝ 'ի մխի-
թարութիւն երկնաւոր վարդապե-

տութեան։ Յայնմ ժամանակի դարձեալ յարձակէին 'ի վերայ բերդից և աւանաց, (զոր առեալ էին պարսիկք 'ի տեղիս տեղիս յամրոցս աշխարհին) տապալէին քանդէին ըզբնակութիւն նց· Առաջին՝ զմեծն արտաշատ հանդերձ աւանօքն իւրովք· և առնուին զանմատոյց ամուրսն՝ զգառնի քաղաք, զանի, զարտագերսն և զաւանսն իւր, զերկայնորդսն, զարխնին և զաւանսն իւր, զբարձրաբերդն, զխորանիստն, զծախանիստն, զանկատակածելի զողականն՝ ընդ նմին և զաւանսն իւր, զգռեալն, զկապոյտն, զորոտն, զարփանեալն, զվանն աճան՝ ընդ նմին և զաւանսն իւր, զվասակաշատն։ Զամենեսեան զոսա իւրաքանչիւր գեղջիւք և ագարակօք՝ զօրօք և զօրագլխօք՝ 'ի նմին ամի առեալ տապալեցին, և 'ի գերութի վարեցին զայս և զկանայս ընչիւք և ընտացուածովք հանդերձ պատուա-

կան զանձիւք և նոցին սպասիւք. Տապալէին քանդէին զշինուածս նոցա ։ այրէին կիզուին զտունս պաշտաման կրակին , և սրբէին զպղծութիւն կռապաշտութեն. և առնուին զկաւ և զկազմած ատրուշանացն, բերէին և դնէին 'ի սուրբ եկեղեցւոյն, և 'ի ձեռն սուրբ քահանայից նուիրէին 'ի սպաս որ եկեղեցւոյն։ Եւ փոխանակ սնոտի պաշտամանցն՝ (զոր տապալէին յամենայն տեղիս հեթանոսացն) ըզ փրկական խաչն Քսի կանգնէին. զամենասուրբ սեղանն ուղղէին, և զկենարար խորհուրդն կատարէին սրբութեն. պաշտօնէիւք և քահանայս 'ի տեղւոջն կացուցանէին ։ յուսով հաստատելով խնդայր ամ̃ երկիրն առհասարակ ։ Եւ մինչդեռ յայս մեծի առաքինութեան կատարեալ գործէին զգործ նահատակութեն , երևէր իմն 'ի վերայ ամենեցուն Ածային շնորհք. քան

զի առանց հրամանի՝ 'ի զօրացն հայոց՝ յարևելից կողմանէ աշխարհին յարձակեցան ոմանք յատրպատական աշխարհ, 'ի տեղիս տեղիս բազում վնաս արարին, առնլով և աւերելով և քանդելով զբազում ատրուշանս. Իսկ որ 'ի մեծ ամուրսն անկանէին, խաչանշան արարեալ՝ 'ի զօրուն արձակէին. և երկու մեծամեծ բերդից պարիսպքն առանց ուրուք մերձենալոյ անկեալ կործանեցան. մինչև ամ̃ բնակչաց երկրին զահի հարեալ 'ի մեծ նշանէն, ինքեանք ինքեանց ձեռօք զկրակատունսն այրէին. ուրանալով զօրէնս մոգութեան, խոստովանէին 'ի սուրբ աւետարանն. Եւ այլ մեծամեծ զօրութիւնք և յաջողութիւնք կատարէին 'ի ձեռն զօրականին: քանզի ուր ոչ էր ակն կալութիւն եթէ զանունն Ք.Յ̃ ոք յիշեսցէ, արհաւիրք մեծ անկանէին 'ի վէր նոցա, և ամենայն մարդ

մարդ պատմէր ընկերի իւրում ըզ տեսիլս նորս և զարմանալիս ։ Այնպէս և աստեղք յերկինս երևէին յոյժ լուսալից պայծառացեալ ․ զոր ոչ ունէին յառաջ 'ի բնութենէ ։ Իբր ամենայն տղայք աշխարհին՝ իբրև զորս պատերազմօղս խիղա-խէին ։

Յաղագս այնր պատճառի, մերայքն 'ի տեսանել շարայն՝ այլ արարքն հաճատա-ցեալքն առ քրիստոսի Թէոփիլոս զի արարք յետ նորոճութեան․ յորոյ յանցնելն հաւատալ 'ի նշանս՝ Ըստ տանորէ անօրէնն հարկեալսն ։ Իւր նոջա ունելով միայն զաղօթսն նորաս, և 'ի յաղթողք գտան ։

Նէ աչնք յետ անձուրց բազմաց՝ եկն էհաս հազարամեակն ա-ղուանից՝ որ եպիսկոպոսաւն աշ-խարհին․ մեծաւ տագնապաւ փու-թացուցանէր զզօրսն և ասէր , դունդն պարսից՝ որ էր 'ի կողմանս աշխարհին հոնաց ։ դարձաւ այս-րէն

րէն, եկն եմուտ յաշխարհս մեր. և բազում ևս այլ այրուձի՝ որ 'ի դրանէ եկն։ Ո՜ թո՛ղ զերկոսեան, այլ երեք հարիւր մօտ վարդապետ ածեալ են ընդ իւրեանս։ Պատուիրեցին զաշխարհն, և զոմանս զօ-մանս յինքեանս արկին, և կամին յեկեղեցիսն ձեռնարկել։ Ո՜ հրամանաւ՜ թագաւորին ստիպեն զա-մենեսեան և տեսեն, եթէ կամիք յանձն առնուք զօրէնս, պարգևս և պատիւս գտանէք 'ի նմանէ, և թողութիւն հարկացն արքունի լիցի ձեզ. ապա թէ կամիք զայդ չառնէք, հրամանս ունիմք 'ի դեհճս և 'ի քաղաքս շինել ատրուշանս, և զվռամական կրակն 'ի ներքս դնել, և կացուցանել մոգս և մոգպետս օրէնսդիր ամ՛ աշխարհիս։ Ո՜ եթէ ոք ստամբակեալ ընդդէմ դարձ-ցի, ինքն մահու պատուհաս ընդու-նի, և կին և որդիք այնպիսույն ա-նաշխարհիկք եղեալ՝ յարքունիս

եր

երթայցեն։ Իսկ՝ գունդն հայոց
իբրեւ լուեալ զայս գոյժ դառնութ,
ոչ ինչ թուլացուցեալ լքան 'ի
քաջ արութէն. այլ՝ դարձեալ հա
մագունդ ժողովլ լինէր ամենայն
աշխարհին վասն դուժաբեր հրեշ
տակացն՝ որ հասին առ նոսա։ Իբր
միաբան քաջալերս առեալ՝ արձա-
կեցին զնոսա. զի առժամանակ մի
զնոսա պատիր խաբէութ̃ կալցեն.
զի խափանեսցեն 'ի չար կամացն,
չձեռնարկել 'ի սուրբ ուխտն եկե
ղեցւոյն. և ինքեան զօրութեամբ
Այ խորհուրդ 'ի մէջ առեալ՝ հնա
րեւք եւս իրայն խնդրէին։ Յայնմ՝
ժամանակի զմի ոմն 'ի մեծ նա-
խարարացն 'ի տոհմէն գնունեաց
Ատոմ՝ առաքէին ձեպով յերկիրն
յորեւմտից ցուցանել զայս նոր
խորհուրդ զչարիմաց թագաւորին
արեւելից. միանգամայն պատմել և
զիւրեանց քաջութիւն արութեան,
զոր գործովք կատարեցին առ նոս

հայ

հարկանելով զահեղ հրամանն. և զմեծապէս սատակումն՝ ՚ի վերայ մոգուց հասուցանել ։ Խնդրել ՚ի Նմանէ օգնականութեան սատարութեան. և եթէ նա կամեսցի, նմա մտանել ՚ի ծառայութիւն։

Սոյն է պատճէն Հրովարտակին, որ Գրեցին առ Թէոդոս Երանելի կայսրն։

Յովսէփ եպիսկոպոս բազում եպիսկոպոսակցօք խմովք և ամենայն զօրք Հայոց՝ Վասակ մարզպան և Ներշապուհ Ռմբոսեան՝ համդերձ սպարապետաւն և ամ մեծամեծ նախարարօքս՝ առ մեծանունդ Թէոդոս կայսր. բազմասցի՛ ողջոյն մեր առ քեզ և ամենայն զօրաց քոց։ Որ խաղաղասէր մարդասիրութիւն ձերով տիրէք ծովու և ցամաքի. և չիք ոք յերկրաւորացս որ ձերում անարգել տէրութեանդ ընդդէմ դառնայ. որպէս և մեք

խոկ

Իսկ ունիմք զանսուտ յիշատակա-
րանսն զառաքինի նախնեացն ձե-
րոց. ունելով զԵւրոպէ՝ անցին և
տիրեցին և ասիացւոց կողմանցն՝
'ի սահմանացն սերայ մինչև 'ի կող-
մանս գադերոնի. և ոչ ոք գտաւ
ստամբակեալ և ելանել ընդ ձեռն
նոցա. Այլ յայնչափ մեծ իշխանու-
թեն դատակէ՝ որ մեծ և սիրելի
զհայոց աշխարհս անուանէին. Եւ
որոյ և նախնին մեր Տրդատիոս յի-
շելով զառաջին ակրն ձեր, որ 'ի
տղայութեն փախուցեալ 'ի հայրաս
պան մարդախողխող հօր եղբարցն
իւրոց, ապրեալ սնաւ 'ի յերկրիդ-
յունաց. և 'ի ձէնջ թագաւորե-
ցուցեալ՝ տիրէր հայրենի աշխար-
հիս. Այնպէս և զհաւատսն որ 'ի
Քս՝ ընկալեալ 'ի սուրբ եպիսկո-
պոսապետէն 'ի հռոմէ՝ լուսաւո-
րեաց զխաւարային կողմանս հիւ-
սիսոյ. զոր և յայժմ կամին 'ի մէնջ
կորզել և հանել խաւարասէր որ-

դիքն արևելքի։ Ո՜հ մեք 'ի ձեր քա
ջութիւն արութենդ խիզախեալ,
էր լինչ՝ որ ընդդէմ դարձաք նոյա
հրամանայն. և բաղում այն է՝ որ
արդ առաջոյ պատրաստեալ եմք։
Ընտրեսցուք զմահ ածպաշտութի,
քան զկեանս ուրացութի։ Ո՜հ ե-
թէ դուք ևս 'ի ձեռն առջիք զմեզ,
ահա կրկին կենաց զխպեցուք, և
ոչ մխանդամ մահու։ Ո՜հ եթէ
սակաւիկ մի հեղդայք, դուցէ և
այլոց աշխարհաց բազմաց համանի
ցէ տալ բոյց սուր։ Ո՜հ երբե
յանդիման եղեն մեծի թագաւորին
և ընթերցան զգիր պաղատանաց
աշխարհին հայոց, և զդիշատակա-
րանսն ախնեայն, բաղում մատենք
'ի մէջ եկեալ ընթերցան, որ զնոյն
ունին դաւանէին հաստատութի։
Ո՜հ մինչդեռ երանելին Թէոդոս
հարցանէր զնմ՝ զխենկղխոսան
և հնար խրայն կամէր դտանել խա
ղաղութի, և հող տանէր մեծաւ

յօժարութիւն, զի մի՛ եկեղեցեացն
արեւելից յափշտակեսցին յանօրէն
հեթանոսաց, 'ի նմին ժամանակի
անդրէն վաղվաղակի հասանէր վախ-
ճան կատարածի կենաց նորա. եւ
կարի չար խափանումն լինէր գոր-
ծոյն օգնականութեան։ Եւ թագա-
ւորէր փոխանակ նորա Մորկինոս
կայսր. եւ 'ի ձեռն վատթար արանց
խրատատուաց ծառայից իւրոյ՝ ա-
նատօլայ որ սպարապետն էր, եւ
եփլարիոս սաորի, երկոքեանն ա-
նարգք եւ 'ի վատ արանց, մանդա-
մայն եւ անմտք։ 'Ի նոյն բանս ե-
ղեալ թագաւորին, ոչ կամէր ան-
սալ միաբանել ուխտին հայոց. որ
ամենայն ուժով իւրեանց ընդդէմ
կացեալ էին չարուն հեթանոսաց։
Մնարիս այս լաւ համարէր զուխտն
հեթանոսաց պահել վասն մար-
մնական խաղաղութեան, քան պատե
րազմակից լինել ուխտին Քրիստո
նէութեան. Վասն այսորիկ փութա
ցաւ

ցած արձակեաց դեսպան առ Թա-
գաւորն պարսից զնոյն և փիլիպիոսն,
և եմուտ ընդ նմա յուխտ հաստա
տուն՝ ձեռնթափ լինել 'ի զօրացն
հայոց՝ զօրու և զինու և ամ՟ օգնա
կանութե՟։ Ուր իբրև այսպէս հաս
տատեցաւ և հաստատ օգնականութե՟
յուսոյ նոցա 'ի մարդկանէ, դար-
ձեալ սուրբ եպիսկոպոսքն քաջա
լերել սկսան զանձինս և զօրսն ամ՟։
Թէպէտ և հայէին յիւրեանց սա-
կաւութիւնն և յերկուց Թագա-
ւորաց միաբանութիւն, ոչ ինչ
վատասրտեալ դողային. այլ ըստ
առաջին ուխտին խիզախէին և ա-
սէին, պատրաստ եմք 'ի սպանանիլ
և 'ի մեռանել. դիւրին է մեզ սակա
ւուք զբազմաց գործ գործել, և
անարգօք զմեծամեծ իրս կատարել։
Թէպէտ և ոչ ունէին Թագաւոր
առաջնորդ, և ոչ արտաքուստ օգ-
նական զօրք յօտարաց, սակայն ան-
ձանց առաքինութե՟ և սուրբ վար-

դապետայն մխիթարութիւն՝ համա-
գունդ ամ նախարարքն զօրօք իւր-
եանց յիւրաքանչիւր տանէ 'ի մի
վայր գային. հատանէին վաղվաղակի
բաղում և այլ այրուձի, որ յար-
քունի տանէ անուի էր. Եւ զամ
զօրսն յերիս գունդս բաժանէին.
Զգունդն առաջին՝ տային ց'Ներ-
շապուհ րմբոսեան, և գումարէին
զնա պահապան աշխարհի՝ մերձ 'ի
սահմանս ատրպատական աշխար-
հին. Զգունդն երկրորդ՝ տային
'ի ձեռն Վարդանայ զօրավարին
հայոց՝ անցանել ընդ սահմանս վրաց
'ի վերայ մարզպանին ձորայ, որ ե-
կեալ էր աւերել զեկեղեցիս աղօ
ճանից. Եւ զգունդն երրորդ՝ տայ-
ին 'ի ձեռն Վասակայ իշխանին
սիւնեաց. որ ոչ էր 'ի բաց կացեալ
յուխտէն հեթանոսաց՝ ըստ ներ-
քին խորհրդոց իւրոց, ընտրեաց
և էառ ընդ իւր զայրս՝ զորոց դի-
տէր զթուլութիւն հաւատոց նց.
զէն

զիշխանն Բագրատունեաց՝ զօրօք իւրովք. զիշխանն Խորխոռունեաց զօրօք իւրովք. զիշխանն Ապահունեաց զօրօք իւրովք. զիշխանն Մահունեաց զօրօք իւրովք. զիշխանն Պալունեաց զօրօք իւրովք. զիշխանն Դարբեղենից զօրօք իւրովք. և զայլ բազում զօրս յարքունի տանէ. Եւ արկ յինքն և զսեպուհս ոմանս յայլմէ տոհմէ, և խորամանկ խաբէութիւն դարանամուտ լինէր յամուրս իւրոյ աշխարհին 'ի պատճառս կեղծաւորութեն, եթէ ընդճապաւել անդր անցանէ 'ի վերայ գնդին պարսից՝ հալածական առնէ յաշխարհէն սորաճանից. Իսկ նա յամխածծուկ հաճայրոցէն ճեպով դեսպանս առաքէր առ գունդն պարսից, թէ անհաճադիկ քակեցի զմիաբանութիւն ուխտին հայոց, և Ը երիս կողմանս զգունդն քայքայեալ բաժանեցի. Զգունդ առաջին՝ հեռացուցի 'ի կողմանս խիրայ


և

և զալտաճանդայ· և զգունդն երրորդ՝ ընդ իմով ձեռամբ է, որոց ոչ ինչ՝ մնաս տամ առնել զօրացն արքունի։ Ո՛չ զայլ ամ՟ որ այր կռուոյ գտանէր յաշխարհիս, ցանեցի ցրուեցի ընդ ամ՟ միջոց աշխարհիս։ Բայց զգունդն երկրորդ՝ արարի ընդ Սարդանայ յաղուճանս· սակաւաձեռն և ոչ բազկաւ։ Ո՛վ համարձակ ընդ առաջ նորա, և մի՛ ինչ զանգիտեր ամենևին տալ պատերազմ· գիտեմ զի 'ի պարտուէ՟ մատնեսցի առաջի քոյոյ մեծի տէրութեան։ Զայս գրեաց և եցոյց մարզպանին սեբոխտայ։ Իսկ նա իբրև լուաւ զայն քաջալերս 'ի Վասակայ, և ստուգել գիտաց 'ի միտս իւր, եթէ սակաւաձեռն գնդի գայ սպարապետն հայոց 'ի վերայ նորա, ոչ եկաց մնաց 'ի կողմանս ձորայ· այլ կուտեաց զամ՟ բազմութիւն զօրու իւր, և փութանակի անցանէր ընդ մեծ գետն կուր անուն, և

պատահէր նմա մերձ 'ի սահմանս վրաց՝ հանդէպ խաղխաղ քաղաքի՝ որ ձմերոց էր Թագաւորացն աղուանից. Անցանէր բովանդակեր ամ՟ զօրքն իւրովք՝ ռազմ՟ արարեալ՝ զբոլոր մեծութ՟ի դաշտին 'ի ներքս փակէր՝ զինեալք ամ՟ պատրաստութ՟բ 'ի մարտ պատերազմի ընդդէմ՟ գնդին հայոց. Իսկ քա՛ջն Վարդան և ամ՟ զօրքն որ ը՟ նմա էին, իբրև տեսին զպատրաստութիւն պատրաստութ՟ն գնդին հեթանոսաց, հայեցան և յիւրեանց սակաւութիւնն. թէ պէտ և կարի յոյժ նուազ էին քան զնոսա, ոչ ինչ զանգիտեցին առ 'ի յոյժ բազմութ՟էն. այլ առհասարակ միաբան համբարձին յերկինս զձայնս իւրեանց, աղաղակէին և ասէին, Դատեա՛ Տէր զայնոսիկ՝ որ դատեն ընդ մեզ. և մարտիր ը՟ այնոսիկ՝ որ մարտնչին ընդ մեզ. Զինու և ասպարաւ՝ քով օգնեա՛ մեզ. Հարժեա և դողացո զգուն

դա

գաղունդն բաղմութե անօրինացս: Ցրուեա՛ և վանեա՛ զչար միաբա- նութիւն թշնամեացս առաջի քոյոյ փրկական մեծի նշանիս. և տուր 'ի ձեռն սակաւուցս զքաջութի յաղ- թութե 'ի վերայ անհնարին բազ- մութեա: Ոչ 'ի պարծանս սնոտի փառասիրութե՝ անօգուտ վաստա կոց ինչ աղաչեմք, և ոչ յագահու- թեան՝ ընչասիրութեան զանցաւոր մեծութե կապուտոյ. այլ զի ծանի- ցեն և գիտասցեն ամենեքեան այ- նոքիկ՝ որ հնազանդին սուրբ Աւե- տարանին քարոզութե, թէ դու ես Տէր կենաց և մահու. և 'ի քո ձեռս է յաղթութիւն և պարտու- թիւն. և մեք պատրաստ եմք 'ի մե- ռանել վասն քո սիրոյդ. և եթէ սպանանել ես հաճոյէ զնոսա, եղի- ցուք վրէժխնդիր ճշմարտութե: Եւ զայս ասացեալ՝ խումբ արարեալ՝ յարձակէին. և զաջ թեւն ընկեալ՝ զձախոյ կողմանն արկանէին, և

որոյ

սրոյ Ճարակ զամենեսեան տային.
ընդ երեսս դաշտին փախստական
առնէին, մինչև յամուր տեղիս մայ
րեայն առ խորագոյն դարուքն լռէ
նաս գետոյ։ Այլ ընդ դարձեալ Թա
գաւորազանց ոմանց քաղաքական
արքայի, ընկեցին 'ի ձիոյ զոմն 'ի նա
խարարացն Հայոց 'ի կնդէն դիմաց
սեան զՄուշն և սպանին. և ըզ
Գուգրիկն վերաճորեցին. Յայնմ
տեղւոջ դէտակն 'ի վեր ամբառ֊
նայր Արշակին արշաւունի' գո֊
չէր առիւծաբար և յորձակէր ըզ
վուրկն քաջ. զեղբայր Թագաւո֊
րին լինայ և զբազում համհարզա
նորին' ընդ նմին սատակէր. և այն
պէս ամենեքեան առ Հասարակ այր'
զախոյեան իւր յերկիր կործանէր։
Եւ առ յոյժ յանդուգն յարձակ֊
մանն' յոլովագոյն այն էր' զոր գե
տամիջնն առնէին, քան զանկեալսն
սրոյ 'ի ցամաքի։ Եւ 'ի բազմութէ
դիակացն անկելոց' յատակ ջուրք

գե

գետոյն յարևուն դառնային։ Նճ ո՛չ
գտանէր որք ամենևին ՚ի նոցանէ
տարեալ և թագուցեալ յանտառս
խիտս մայրից դաշտաց. բայց մի ոմն
՚ի զօրաց թշնամեայն զլնու հան-
գերձ՝ ելեալ ՚ի յուս երիվարին՝
անցանէր ընդ մեծ գետն, մազապուր
պրծեալ ՚ի պատերազմէն ։ գոյժ
արկանէր ՚ի մայրն բուն բանակն՝
որք փախստական անկանէին ՚ի մեծ
շահաստանն Յայնմ ժամանակի
զօրքն հայոց՝ կատարելով զմեծ
գործ պատերազմին, ժողովէին զբա-
զում աւար բանակին. և կողոպտէ-
ին զանկեալ դիակունսն. և կուտէ-
ին բազում արծաթ և ոսկի. զզէնս
և զզարդս զարի արանց և զքաջ ե-
րիվարաց։ Պարձեալ յարձակէր ոչ
սակաւ քաջութը ՚ի վերայ բերդից
և քաղաքաց, զոր ունէին պարսիկք
յաշխարհէն աղուանից։ Հզօրապէս
մարտնչելով՝ այրէին զամուրս ար-
գելանաց նոցա ։ և զերամն երամն
մն

մօգուցն՝ (զոր պատրաստական ա-
ծեալ աշխարհին 'ի գայթակղութ̃ի)
ուր և գտանէին յամուրս ամուրս
այրայն, որոց ճարակ տուեալ դէ՛չ
գնէին Թռչնոց երկնից և գազանաց
երկրի։ Արբէին զարեանս յամենայն
պղծագործ զոհիցն, և փրկեալ ա-
զատէին զեկեղեցիսն յանհնարին
նեղութ̃ն։ Եւ՛ բազումք 'ի նախա-
րարացն աղուճանից և յամ՝ շինակա-
նացն՝ որք վասն անուանն Ք.Ի ցրո-
ւեալ և վտարեալ էին յամուրս
լերանցն կապկոխի, երբև տեսանէ-
ին զյաջողութիւն գործոյն զոր
կատարէր ԱԾ 'ի ձեռն գնդին հայ-
ոց, գային ժողովէին և նոքա և
խառնէին 'ի զօրս նոցա, և միաբան
համատարեալ կցորդ լինէին գոր-
ծոց նահատակութե̃ նոցա։ Խաղաց
ին զնայլին այնուհետև 'ի վերայ
պահակին հոնաց, զոր ունէին բռ-
նութե̃ պարսիկք․ առնուին քան-
դէին զպահակն, և կոտորէին զօրան՝
որ

որ ընակեալ էին 'ի նմա. և զգուան տային 'ի ձեռն վահանայ, որ էր յազգէ Թագաւորացն աղուանից. Իծ յայսր ամենայն քաջութեան մերայ՝ ոչ որ անկեալ վիրաւորեցաւ ամենևին 'ի նոցանէ. բայց 'ի միոյ երանելւոյ, որ կատարեցաւ նահատակութ̄բ 'ի մեծ պատերազմին: Իծ անդէն 'ի նմին տեղւոջ՝ զայրն որում զգուան յանձն արարին, զնոյն՝ դեսպան արձակեցին յաշխարհն հոնաց, և 'ի բազում՝ յայլ ազգս բարբարոսաց, (որ էին համօրէն հոնաց աշխարհին) բանս դնել ը̄ նոսա և ուխտ հաստատել՝ անքակութ̄ի ունել զմիաբանութի̄. Իսկ նոքա իբրև զայն ի՛մ լուեան, փութանակ վաղվաղակի հասանէին 'ի տեղին, և ականատես լինէին ի՛մ յաջողութ̄ե գործոյն. Ոչ ինչ յապաղեցին երդմամբ յուխտ մտանել ըստ կարգի իւրեանց օրինացն. յանձն առնուին և զերդումն քրիս

տո

տոնէից՝ պահել ընդ նոսա հաստա
տութիւն զմիաբանութիւնն ։

Յաղագս այնր պատմէ, թէ լռեալ հայոց վերջանալութեան վասակայ, անէն 'ի վերայ նորա բազում հարուածս. Եւ աստաչէն զոն 'ի նազերոյն առ արքայն՝ 'ի նահանգումն յանկերածութենէն.

Իսկ երբև զայս կատարեցին և արարին իւրեանց մեծապէս հաստատութիւն, և գնա անդէն 'ի տեղւոջն զետեղեալ էին խաղաղութիւն, դժկամ հասանէր յերկրէն հայոց՝ զձանկոտ հարեալ և զօձիս պատառեալ վասն ապստամբութեան վասակայ՝ յետ կացեալ յուխտէ քրիստոնէութեանն, և աւերեալ զաղաղում՝ տեղիս հայոց աշխարհին. մանաւանդ զամրոցն արքունի, ուր կային զօրացն էին. զգաւառին և զերամակս, զդրօշխանակերան, և զվարդանաշատն, զփառախոսն, զարդէօնսն, զձողակերն աւան

աւան և զբերդն արմաւիր և զա-
մուրն ուշական, զարուճն, զաշ-
նակն, զկուաշն աւան և զամենայն
ոտնն արագածու և զնահանգն ար-
տաշատու և զարտաշատն ինքնին
գլխովին, և զա̃մ՝ գեւղս և զաւանս
որ շուրջ զնովաւ էին, առեալ աւե-
րեալ և հրձիգ արարեալ. և զամե-
նեցուն ձեր զընտանիս փախուցեալ
մերժեալ յիւրաքանչիւր բնակու-
թէ։ Ձեռնարկեալ և 'ի սուրբ ե-
կեղեցիսն, տարեալ և զսպաս ն̃ր
սեղանոյն. գերի վարեալ զընտանիս
քահանայիցն, և զնոսին կապեալ
և եդեալ 'ի բանդի, և ինքն սփռեալ
տարածեալ ասպատակաւ աւերէր
զերկիրն ա̃մ։ Եւ զունդն՝ որ էր
'ի կողմանս ատրպատականի, ոչ
ժամանեաց ձեռն տալ 'ի միջոյս
աշխարհին։ Եւ զօրքն՝ որ անդ էին
մնացեալ էին, խոյս տուեալ յանօ-
րինէն՝ որ մերժեցան յեզր աշխար-
հին, և դեռ պահեն ը̃ ձեզ զուխտ
միա

մխարանութեան սորայն ՎԲՆ։ Բայց այնք՝ որ ընդ նմա էին, են սմանք՝ որ փախեան յիւրաքանչիւր տեղիս. և բազումք այն են, որ զհետ նորա ամբարշտութեան մոլորեցան։ Զու արարին ՚ի տեղւոջէ անտի դառնալ անդրէն յաշխարհն Հայոց։ Մեծու թիւն՝ անտրտում ուրախութեամբ երգս ՚ի լերանն տեւեալ ամէն ձայ նիւ, Աստուածն եղերուք անուան՝ զի բարի է, զի յաւիտեան է։ Որ եհար զազգս բազումս և սպան զթագաւորս մեծամեծս՝ զի բարի է, զի յաւիտեան է։ Եւ զայս սաղմոս եր գելով մինչև ՚ի փոխմանն կատա րեալ աղօթիւք, փառաւորութիւն սուրբ Երրորդութեան մատուցա նէին։ Ընդ յանձն յանձնէր՝ ածէր զօրավարն՝ եկաց և զինուց զօրակա նին՝ առաջապահօք կողմնապահօք ողջ և առողջ հասուցեալ յաճուրս երեւան. Մերձ ՚ի սահմանս Հայրե նի աշխարհին։ Եւ եղև սրբոյն

մա

վաստակոյ իշխանացն՝ (որ ընդ նմա էին) քաջութիւն նահատակութե գնդին վարդանայ՝ յաշխարհին աղւանից, եւս և միաբանութի հայոց։ Մինչև յանդիման եղեալ էին միմեանց, զգիշեր մի օգնական գտեալ նոքա, փախստեայ անկանէր յամուրս խորոց յաշխարհին. և այնուիս տաղնապած մերժեցան։ Իջեւերն ածարն՝ զոր առեալ էր յայրարատ գաւառէ, ակամայ և զլուրն ես 'ի վերայ եթող և փախեաւ։ Ուր քան զի ժամանակն ձմերայնոյ հասեալ էր և զուռծիկ թշնամեաց գնդին հարեալ էր, ոչ կարէր միով տեղեաւ համագունդ զօրուն դարմանել. այլ սփռէր տարածանէր ընդ գաւառս գաւառս աշխարհիս առ 'ի հանգիստ ձմերոցին։ Պատուէր հրամանի տայր պատրաստական լինել կազմութե՝ առ ժամանակ գարնայնոյն։ Ուր զսակաւս 'ի գլխդէն յաճագ նախարարայն՝ գործա-

կից

կից առ լեր Թաբօրի. Սունամայք 'ի վերայ ունելով զԹագաւորանիստ տեղիսն. և գունդս գունդս արձակէր յաշխարհն սենեայ. առնոյր և աւերէր զբազում գաւառս Նա՛ այնպէս 'ի նեղ արկանէր զնա և զնոր զօրսն՝ որ ընդ նմա էին, զի զէշս և զձիս մեռելոտիս՝ առ սովոյն վտանգի անխտիր ուտէին. և բազում հարուածս հասուցանէր 'ի վերայ ուրացելոյն, մինչև ժողով սուրբ եպիսկոպոսացն և ամ ուխտ քահանայութեն՝ դառնապէս արտասուս լծուցանէին 'ի վերայ չարաչար վշտացելոյն. որ բոկ և հետի վարէին զորս և զկանայս փափկունրս. և բազում տղայք զքարի հարեալ՝ ընկեցեալ յանցս ճանապարհաց: Իբրև այս ամ յաջողութիւն լինէր երկլեզուածոյն Ն. Յ. ամ եպիսկոպոսք և երիցունք՝ պատճէր հրամանի տաճեալ աշխարհին, զողջոյն ամին քաղոյ՝ պահօք և աղօ-

թիւք

Թիւք առնել մեծապէս խնդրո֊ ճածս յայ. և զտօն պատերազմայն յաջողութե՛ խառնել 'ի նոյն տօն յայտնութե՛ն Քնի, զի անխափան կացցէ մեծ յիշատակարանս այս ՃԸ Ածային անանց տօնին։ Ա՜հ զոյն զայս ամ զայցելութիւնս Տ.Ձ որ 'ի վերայ հօնաց աշխարհին մեծա֊ պէս երևեցաւ, զբեյին ոք եպիս֊ կոպոսքն և ետուն տանել յաշխարհն յունաց 'ի մեծ քաղաքն առ սուրբ ուխտ եկեղեցւոյն, զի և նոքա ա֊ ղօթս առնելով խնդրեսցեն յՏ.Ձ որպէս սկսաքս, 'ի նմին և կատար֊ եսցուք։ Ա՜հ զոմն յառաջին կայսե րոցն պարսկաց՝ լուծեալ և ածեալ առաջի նախարարացն, խօսէին ընդ֊ նմա և ցուցանէին զամ՝ վնասս, որ եղև. կամ՝ աշխարհացն աւերել և կամ՝ զօրացն արքունի հարկանել և կամ՝ որ այլ իրք առաջոյ լինելոց էին։ Ա՜հ իբրև զամ՝ բովանդակ ցուցին նմա, միաբան լինէր անբաս

տանութ՛ին զերկոցունց կողմանցն. զառաքինութեանն՝ և զյետս կացելոցն, որպէս զուր և տարապարտուց նեղեաց զնոսա 'ի հայրենի օ՛րինացն յետս կալ։ Եւ՛ զխաբէութ՛ի ապստամբն վասակայ, որպէս հայոց բանի՛ խաբեաց զթագաւորն՝ յանձն առնուլ զմոգութիւնն։ Իբրև չէր ուրուք ընդ նմա բանս եդեալ, նա յանձնէ սուտապատեակ լինել։ Եւ՛ իբրև լուաւ զայս ամ՛ իմացուցին նմա, արձակեցին զնա հրեշտակութբ՟ յաղերս ապարանութեան 'ի հնարս հայթայթանաց, թերևս կարասցեն 'ի նեղութ՛էն գողանալ զեղբայր իւրեանց։ Այլ առ նա՝ անօրէնն վասակայ գուժկանքն յառաջագոյն հասեալ էին պատմելով զաղէտս տարակուսանացն՝ որ անցեալ էին ընդ զօրսն արքունի. և ամ՛ անբաստանութ՛իւն 'ի նը՛ ուխտ եկեղեցւոյն՝ կրթեալ էր. քանզի կամք անօրինին՝ այն խակ էին, թէ զմիա

զմիաբանութիւն եպիսկոպոսացն քահանայից 'ի նախարարացն: Եւ զայն ոչ էր տեղեկացեալ նորա տակաւին, եթէ ոգի և մարմին բաժանելին առժամանակ մի, զոր տեսանել 'ի բնութեանս, այլ որ սիրով Ք.Ս յուխտ մտեալ է, այսմ անհընար է լինել:

Յաղագս այնր պատճառի, ԹԷ հրաժարեաւ արքայն շար 'ի վերայ հաւատոյն Հայոց, պատրուակ գոլ զզջացեալ զի այնու որսայցէ զնոսա 'ի ճող ամբոխմանն. զորս 'ի գիտէն զեհոցն յինչէնն՝ տարցեաւ հրապարէ:

Արդ՝ երթեալ այրն 'ի տեղի ձմերոցին, պատմեաց զայս ամ յականջս թագաւորին. շարժեալ դողացոյց, և յամ՝ զօրութենէն պակասեալ գտաւ. մանաւանդ զի յարևելից պատերազմէն կորակոր, և ոչ բարձրագլուխ էր դարձեալ. Իբրև ստուգեալ հաստատեաց 'ի վերջին հրեշտակէն՝ որ եհաս առ

նա

նա, զոմ վնաս իւրոյ գործոյն՝ ըզ
խորհրդակցօքն արկանէր, և անդէն
չիջանէր 'ի բազմաբոց բորբոքմա-
նէն։ Քանզի խցաւ բերան չար
խրատտուացն, որ անդադար յորդո
րէին զնա 'ի գործ դառնութեանն։
Խոնարհեցաւ 'ի բարձր հպարտու
թէն և զվայրենացեալ սիրան դար
ձոյց 'ի մարդկային բնութիւն։ Հայե
ցաւ և ետես զինքն լի տկարութեամբ։
Գիտաց եթէ զոմ զոր կամի առ-
նել, ոչ կարէ կատարել՝ վասն այսո
րիկ և դադարեաց 'ի յանդուգն
յարձակմանէն, և լռեցոյց զմոլեգ
նաբար գոչումն։ Իսկ որ մեծաբար
բառ ձայնիւ որոտայր, և ես ահա-
գին հրամանօքն զհեռաւորս և
զմերձաւորս առհասարակ դողա-
ցուցանէր, սկսաւ քաղցր և աղերս
բանիւք ընդ ամենեսեան, և ասել,
զի՞նչ վնաս գործեալ էր. և ո՞ր յան
ցանս յանցուցեալ էր կամ առ
ազգս, կամ առ լեզուս, կամ առ

անձն խւրաքանչիւր։ Ո՞չ ահա բա-
զում ուսմունք են յաշխարհիս
արեաց, և իւրաքանչիւր պաշտա-
մունք յայտնի են։ ո՞ երբէք նեղեց
մնաւեայ դարձուցանել 'ի մի օրէնս
մողութեն։ Մանաւանդ մի օրինաց
Քրիստոնէութեն. որպէս հաստա
տուն և ճշմարիտ կացեալ յիւր-
եանց դենին; սոյնպէս և առ մեզ`
լաւագոյն քան զայլ կեշտան նորա
երևեալ են։ Նշէրին խակ ոչ որք
կարէ դնել ընտրեալ օրինաց նոցա-
յլ` զոյդ և հաւասար համարիմ
դենին մոգդէզանց. որպէս և յար
դեալ խակ էին նորա առ նախնեօքն
մերովք, զոր եւ ես ինձէն խակ յի-
շեմ առ հարքն իմ` որ նստէր 'ի
մեծ դահս յայս։ Յորժամ սկսաւ
անդ ածել, և քննեալ զնմ ուսմու-
նքս և հաստատութիւն 'ի վերայ ե-
հաս, առաւել մեհ զատանէր զօրէնս
Քրիստոնէից քան զամենեցուն։
Սասն այնորիկ մեծարեալ շքջէին

'ի դրան արքունի, և առատաձեռն պարգևօք երաշ.ք լինէին 'ի նմանէ. և համարձակութիւն շրջէին ընդ ամ երկիր: Նա և որ գլխաւորքն էին Քրիստոնէից, (զոր և եպիսկոպոսք անուանեն) ընծայից և պարգևաց արժանի առնէր զնոսա. և իբրև հաւատարիմ ոստիկանս՝ յանձն առնէր զհեռաւոր մարզն. և ոչ երբէք սխալ լինէր մեծամեծ իրացն արքունի: Եւ դուք մի զայն երբէք ոչ յիշեցէք. այլ հանապազօր ձանձրացուցէք զականջս իմ խօսելով զնոցանէ զամ չարութիւն: Տեսանէ՞ք, զի ետուք ինձ գործել՝ զոր ինչ ոչ կամէի. և եղեն մեծամեծ վնասք 'ի սահմանսն 'ի մէջ երկուց անհաշտ թշնամեացն: Եւ մեք դեռ 'ի հեռաւոր ճանապարհի. և ոչ մի ինչ գործ պատերազմի 'ի գլուխ եկեալ. և դուք աստէն յիմում տանս յորուցէք 'ի վերայ իմ պատերազմ, որոյ չարագոյն եւ

յի

լինելոց է կատարած եւր քան զար տաքին Թշնամեացն։ Օ՜ այս ձմ եւ տուածել քան զայնս խօսէր ընդ ձմ՝ ածապանին․ եւ զինասս յանգանայն արկանէր զմոգօքն եւ զմոգպետաւքն։ Իսկ ձմ՝ վզրուկքն եւ պատոճական նախարարքն՝ (որ նստէին յատենին եւ ունկն դնէին յեղեզուկ լեզուէ նորա) ամաչեցեալ կորանային եւ ընդ երկիր պշնուին եւ զգլուխս ՚ի վեր ոչ կարէին ամբառնալ։ Բայց սակաւք ՚ի նոցանէ զմիտս հաճելով ասէին, այո քաջ եւ մեծ ուքայ, այդ այդպէս է. զոր ասացեր. եւ արդ՝ կարես զձմ՝ ազզուԹիւ վճարել. չէք այն որ, որ ի̃ քո կամս արտաքս կարէ ելանել, զի տուեալ է քեզ յաձողն։ Օ ձմ՝ զոր կամիս՝ կարես առնել. մի նեգեալ տառապեալ յանձն. քո եւ հարկանել զմտաւ մեր ամենեցուն. Թերեւս եւ դիւրին եւս լինի հնարք ելանց կատարածի. Երկայնամիտ

լեր

լեր եւ համբերութիւն. անդրէն թո-
ղացն զքրիստոնէութիւն մարդկանց,
եւ գործք զատամբականն ածեն 'ի հա-
ճանուլն Աստուծոյ թուեցան բանն
սուտքի թագաւորին. եւ անդէն
փափկացեալք կոչէր զառաջեալ յամ
ազգայն՝ որ 'ի զօրուն էին եւ ունէ-
ին զՔրիստոնէութիւն, եւ բանաբար
արգելեալ էր զնոսա զի մի որք իշ-
խան՝ լինել յանդիմանս պաշտել
զՔս. Քանզի եւ որք ընդդիմացն,
չարչարեաց եւ արգել 'ի նոյանէ-
փոյանն պաշտօնն. եւ ամենայն ու-
մանց սկսանմ եա երկիրպագանել
արեգական, եւ նստոյց 'ի սուգ տրա-
մութեան զամ զօրականսն: Իսկ այն
որ հրամայէր՝ անդէն համարձակու-
թիւն բառ առաջին կարգին հաստա-
տուն կալ յօրէնս Քրիստոնէութեան:
Իսկ՝ որ 'յանդուգնօրէն էին, ոչ կա-
մէին վարվառակք առանց մեծի ա-
պաշխարութեան գալ եւ խառնել 'ի
կարգ Քրիստոնէութեան, հրամայէր
թա

Թագաւորն՝ զի բանի կայցէն և տար-
ցին յեկեղեցին իւրեանց։ Ե՛ւ իրի
ցանցն համարձակէր, որպէս զի
առդ և գիտեսցեն ըստ կարգին իւր-
եանց՝ արասցեն. և ըշտանալ ո-
ձիկան կարգէր ամենեն իւրաքան-
չիւր. և զարդելեալ բազմականսն
'ի նոցանէ՝ 'ի տեղի հրամայէր մա-
տուցանել. և հանապազորդ յար-
քունիս մասնել՝ ոչ արդելոյր զնա.
և զամ՝ որ զիարդ ինչ և կարգ էին
յառաջագոյն, ամենեն յօրինէր.
խոնարհէր և խօսէր ընդ նոսա սի-
րով ըստ առաջին սովորութեանն։
Ե՛ւ իբրև զայս ամ՝ արար և կար-
գեաց յանդիման նոցա, թողութն
հրովարտակ առաքէր ընդ ամ՝ եր-
կիր իշխանութն տէրութն իւրոյ
մն քրիստոնէից, եթէ 'ի կապանս
որ կայցէ, յարքունի հրամանէն
արձակեալ լիցի. և եթէ ինչ ք ու-
րուք յափշտակեալ իցէն, դարձցին
ամենեն։ Այնպէս երկիրք՝ եթէ
հոյ

հայրենիք եթէ պարգեւականք ե-
թէ սակաւաճագինք, և հանեալ ու-
րուք լցէ, շնորհեցաք զի դարձցին,
Եւ իբրեւ այժմ ամենայնի զնոսա
տեղեակս առնէր, խնդրէր և 'ի նո
ցանէ վկայութիւն հաստատութե
երկրին հայոց: Եւ երդմնիւք յուխտ
մտանէր առաջի նոցա՝ հաստատու-
թք ամ՛ մեծամեծաց իւրոց, եթէ
ոչ յիշեսցէ ամենեւին զքէն վրի-
ժուցն խնդրելոյ: Որպէս ունէիք
յառաջ ճշմարտութք զօրէնս ձեր,
առնել այսուհետեւ կալարուք .
բայց միայն 'ի ծառայութենս մերմ-
մի եղանիք: Զայս ամ՛ գրէր և
ցուցանէր յերկիրն հայոց և 'ի բա
զում յայլ աշխարհ, որ ունէին զօ
րէնս Քրիստոնէութե: Եւ ինքն
գաղտ խորամանկեալ, փութապէս
դեսպան արձակէր առ մարկիանոս
կայսրն: Եւ իբրեւ ստուգեալ ճըշ-
մարտեաց եթէ հոռոմք 'ի բաց կա
ցին ձեռնտու լինել Քրիստոնէու-

թն՝ ոչ զօրու օգնականութբ և ոչ այլ իրօք, դարձեալ անդրէն 'ի նոյն կարծիս մոլորութն շրջեցան. զի զյաջողութիւն էրայն՝ 'ի ձեռն իւրոց պաշտօնէիցն հրամայէր. և այնպէս ածէր զմտաւ, եթէ ըստ առաջին կարծեացն կատարիցեն զամ. Իսկ Հայք՝ թէպէտ և ընկալան զգիրն խաբեբայ ողոքանաց թագաւորին, (որ 'ի վերոյ ունէր զանեալ կենաց, և 'ի ներքոյ զդառնութիւն մահու) զարմացեալ ընդ թերի խորհրդոյն ասէին ցմիմեանս, Զանզի լիրբ է խորամանկ չարութիւն նորա. զի երկիցս և երիցս զխորհ առեալ կշտամբեցան, և ոչ ամաչէ նա. և տեղեակ եղեալ մերոյ անքակ միաբանութես, տակաւին լքել և լինել. զհետ մնեալ՝ կամի զմեզ լքուցանել: Իսկ մեք մի համատասցուք անհաստատ հրամանի նորա. զի զոր բարեգործուն տեսաք առ ամ՝ եկեղեցիս յաշխարհին

հին պարսից։ Զի որ ինքն իւր չար է, այլում բարի ոչ կարէ լինել. և որ ինքն ընդ խաւար գնայ, այլում ոչ առաջնորդէ ճշմարտութեն լուսով։ Որպէս զի չէր յանիրաւէ արդարութիւն և 'ի ստութենէ ճշմարտութիւն, այնպէս և ոչ 'ի խաւարէ մտաց ակնկալութիւն խաղաղութեն։ Այլ մեք ապրեալքս զօրութեն Այ և հաստատեալքս հաւատովն 'ի յայն Քի, որ եկն և էառ 'ի սրբոյ կուսէն մարմին ըստ մերոյ բնութեան, և միացեալ՝ անքակտելի Ածութեն ընկալաւ ըզչարչարանս մերոց մեղաց 'ի մարմինն իւր. և նովին մարմնովն խաչեցաւ և թաղեցաւ և յարուցեալ երևեցաւ բազմաց, և վերացաւ յանդիման աշակերտացն առ Հայր իւր, և նստաւ ընդ աջմէ զօրութեն, զնոյն հաւատամք Ած ճշմարիտ. և նմին ակն ունիմք՝ փառօք Հօր զօրութեմբ գալ յարուցանել զամ

ննջե

նմջեցեալ, և նորոգել զհնութիւն արարածոց․ առնել համառօտ յաճախանելից 'ի մէջ արդարոց և մեղաւորաց։ Ոչ պատրելոց էր և ըղ տղայս․ և ոչ մոլորելոց էր և զանտեղեակս․ և ոչ խաբելոց էր և զաղէտս․ այլ պատրաստ էին ամ փոփոխութեանց։ Նա սպասէին զՏէր և անդադար խնդրէին 'ի բաղում ողորմութեանն նորա, զի յորում սկսաքս, 'ի նմին և կատարեսցուք քաջութիւն և ոչ վատութիւն։ Բան զի արդ արեւելք և արեւմուտք գետային զձեռս ամենայն լինել, և զմեզ զօր սպանանել 'ի վերայ ամ վատասկաց մերոց։ Այս են մեզ երկինք երկնաւորօքս, եթէ չէին լինել մեղուցեալ և 'ի մէտ մեր անդամ․ և 'ի վերայ պարգևաց և բարիս առնելոյ մեզ, զճշմարիտ կեանս կամին 'ի մէնջ հանել, որում չէք հնար, և այլ մի լիցի։ Իսկ արդ՝ մի հաճատացուք ան-

ար

արժան բերանոյ նորա. որ ստիպէր չարաչար յուրացութիւն, և այսօր առանց մի ինչ բարիս գործելոյ՝ լինելի նա քարոզիչ աւետեաց: Որ հայհոյէրն զՔն, և ուրացուցանէր ՚ի նմանէ զիմ՝ հաւատացեալս, այսօր ակամայ խոստովանութեան ոչ կարեմք փափագելի յանձն առնուլ: Եւ՛ որ երդնոյրն ՚ի սնոտի պաշտամանս մոլորութեան՝ անցուցանել զիմ՝ չարչարանս ընդ սուրբ պաշտօնեայս եկեղեցւոյ, արդ եկեալ գոյանալով գոհութիւն մատուցանէր. և կամի զիմ՝ չարութիւնն ՚ի մեզ հեղուլ: Ոչ այդմ հաւատամք, և ոչ սուտ հրամանիդ յանձն առնումք: Իսկ նա լրբեեալս եթէ ոչ կարաց քակել ըզ հաստատութի միաբանելոյն, յայն ժամ՝ քակեաց յինքենէ զծերն լի դառնութի, յորում հանգուցեալ էր սատանայ զօրութի իւրով, և բազում՝ գործեալ էր նո նախձիրս.

որոյ

որոյ կերակուր կամաց խուրց էր 'ի մանկութենէ՝ անարատ մարմինք ոչէց. և ըմպելի անյագութ̃ն նորին՝ արիւն անմեղաց: Յաւելոյր ևս 'ի վերայ նորա չարութ̃ն՝ և զիւր մահաբեր հրամանսն: Գունդս գունդս յիմ՝ աշխարհային գումարէր ընդ նմա. և բազում երամակս փղաց յղէր ընդ նմա: Ձաւել մեծ 'ի սահմանս հայոց, մտանէր 'ի քաղաքն փայտակարան. և զզօրսն իւր՝ սփռէր տարածանէր շուրջ զքաղաքաւն սա 'ի զգուշութիւն պաշտպանութ̃ե խուրց չարահնար խորհրդոյն: Իսկ յամուր որջն մնեալ հին վիշապն չարաթոյն՝ բազում կեղծաւորութ̃բ զինքն թագուցանելով յաներկիւղութ̃ե, հեռաւորայն ահաւին ձայնիւ սաստէր, և 'ի մերձաւորսն սողելով իբրև զօձ փչէր. Այս էր իշխան հրամանատար իւր՝ տէրութ̃ն պարսից. (որում անուն էր միհրներսեհ) և չէր ող-

ամե

ամենեւին որ իշխէր ըստ ձեւոյն նե երանել. ոչ միայն մեծամեծք եւ փոքունք, այլ եւ ինքն իսկ թագաւորն հրամանի նորա անսայր. որոյ եւ ձախողի իրայն իսկ բուռն նորա հարեալ էր:

## Գլուխ Դ:

Զրոյցք՝ վասն երկպառակութեան եղեա նին սենեկաց եւ ընկերաց նորա:

Մինչեւ ցայս վայր որ ինչ կարի զանգիտել եւ պատմել զհարուածս ազգիս մերոյ. որ յարտաքին թշնամեաց ձեռն-տուեն՝ չարաչար յարեան 'ի վերայ մեր: Արք սակաւագոյնք հարին զմեզ, յոլովագոյնք հարեալ գտանին 'ի մէնջ: Քանզի դեռեւս մաբանք եւ հաւատարք էաք. Թէպէտ եւ ոմանք 'ի ծածուկ ունէին զերկմտութիւն նենգութեան, սակայն յաչս արտաքնոյն՝ ահաւոր երեւէր

մա

մխաբանութիւնն. որպէս յերկուս և յերիս տեղիսն ոչ կարացին կալ տասջի: Արդ յայսմհետէ և անդր՝ (ուր սպրդեալ անկանի երկպառակութիւնս ՚ի նէրքս) ընդ հակել մխաբանութեանս, և երկնաճոր առաքինութիւնն հեռանայ. և անձնընտիրք լինելով՝ յոյժ բազմանայ լուսմն ոգւոյս: Քանզի հատեալ անկեալ անդամքն՝ (որ յառաջագոյն սորուն սուրբ մարմնոյս էին) գտանեն մարդ յարատաւս առաջի մեծաւկայ դիակացն, և՛ս առաւել խուռ գտանութեն ՚ի վերայ այնոցիկ՝ որ յողի և ՚ի մարմին առհասարակ գխակնանոյ: Իսկ եթէ ՚ի վերայ մեր անձին այսպէս, որչափ ևս առաւել ՚ի վերայ ողջոյն ազգի մերոյ: Այլ յայսմ՝ տեղւոջ ոչ միայն ՚ի վերայ մեր ազգի է ողբումն մեր, այլ ՚ի վերայ ազգաց և աշխարհաց. զոր և յառաջ մատուցեալ ասացից ըստ կարգի, թէպէտ և ոչ խնդութեն

մտօք

մնօք· ահա ակամայ ճառագրեմ բազումս որպէս կորեան ոմանք առ'ի ճշմարիտ կենաց խաբեանց, և պատճառք եղեն բազմաց կորստեան· ոմանց երևելեացս միայն, և այլոց երևելեաց և աներևութեց։ Ո՛հ այն ևս չար է քան զամ· դուռնն զոր բացին կորստեան, ո՜յ միայն է կարողութիւն փակել զնա· այլ ըստ մարդկան սահմանի անցեալ է հնարս։ Այս անօրէն միր_ներսեհ՝ քանզի յառաջագոյն ստուգեալ գիտէր զամբարշտութիւնն Վասակայ, և յայնմ՝ ժամանակի ևս յղէր և կոչէր առ ինքն· որպէս և նորա իսկ յառաջին զատեալ և հատեալ էր 'ի միաբանութենէ հայոց։ Եկն և յանդիման եղև, և ստուգէր նմա զիւր հաւատարմութիւն և զհայոց անխրատ ապստամբութիւն։ Յաւել և պատմեաց ևս աճելաբանութիւն զոր ինչ ոչ էր գործեալ հայոց· և կամէր ընտանեբար ընդ_

միա

ժիտ մտանել անօրինին։ Բայց նա՛ թէպէտ և 'ի ներքոյ յոյժ դառնայէր զնա, այլ՝ արտաքին դիմօք մեծարեաց զնա, և եդ առաջի նորա զմեծամեծ պարգևս երկրաւորս, և խոստացաւ նմա իշխանութիւն աճելի քան զոր ունէրն. և հայեցոյց զնա 'ի կարծիս մնոտիս, որ 'ի վեր է քան զիւր տէրութիւնն. Իբրու թէ՝ յանկ ելցէ նմա հասանել մինչև 'ի թագաւորական վիճակն. բայց միայն իւրայն հնարս խնդրեացէ, թէ որպէս քակտեսցի միաբանութիւն ուխտին հայոց. և կամք թագաւորին կատարեսցի յաշխարհին։ Ո՜հ իբրև յանձն էառ զնամ՟ լինել երթալ զկնի կամաց նորա, Գիտաց և ծերն դառնացեալ եթէ թմբրեալ և ցնորեալ և քակտեալ է 'ի հաստատութենէ միաբանելոյն, յոյժ մխիթարեցաւ 'ի միտսն արա մրայր. և էած զմտաւ թէ զամենեսեան այսպէս կորիցեմ որսալ

յան

յանդիւտ կորուստ. և իւրոյ հնարագիտութեան տայր զիմաստութիւն։ Ո՛չ այնմ ոչ էր տեղեակ եթէ նա իւրովի զիւր անձն զատեալ և որոշեալ է 'ի սուրբ եկեղեցւոյն. հեռացեալ և օտարացեալ 'ի սիրոյն Քրի. քանզի մնացուքն եղեն նմա գալուստ Որդւոյն Այ։ Ո՛չ յիշեաց զքաղցրութիւն որ Աստուածայնին. ոչ 'ի սպառնալեացն զանգիտեաց, և ոչ յաւետիսն մխիթարեցաւ։ Ուրացաւ զաւազանն՝ որ յղացաւ զնա. և ոչ յիշեաց զընկալուչ որ ծոցին՝ որ ծնաւն զնա։ Անարգեաց զմարմինն պատուհական՝ որով սրբեցաւն. և առ ոտն եհար զարիւնն կենդանի՝ որով քաւեցաւն 'ի մեղաց։ Ընչեաց զգիր որդեգրութեան, և իւրովք ձեռօք խորտակեաց զգհաստատուն կնիք մատանւոյն։ Եւ 'ի թուոյ երանելեացն, և ապստամբեցոյց ընդ իւր զապագումն։ Ձեռն էարկ կամակորութեամբ, և եմուտ

յորդեգրութիւն զինապաշտութե։ Նուէ անձն չարին, և ելից զնա սատանայ ամ՝ խորամանկութբ։ 'Ի ձեռն էառ իբրև զվահան, և ագաւ զնա իբրև զզրահս և եղև զինուոր կատարեալ կամաց նր։ Մոլեաւ հնարիւք ընդ իմաստունս, և յոյժ խորամանկութբ ընդ գիտունս։ Յայտնի՝ է անմեղս, և 'ի ծածուկ՝ ընդ խորհրդականս։ Ձեռն էարկ և եհան զբազում 'ի գնդէն ՔԻ, և խառնեաց 'ի դասն դիւաց։ Նա՛ 'ի բազում՝ և յայլ անդիս գո-գալար սողեցաւ և նմնա 'ի մէջ ամբարշտացն, և խրամ՝ հատեալ յափշտակեաց էառ և եղ յայտնէ զբազումս յաղանաց, և զյոլովա-գոյնս 'ի չինականաց, և զայլս անձնս յանուանեալ քահանայից։ Որոց անուանքն են այս՝ գործակցացն նր։ Իշխանն ռշտունեաց՝ արտակ անուն. Իշխանն խորխոռունեաց՝ Գադեշոյ անուն. Իշխանն վահու-

նեայ՝ գիւտ անուն. իշխանն բագ-
րատունեաց՝ տիրոջ անուն. իշխանն
ապահունեաց՝ մանէճ անուն. իշ-
խանն գաբեղինայ՝ արտէն անուն.
իշխանն ակէայ՝ ընձուղ անուն. իշ-
խանն ուրծայ՝ ներսեհ անուն. իշ-
խանն միւս եւս պալունեաց՝ վարա
շապուրհ անուն. սեպուհ մի ամա-
տունեայ՝ մանէճն անուն. Բազում
եւ այլ ազատ մարդիկ՝ զոր ոստա-
նիկան անուանէին՝ յարքունի տա-
նէ։ Եւ բոլորովին զիւր աշխարհն
ապստամբեցոյց յուրացութիւն.
ոչ միայն ըստ աշխարհական բազ-
մութեան, այլ զբազում 'ի սուրբ
ուխտէ եկեղեցւոյն. մանաւանդ
սուտ երիցամբքն՝ որով գործէր
զչարիս։ Երէց մի զանգակ անուն՝
երէց մի պետրոս անուն՝ սարկա-
ւագ մի սահակ անուն՝ զորս յղէր
առ անմեղ մարդիկ, խաբէր եւ պատ-
րէր սուրբ Աւետարանաւն. երդ-
մունքն եւ ասէին, եթէ 'ի թագաւո-
րէն

րէն շնորհեսցի ամենեցուն քրիս֊
տոնէութիւն։ Եւ այսպէս խորա֊
մանկ խաբէութ՟ հանէին զբազումս
'ի սուրբ միաբանութենէն, ածէին և
խառնէին 'ի դունդս ուրացողացն։
Մոլորելոց զնմ՝ գայթակղութիւն,
և արար գունդ յոր բազմաց։ Գ.րը
եայ և եցոյց մեծ հալածանաւքն
զբազումս 'ի նոցանէ՝ յականէ անը
ճանէ. և զիւր քաջութիւն արու֊
թեան մեծապէս պարծելով, որպէս
աշակերտաց 'ի մոլորութիւն խա
բէութե, և բաժանեալս և երկցեղս
երեւեցոյց զզօրսն հայոց։ Եւ իբրև
այս ամ՝ չարիք յաջողեցան նմա,
քակեաց և զմիաբանութիւն աշ֊
խարհին վրաց 'ի հայոց. և յաղօա
նիցն ոչ եւս յառաջ խառնել. և
զաշխարհն ազգնեաց՝ բռնամին խակ
օրինակի յետս կալաւ։ Գրեաց և
հրովարտակս և յղեաց յաշխարհն
յունաց, ցուցանելով նոց այլ ընդ
այլ սուտ թէ՝ ու այր մի, որում
անուն

անուն վաստակ. յայնց մամիկոնէից՝ որ կան 'ի ծառայութե յունաց. Նա՜ 'ի չուառութեն ժամանակին այրն այն՝ սպարապետ էր ստորին հայոց. և հաճատարիմ՝ էր զօրացն հռոմոց 'ի սահմանին պարսից. և արտաքին էր օրինացն ա՟յ գործովք իւրովք. Նգլտ այս վաստակ զայն վաստակ՝ իւր գործակից 'ի մեծամեծ չարիսն, զոր միաբանեցին երկոքեանն. Գործէր և ցուցանէր հանապազորդ նա, իբրու թէ ա՟մ հայք զինի իւր միաբանեցին. և զնոյն գիր մեծաւ զգուշութի՝ նեղքին վաստակն տայր տանել 'ի թագաւորանիստ քաղաքն կայսեր. մինչև զսուրբ եպիսկոպոսացն զմիտսն ուծացոյց 'ի նոցանէ. և զա՟մ զօրսն յունաց՝ յերկրայս արարէ յուխտէն. Սանաճանդ զի 'ի ձեռն տուա քահանայից պատրէր. իբրև ճշմարիտ մարդովք՝ Ս.Ենաա քան հանդերձ Խաչեամ տայր ամենեւ և զա՟մ զիւր սատանայական սու-

թին

թին նոքօք ծածկէր։ Գնէր զինքն յանձպաշտութեան կարգի, և քան զիմ՝ կողմն ուրացելոյն՝ առաւել զինքն հաստատէր, հաստատուն քան զզօրսն ամ հայոց։ Նրդնոյր և հաստատէր ևս և զիմ՝ հրամանս թագաւորութեանն յարքունուստ ցուցանէր։ Նին էին և կամք յունայ աշխարհին լսել զայն ախորժելի, այլ 'ի ձեռն սորա առաւել ևս յեղեղեալ տապալեցան։ Այնպէս առնէր և ընդ ամ կողմանս ամենայնայ աշխարհին. 'ի տանրեան և 'ի կոդրիսն. յարձակին և յաղուճանսն և 'ի վէրս և յաշխարհն խառնեալ։ յղէր պնդէր զի ասպնջականութն որք արժանի մի արասցէ։ Նըստ մեծի չարութեան նորա՝ առաւել ևս ժամանակն եբեր նմա յաջողութիւն իրայն. զի ամենեքին արտաքուստ օգնական որք ոչ դառնէ գնդին հայոց բայց յայնց հինայն որոց բանս եդեալ էր։ Սակայն և վասն

վասն նոցա կուտեալ զպղուծին բազում՝ արեաց. արգել և փակեաց զդրունս ելին նոցա : Քանզի ոչ տայր դադար ամենեւին Թագաւորին պարսից. այլ յղէր և կոչէր գունդս բազումս 'ի պաշտին ձորոյ. և զմեաց աշխարհն բոլանդակ սն դըր գումարէր : Օզորս յենալ և ձիլրալ և զմատն, զդաէն և զզոճարն, զխրամն, զհեձմատակն, բզփասին և զխոխոն և զխեւբոնան և զամ՝ զզօրան, Թօսպարանն լեռնային և զաշտային, և զամ՝ ամբակոզին յերանցն : Իր՝ զոր կորռասեալ մեծաէ պարդեւօք՝ աուատաձեռն բաշխելով զգանձսն արքունի. և էր՝ զոր հրամանաէ Թագաւորին սաստկէ տաղնապէր : Օյս ամ՝ իբրև արար և կատարեալ ըստ կամաց Թագաւորին, օրստորէ գրէր և ցուցանէր մեծ հազարապետին պարսից. որ զօրեալ Թագուցեալ էր 'ի քաղաքն փայտակարան : Համարձա

կե

կեցած ապա այնուհետեւ նա՝ ցու-
ցանել զինքն բազում ազգաց։ Էր՝
որոց ոչ արկանէր. և էր՝ որոց սէ-
րով պարգևս բաշխէր։ Կոչէր ա-
ռինքն զվասակ և որք ընդ նմա էին
իշխանքն ամենեքեան, բազում՝
պարգևս յուրքունուստ շնորհէր
նոցա և զօրացն, որ նոցա բանի էին։
Տանէր զառաջեաւ և զուրացեալ-
երկցունսն. ցուցանէր և հաստա-
տէր և յայտ առնէր, եթէ սորօք
որսայայց վնաս քակտել 'ի միա-
բան ուխտէն քրիստոնէութեան։
Իսկ հազարապետն իբրև զայն լսէր,
յոյժ շնորհակալ լինէր երկոցունցն
և յայս առաջի դնէր նոցա, թէ լիցի
մեր յաղթութիւն, զայլոց քահա-
նայից կեանս դոցա շնորհեցից. և
զմեծ վաստակս դոցա՝ ցուցից թա-
գաւորին։ Եւ այսպէս շարժեաց
և շփոթեաց զաշխարհն հայոց, մին-
չև զբազում եղբարս հարազատս
քակեաց 'ի միմեանց։ Մի եթող
միա

միաբան զհայր և զորդի. և 'ի մէջ
խաղաղութեան արկանէր խռովութիւն.
Ո՞չ անդէն իսկ յիւրում՝ աշխար-
հին՝ երկու եղբօր որդիք էին նորա
'ի սուրբ ուխտին առաքինութեան.
գրեաց և եցոյց վասն նոցա յարքու-
նիս, և էառ իշխանութիւն 'ի վերայ
կենաց նոցա. մերժեաց և եհան
զնոսա յաշխարհէն, զի մի դարձցին
անդրէն. Հալածեաց և փախոյց
զամ՝ միայնակեացս աշխարհին, ոք
հայհոյէին զանդուրձ անբարշտութին
նորա։ Արար և կատարեաց զամ՝
չարիսն ընդդէմ՝ ճշմարտութեանն.
Ո՞չ զոր ինչ ոչ գիտէին անօրէն
հեթանոսքն, իմացուցանէր վասն
ուխտին քրիստոնէութեան, թէ որ
պիղծ հնարիւք կարասցէ բառնալ
յաշխարհէն հայոց. Ո՞չ այս զամ չա-
րիս իբրև ետես 'ի նա մերինեանց
քան յանձն իւր, առաւել 'ի նա էր
յուսացեալ. Հարցանէր և ստու-
գէր ենթէ քանի՞ այր կայ 'ի հայոց

աշ

աշխարհին 'ի գնդին մարդանայ է ամ բազմութիւնն. Իբրև լուծաւ 'ի նմանէ թէ աճելի են քան զվաթսուն հազար, խնդրէր և ս տեղեկութիւն վասն իւրաքանչիւր անձին քաջութեն. և կամ քանի՞ այնորիկ են որ սպառազէնքն իցեն. և կամ քանի՞ այնորիկ են որ մերկ առանց զինու աղեղնաւորք իցեն. սոյնպէս և վահանաւոր հետևակաց. Նա՛ իբրև ուսաւ զանթիւ համարոյ բազմութեն, առաւել ևս փութացաւ ուսանել, թէ քանի՞ իցեն պարագլուխք քաջ նահատակացն. զի երիս՝ ընդ միոյ պատրաստեսցէ առ մի մի 'ի նոցանէ. թող գայլն ամ. Նա և դրօշից անգամ իւրաքանչիւր տեղեկանայր 'ի նմանէ. Նա՛ թէ քանի՞ գունդ զօրք բաժանիցեն. և ո՞րք 'ի նոցանէ սաղաւարտօք լինիցին. և ո՞ր զօրագլուխ յոր մէ կողմանէ 'ի ռազմ մտանիցէ. և զի՞նչ անուանք իւրաքանչիւր համ

հա

հազարայն լիցին. և քանի՞ փողա-
հարք ՚ի մէջ գնդին ձայնիցեն:
Պակի՞շ գործիցեն արդեօք, եթէ
արձակ բանակիցեն: Ճակատ առ
ճակա՞տ գործիցեն, եթէ համա-
գունդ ընդ մի տեղի դդիցեն: Ո՞
ր ՚ի նոցանէ յերկրայս կացցէ. և
կամ՝ ո՞ր զանձն ՚ի մահ դնելով
ջուն գործիցէ: Եւ իբրև զայս ամ̃
տեղեկացաւ ՚ի նմանէ, կոչէր զամ̃
զօրագլուխսն, պատուէր հրամանի
տայր ամենեցուն յանդիման նմա,
զի խրատու նորա լուիցեն ամենե-
քեան: Եւ զամ̃ զօրսն զօրագլխօքն
հանդերձ յանձն առնէր առն մի-
ում՝ յաւագայն, որում՝ անուն էր
Մուշկան Նիւսալաւուրտ: Եւ ինքն
խաղայր գնայր յերկիրն արևելից.
և յանդիման եղեալ մեծ թագա-
ւորին՝ պատմէր զամ̃ ինչ իրացն՝
և զիւր՝ հնարաւոր իմաստութիւն՝
և զվասակայ զխաբերայ զպատրանս
հայց աշխարհին, որպէս ու զառաջինն

զիւր

զիւր անբարշտութիւնն կամեցաւ ծածկել. այնու զի քակեալ երկպառակեալ զգունդն Հայոց։ Իբրև լուաւ թագաւորն զայս ամ՟ 'ի բերանոյ մեծ հազարապետին, դառնացաւ յանձն իւր և ասէ անսուտ երդմամբ. եթէ ապրեսցի անօրէնն այն 'ի մեծ պատերազմէն, մեծաւ անարգանօք տամ ըմպել նմա զբաժակ դառնութ՟ն մահու.

## Գլուխ Ե.

(Հինգ Երորդ՝ [illegible] [illegible])

Վասն այնր պատերազմի 'ի [illegible] [illegible], ընդ զօրսն [illegible] Վարդան, հա- [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]։

Մեծ է սէրն Ա՟Յ քան զամ՟ մեծութիւն երկրաւոր. և այնպէս աներկիւղս առնէ զմարդիկ իբրև զանմարմինս զօրս հրեշտակաց, որպէս և անդստին 'ի

սկզ

սկզբանէ է տեսանել. 'Ի բազում տեղիս մարդիկ՝ որ սիրոյն այ բազում անգամ գինու վառեալք էին, ոչ ինչ խնայեցին զանդխանելով իբրև անարի վաստակաւորաց կամ 'ի յափշտակութիւն ընչից կամ 'ի խողխողումն սիրելեաց կամ 'ի գերութիւն ընտանեաց՝ ելանել 'ի Հայրենի երկրէն և անկանել 'ի ստրկութիւն յօտարութեան. առ ոչ ինչ համարեցան զայս ամ անցս չարչարանաց. այլ միայն միաբան կալ ընդ այ, զի 'ի նմանէ միայն մի զրկել 'ի մեծութենէ. Զնա բաժական համարեցան ընտրել 'ի միտս իւրեանց. և զուարթութեամբն մեռելութիւն վարկան. և զմահն որ վասն այ, անմահից կենդանութիւն. և ծառայել յերկրի՝ ազատութիւն կենաց իւրեանց. և ընկենուլ զանձինս յօտարութիւն՝ ընտանութիւն ընդ Ն. Տ գնացին. որպէս յայս ժամանակի տեսանք աչօք մերովք.

զի

զի զնոյն նահատակութիւն նահատակեցաւ և յաշխարհս հայոց։ Քանզի իբրև ետես մեծն Վարդան զերկպառակութիւն աշխարհին իւրոյ, ոչ ինչ թերահաւատութեամբ զանդիտեաց. թէպէտ և առուգեալ գիտաց զբազմաց այլոց և երկմտութիւն, որ դեռ ևս էր նմա միաբանեալք էին։ Քաջալերեցաւ յանձն իւր, և քաջալերեաց զզօրս իւր. քանզի ինքն իսկ դեռ բռնացեալ ունէր զթագաւորանիստ տեղւոյն միաբանութեամբ նախարարացն՝ որ ոչ քակտեցան 'ի մ̃ք ուխտէն. Հրաման տուեալ ամ̃ զօրացն ժողովել յարտաշատ քաղաք։ Փոխանակ յետս կոչելոյն որ եղեն զհետ իշխանին սիւնեաց, զեղբարս կամ՛ զորդիս կամ՛ զեղբարցն որդիս՝ 'ի տեղիս նոցա մատուցանէր, և զիւրաքանչիւր զօրս տան նոցա. զի դեռ ևս ինքն ունէր զամ̃ աշխարհն։ Նա՛ ամենեքեան փութով 'ի տեղի

պա

պատերազմին եկեալ հասանէին՝ իւրաքանչիւր զօրօք և ամ՝ պատրաստութբ. նոքա և որ բունքն հաստատուն կացեալ էին 'ի տեղւոջն: Ներշապուհ Արծրունի. և Խորէն Խորխոռունի. և ինքն Սպարապետն. և Արտակ Պալունի. և Վահան Ամատունի. և Գունդն Վահեւունեաց. և Թաթուլ Դիմաքսեան. և Արշաւիր Արշարունի. և Շմաւոն Անձաւացի. և Տաճատ Գնթունի. և Ատոմ Գնունի. և Խոսրով Գաբեղեան. և Վարէն Սահառունի. և Հմայեակ Դիմաքսեան. և Գազրիկ Դիմաքսեան. և Ներսեհ Քաջբերունի. և Փարսման Մանդակունի. և Արսէն Ընծայեցին. և Վրէն Դաշտրայի. և Սպրամ Արծրունեաց. և Շխուռապետն Արքունի. և Խուրս Սուճանձտեայ. և Բոզեանքն. և Ակէացիքն. և Տըրպատունիքն. և զօրքն Ռշտունեաց. և ամ՝ գործակալքն արքունի իւ-

րաքանչիւր զօրու հանդերձ՝ որքա ամենեքեան համագունդ հասանէին 'ի գործ պատերազմի 'ի դաշտն Արտազու։ Եւ լինէր հանդէս համարուն վաթսուն և վեց հազար այր՝ ը̄ հեծելոյ և հետևակի։ Եւ էին ընդ նմա և որդին Յովսէփ և Ղևոնդ երէց, բազում և այլ ևս քահանայք, և ևս բազմագոյն պաշտօնեայք։ Քանզի ոչ զանգիտեցին և նոքա գալ ընդ նոսա 'ի գործ պատերազմին. զի ոչ եթէ մարմնական համարէին զկռիւն, այլ՝ հոգևոր առաքինութե̄. յանկային մահակից լինել քաջ նահատակացն։ Սկսաւ Սպարապետն խօսել միաբանութե̄ նախարարացն ը̄ զօրուն և ասէ, բազում պատերազմունս մտեալ է իմ, և ձեր ընդ իմ. է ուրեք զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, և է ուրեք զի նոքա մեզ յաղթեցին. և բազում այն է՝ որ յաղթօղ գտեալ եմք և ոչ յաղթեալք

թեալք. և միանգամայն այն ամ՝
մարմնոյ պարծանք էին. քանզի հրա
մանաւ անյաւոր թագաւորի մար-
տնչէաք. Իսկ որ փախչէր, վատ ա-
նուն յաշխարհի երևէր, և անո-
ղորմ մահ 'ի նմանէ գտանէր. Իսկ
որ քաջութ յառաջ մատչէր,
քաջ անուն ազգի ժառանգէր. և
պարգևս մեծամեծ յանցաւոր և 'ի
մահկանացու թագաւորէն ընդու-
նէր. Իսկ մեք իսկ աւասիկ յիւրա-
քանչիւր մարմինս ունիմք վէր և
սպիս բազումս. և բազում այն քա
ջութեն իցէ. վասն որոյ առեալ
իցէ պարգևս մեծամեծս. Անարգ
և անօգուտ զքաջութիւնսն համա
րիմ, և առ ոչ ինչ պարգևսն բա
զումս. վասն զի խափանելոց են
ամենեքեան. Իսկ արդ՝ եթէ վասն
մահկանացու հրամանատարին՝ զայն
արութիւն կատարէաք, որչափ ևս
առաւել վասն անմահ թագաւորին
մերոյ, որ Տէր է կենդանեաց և մե

ռելոց . և դատելոց է զնմ մարդ ըստ գործոց իւրոց : Ապաքէն թէ կարի շատ յառաջ մատուցեալ ծերացայց , սակայն եղանելոց եմք 'ի մարմնոյ աստի, զի մնասցուք առ Ա̃ծ կենդանի՝ որ ոչ ևս եղանիցեմք 'ի նմանէ : Արդ՝ աղաչեմ զձեզ քաջ նիզակակիցք իմ. մանաւանդ զի բազումք 'ի ձէնջ լաւագոյն են քան զիս արութե̃, և պահու 'ի մեր ըստ հայրենի պատուոյն. բայց յոր ժամ՝ ձերով կամօք և յօժարութե̃ առաջնորդ և զօրավար ձեզ կացուցէք, հեշտ և բաղձալի թուեսցին բանքս իմ 'ի լսելիս մեծամեծաց և փոքունց: Մի երկուցեալ զանգիտեսցուք 'ի բազմութէ հեթանոսացն. և մի յաղթելն որոյ առնն մտահանացուցէք զթիկունս դարձուսցուք: Ոչ է եթէ տացէ Տէր յաղթութիւն 'ի ձեռս մեր, սոսակեսցուք զօրութի̃ նոցա, զի բարձրասցի կողմն չարութեն . Իսկ

եթէ հասեալ իցէ ժամանակ կե-
նաց մերոց ընդ մահուամբ պատե-
րազմիս, ընկալցուք խնդութեամբ
սրտիւ. բայց միայն յարութիւն
քաջութեան՝ վատութիւն մի խառ-
նեսցուք: Մանաւանդ զի անմոռաց
է ինձ յիշելով զիմ և զոմանց 'ի
ձէնջ 'ի ժամանակի՝ զի զանօրէն
իշխանն խաբեցաք պատրեցաք իբ-
րև զմանուկ մի տղայ անպիտան.
իբրու այն թէ՝ 'ի վերին երեսս
զկամս նր ամբարշտութեան կատա-
րեցաք. բայց 'ի ծածուկ խորհուրդս
մեր՝ Տէրն ինքնին վկայ է մեզ, թէ
որպէս անքակ կացեալ 'ի նմանէ.
Զոր և դուք ինքնին իսկ գիտէք.
վասն սիրելեացն մերոց՝ որ 'ի մեծ
նեղութեան էին, հնարս խնդրէաք
յանդորր հանել, զի նոքօք հան-
դերձ մերս եղեալ կամէիմք ընդ
անօրէն իշխանին վասն հայրենի
Ա՛ծատուր օրինացն. Իսկ իբրև նա
ոչ ինչ կարացաք օգնել, անհնար
է

լիցի այս եթէ վասն մարմնաւոր
սիրոյ՝ զԱծ ընդ մարդոյ փոխանա-
կեմք։ Իսկ արդ՝ յերկուս և յերկը
կուսէն՝ Տէրն ինքնին մեծաւ զօրու-
Թե՛ օգնեաց մեզ. ոք զի զանուն
քաջութե՛ ժառանգեցաք. զզրան
ազգունի չարաչար հարաք, և զնոցան
անողորմ՟ սատակեցաք, և զպղծու-
Թեան կռապաշտութե՛ն ՚ի տեղեաց
տեղեաց սրբեցաք. զանօրէնն հրա
մամբ Թագաւորին եղծաք ապակա-
նեցաք, զկռամոլութեան ծուխն ցա
ծուցաք. լռեցուցեալ ալքերն դաշ-
տացան, բարձրացեալ փրփուրն
սպառեցաւ, զազանացեալ սրամբ
տութեան դադարեաց։ Որ ՚ի մերոյ
ամպոյ որոտայր, նկուն եղեալ
գտաւ ՚ի նեքոյ քան զառաջակայն
ընութեանն ընդ մեզ խօսելով։ Որ
բանիւ և հրամանաւ կամէր կառա
րել զշարութեանն ՚ի մերոյ սուրբ
Եկեղեցւոյ, արդ աղեղամբ և նե-
զակաւ և սրով կռուէր։ Որ երբե-
ղհան

զհանդերձ կարծէր մեզ ունիլ ըզ-
Քրիստոնէութիւնս, արդ իբրև
զգոյն 'ի մարմնոյ չկարէ՛ շրջել. թե
րևս և ոչ այլ կարասցէ մինչև 'ի
կատարած. քանզի հիմունք սորա
հաստատութեան եղեալ են 'ի վերայ
վիմին անշարժութեան. ոչ 'ի վերայ
երկրի, այլ 'ի վեր յերկինս. ուր
ոչ անձրևք իջանեն, և ոչ հողմք
շնչեն, և ոչ հեղեղս յարուցանեն.
Իսկ մեք թէպէտ և մարմնով յերկ
րի եմք, այլ հաւատովք յերկինս
եմք շինեալ. ուր ոչ ոք կարէ հա-
սանել յանձեռագործ շինուածն
Քի. Հաստատուն կայեք յանշուշտ
զօրագլուխն մեր, որ ոչ երբէք մո
ռասցի զգործ նահատակութեանս.
Ով քաջք՝ մեզ այս մեծապէս է՝
զոր կատարեաց Քս 'ի ձեռն մերոյ
բնութեանս, յորում և զօրութիւնն
Քի մեծապէս երևի. Զի եթէ
զայս կատարելով՝ 'ի վերայ Քսային
օրինացն պարծանս անձանց ժա-
ռան

ռանգեցաք, և զքաջ անուն ազգատոհմին մերոյ թողաք եկեղեցւոյ, և վարձուց անձկալութին 'ի Տ՟ն է է՝ որ պահէ իւրաքանչիւր ումեք 'ի մէնջ՝ ըստ յօժարութեն սրտին և ըստ առաջարկութեն գործոյ, որ չափ ես առաւել եթէ մեք մեռանիմք 'ի վերայ մեծի վկայութեան Տեառն մերոյ Յ՟ի Ք՟ի. որում և երկնաւորքն են ցանկացեալ եթէ գտը հնար: Իսկ այս պարգևք՝ ոչ ամենեցուն են անկ, այլ որոց պատրաստի 'ի բարերար Տեառնէն: Իսկ մեզ այս ոչ եթէ յարդար գործոյ ինչ պատահեաց, այլ յաննախանձ պարգևատուէն. Որպէս և ասէ իսկ 'ի սուրբ Կտակարանին. ուր առաւել եղեն մեղքն, անդէն առաւելան շնորհքն Ա՟Յ: և մեզ կարէ քաջ 'ի դէպ ելանէ հրաման պատասխանւոյս այսորիկ. Որպէս և առաւելապէս երևեցաք մարդկան ամբարշտեալք, կրկին առաւե

լա

լաւէս երևեսցուք արդ արդարեալք՝
մարդկան և հրեշտակաց և Հօրն
ամենեցուն։ Ոչ է որ օր լռեան ապա
քէն զմէնջ մարդիկ 'ի գործ ան-
բարշտութեն, արտասուք բազում
հեղան 'ի սուրբ եկեղեցւոջն. և
ես բազմագոյն 'ի մէջ սիրելեաց
մերոց։ Նաև ընկերքն մեր՝ սրով
սրտմտեալ սպաննայեն մեզ, և
մահ զատնութի 'ի վերայ կամէին
հասուցանել։ Ով ծառայքն մեր
մարտուցեալ փախչէին 'ի մէնջ։
Ով հեռաւորայ՝ որոյ լուեալ էր
զանունն Քրիստոնէութե մերոյ,
և քանզի ոչ էին տեղեակ խորհր-
դոյն մերոյ, որքս 'ի բերան առել
անդադար աշխարհէին զմեզ. և ան
գիտութի հայհոյութիս բազումս
խօսէին զմէնջ։ Ով որ մեծն քան
զամ՝ ասացից. ոչ միայն մարդիկ
յերկրի, այլ և հրեշտակք յերկինս
զերես իւրեանց դարձուցին 'ի
մէնջ, զի մի տեսուր դիմօք հայեսա-
ցին

ցին 'ի մեզ. Նա՛ արդ՝ եկն էհաս
ժամանակ՝ զի զա͞մ զկերպ անուանդ
'ի մէնջ 'ի բաց բարձցուք։ Յայն-
ժամ լիցի թախծեալ սգաւորք՝
յոգի և 'ի մարմին էաք տրտմեալք,
և այսօր զուարթացեալք՝ յերկոսեանն
առհասարակ եմք լցեալ. քան
զի և զբարերար Տէրն ընդ մեզ տե
սանեմք յառաջնորդութեան։ Չէ
մեզ մարդ զօրաւոր. այլ՝ զօրա-
գլուխն ա͞մ մարտիրոսաց։ Երկիւղ՝
թերահաւատութեան է նշանակ.
զթերահաւատութիւն մեք 'ի մէնջ
վաղ մերժեսցուք, ըստ նմին և եր-
կիւղն փախիցէ 'ի մտաց և 'ի խոր-
հրդոց մերոց։ Զայս ա͞մ առաքինի
զօրավարն խոստացաւ ընդ ամենայն
բազմութեան. դարձեալ և զմի մի 'ի
նոցանէ 'ի ծածուկ քաջալերէր և
սրտապնդէր. և զա͞մ պակասութի͞
աղքատութեանն՝ որոց ոչ ինչ գոյր՝
զօրականին յանձնէ և ընկերացն
մատուցանէր։ Որոյ զէն չգոյր, զէն

պաս։

պատրաստէր. և որում՝ հանդերձ պիտոյ էր, հանդերձ զգեցուցանէր. և որում՝ երիվար, երիվար տայր. և առատ ռոճկօք ուրախ առնէր զամենեսեան. և զուա՛րթագին զինքըն ցուցանէր ամենեցուն։ Նա՛ ըստ պատերազմական կարգին զքաջաց արանց զյիշատակարանս հանապազ երկրորդէր առաջի նոցա. զի և ինքըն իսկ տեղեակ էր 'ի մանկութէ իւրմէ որ Աստակարանաց։ Զոր և 'ի ձեռն առեալ զքաջ նկարագիրն մակաբայեցւոյ՝ ընթեռնոյր 'ի լսելիս ամենեցուն։ Նա՛ յոր դատաստանիւք գիտէր զերս իրացըն իմացուցանել նոցա, թէ որք մարտուցեալ կռուեցան 'ի վերայ Ածատուր օրինացն՝ ընդդէմ թագաւորին անտիոքոսի։ Զի թէպէտ և 'ի նմին կատարեցան մահուամբ, սակայն անուն քաջութեն եկաց մինչև ցայսօր ժամանակի. ոչ միայն յերկրի, այլ և յանմահուաց յերկինս։

Նա

Նաև զայն ևս յուշ առնէր զօրա կանայն, թէ որպէս ազգատոհմն Մատաթեայ՝ քակտեալ բաժանեցան 'ի միաբանութենէ նոր, դարձան 'ի հրամանն թագաւորին, չնեցին մեհեանս, մատուցին զոհս պղծութեն. խոտորեցան յԱ՟Ծ, և ընկալան զպատիժ պատուհասի մահուան 'ի սուրբ միաբանելոցն։ Իսկ Մատաթի և որ ընդ նմայն էին, ոչ ինչ թուլացեալ լքան. այլ ևս առաւելապէս պնդեցան և ձեռնամուխ եղեն 'ի գործ պատերազմին բազում ժամանակս։ Զայս ասէր և անդէն 'ի դաշտին զանդի առեալ զզօրսն զետեղէր. և յետ կողմանց տակաւ զայրուձին գումարէր։

Յաղագս այսր պատճառի, թէ յառաջադրեալ չորրորդ գլխոյ՝ կնքեալ պարբերութեան։ Իսկ առաքէն Պ Խոսրով 'ի հանդէս հայոց՝ զանազան օրինակ և ձայնելագեղ ...ն 'ի առաքէ Գիրս ներածէ 'ի կատարած գործոյն համառօտ։

Իսկ յետ բարձման աճուրց զօրագլխին պարսից՝ խաղայր գնայր ընդ հեթանոսական քաղաքաթին. եկեալ հասանէր յաշխարհն Հայոց 'ի Հեր և 'ի Զարևանդ գաւառ: Անդէն 'ի գաւառին զանձն առեալ՝ և նոր բանակ բոլորէր. փոս հատանէր, պատնէշ կանգնէր, շերտաւոր փակէր, ամրացուցանէր խորև զքաղաքն՝ ընդ պատրաստուլ։ Գունդ քաղում հատանէր 'ի զօրացն նորա, ապաստանիւք որչափ էր. յածուրկ առնուլ կամէր զգաւառս քաղաքին։

Զայն իբրև լուան զօրքն Հայոց, սեպուհ մի յազգէն Ամատունեաց Առանձար անուն՝ ընտրեալն յամ

զօրականէն լի իմաստութեամբ և քաջութեամբ։ Նա ընդ յառաջ նորա երկու հազարօք, եհար սատակեաց զաւագ մութեամբ գնդին. և զմնացեալսն 'ի Նոյանէ՝ անդէն 'ի բանակն փախստական արկանէր. և ինքն ողջ անդամ այսրէն դառնայր։ Ուր լինէր տօն ուրախութեան յաճուրն մեծի՝ զօրացն հայոց։

Դարձեալ միւսանգամ ուրացեալն վասակ՝ անդրէն 'ի հնարս հայթայթանաց մտանէր ըստ սովորական կեղծաւորութեան իւրոյ. Շրջեցաւ 'ի ձեռն սուտ երիցանցն՝ զոր յառաջագոյն ասացաք. նոքօք հրամանաւ արքունի 'ի պատգամաւորութիւն խօսէր, և երդմամբ հաստատէր զքրիստոնէութիւնն անդրէն։ Որ է զայս արարեալ բազում աճուրս՝ ոչ կարաց զմիաբանութիւն քակել. մանաւանդ զսուրբ ուխտ եկեղեցւոյն, որ ոչ էր հեռացեալ 'ի զօրականացն.

Որպէս երանելի երէցն Ղեւոնդ՝
հրաման տուեալ 'ի սուրբ ընկերակ
ցացն 'ի մեծն Յովսէփայ եւ յամ
մեծամեծացն՝ 'ի քահանայիցն եւ 'ի
զօրագլխացն, եբաց զբերան իւր եւ
ասէ բարձր բարբառով առաջի հը
րեշտակացն։ Յիշեցէք ամենեքեան
զհարսն մեր զառաջինս, որք յա-
ռաջագոյն քան զծագումն Որդ-
ւոյն Ա՟Ծ յուրաքանչիւր ժամանա
կի։ Քանզի իբրեւ մերժեաց եւ ընկէց
զմեզ չարն յԱ՟Ծային տեղւոյն, դատաք
մեք անկեալ ընդ անողորմ դա-
տաստանօք ըստ մեղաց յանցաւո-
րութ՟ն։ Որ 'ի կամս ազատութ՟ն
մերոյ գործեցաք զանարժանս, եւ
զարարչական զօրութիւնն շարժե
ցաք 'ի վերայ մեր 'ի ցասումն բար-
կութ՟ն։ Նա՛ զողորմած դատաւորն
յուզեցաք վրէժ առնուլ անաչա-
ռութ՟բ յարարածոցս, մինչեւ հրա
ման տուեալ երկնային ծովուն՝
հեղուլ 'ի վերայ ցամաքի, եւ հա-

տա

տատուն յատակք երկրիս ծակո-
տեալ՝ ընդդէմ զհակառակին գոր-
ծեցին. Սերինք և ներքինք հզեն
մեզ գործիք տանջանաց՝ առանց
բարեխօսի վրէժ առնուլ յանցա-
նացն մերոց։

Նոյնքէն արդարն Նոյ՝ միայն
գտաւ կատարեալ յազգի մարդկու-
թեան. որ ցածոյց զպատմութիւն
բարկութեան տէրունեան ցասմանն,
և եղև սկիզբն առաջարկութեան առ-
աճման բազմութեան մարդկային
ազգիս. Դարձեալ և Աբրահամն
՚ի փորձութեան խորում դատէ ա-
ռաքինի. և ընկալեալ պարգևան
յԱՅ լինելեան ձեռօք փոխ անդրէն
նմին մատուցանէր. Նման այսորիկ
և առակս ընկալաւ մնա ՍՏ. զի ՚ի
նմա մատուցեալ տեսանէր զանե
րևոյթ գալուստ Որդւոյն ԱՅ, և
զմիաւորութիւն անբաժանելոյն, և զծն-
նունդն անմահին, որ խոցով մահո-
ճանն խափանեաց զիշխանութիւն
մա

մահու։ Զի՞ եթէ մահուճամբ մահ
մեռանի, մի՛ երկիցուք մահականից լի-
նել ·Քնի·. զի ընդ որում մեք մե-
ռանիմք, ընդ նմին և կենդանանամք։
Յիշեցէք առաքինիք զմեծն Մով-
սէս, որ մինչև հասեալ էր 'ի յարի-
ութն հասակն, խորհուրդ սուրբ
նահատակութեան՝ 'ի տիս տղայու-
թեան երևէր 'ի նմա. և տուն թա-
գաւորին եգիպտացւոյ՝ 'ի ծառայ-
ութիւն մատնէր նմա, և ակամայ
դայեկութբ. սնուցանէր զնա։ Զի՞
'ի ժամ փրկելոյ զժողովուրդն 'ի
նեղութենէն՝ միջնորդ եղև երկնի և
երկրի. միանգամայն և ած անուա-
նեցաւ 'ի վերայ եգիպտացւոյն։
·Քանզի ուր գտաւ նա խորհուրդն
զօրացեալ, անձամբ իւրով ատեայր
զվրէժ յեգիպտացւոցն։ Իսկ ուր
Ածային յայտնութիւնն 'ի վերայ
նորա լինէր, 'ի ձեռն գաւազանին
գործէր զմեծամեծ զսքանչելիսն։
Զի՛ վասն սուրբ նախանձուն զոր
ու-

ունէր. եհար զեգիպտացին և ընդ աւազեաց. վասն որոյ մեծ անուն գնէր նմա, և առաջնորդ ժողովրդեանն զնա կացուցանէր. Եւ բազում այն է, որ հեղման արեամբ արդարացաւ, և անուանեցաւ մեծ քան զամ մարգարէսն. ոչ միայն զարտաքին թշնամեան կոտորելով, այլ զազգատոհմն իւր, որ փոխանակեցին զԱծ ընդ որթուն յանապատին. Եւ եթէ նա 'ի հեռուստ այնպիսի վրէժխնդիր էր գալստեն Որդւոյն Այ, մեք որ ականատես եղաք և մեծապէս վայելեցաք յերկնաւոր պարգևս շնորհաց նորա եւս առաւել պարտիմք վրէժխնդիր լինել մտակաց ճշմարտութեանս, որ եւ մահուամբ զանձն իւր 'ի վերայ մեղաց մերոց, և արդարացոյց զմեզ յանհնարին դատապարտութենէ. Դիցուք և մեք զանձինս մեր մահուամբ 'ի վերայ անմահ զօրութեան, զի մի նուաղեալ քան զվրէժխն-

դիրան գտանիցիմք՝

Յիշեցէք և զմեծ քահանայն Փենեհէզ, որ սրտմտմամբ նախանձ զպղծութիւնն ՚ի ժամ՝ պատերազմին, և աղէտ յազգ երդմամբ հատատեաց զքահանայութիւնն։ Մի մտանայք և զսուրբ մարգարէն Եղիա, որ ոչ կարէր համբերել հայել ՚ի կռապաշտութիւնն Ախաաբու. և արգիլ նախանձուն իւրով զութն հարիւրսն կնքեան ձեռօք կոտորեաց. և զերկու յիսունսն անշէջ հրոյն մատուցանէր լուցկի. և զմեծայլին վրէժն խնդրելով, անբմբնելի ահագին կառօք յերկրէ յերկինս վերացաւ։ Դուք ևս մեծի մասին վիճակի հասեալ էք. զի ոչ ևս կառք առաքին ձեզ ՚ի վերացումն, այլ ինքնին Տէրն կառաց և երկնաւորաց՝ հզօր զօրութեամբ և սուրբ քովք հրեշտակօք ընդ յառաջ եկեալ ձեզ՝ իւրաքանչիւր թևս բուսուցանէ, զի նորա ուղեկիցք և

նմին քաղաքակիցք լինիցիմք։ Եւ այլ զի՞նչ եւ երկրորդեցից առաջի ձերոյ քաջ նահատակութեդ. զի քան զիս տեղեակ եւ հմուտ էք սուրբ կտակարանայն։ Դաւթի ՚ի մանկութե ժամանակին՝ քարիւ կործանեաց ըղուլըն մնեղէն, եւ ոչ ինչ զանգիտեաց յահագին սրոյ հսկային։ Յրուեալ զգունդս այլազգեացն, եւ ապրեցոյց զզօրսն իւր ՚ի մահուանէ եւ զժողովուրդն ՚ի գերութէ։ Նոյն անդրանիկ թագաւորայն Իսրայէլի. եւ անուանեցաւ հայր Որդւոյն Ա.Յ. Նա անուանեցաւ առ ՚ի պէտս ժամանակին, եւ դուք ճշմարիտ ծնունդք սուրբ Հոգւոյն՝ որդիք էք Ա.Յ. եւ ժառանգակիցք Քի Սի որք զձեր բաժինն ՚ի ձէնջ հատանիցէ, եւ զձեզ օտարս եւ խորթս արարեալ՝ տարաբաժին հանիցէ։

Յիշեցէք զամենայն զօրավարսն զառաջինսն Իսրայէլի. զՅեսուն,

զԳեդէօնն, զՅեփթայէնն, և զայլսըն զամենեսին որ ճշմարիտ հաւատովք էին, հարին կոտորեցին զզօրսն հեթանոսաց, և սրբեցին զերկիրն 'ի պիղծ կռապաշտութենէ։ Նոյնպէս վասն հաստատուն արդարագործութեանն (որ ոչ ինչ երկմտեցին 'ի խորհուրդս իւրեանց,) արեգակն և լուսինն առանց ականջաց լուան, և կատարեցին զբան հրամանի Նոցա. Ծով և գետք ճանապարհ գործեցին առաջի Նոցա ըստ ոչ սովորութեան, և բարձրացեալ պարիսպք քաղաքին Երիքովի՝ ձայնիւ լոկով անկեալ կործանեցան։ Նոյնպէս այլքն ևս՝ որ ըստ հաւատոց քաջութեանն կատարեցին 'ի դարս իւրաքանչիւր, գովեցան 'ի մարդկանէ և արդարացան յԱստուծոյ. Ապաքէն Նոյն Տէր է 'ի սկզբանէ և մինչև ցայսօր և առ յապա և յաւիտենից յաւիտեանս։ Ոչ Նորոգի, զի ոչ հնանայ. ոչ մանկանայ, զի ոչ

ծե

Տերանայ. ո՛չ փոփոխի անյեղեղուկ բնութիւնն Ն.Ծ. որպէս և ինքն ասէր բերանով սուրբ մարգարէ-ին. Ես եմ Ես եմ նոյն. եմ 'ի սկզբանէ մինչև յաւիտեան. ո՛չ տամ զփառս իմ այլում, և ո՛չ զքա-ջութիւնս իմ դրօշելոց: Զայս գիտել ն՛ղքարք մի՛ թուլութեամբ լքանիցիմք. այլ՝ անդուլութ սրտիւ և հաստատուն հաճատովք՝ կամա կար յարձակեսցուք 'ի վերայ թշնա-մեացն, որ յարուցեալ կան 'ի վե-րայ մեր: Եր յոյսն մեզ կրկին ե-րեւի. եթէ մեռանիմք, կեանք. և եթէ մեռուցանեմք, մեզ նոյն կեանքն առաջի կան:

Յիշեսցուք զբանն առաքելոյ որ ասէ, թէ փոխանակ ուրախութեն (որ նմա առաջի կայր.) յանձն էառ զհամբերութիւն մահու և խաչի. վասն այսորիկ Ն.Ծ. զնա բարձրացոյց և ետ նմա անուն, որ 'ի վեր է քան զամ անուն. զի յանուն Յի ԲՃ ամ.

ամ՟ ծունր կրկնեսցի՝ երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց։ Ն՛ր քանզի ճշմարտութի՟ն միացեալ է ընդ սիրոյն Բ՟նի, հոգւոյ աչօքն տեսանէ զաներեւոյթ յստակ լոյսն ճառագայթից իմանալի արեգական, որ յամ՟ ժամ՟ և յամ՟ օր գեր 'ի վերոյ ծագեալ՝ երեւի ամենեցուն. և սրբահայեցս՝ անպղտոր յստակութի՟ ձգտեցուցանէ զհայեցուածս. և թափանցանց նղեալ ընդ յերկինս՝ յանմատոյց տեսիլն մերձեցուցանէ. և կորովութեամբ կշռէ զերկրպագութիւնն՝ զերից հաստատածոյն միաւոր զօրութի՟ն.

Ն՛ր արդ՝ որ է Ն.Յ աստւածանման ծննափոխ եղեալ լցեն, և բարձրութեան յարքունիսն հասեալ, և զամ՟ մեծութիւնն բովանդակ տեսեալ, նա միայն է որ ժառանգէ զանանց ուրախութիւնն և զանտրտմական մխիթարութի՟ն։ Ա՟ն տեարք իմ պատուականք՝ յետ այս

չափ

չափ 'ի բարձունս վերանալոյ՝ այս-
րէն յերկիր անկեալ թաւալեցիմք.
այլ՝ զտեղի առեալ՝ անդրէն 'ի բարձ-
րունն հաստատեսցուք. Թէպէտ
և հայեսցուք 'ի ստորին կողմն երկ-
րիս, տեսանեմք զսա լի չմ ապա-
կանութք և անսուրբ պղծութիւք.
Քանզի զի՞նչ աղէտք տարակուսէ
են որ ոչ գործին յերկրայինս.
անտարբեր թշուառութիւք աղքա-
տաց, անթիւ չարչարանք նոցունց.
աղցաւոր ծանրութիւնք հարկահա-
նաց. զղոճանք և կռփանք 'ի բռնա
ւոր ընկերակցաց. քաղց, ծարաւ
ըստ կարօտութն բնութն. սառ-
նամանիք ձմերայնոյ, և խորշակք
ամառայնոյ. հիւանդութիւնք տա-
րաժամք և ախտք մահաբերք՝ հա-
նապազ տանջեն զմարդիկ. Մեր-
կեղք արտաքնոց և ահք ներքնոց՝
անդադար 'ի վերայ հասանեն. Յան
կան մահու յառաջ քան զժամա-
նակն, և ոչ գտանեն. և բազումք
են

են որ փորեն և խնդրեն, խնդալից լինին յորժամ գտանեն։ Իսկ՝ որ թուէին մեզ եթէ յաջողեալք իցեն ՚ի մեծութիւն և փափկանան ուրախութիւն, պակասեալ ՚ի կեանս մեծամնեալ հպարտանան ՚ի յանցաւոր մասունս աշխարհիս, սոքա են որ կուրացեալ են ՚ի Ճշմարիտ կենացն։ Իսկ արդ՝ զի՞նչ այն չարիք իցեն, որ ՚ի նոսա ոչ գործեցին։ Ը մեծութիւն՝ խառնեալ է յափշտակութիւն ընչից աղքատաց. ընդ սուրբ ամուսնութիւն՝ գէՃ պղծութիւն. յորս վայելեն ընտրութը, նոյուն երկրպագութիւնս իւրե Ա.Յ մատուցանեն մոլորեալքն ՚ի Ճշմարիտ կենացն։ Ո՞չ ահա ամ աշխարհս՝ Արարչին բոլորեցուն է գոյացութիւն. և զոր նոքայն պաշտեն և պատուէեն, ապաքէն ՚ի նմին նիւթոյ է մասն։ Իսկ արդ՝ մասունքըն մասանցն կան ՚ի ծառայութի. զի եթէ մի մասն աշխարհիս ապա-

կա

կանացու է, հա՛րկ է թէ և ոմ՟ մա-
սունքն ընդ նմին ապականին. Նաև
՚ի մասանց անտի՝ պա՛րտ է թէ ընտ-
րութիւնք երևեսցին։ Իսկ արդ՝
որ լաւն է, (յայտնի է ամենեցուն՝
որ գիտեն իմանալ.) նա է ընտիր
՚ի մասանցն։ Ա՞պա եթէ այդ այդպէս
է, քան զմ՟ պաշտամունս հեթա-
նոսաց՝ որում երկիր պագանեն,
երկրպագո՛ւքն են առաւելեալք
քան զանբան տարերսն, որոց չա-
րաչար կան ՚ի ծառայութիւն։ Ա՛հ
զԱ՛ն Ա՛Ծ՝ որ ՚ի մարդ կերպարանաց
արարածոց տանին յերկրպագութն.
որոց մեղաց չիք քաւութիւն յար-
դար ատենին։

Ա՞րդ՝ անդր ՚ի բա՛ց թողցուք
զխառնարային խորհուրդս մոլորե-
լոցն. եղկելիս և ողորմելիս քան
զմ՟ մարդիկ՝ զնոսա համարես-
ցուք. մանաւանդ զի կամօք են կու-
րացեալ և ոչ ՚ի հարկէ, ո՛չ երբէք
գտցեն զճանապարհս ճշմարտութեն.

Ա․ՄԼ

Այլ մեր բացահայտեաց աչօք տե-
սեալ զԼոյսն երկնաւոր, մի՛ պա-
տահեսցէ մեզ խաւարն արտաքին-
ջի, ոյք էին 'ի խաւարին և եկն առ-
նոսա լոյսն ճշմարիտ, կուրացեալ
վրիպեցան 'ի կենաց: Իսկ որք ընկա-
լայքդ, հաւատովք որդիք էք և ոչ
օտարախորթք· սիրելիք և ոչ թըշ-
նամիք· բաժանորդք և ժառան-
գորդք վերին իմանալի քաղաքին:
Անդ է առաջնորդն փրկութեան մե-
րոյ· ասա քաջութեամբ նահատակե-
ցաւ, և զնոյն ուսոյց ամ՝ նիզակա-
կից գործակցաց իւրոց առաքելոյն:
Յորում և դուք էք այսօր կրկին
երևեալք· օրհնեալք հաւատովք
ընդդէմ աներևոյթ թշնամւոյն,
պատենազէն զրահիւքդ ընդդէմ
ընկերակից սատանայականն գործոյն:
Ո՛չ եթէ այսպէս և եթէ այնպէս,
զերկոսեան կողմանս 'ի պարտու-
թիւն մատնէր: Որպէս և Տէրն
ինքնին իսկ արար աշխարհի: թուե-
ցաւ

ցաւ եթէ մեռաւ, այլ նա յայնժամ տարաւ զկատարեալ նահատակութիւնն. զախոյեանն ընկէց. զպատերազմն եհար. զԹշնամիսն ցրուեաց. զաւարն ժողովեաց. զգերին դարձոյց. զպարգեւսն բաշխեաց ամ սիրելեաց իւրոց՝ ՚ի ձեռն իւրաքանչիւր առաքինութե.

Գիտէք դուք ամենեքեան. յառաջ ժամանակաւ հասեալ ձեր ՚ի գործ պատերազմի. թէպէտ և էր ձեր սովորութիւն քահանայից հանապազորդել ՚ի մէջ բանակին, ՚ի ժամ ճակատուցն յանձնել ձեզ ՚ի նոյանէ աղօթիւք, յամուր տեղւոջ ուրեք թողուլիք զնոսա. Իսկ այսօր Եպիսկոպոսք և Երիցունք և Սարկաւագունք՝ Սաղմոսերգողք և Գրակարդայք՝ իւրաքանչիւր կարգեալ կանոնօք իբրև զմառեալք զինու և պատրաստեալք ՚ի պատերազմ, կամին ընդ ձեզ յարձակել հարկանել զԹշնամիսն մըրը-

մաք

մարտութեան։ Ո՛չ եթէ մեռանել եւս հասցէ 'ի նոցանէ, սակայն և յայնմանէ ոչ են զանգիտելոց. քանզի լաւագոյն զմեռանելն կամին, քան զմեռուցանելն։ Որպէս զի կրկին աչս տացեալ ունին. հաւատոյ աչօք զքարկոծանս մարգարէ-ից տեսանեն, և մարմնոյ աչօք զքաջութիւն ձերոյ նահատակու-թեան։ Մանաւանդ եթէ 'ի ձեզ զերկոսեանն իսկ տեսանեմք. քանզի և դուք տեսանէք զչարչարանս սուրբ առաքելոյն, և զպսակումն զնմ՝ սուրբ մարտիրոսայն. որոց մահուամբն հաստատեցաւ սուրբ Եկեղեցի. և հեղումն արեանն իւր-եանց՝ եղև 'ի պարծանս վերնոց և ներքնոց։ Ո՛վ արդ մինչև 'ի գա-լուստն երկրորդ՝ նոյն նահատա-կութիւն կատարի չարչարանօք։

Այս վայր խօսեցաւ 'ի գիշերին այնմիկ սուրբ երէցն Պետրոս. և փառաւորելով կատարեաց զա-

մենն

ձննն ասելով։ Իբր սեղան ուղղելով զամենասուրբ խորհուրդն կատարեցին։ Իբր ուղղեցին աղաչան. եւ եթէ գոյր ոք երեխայ 'ի բազմութեն զօրուն, զգիշերն ամ մկրտեցին. եւ ընդ առաւօտն 'ի սուրբ խորհրդոյն հաղորդեցան. եւ այնպէս լուսազգեստք եղեն, որպէս 'ի տէրունեան սուրբ Զատկին։ Իբր մեծաւ զուարթութեամբ եւ յոյժ խնդութեամբ աղաղակեաց ամ բազմութիւն եւ ասէ. հաւասարեսցի մահս մեր մահուան արդարոցն. եւ հեղումն արեանս մերոյ՝ ընդ արեան սուրբ մարտիրոսացն. եւ հաճեսցի Տէր կամաւոր պատարագս. եւ մի տացէ զեկեղեցի իւր 'ի ձեռս հեթանոսաց։

## Գլուխ Օ.

Մէգ Երրորդ՝ Յիշէն Անգամ Ընդդէմ Յաւ Հայոց պատերազմաւ՝ Ըագաւորին դարաւէց։

Յորամ նաև ցուցանէ. Ըէ մյշ և մրջան անձան յերեքոյանց յաղմանց մարտամուէ եւոն։

Յետ այսորիկ՝ երբեւ ետես զօրավարն պարսից գնդին, եթէ հատան պատգամաւորքն 'ի միջոյ խաբել զնոսա, և բարձաւ յոյս ակնկալութենն իւրոյ՝ ցրոճել զնոսա յանքակ միաբանութենն, յայնմ ժամանակի յառաջ կոչէր զանօրէնն վասակ և զնմ ուրացել իշխանսն՝ որ էին ընդ նմա յաշխարհէն հայոց. հարցանէր զնոսա և ուսանէր 'ի նոցանէ զհնարադիտութիւն յաղթութեն. Նա երբեւ ուսեալ տեղեկացաւ զառն առն իւրաքանչիւր քաջութիւնս, կոչէր և զքաջութւմն 'ի զօրագլխացն՝ որ է-

ին

ին է իւրոյ ձեռամբ. և հրամայէր
ածել զամէջեան զերամակն փղացն.
և 'ի գունդս գունդս զզաղանսն
բաժանէր. առ մի մի փիղ՝ երեք
հազար սպառազէնք. Թող զայլ
զօրսն ամ. Խօսէր ընդ մեծամեծ
արքունի հրամանաւ և ասէր. յիշե
ցէք այր իւրաքանչիւր զպատուէր
մեծ Թագաւորին. Դնէք առաջի
զանուն քաջուն. ընտրեցէք զմահ
քան զկեանս վատութեան. Մի մո-
ռանայք զերդն և զպսակն և զուռն
և զառատաձեռն պարգևսն, որ
շնորհի ձեզ յարքունուստ. Տեարք
էք իւրաքանչիւր գաւառաց. և ու
նիք իշխանութիւն բազում. դուք
ինքնին գիտէք զքաջութիւն աշ-
խարհին հայոց և զառն առն իւրա
քանչիւր նահատակութեան արուեստ.
գուցէ ձեր 'ի պարտութիւն մատ-
նեալ, կենդանեաւ մերկեցէք 'ի
մեծ կենացն՝ զոր ունիք. Յիշեցէք
զկին և զորդիս ձեր. յիշեցէք զմե
րս

ըելլի բարեկամս ձեր. գուցէ ոտն-
հար լինիցիք յարտաքին Թշնա-
մեայն և ողջակիզեք 'ի նմին ըղձին սիրե-
լեաց: Նաև յուշ ևս առնէր նմ՝
զքաղցում ընկերակիցս փախուցելս
որք Թէպէտ և 'ի պատերազմէն
ապրեցան, սրով ընկալան զվճիռ
մահու խուրեանց. ուստերք և դըս-
տերք խուրեանց յանաշխարհիկս
գրեցան. և ամ հայրենի գաւա-
ռօքն հատան 'ի նոցանէ: Զայս
ասէր և առաւել քան զոյնս՝
տաստկացուցանէ՛ր զհրամանն ար-
քունի: Կարգէր կազմէր զզօրսն
ամ. և տարածանէր երկայնէր զճա-
կատն յերկայնութի դաշտին մեծի
և խուրաքանչիւր գաղանացն յաջմէ
և յահեկէ զերեք հազար սպառա-
զինսն պատրաստէր. և զընտիր ըն-
տիր նահատակայն՝ շուրջ զիւրև
գումարէր. և այսպէս ամրացուցա-
նէր զգունդն: Նմ իբրև զաշտա-
րակ մի հզօր, և կամ իբրև զքերդ-
մի

մի անմատոյց, Նշանս բաշխէր. զրօշս արձակէր. և 'ի ձայն մեծի փողոյ՝ պատրաստ հրամայէր լինել. Իսկ զգունդն զապարհայկ և ըզ կատշաց և զհոնաց և զգեղաց և զայլ ևս ընտիր ընտիր մարդիկ զօրուն՝ 'ի մի վայր ժողովէր և հրաման պատուէրի տայր ընդաջմէ կողմանէ լուրոյ գնդին՝ պատրաստ լինել ընդդէմ հայոց զօրավարին.

Իսկ արին Վարդան յառաջ մատուցեալ և զաճադանին հարցանէր. և միաբան ամենեցուն խրատուք՝ զզօրագլուխսն կարգէր. Զգունդն առաջին՝ տայր 'ի ձեռն իշխանին Արծրունեաց. և նիզակակից նմին՝ զմեծ իշխանն Մոկաց. և զայլ ն̃մ նախարարեանն համահարցս երկոցունց՝ և զն̃մ բազմութիւն գնդին՝ Թևս աստի անտի կազմէր նոցա. Եւ զգունդն երկրորդ՝ տայր 'ի ձեռն Խորէնայ Խորխոռունոյ. և նիզակակից նմա՝ ըն-

ծայ

ծայ լինէր Ներսէհ Քաջբերունի:
Նա զգունդն երրորդ՝ մատուցանէր 'ի ձեռն Թաթուլայ Վանանդացւոյ. և նիզակակից նմա՝ հրամայէր զՏաճատ Գնթունի. և զբազումս 'ի քաջ արանց աստի և անտի 'ի թևս նոցա: Յանձն իւր առնոյր զգունդն չորրորդ. և նիզակակից իւր զքաջն Արշաւիր և զհարազատ եղբայրն իւր զՀամազասպեան: Վարդէր և կազմէր զճակատն յորգորելով՝ ընդ ամ երեսս դաշտին, դէմ յանդիման արեաց զնդին առաջին տղմուտ գետոյն:

Նա իբրև այսպէս պատրաստեցան երկոքեան կողմանքն, սրտմտութեամբ և մեծաւ բարկութեամբ զայրանային և գազանացեալ զօրութեամբ յերեարս արձակէին. և ամբոխ աղաղակին յերկոցունց կողմանցն՝ իբրև 'ի մէջ ամպոց շփոթելոց ձայթմունս գործէր. և հնչմամբ ձայնիցն զքարանձաւս լերանցն շար

ժէր. 'Ի բազմուէ սաղաւարտից և 'ի փայլուն պատենազէն վառելոց՝ երբև նշոյլք ճառագայթից արեգական հատանէին: Նաև 'ի բազում շողալ սուսերայն և 'ի ճռճել բազմախուռն նիզակացն՝ երբև յերկնուստ՝ ահագին հրձգութիւնք յեռային: Քանզի ո՞չ իսկ է բաւական ասել զմեծ տագնապ ահագին ձայնիցն: Որպէս կափիւնք վահանաւորացն և ճայթմունք լարից աղեղանցն՝ զլելիս ամենեցուն տահատարա՛կ խլացուցանէին: Ընդ-էր տեսանել շատալ մեծի տագնապին և զաղէտս անբաւ տարակուսանացն երկոցունց կողմանցն, առ 'ի յանդուգն յարձակմանն՝ զմիմեանս բախելով: Քանզի թանձրամիտքն յիմարէին. և վատասիրտքն լքանէին. քաջքն խիզախէին. և նահատակքն գոչէին. և խումբ արարեալ ամ՝ բազմութեն, դգեան 'ի մէջ վակէին. և ղանգիտեալ

գունդն պարսից 'ի դժուարութե-
ղետոյն, զանդեաւն զեռել սկսան։
Իսկ գունդն Հայոց՝ հասեալ ան-
ցանէին մեծաւ զօրութբ. սաստ-
կապէս բախեալ ընդ միմեանս յեր-
կոցունց կողմանց, բազում վիրա-
ւորս յերկիր անկեալ՝ դիաթաւալ
խաղային։

Հայնմ մեծի տագնապի 'ի վեր
հայեցեալ քաջն Վարդան, տեսա-
նէր զընտիր ընտիր քաջ նահատա-
կացն պարսից զօրուն զի զձախա-
կողմն շարժեցին զհայոց գնդին.
մեծաւ ուժով յարձակէր 'ի տեղին
և զաջ թեւն գնդին պարսից՝ բե-
կեալ արկանէր գաղանօքն. և շըր
ջան առեալ կոտորէր մինչև 'ի նոյն
տեղի. և այնպէս շտապ տագնապի
'ի վերայ հասուցանէր։ Մինչև
գունդն մատեան, քակտեալ բա-
ժանեցան 'ի մեծամուր պատրաս-
տութենէ. Դեռևս քաջ քաջի փա-
խուստ դառնային, այլ՝ դէտակն
'ի

'ի վեր ամբառնայր Մուշկաննիսալաճուրս, քակեալ զամենս տեսանէր 'ի գնդլին Հայոց. և զկնի մնացեալ՝ 'ի հովիտս լերանցն։ Սման որս և զաղաղակ բարձեալ քաջալերէր շուրջ զիւրև զզօրսն արեայց, որք պանդխտեալ կային ընդդէմ գնդլին վարդանայ։ Նա անդէն 'ի տեղւոջն երկրին կողմանքն ըզպարտութիւն խոստովանէին. և առ յոյժ թանձր անկեալ դիականցըն՝ իբրև զքարակոյտս դերբկաց երևէին։

Զայն իբրև ետես Մուշկաննի սալաճուրս, մնայր զազանացն արտաշիրի. որ նստէր 'ի բարձր և յամուր քաղաքի. և 'ի ձայն մեծ գալ փողոյն զիւր գունդն ստիպէր. և յառաջամարտիկ զօրավքն՝ զնա 'ի մէջ փակէր։ Իսկ կորովին Վարդան խուռն քաջ նիզակակցօքն՝ ոչ սակաւ նախճիրս 'ի տեղւոջն գործէր. յորում տեղւոջ և ինքն արժա

ժանի եղև առնուլ զկատարեալ նահատակութիւն։

Եւ յերկարել գործոյ պատերազմին՝ օրն տարաժամէր և մօտ առ երեկս կարճատէր։ Բազմաց օրահասք մահու, մանաւանդ 'ի թանձրութէ անկեալ դիականցն մօտ առ մօտ խառնեցել՝ իբրև զփայ տաճարս մայրաճորաց։ Ընդ էր տեսանել զընկումն նիզակացն և զխորտակումն աղեղանցն։ Վասն այնորիկ և ոչ կարէին իսկ կալ ճշմարտիւ 'ի վերայ սուրբ մարմնոյ երանելեացն. և սաստիկ խուճապ տագնապէ էր կողմանցն երկոցունց անկելոց։ Եւ որք մնացեալքն էին, վատնեալք և ցրուեալք լինէին 'ի լեռնադաշտան ամուր ձորոյն։ Եւ յորժամ պատահէին միմեանց, զարհեալ միաբանդամ զմիմեանս սատակէին. և մինչև ցմուտս արեգականն՝ անդադար լինէր գործ զառնութեան։ Եւ քանզի գալնա-

նային էր ժամանակն , ծաղկալից դաշտքն դառնային 'ի յորդահոսանս արեանց բազմաց։ Մանաճանդ յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ դիականցն անկելոց, սիրտն բեկանէր և աղէքն դալարէին լսել զմնչիւն խոցելոցն. զմռնչիւն բեկելոցն. զթաւալգլոր խաղալ մկրաճորելոյն. զտրտմութիւնն զանարիարանցն ։ զճչիւն կանանցեացն. զողբս 'ի վերայ սիրելեացն. զաշխարանս մերձաւորացն. զվայ՝ աճառ բարեկամացն։ Զանզի ոչ եթէ կողմէր որ յաղթեաց, և կամ կողմէր որ պարտեցաւ, այլ՝ քաջք ընդ քաջս ելեալ, երկոքեան կողմանքն 'ի պարտութիւն մատնեցան։

Բայց քանզի անկեալ էր զօրավարն Հայոց 'ի մեծ պատերազմին, ոչ ոք գոյր այնուհետև 'ի միջի գլխաւոր, յոր յեցեալ ժողովէին գունդք մնացելոցն։ Թէպէտ և բազում այն էր որ ապրեցանն՝ քան

քան որ եթէ մեռանն, սակայն յա-
նեալ ցրուեցան և հասեալ անկա-
նէին ՚ի տեղիս տեղիս յամուրս աշ-
խարհին. և բռնանային ՚ի վերայ
բազում գաւառաց և բերդաց, զոր
և ոչ առնուլ իսկ ոք կարէր։

Եւ այս են անուանք քաջ նահատակացն՝
որ անդէն ՚ի տեղւոջն կատարեցան։

Յազգէն Մամիկոնէից քաջն
Վարդան հարիւր երեսուն
և երեք արամբք. յազգէն Խորխո-
ռունեաց Խորէնն կորովի տասնե-
ինն արամբք. յազգէն Պալունեաց
արին Արտակ յիսուն և եօթն ա-
րամբք. յազգէն Գնթունեաց զար-
մանալին Տաճատ տասն և ինն ա-
րամբք. յազգէն Դիմաքսենից Հ-
մայեակ քսան և երկու
արամբք. յազգէն Քաջբերունեաց
հրաշակերպն Ներսեհ եօթն ա-
րամբք. յազգէն Գնունեաց ՚մա-

նու

նուէին Սահան երեք արամբք. յաղ
դէն Ընծայնոց արդարն Արսէն
եօթն արամբք. յաղթէն Արաճանձ
տայ աւջաղէմն Գարեգին երկու
հարազատօքն՝ տասնեւ արամբք:
Այս երկու հարիւր ութսունեւ
հինգ նահատակք ընդ նմն մեծա-
մեծ նախարարսն, որ անդէն 'ի տե
ղւոջն կատարեցան: Եւ յարքունի
տանէն Արծրունեաց՝ և իւրաքան
չիւր յայլոց նախարարաց տանէն՝
(Թող զայս երկու հարիւր ութ-
սունեւհնգեանս) այլ ևս եօթն
հարիւր քառասուն այր. որք զան-
ուանս իւրաքանչիւր 'ի դպրութե
կենաց գրեցին: 'Ի նմին աւուր 'ի
մեծ պատերազմին և միահամուռ
լինէին ամենեքեան հազար երեսուն
և մեկ:

Իսկ 'ի կողմանէ ուրացելոցն՝
անկանէր յայնմ աւուր երեք հա
զար հինգ հարիւր քառասուն և
չորք այր: Ինն այր 'ի նոցանէ 'ի մեծ

պատ

պատուաճորայ էր. վասն որոյ և
կարի յոյժ 'ի խոր խոցեցաւ Սուշ
կաննիսալաճուրտ: Սանաճանդ իբ
րև ետես զանհնարին հարուածսն
եօԹնապատիկ զիւրոյ գնդին քան
զհայոց, ընկաւ անկաւ զօրուԹիւն
ուժոյ իւրոյ. և ոչ հանդարտէր
կալ 'ի վերայ խորհրդոյ մտացն.
քանզի ոչ որպէս կարծէր զպատե
րազմն՝ կատարեցաւ: Սանաճանդ
իբրև հայէր տեսանէր զբազմուԹի
անկելոց իւրոյ կողմանն, և Թիւ
համարոյ եւս առնէր, իբրև այնչափ
յոլով գտանէր զիւր անկեալս քան
զհայոց գնդին, եւ առաւել վասն
երևելի արանցն՝ (զոր յականէ ան
ուանէ գիտէր Թագաւորն,) 'ի մեծ
տագնապի լինէր այրն յանձն իւր:
Որդարութէ̄ զիրսն գրել և ցու
ցանել՝ 'ի Թագաւորէն երկնչէր:
Պարսկաւ և Թագուցանել եւս
ոչ կարէր. քանզի ոչ ծածկէր այն
պիսի մեծ կսիճ: Նա մինչեւ

յայ

յայսմ մտաց խորհրդել էր յանձն իւր և նեղէր 'ի միտս իւր, ուրացեալն վասակ՝ (որ զանձն իւր 'ի մէջ գաղանայն Թաքուցեալ ապրեցոյց,) մխիթար մատուցանէր մտայն չքերոյ և ուսուցանէր նմա հնարս նենգութ՟, որպէս կարասցէ մարտնչել ընդ ամուրան խաբէութ՟ Տրդմունս կնքէր արքունի հրամա նաւ՝ վկայութ՟ անձին իւրոյ. և խաբերայ երիցամբքն՝ որ Է նմա էին, պատգամաւորս առնէր զնա և երևե ցուցանէր զթողութ՟ ապստամբութեն՝ ազ. իշխանութ՟ եկեղեցւոյ շնորհել անդրէն. և զնա՛ կարգս անդրէն յարմարել ըստ առաջին սովորութեն. Մեծապէս և հրաման Թագաւորին հաստատութ՟ էր տուեալ, (վասն զի յոյժ բեկաւ զօրութիւն նորա, որպէս զի երկոքին կողմանք նորա հարսն,) սակայն զօրքն հայոց վասն նենգութեան վասակայ՝ որ բազում անգամ հանեալ

նեալ էին 'ի վերայ ստութն նորա. վասն այնորիկ և հրամանի թագա-ւորին վաղվաղակի ոչ կարէին հա-ւատալ։

## Գլուխ Ի։

Նովին երրորդ ճեղանոք՝ խորհրդածէ պար-ցեալ տառապանութեան հայոց. և շարադրոյն նա երկնէ անօրէնութեան Վասակայ չարին։

Յառաջիկայս գլխոյս պատմէ, թէ որպէս աղետս հասին երերայ՝ յայնժամ տեղէն։

Արդ՝ դարձեալ յայնժամ ուրացեալն Վասակ՝ դրդեց զմնաչխանխարաճուրս և զքամ՝ աճապանելն արեան. առեալ զզօրսն հասանէր 'ի վերայ ամրին, յոր անկեալ էին դունդն մի 'ի զօ-րացն հայոց հանդերձ սուրբ քա-հանայիւքն. և մարտ եդեալ կռո-ւէին շուրջ զբերդաւէն։ Իբրև ոչ ինչ կարացին ազդել նոցա, դար-ձեալ

ձեռալ յերդմունս ապաստան եղեն, զի ուխտին իջուսցեն զնա առանց դատ լինել գործելոյ. և երկիցս անգամ՝ ետուն տանել զաճեմարանն։ Թէպէտ և քահանայքն յանձն առնուին զինջանել կալ առաջի, բազումք 'ի զօրականացն ոչ կարէին համառալ սուտ ուխտին Վասակայ։ Մի ոմն 'ի քաջ զօրականէն Հայոց՝ (որ անկեալ էր 'ի բերթն փախըստեամբ՝ Նակ անուն,) եկեալ 'ի պարիսպն, թշնամանս դնէր անօրինին և ցուցանէր առաջի պարսից զօրագլխին զնա՝ չարիսն՝ զոր անցուցեալ էր նա 'ի աշխարհն Հայոց։ Որոց բազում վկայութիւն լուեալ արդարացուցանէին զամբաստանութիւնն. ոչ միայն 'ի Հայոց կողմանէն, այլ և առաւել՝ և զօրքն պարսկաց։ Այն այրս այս՝ 'ի նմին գիշերի եօթն հարիւր արամբք ել գնաց 'ի բերդէ անտի. և ոչ կարացին 'ի նա ձեռն արկանել։ Իսկ որ 'ի

'ի ներքս յամրին մնային, թէպէտ և գիտէին ճշմարտիւ զխաբեբայ երդմունս նոցա, ոչ ունէին համբար 'ի ներքս, իբրև ոչ կամէին իջեալ կային առաջի, հրամայեաց ապականել 'ի նոյանէ երկու հարիւր տասն երեք այր։ Աղաղակեցին ամենեքեան և ասեն, գոհանամք զքէն Ած մեր. մինչդեռ չէն են եկեղեցիք, և անքակ տաճարք վկայից, և միայն ոք ուխտ եկեղեցւոյ, առաքինացեալ արժանի արարեր զմեզ կոչմանդ երկնաւորի։ Հաւասարեսցի մահս մեր ընդ մահ քաջ նահատակացն. և խառնեսցի արիւնս մեր ընդ անկեալ վիրաւորացն. և հաճեսցի Տէր կամարար ընդ եկեղեցիս իւր՝ բազմութք կամաւոր զոհարակայս՝ որ ելանեն 'ի վերայ սուրբ սեղանոյս։ Զայս ասելով 'ի սեղանոյն կատարեցան երկու հարիւր տասն երեքն։

Իսկ սուրբ քահանայքն որ անդ

դիպեցան յամուրսն, (երանելիքս այս՝ Յովսէփ և Ղեւոնդ բազում ընկերակցօքն իւրեանց՝) մատուցին և նոքա զպարանոյս իւրեանց՝ առաջի սրոյ դահճապետին ասելով զնոյն բանս՝ զոր խօսեցան երկու հարիւր տասն երեքն։ Քանզի ոչ եթէ ակնկալութիւն ինչ էր երանելեայն ըստ մարմնաւոր կենացս, այլ՝ իմաստութբ̃ հնարս խնդրէին լինել՝ փոխանակ ամ̃ աշխարհի շինութեան։ Վասն որոյ և բոլորք 'ի դուռն կարդացին, և զամ̃ ամբաստանութիւնն արկանէին զանօրէնն Վասակաւ։ Զայս իբրև լուաւ Մուշկաննիսալաւուրտ, ոչ իշխեաց 'ի նոսա ձեռն արկանել մահուամբ. այլ զՅովսէփ և զՂեւոնդ դանհարեալ՝ հրամայեցին պահել զգուշութբ̃. քանզի բոլորք 'ի դուռն կարդացին։ Իսկ զայլ քահանայսն արձակեցին յիւրաքանչիւր տեղիս, հրաման տուեալ վասն շինութեան

և խաղաղութեան աշխարհի։

Այլ մարդիկն հայոց՝ որ հա-սեալ էին 'ի վերայ յեղյեղուկ հրա-մանաց թագաւորին, և ուրացեալ 'ի չարիմացն վասակայ, ոչ ինչ հա-ճառային սուտ թողութեն. այլ քաջալերէին զմիմեանս և ասէին, զի՞ պիտոյ է մեզ ընաւէ կեանք ան-ցաւոր աշխարհիս. և կամ ընդէ՞ր տեսանեմք զարև յետ մերոյ սիրե-լեացն։ Օ՜ լինե թէ քաջ նահատակքն մեր անկան 'ի մեծ պատերազմին, և բազում վիրաւորք տապալեցան յարիւն յապաժուժ 'ի մէջ դաշտին, և ամենեցուն մարմինքն եղեն դէշ թռչնոց և կերակուր գազանաց, և պատուական նախարարքն մեր հա-յին յանարգութիւն թշուառու-թեն, լքին զիւրաքանչիւր իշխանու-թիւն և են 'ի հալածանս նեղութե. և նմ փափկութիւնն հայոց եհաս 'ի վիշտս վտանգի և յանհնարին յա-ղակութիւն, ոչ մնացաք խաղե

քայ հրամանացդ։ Թողին այնուհետև զիւրաքանչիւր զգեօղս և զաւանս և զագարակս, եկին հարսունք յառագաստաց և փեսայք 'ի սենեկաց, անկան ծերք յաթոռոց և տղայք 'ի գրկաց, երթային երիտասարդք և կուսանք և ամ բազմութիւնք արանց և կանանց՝ հասեալ՝ ունէին զամուրս յանապատին և զանձաւս տեղիս բազում՝ լերանց։ Լաւ համարէին զգազանաբար բնակութիւնն անպաշտութ՝ 'ի քարանձաւս կերոյ, քան ուրացութե՛ փափկանալ յիւրաքանչիւր շինածս։ Նոյնց արտնջելոյ համբերէին խոտաբուտ կերակրոյն. և ոչ յիշէին զառօրական խորտիկսն։ Համարեալ էին նոցա՝ զարաւօքն էբրև զյարկս բարձր շինուածոյ. և գետնանկողինքն՝ իբրև զնկարեալ պատշգամբ։ Այգմունք էին նոցա՝ մրմնջունք երգոց և ընթերցուածք սուրբ գրոց կատարեալ

օրհ

օրհնութիւնք։ Նմանայն մարդ յանձն իւր եկեղեցի էր. նոյն ինքն քահանայ. մարմինք իւրաքանչիւր՝ սուրբ սեղան. և ոսկերք նոցուն՝ պատարագ ընդունելի. քանզի ոչ ոք 'ի նոցանէ ողբայր յուսահատութեամբ՝ զանկեալն 'ի սրտի. և ոչ հեծեծելով հառաչէր 'ի վերայ մերձաւոր սիրելեաց իւրոց։ Խնդութեամբ ընկալան զյափշտակութիւն ընչից բազմաց. և ոչ յիշէին ամենևին, եթէ եղեալ իցեն նոցա ստացուածք։ Համբերութեամբ ճգնէին. և մեծաւ առաքինութեամբ տանէին զքաջ նահատակութիւնն։ Ոչ եթէ ոչ բացաւ աչօք տեսանէին զայնն խնդալից, և ոչ կարէին իսկ գործել զայնպիսի մեծ առաքինութիւն. քանզի բազումք յազգէ մեծ նախարարաց՝ էին եղբարք և որդիք և դստերք հանդերձ ամենայն սիրելովքն իւրեանց՝ 'ի մէջ ամրական վայրենեացն։ Ոմանք յանկոյս երկիրն

խաղտեաց, և այլք բաղումք 'ի կողմանս հարուածոյ յանմատոյց ամուրան ամրոցաց. և կէսք թանձրախիտ մայրիսն արձախայ, և այլ ոմանք ոմանք՝ անդէն 'ի միջոցի աշխարհին բունայսն 'ի վերայ բաղում ամրոցայն: Իսկ ամենեքեան մեծաւ համբերութեր տանէին բաղում նեղութեան վասն յուսոյն Ք.Ի. աղաչելով զայս միայն խնդրէին յՔ.Ի. մի տեսանել նշն զաւեր որ եկեղեցեացն:

Ք.Ալ որպէս ցուցաք բաղում անդամ զամբարշտին չարութին, յորդորէր և ստիպէր զզօրսն պարսից 'ի մնտաւոր կողմանց աշխարհին, զի հրամանաւ արքունի՝ զօր եկեսցէ յօգնականութիւն նոցա: Իսկ համեալ բաղում այրուձի, յաձեռյր 'ի թիւ անկեալոյն և լինէր գունդ բաղմութեն իբրև զաւաղնն. և յաւաջ խաղային 'ի միջոց աշխարհին. մերա եղեալ կռուէին ընդ մեծ ամուրս կալցյս լեռինն: Իսկ

որք 'ի ներքսն էին, քաջութեամբ մարտուցեալ՝ հարկանէին զբազումս 'ի գնդէն պարսից. և զմնացեալսն փախստական 'ի բանակն արկանէին։ Իսկ նորա դարձեալ յողջքանս մատուցեալ, նուաճել խարէութեամբ կամէին։ Իբր ոչ ոք հաճատաց իջանել առ նոսա, զի մի մատնեսցին չարաչար 'ի ձեռս թշնամեաց, սակայն վասն երդմնոցն հարկ եղև քահանայիցն իջանել առ նոսա։ Որում անուն էր Արշէն, խօսէր ընդ նոսա յաղերս ընտանութեան և ցուցանէր զանձինս փախուստ անմեղայն։ Արկանէր դութ առաջի ուրացելոյն վասակայ. և պաղատելով յիշեցուցանէր նմա զառաջին կարգ ուխտին քրիստոնէութեան, զի թերևս սակաւիկ մի քաղցրասցի յանհնարին դառնութենէ։ Այլ նա ոչինչ լուաւ և անսաց բազում բանից նորա. կապեաց և խաղացոյց զերանելին, և որք ընդ նմա իջեալ էին

էին։ Մանաւանդ իբրեւ եւս եթէ երթայ զօրավարն զհետ խրատու կանաց նորա, սկսան այնուհետեւ 'ի բարուց տեղիս արձակել զասպատակաւորսն. Եւ զոր արտաքոյ քան զամուրսն գտանէին զբազմութիւն մարդկանն, վարէին 'ի գերութիւն. Եւ զամբար 'ի ձեռին տանել՝ հրձիգ առնէին զբազում տեղիս։

Իսկ որք էին յամուրսն ամրեաց, իբրեւ լուան զայս ամենայն չարիս զոր արարին զօրքն արքունի, ոչ ինչ շահ օգտի համարէին զկեալն եւ զկեալն 'ի մէջ ամրականացն։ Քաջութի՛ ելեալ յարձակեցան օգնականութ՛ ամրականացն. Եւ հասեալ 'ի մօտաւոր աշխարհն սպարկաց, յանխնայ կոտորելով նախճիրս արեան գործէին. Եւ զմնացեալսն՝ գերի առեալ տանէին. Եւ անդրէն յամուրսն անկանէին. Եւ զշինուածս աշխարհին՝ զամբար 'ի ձեռն տանել,

հրոյ ձմարակ տայրն։

Վարձեալ և որք էին 'ի լերինսն խաղտեաց, իբրև տեսին թէ յան-դըգնաբար զօրքն պարսկաց յան-երկիւղս իջանեն յամուրս աշխարհին Հայոց, յարձակեցան և նոքա մեծամեծ զօրութեամբ 'ի ձորագաճառան տայոց. և գտին անդ գունդ բա-զում 'ի զօրացն ալքունի, որ գերի առնուլ կամէին զամբականսն աշխարհին. Վարձեալ և կարծէին ևս եթէ գանձ նախարարացն անդ իցեն. վասն այնորիկ և անխնայ յուզէին զվայրսն. Նա և տեսին ևս անդ 'ի գեւղս երկուս՝ զի զեկեղեցիսն այրեցեալ էին, առաւել ևս այնք 'ի նախանձ բարկութեան բրդեցան. յարձակեցան հարան 'ի դիմի զինեանց. և կամակորութեամբ յաղ-թեալ ըեկին արկին զզօրութիւն գնդին պարսից. և կոտորեցին ըզ բազումն 'ի նոցանէ. և զմնացեալսն փախստական հանին յաշխարհէն։

Իսկ

Եւ յայնչափ յանդուգն յարձակ-
մանէն՝ միայն երանելին Հմայեակ
եղբայր սպարապետին Հայոց՝ յան
խնայ քաջութեամբ մարտուցեալ
կատարեցաւ նահատակութեամբ
՚ի վերայ սուրբ ուխտին միաբանու-
թեն. և այլքն ամենայն ողջանդամք
ապրեալ, երթային զհետ փախս-
տականացն: Եւ իբրև այս այսպէս
կատարեցաւ, դադարեցին զօրք
թագաւորին՝ խառնամուխ լինել
յնմ տեղիս անխտրութե. և ևս
առաւել ձեռնապահ լինել եկեղե-
ցեայն: Պարծել միւսանգամ՝ անդ
րէն հարցանել սկսան յաղթունին:

Եւ որ յարձակս մայրենին ան-
կեալք էին փախստականք, ոչինչ
լուեալ դադարեցին խաղաղութե.
այլ հանապազ յղէին յաշխարհն
հոնաց. շարժէին և յորդորէին
զզունդն հոնաց. և յիշեցուցանէ-
ին նց զուխտ զոր եդեալ էր ընդ
հայս և անսուտ երդմամբ հաստա-
տեալ:

տեալ։ Զանձն թուէր բազմաց 'ի նոցանէ․ լսել զբանսն քարոզութեան։ Նաեւ մեղադիր եւ յոյժ լինէին նոցա, եթէ 'ի կախէն ընդէ՞ր ոչ եկիք պատրաստութեամբ։ Նա՛ երբեւ յառաջնումն ինչ ոչ հնարէին զմիմեանս հաճանեցուցեալ, դունդ բազում գումարէին եւ անդէն յարձակեալ հասանէին 'ի սահմանս տէրութեան պարսից. եւ զբազում գաւառս հարեալ՝ բազմագոյն եւս գերի առեալ տանէին յաշխարհն իւրեանց եւ յայնի ցուցանէին թագաւորին զմիաբանութիւն, զոր ունէին ընդ դնդին հայոց։

Իսկ՝ երբեւ այս ամ՟ ազդումն հասանէր առ զօրավարն պարսից, որ մնեալ զայրանայր եւ մեծ բարկութեն կուտէր 'ի վերայ անօրինին վասակայ. երբեւ թէ նա իցէ սկիզբն եւ առաջնորդ ամ՟ չարեացն՝ որ գործեցան։ Նա՛ անդէն չու արարեալ խաղայր գնայր հասանէր յաշ-

խաւրհն պարսից։ Գրէր և ցուցանէր յարքունիս զամ՝ ստուգութ. և զվնաս գործոյն արկանէր զուրացելոցն։

Սա պատմէ, թէ զիարդ խորեցան համատարածեալն յարքայէն ՚ի դառն զամէնատանէլոյն՝ որ ՚ի մէջ վառարանաց շարէին հերու ներհանին։

Իբրև լուաւ Թագաւորն զամ՝ աւեր աշխարհին և ստուգեաց զիրս մեծի պատերազմին, բեկանէր անկանէր ՚ի մեծ խորոխտալոյն. և լռեալ դադարէր ՚ի հանապազորդ և ՚ի խաւերայ խորհրդոյն։ Յուզէր և քննէր զվրիպումն անհանճար գործոյն. և կամէր տեսանել ասելով, ո՞ րք իցէ որ զիս ճշմարտութեամբ ՚ի վերայ իրացդ հասուսցէ։ Իսկ որ գիտակ էր անօրէն գործոյն, անդէն ՚ի զրանն արքունի նոյն հազարապետն Միհրներսեհ՝ յառաջ մա

մատուցեալ առ թագաւորն․ զայդ ես ասեմ քեզ, արքայ քաջ․ եթէ կամիս ստուգութիւն լսել զարդարն, որք գլխաւորք քրիստոնէից են ՚ի Հայս, տուր կոչել․ և գտան յօժարութիւն և առնեն քեզ զամենայն արդարութիւն։ Յայնժամ զմի ոմն յաւագ նախարարայն Ատրորմիզդ անուն՝ (որոյ իշխանութիւն իսկ խառնեալ էր ընդ Հայոց աշխարհին․ և գործակից էր զօրավարին ՚ի նմին պատերազմին․) գրէր և յանձնէր նմա զաշխարհն Հայոց մարզպանութիւն։ Իսկ Մուշկաննիսալաւուրտ հանդերձ ամենայն մնացեալ զօրուն՝ գումարէր յաշխարհն աղուանից և Լփնաց և Ճղբաց և Հեճմատակաց և ՚ի Թաւասպարաց և ՚ի Խիբիոնաց, և յամենայն ամրականս, զորս աճեցեալ էր զնդին հոնաց վասն ուխտին Հայոց։ Ող և յայժ իսկ տրամեալ էր թագաւորն․ ոչ միայն ընդ աճեր աշխարհայն և ընդ անկանել

զօ

զօրացն, այլ և ս առաւել վասն պահակին, զոր 'ի բազում ժամանակաց հոլովէ ուրեմն կարացին շինել. և յայժմ ժամանակի առեալ քանդեցաւ, որում չէր ակնկալութիւն իսկ շինութեան։ Իսկ՝ զվաստակ հանդերձ գլխաւոր քրիստոնէիւքն 'ի դուռն հրամայեաց կոչել։

Արդ՝ եկեալ եմուտ մարզպանն Ատրորմիզդ յաշխարհն հայոց՝ սիրով խաղաղութեան հրամանաւ արքունի, կոչեաց առ ինքն զՍահակ եպիսկոպոսն Ըռշտունեաց՝ ուսանել 'ի նմանէ զիրացն ամբաստանութիւն։ Բայց նորա թէպէտ և աւերեալ էր ատրուշան մի և բազում չարչարանօք հարեալ էր ըզպաշտօնեայսն կրակին, ոչ ինչ զանգիտեաց գալ յատեան հրապարակին։ Պարծեալ և 'ի տանէն արծրունեաց՝ բարեպաշտ երէց մի Մուշէ անուն՝ որ առաջնորդ էր արծրունեաց աշխարհին. աւերեալ էր

էր նորա գլրակատուն մի. կարմնոք տանջանօք բազում չարչարանս ան ցուցեալ էր ընդ մոգսն. և սա ոչ ինչ զանգիտեաց այլ՝ կամաւ եկն և յանդիման եղև մարզպանին։ Էր կու ևս այլ քահանայք երանելիք՝ որոց անուանք են Սամուէլ և Աբրահամ. քանդեալ էր և սոցա զատրուշանն յարտաշատ. և յառա ջագոյն ըմբռնեալ էին ՚ի կապանս յուրացեալն վասակայ. ածին և զնոսա առ առաքինի ընկերսն։ Եւ ժողովեցին ևս ՚ի նոյն տեղին ըզ մեծն Յովսէփ և զՂեւոնդ և ըզ Քաջաջ և զԱրշէն։ Իսկ մարզ- պանն երբև ուսաւ և տեղեկացաւ յամենեցունց, գրեաց և եցոյց յար քունիս զամ՟ ճշմարտութի՟, որ զիարդ լուաւ ՚ի բերանոյ նց՟։ Բայց վասակ՝ թէպէտ և յառաջագոյն հասեալ էր ՚ի դուռն, ըստ կամաց խորոց զամ՟ այլ ընդ այլոյ երթեալ պատմէր սուտթի՟, սակայն ՚ի միտս

թա

Թագաւորին ոչ կարէր զանձն արդարացուցանել։ Պատասխանի արար նմա և ասէ, յորժամ՝ քրիստոնեայքն ևս եկեսցեն, հասարակաց լուսոյ յատենին։

Իսկ սուրբ քահանայն՝ վասն զի կապանօք տանէին, յետ երկուամսոց և քսան աւուր հասանէին ՚ի ձմերոցն արքունի։ Իբրև լուաւ մեծ հազարապետն եթէ ածին զնոսա ՚ի քաղաքն, լինէին իսկ ակնատես լինէր նոցա։ Բայց թէ պէտ և տեղեկութիւն լսէր ՚ի նոցանէ զամ՝, ոչ կարէր ձեռն արկանել և չարչարել զնոսա. քանզի բազումք ՚ի նախարարացն հայոց՝ դեռևս ընդնացեալ ունէին զամուրս աշխարհին. և դեռևս մարզպանն յերկիւղի էր. վասն որոյ և զգուշութիւն հրամայէր պահել զնոսա. և զաշխարհն ողոքել հրամայէր նոճաձել. վասն որոյ և ինքն իսկ շրջէր և ժողովէր և շինէր ուխտին հաս-

տա

տատութիւն. և եպիսկոպոսաց հրաման տայր ունել զիւրաքանչիւր իշխանութիւն. և ըստ առաջին սովորութեան պաշտել յայտնութիւն և համարձակութիւն. և ս գալ 'ի հրապարակ. նաև ընծայից և պատարագաց արժանի առնէր թողուլ զառաջեան։ Այլ քանզի բազում զաճառս առեալ և ամբերեալ էր զօրականին, թողուլ հրամայէր ըզհարկս աշխարհին. և զայրուձին ևս զարքունի՝ թեթևացոյց առժամանակ մի։ Այլ միայնակեացք որ ելեալ և կորուսեալ էին, հրամայեաց գալ և ունել զիւրաքանչիւր տեղիս. և զնոյն կարգ աստուածպաշտութեան որպէս զկարգ և ունէին յառաջ ժամանակաւ առ նախնեօքն, այնպէս տալ և այժմ կալցին։ Այլ եթէ որք 'ի հեռի աշխարհ ուրեք գնացեալ իցէ, (ունիմ՝ իշխանութիւն յարքունուստ տալ մարզպանն,) եթէ յազատաց իցէ և եթէ յեկեղեցւոյ,

զի՛նչ

զինչ կեանս և թողեալ իցէ, եկեսցեն և կայցին զիւրաքանչիւր արարս։ Երդմունս կնքէր և առաքէր ՚ի կողմանս կողմանս. որ և բազումք եկին և ժողովեցան և կալան զիւրաքանչիւր կալուածս։ Նաւ որ մեծն է քան զամ՝. որ ՚ի բանութէ ոք ականց զմոգութէն կալեալ էր, հրովարտակ առաքէր յարքունուստ անդրէն ունել ըղ քրիստոնէութիւնն։

Ե՛ւ յանդիման խօսէր թագաւորին՝ որք էին ՚ի դրանն արքունի, եթէ որք ոչ սրտով ունէին զդենիմացդէն, այնպիսեայն և ազգն են ցասուցեալ. և ես ոչ ինչ եմ շնորհակալ։ Ե՛ւ այսօր զնոյն հրաման տամ՝ ամենեցուն ՚ի կամս մայրդոյն թողեալ ըստ իւրաքանչիւր մտաց. որպէս զինչ կամի պաշտել պաշտեսցէ. ամենեքեան իմ ծառայք են։ Զայս ասէր և դրով հրաման տայր ընդ աշխարհի։

Իբրև

Իբրև զայս լուան և տեսին բազումք որ էին ցանեալք և ցրուեալք 'ի հեռաւոր տեղիս, դաշտս և ունէին զիւրաքանչիւր աւարս։ Իսկ նախարարքն՝ որ էին յամուրս աշխարհին և կամ 'ի հեռի յօտարութեան, իբրև տեսին զշինութիւն երկրին, մանաւանդ զեկեղեցեաց հաստատութիւն, քաջալերեցան համարձակեցան և նոքա յանդիման լինել արքային։ Վասն որոյ և պատգամաւորս յղեցին առ մարզպան աշխարհին, զի 'ի դուռն ցուցցէ զբանս նախարարացն։ Իսկ նա վաղվաղակի յարքունուստ գիր ողոքանաց և ուխտ հաստատութեան տայր տանել առ նոսա։ Բայց նոքա թէպէտ գիտէին զդառնութիւն տէրութեանն թէ սուտ են յամի, կամեցան չարչարակից լինել այլոցն· զի եթէ մահ ևս առաջի կայցէ, ոչ ինչ զանգիտեցին երկիւղիւ։ Եւ զայս լուեալ Թագաւորն, ոչ կա-

րա

պանօք, այլ՝ արձակ ոտիւք և ձեռօք հրամայեաց առ ինքն կոչել։ Ածին վաղվաղակի զկին և զորդիս և զինչս իւրաքանչիւր, ետուն ՚ի ձեռս մարզպանին, և ինքեանք փութապէս գնացին ՚ի ձմերոցն արքունի։

Իսկ մինչդեռ անդէն ՚ի ձմերոցի էր թագաւորն, տեառն հարցափորձի ՚ի մէջ նոցա հրամայէր առնել։ Իսկ նստաւ հազարապետն զիրուցէ կողմանցն երկոցունց։ Իսկ իբրև երկարեցաւ ամբաստանութիւն զաւուրս բազում, պարտաւորեցաւ կողմն ուրացելոցն. քանզի ցուցանէին զթուղթս զոր տուեալ էր վասակայ և ամենեցուն որ ընդ նմա էին, զի միաբանք իցեն ընդ նմա յուխտ ապստամբութեանն. Թուղթ մի ՚ի վրաց աշխարհէն, Թուղթ մի յաղուանից աշխարհէն. այնպէս և թուղթ մի յաղձնեաց. և հրովարտակ մի առ թագաւորն յունաց. և թուղթ մի առ մեծ սպա-

րա

բապետն անտիրք․ և 'ի բոլորեսին
յայն Թուղթս՝ վաճառական մատա
նին վաստակայ եղեալ էր․ Այնպէս
և 'ի մահ մօդայն խառն՝ էր նա 'ի
զարեհ աճմի․ Ի՞նչ զբաղում բերդա
զոր հանեին 'ի պարսկայն, յայտ առ
նէին զնորա Թուղթս և զհրամանս․
քանզի նա էր մարզապան 'ի ժամա
նակին․ Որպէս և հրեշտակութե՛
իսկ զոր յղեալ էր նորա առ յոյնս
նախարար մի, որում անուն էր
Ն․տոմ յազգէն զնունեաց․ Ա
մատուցեալ յանդիմանէր զնա ա-
ռաջի մեծ ատենին հրովարտակին
իսկ՝ զոր տուճեալն էր նորա իւրով
մատանեաւն․ Նաև 'ի մէջ իսկ բե
րէր զամբաստանութիւն նր Մուշ-
կաննիսալաւուրտ․ և յայտ առնէր
պատերազմնկից ընկերօքն իւրովք,
որ յետ վճարելոյ պատերազմին՝
բազում արիւնս եա հեղուլ Մա-
սակ․ Որպէս սուտ երդմամբ խա-
բէր և իջուցանէր յամրոցն անառի

Էր՝ զոր կոտորէր, և էր՝ զոր գերէր վարէր զծառայս և զաղախնեայս արքունի: Ո՜ ՚ի մերոց այսր ամ̃ ժնասուն, և դող ևս դանէր հար կի աշխարհին, որ յարքունիս եր-թայր: Նաև յարուցեալ ընկերաց նորա՝ բազումք էին որ յայտ արա-րին զչարիս նորա, զոր գործեալ էր ընդ աշխարհն Հայոց: Ո՜ իմացեալ մոգացն և մշտախպանացն, որ ՚ի կա-պանս տարեալք էին, և ապա ածին յարքունիս. հարցին և ցնն վասն նր և ասեն, դուք զի՞նչ տեղեակ էք վասն չարութե̃ նորա: Ետուն պատասխանի և ասեն, ամ̃ անցք չարչարանաց որ անցին ընդ մեզ, և բազում հարուածքն որ եղեն ՚ի զօրս արքունի, և աւեր և գերութ̃ աշխարհին Հայոց, և կորուստ հոր կայն արքունի, սկիզբն և առաջ-նորդ չարեաց՝ այրդ այդ եղև:

Ո՜ մինչդեռ այս ամ̃ ամբաստա-նութիւնս զնմանէ էր զայնչափ

բազում՝ աճուրս, յառաջ մատեան և խուր ազգականքն, (որ ևս յառաջագոյն դատախազ լեալ էին ընմանէ արքային.) սկսան կարդալ ցուցանել և յայտ առնել. որպէս զի բարեկամացեալ էր նորա ընդ հեռանայ հոնի՝ միաբանութիւն լալոյ սակայն արքային. 'ի ժամանակի՝ զի կոտորեաց հեռանն այն զզօրս պարսից յաղթանս. և ապստամբեալ եհաս յերկիրն յունաց. և բազում՝ գերի և աւար խաղացոյց 'ի հոռոմոց և 'ի հայոց. 'ի վրաց և յաղուանից: Որպէս զի 'ի վերայ և հաս խորհրդոյն ինքն թագաւորին, և սպան զքաղաքական արքայ: Եւ մասամբ՝ մարզպան էր հայոց 'ի ժամանակին. և թշնամեաց արքունի՝ խորհրդակից գտաւ. Յուսկին և յայտ արարին ազգականք նորա. որք հմուտ էտեղեակ իսկ էին նմ՝ չար խորհրդոց նորա. զնմ՝ յուցանէին և յայտ առնէին առաջի թագաւորին. և

ցայ եւ բազմագոյն խարդախու-
թեանն՝ որ սաստիկ վարէր զկեանս
իւր՝ ոչ միայն առ ընկերս, այլ եւ
առ Թագաւորն ինքնին գլխովին.
զի ոչ երբէք արդարութեամբ վաստա
կեալ էր 'ի մանկութէ։

Յայնմ ժամանակի հրաման ետ
հարստահարեալն եւ ասէ, ածէք այսր
եւ 'ի կապելոյն որ են 'ի բանտի անդ։
Լուծին եւ ածին յերանելւոյն
զՍահակ եպիսկոպոս Ռշտունեաց.
եւ զտէրն Յովսէփ եւ զՂեւոնդ երէց։
Իբրեւ մերկացան ամ բանք ա-
տենին առաջի նոցա, ետ պատաս-
խանի Սահակ եպիսկոպոսն եւ ասէ.
որ յայտնի ու բացեալ են 'ի Դենշապ-
հէն ոյ, ոչ զխաբէն զինչ գործեն
եւ կամ զինչ խօսին. քանզի խաբե-
բայքն են խորհուրդք նոցա։ Օտարն
պաշտեն սուտ պատուիրանօք. եւ
ընդ ընկերս միանեն յուխտ սուտ
թէ. եւ ենք զօրանք սատանայի.
զի նորօք կատարի զդաւանութիւն
կա

կամաց լուրոց. որպէս երեւի իսկ ՚ի
դոյն յայդ վասակ. Քանզի մինչ
ունէր զանուն քրիստոնէութե՛ն,
վերջին երեւօք կարծէր ծածկել եւ
թաքուցանել զա՛մ չարութե՛ն իւր
առաջի ձերոյ անպէտ տէրութե՛ղ.
եւ զա՛մ նենգութիւնն իւր՝ քրիս֊
տոնէութե՛ն ծածկէր. Աւասի եւ
ձեր իսկ կարծեցեալ՝ մեծապէս
պատուեցէք զդա առաւել քան
զարժանն իւր: Հաւատացէք դմա
զաշխարհն վրաց, հարցէք ցաշխար
հըն եթէ զո՞հ իցեն զդմանէ.
Ետուք դմա զտէրութի՛ն սիւնեաց.
լռեցարուք յազգականաց անտի դո
րա՝ զի՞նչ պատմեն զդմանէ: Արա
րէք զդա մարզպան հայոց, զոր նախ
նեացն ձերոց մեծաւ աշխատութե՛
գտեալ էր, դա ՚ի միում ամի կորոյս
զերկիրն ա՛մ. Տեսէ՞ք իբրեւ բար֊
ձաւ ՚ի դմանէ պատուական անունն
Այ՝ զոր ունէր սատութե՛, մերկ ե֊
րեւեցաւ ա՛մ չարագործութե՛ դորա.

Օք

Զի եթէ առ Տ՟ն իւր՝ սուտ զը
սաւէ, առ ո՛ր 'ի մահկանացուաց
ասաց՝ դա արդար գտցի ։ Արդ՝
տ՟ր՝ ամենատեսութիւն որ յայժմ
յայտնի եղև զգուշանէ, ո՞չ ահա յա
ռաջագոյն լուեալ էր ձեր ։ Բայց
յո՛ր դէմս ծածկեցէք, դուք ձե-
զէն քաջ գիտէք. և ինձ այսպէս
թուի, եթէ սուտ յուսով դա զմեզ
խնդացոյց ։ Այլ ո՛չ դուք և ո՛չ նա
և որ զկնի ձեր գալոց է, զայն 'ի
մեզ ո՛չ կարէ տեսանել ։ Արդ՝ ա-
րարէք որպէս և կամիք. ցմեզ զի՞
հարցանէք ։ Զարմացաւ մեծ հա-
զարապետն ընդ միտս իւր. և 'ի
խորհուրդս իւր քննէր զա՟մ բանս
ատենին. քանզի հասեալ էր 'ի միտ
եթէ խրատն դատապարտեցաւ այրն
ը՟ստ արժան գործոյ իւրոյ ։ Եմուտ
և եցոյց զա՟մ բանս ատենին յար-
քունիս ։

Պատմէ առս, Եթէ անհետեալ ժամանակն 'ի պա
տեհն պատրաստոյ՝ որպէս պատժեցաւ։

Երբև յոմն թագաւորն և սու
ղեաց 'ի Հայաստանեայն ըղ
ատնն պարտաւորութիւն, բարկա
ցաւ յոյժ և 'ի խոր խոցեցաւ. բայց
երկայնմտութե՝ կամեցաւ հատու_
ցանել զնա 'ի մեծ անարգութիւ
Լուռ եկաց առ ուրս տամներկու
մինչև 'ի գլուխ չորած փուրսին
ամբաստանութե. Յետ եղև յաւուր
միոյ մեծի զոհ երեկի պատուա
կանն հրամայեր յընթրիս կոչել։
Կոչեցին և զուրացեալն. և նա բստ
սովորին կարգի օրինացն արքունի՝
արկաներ զպատուական հանդերձն
զոր ունէր 'ի թագաւորէն։ Կայեր
զպատիւ ուրան. և զխոյրն ոսկեղէն
դնէր 'ի վերայ. և զկաշանակու
ծոյլ ոսկի կամարն ընդելուզեալ
մարգարտով և ակամբք պատուա_
կանօք՝ ը մէջ իւր ածէր. զգինդս
յա

յականջս և զգուշութեանն 'ի պա-
րանոցի. և զամմեյրան զԹեկղայքն·
և զնա՛ օրէն պատուոյն զանձամբ
արկեալ, երԹայր յարքունիս. Չէ
.քեղ և երևելի .քան զամենեսեան
երևէր նա՛ բազմուԹենն։ Իսկ Նա-
խարարքն՝ (որ կամօք իւրեանց 'ի
Հայոց չոգան անձամբ տուեալ զան
ձինս 'ի փորձուԹիւն,) և այլքն՝(որ
յառաջագոյն Հասեալ էին կապա-
նօք. ունէին զամենեսեան առ գը-
րանն արքունի.) իբրև տեսին զնա
զարդարեալ և չքնաղացեալ և բազ-
մամբօք զնդաւ գայր յարքունիս,
'ի միտս իւրեանց սկսան պղպանել
զնա և ասել, ո՞լ անմիտ վաճառա-
կան՝ զանմահ և զանանց պատիւն
ետուր, և զանցաւորդ գնեցեր.
զոր և զայդ ես ընդ մեզ ածուրս
կորուսեալ ես։ Եհաս և նստաւ
'ի ներքին դահլիճն, որ էր հրա-
պարակ մեծամեծացն։
Արդ՝ եկն ել սենեկապետն յար
.քու

քունուստ, հարցանէր զնա և ասէր, որքա՞յ յղեալ առ քեզ. յումմէ՞ գտեալ է քո զայդ ծմ՝ պատուական պտղի՞դ. առա՛ ինձ փափկադակի. մն ծո՞ր ուրդար վաստակող։ Մի՛ յուշ ատնէր նմա զծմ՝ բանս ատենին, յո րում՝ դատապարտեցան նա. և զոր ոչ ևս ծնդ խօսեցան, զայն ևս յայտնէր նմա։ Ո՛չ ոչ բառ կարգէ ունէր նա զահէրութեան աշխարհին սիւնեաց, այլ՝ նենգութիւն և քսու թիւն եւ սպանանել զհօր եղբայրն իւր զԱշոտնակ, և յինքն առաւ զահէրութիւնն։ Իբրև զբռնեկալ յորքունին, նաև այլ ևս բազում բանիւք դատապարտեցին զնա. ո րում և ծմ՝ անապանին՝ վկայ գայ ին. Պապանձեցաւ ամենեւին և չգտաւ բան ճշմարիտ 'ի բերան նր. Իբրև կրկնեցին և երեք կնեցին ցուցանելով 'ի նեռքս յորքունիս, հատաւ վճիռ մահու 'ի վերայ նր. Ինքն եղ դահճապետն, և առաջի

ծմ

զմեծամեծացն մերկացոյց 'ի նմանէ վաղվաղակի զպատիւն արքունի. և զլեցոյց նմա համբերձ միահա-պարտի. Կապեցին զոտս և զձեռս, և կռնակապեալ նստուցին 'ի ձի միտակի, տարան ետուն յայն գնդան՝ ուր կային միահասարաքն.

Իսկ նախարարքն Հայոց և որք եպիսկոպոսք համբերձ երիցամբքն՝ թէպէտ և էին 'ի մեծի պատուհասի. ոչ ինչ յիշէին զնեղութիւն, որ անցեալ էր ընդ նոսա և կամ որ այլ ևս անհնարութիւն էր գալ 'ի վերայ. այլ զարմացեալ էին ընդ մեծ յայտնութիւնն, որ եղև յոյժ. Մխիթարէին զմիմեանս և ասէին, քաջութեամբ պատերազմեցաք, առաւել ևս համբերութեամբ ճգնեսցուք. Յաճեալ է մեր 'ի տուրս Հարցն մերոց, եթէ գլուխ ամ՝ առաքինութե համբերութիւնն է. և իմաստուն երկնաւոր՝ կատարեալ ածպաշտութիւն. և զայս ոչ ոք կարէ գտանել

առանց

սուանց չարչարանաց։ Իսկ չարչա-
րանքն յորժամ՝ ընդ յերկարեսցին
'ի վերայ, յայնժամ՝ բազմանայ վարձ
հատուցման պարգեւին։ Բայց եթէ
այդ այդպէս է, զայս միայն աղաչես-
ցուք զՏՐ, զի համբերել կարաս-
ցուք նմ՝ փորձութեանց. եւ Տէր ինք-
նին արասցէ հնարս մերում՝ փրկու-
թեան։ Յուշեալ է մեր զդատաստան
քառասուն զինուորացն ՔՍի, որ
էին 'ի հարուածս տանջանաց։
Ամենն 'ի նոցանէ փութային մըր-
ցեալ 'ի սուրբ պսակէն. իսկ երե-
սուն եւ ինն համբերութիւն կատա-
րեցան եւ հասին այնմ՝ անեալեաց,
որում՝ ցանկացեալն էին։ Իսկ մեր
ընկերակիցն անանիկ որ յառաջա-
գոյն որոշեցաւ 'ի մէնջ, ահա եղե-
գործակից սատանայի։ Մինչդեռ
ոգին 'ի մարմնի է, ընկալաւ զառ-
հաւատչեայ գեհենին տանջանաց.
որ ոչ միայն սրբայն է ողբալի, այլ
եւ նմ՝ գազանաբարոյ մարդկան։

Զայս

Զայս ասէին և բազում արտասուս 'ի վերայ կորուսելոյն հեղուին։ Այլ անդէն երգս հոգևորս 'ի բերան տանեալ ասէին, Բարի է յուսալ 'ի Տէր, քան յուսալ 'ի մարդիկ. բարի է յուսալ 'ի Տէր, քան յուսալ յիշխանս։ Ամենայն ազգք շրջեցան զինև, և անուամբ Տն յաղթեցի նոցա։ Քաջալերէին զմիմեանս և ասէին, զայս գիտելով եղբարք՝ մի երկիցուք յանաստուած ազգէն հեթանոսաց. որ քան զմեզուս՝ փութարագոյն ևս են 'ի զայրանալն իւրեանց. զի և նոցա յուսումն 'ի սատակումն անձանց իւրեանց լինի. այլ մեք զանուն Տն կարդասցուք և վանեսցուք զամենեսեան։

Իսկ ուրացեալն վասակ՝ հայէր 'ի միաբանութիւն ծը կապելոցն, որք մեծաւ խնդութեամբ ընդունէին զչարչարանսն. և զուարթագոյն և պայծառք երևէին։ Որպէս յառաջ՝

յոր

յորբութեան հայէր և կարօտէր, և ոչ ոք խառնեաց զնա 'ի նոսա. այլ ուրոյն նովին կապանօքն պահէին. և օրըստօրէ ըներէին, և խիստ զնէշ ընկենուին 'ի մեծ հրապարակին։ Ծաղէին և այպանէին. և 'ի տեսիլ ամ՛ կարաւանին հանէին, և ոչ թողին՝ զոր ընդ իւրն ունէր։ Մինչ ծաղեցին ազքատութին, մինչև հաց մուրանային և բերէին նմա՝ ծառայքն իւր։ Եւ այնպէս սաստիկ արկին զպարտս հարկաց աշխարհին 'ի վերայ տան նորա, մինչև զհարց և զհանուց և զխոր արօրս և ըղզարդս կանանց եւս եդ 'ի վերայ՝ և ետ և տուժեցաւ, և ոչ կարաց հատուցանել զպարտսն արքունի։ Եւ յայն տեղիս հասուցին, մինչև հարցանել նմա եթէ կայցէ ինչ զանձ 'ի գերեզմանս նախնեացն մերոց։ Եւ եթէ գտեալ էր նորա, հանէր և տայր ընդ իւր և ընդ ընտանեացն տուգանս. որպէս զի բազում մար

դիկ

դիկ իսկ չոգան 'ի տուժիլն։

Եւ երբեւ այսպէս յա՛մ կողմանց հարեալ վասթարեցաւ, անկաւ յախտս դժնդակս. եւ անդէն 'ի կապանման ջեռաւ մոր նորա. եւ հարան եւ տրորեցան գոյք նորա. եւ քամեալ մզեցաւ թանձրամանութի նր։ Եռացին որդունք ընդ աչս նորա, եւ 'ի վայր սորեցին ընդ ընդունս նորա։ Խցան լսելիք նորա. եւ ծակոտեցան չարաչար՝ շրթունք նր։ Լուծան ջիլք բազկաց նր. եւ յետ կոյս կորացան կրունկք ոտից նր։ Ողխեաց 'ի նմանէ հոտ մահու, եւ փախստական եղեն 'ի նմանէ ձեռնասուն ծառայք նր։ Եղուն միայն կայր կենդանի 'ի բերան նր, եւ ոչ գտաւ խոստովանութիւն 'ի շրթունս նորա։ Ճաշակեաց զմահ հեղձամղձուկ, եւ էջ 'ի դժոխս անհընարին դառնութ՛բ։ Անհարէին նմա ա՛մ սիրելիք նր, եւ ոչ յաղեցին սաստիկ հարուածովքն՝ ա՛մ թշնա

միքն

մերն նր̃ Տէր այն՝ որ կամէր թագա-
ւոր լինել մեզ աշխարհին Հայոց,
ոչ երեւեցաւ անդէն դերեզմանի նր̃.
քանզի իբրեւ զշուն մեռաւ. եւ իբ-
րեւ զէշ քարշեցաւ։ Ոչ յիշեցաւ
անուն նր̃ ՚ի մէջ սրբ̃ց. եւ ոչ մատեան
յիշատակ նր̃ առաջի սր̃ սեղանոյն
յեկեղեցւոջ։ Ոչ ինչ եթող չար
ինչ զոր ոչ գործեաց ՚ի կեանս իւր.
եւ ոչ ինչ մնաց ՚ի մեծամեծ չարեաց՝
որ ոչ անցին ընդ նա ՚ի մահուանն նր̃։

Գրեցաւ յիշատակարանս այս
վս̃ նր̃, առ ՚ի կշտամբումն յանդի-
մանութեան մեղաց նր̃. զի տե՛ս՝ որ զայս
լուեալ կարդասցէ, նզովս ՚ի հեռա
արկցէ, եւ մի՛ լիցի ցանկացող գոր-
ծոց նորա։

Արտաքոյ եօթն երանելեացն Ս(ր)բ. Եղիշէ՝ գրեալ վասն նորին պատերազմին և չար-չարանաց սուրբ քահանայիցն:

Յուշեան Գէորգայ պատմէ, թէ 'ի [illegible] [illegible] յանձինս Գործոյն՝ [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]:

Արդ՝ 'ի մետասան երորդէ ամի տէրութեան նորին Թագաւորի՝ դարձեալ անդրէն խաղայր գնայր յաշխարհն Քուշանաց մեծաւ սրտմտութեամբ 'ի գործ պատերազմի. և գնացեալ 'ի մեկանէ և ելեալ յայսր աշխարհ. Նովին կապանօք զնախարարսն և զքահանայսն հրամայեաց պահել 'ի դղեկ քաղաքին 'ի Նիւշապուհ. և երկուս յերանելի կապելոյն ընդ իւր խաղացոյց. Ա՛հ արկանէր ամ(ենայն) քրիստոնէութեանն ընդ որ անցանէր.

Իբրև

Իբրեւ զայն տեսանէր հօն մի,
(որ էր յազգէ Թագաւորայն 'ի
խաղանդղրացւոց աշխարհէն Բէլ
անուն.) եւ 'ի ծածուկ խոնարհէր
առ քրիստոնեայս եւ սիրով յօժա
րութ՟բ ուսանէր 'ի նոցանէն ըզ
ճշմարտութիւնն. եւ կամօք իւրովք
նուաճեալ էր ընդ Թագաւորին իշ
խանութ՟ն. եւ կարի յոյժ դառնա
նայր 'ի միտս իւր յորժամ տեսա_
նէր չարչարեալ զնոսա: Իսկ իբրեւ
այլ ինչ ոչ էր ձեռնհաս, փախստա
կան անկանէր առ արքայն Քուշա_
նաց. երթայր եւ պատմէր նմա զամ՟
անցս չարչարանաց, զոր անցոյց Թա
գաւորն ընդ աշխարհն հայոց: Տե
ղեակ եւս առնէր զնա վասն հրամա
նատուութ՟ն պահակին հոնաց:
Ցուցանէր եւ զերկպառակութիւն
զօրայն, որ բազում ազգք բաժա_
նեցան 'ի սիրոյ Թագաւորին: Ազ
դէր նմա եւ զտրտունջ զայրեաց
աշխարհին.

Օ՜, այս իբրեւ լսէր Թագաւորն քուշանայ, ոչ ինչ երկմտութիւն թերանայր յառնէն. և ոչ կարծէր լսեալ անկանէին 'ի միտս նորա։ Զանգի սակաւ մի յառաջագոյն լուեալ էր և նա. դարձեալ իբրեւ սուզեալ 'ի ընդայն պայն ես, եթէ խաղացեալ դայ 'ի վերայ աշխարհին քուշանայ, փութացաւ վաղվաղակի, զօր ժողովէր զունդկազմէր ելանել նմա ընդ առաջ հզօր ձեռամբ։ Օ՜ի թէպէտ և ոչ կարէր յանդիման առ պատերազմ ընդդէմ նր՟, վերջի թէ այն անկեալ բազում հարուածս հասուցանէր 'ի վերայ զօրացն արքունի. և այսպ նեղեալ շատալէր։ Օ՜ի անձուկ լաշկալաւ վատախտարակ տարեալ, այսրէն դարձուցանէր. և ինքն սապատակաւ դշեա մնեալ, ածերէր զբազում դառաս արքունի. և ինքն ողջանդամ անդրէն յերկիր իւր դառնայր։

Եւ իբրև ետես թագաւորն ե-
թէ անարգեցաւ և վատթարութ՟
գործաւ ՚ի պատերազմին, զիջաւ
փոքր մի ՚ի հպարտութէ. և գիտաց
եթէ յերկպառակութէ զօրացն
եղեն չարիքն այն: Եւ առ մեղմել
սրտին` չգիտէր թէ յո՞ թափեսցէ
զթոյնս դառնութեան: Իսկ մեծ հա-
զարապետն` յոյժ էր յերկիւղի.
քանզի ինքն էր պատճառ այն` չա-
րեացն: Սկսան բանս ՚ի բերան
դնել մոգպետին և մոգացն. որք
մատուցեալ յանդիման ասէին ցթա-
գաւորն. արքայ քաջ. մեք ՚ի դենէ
գիտեմք, զի ոչ ոք ՚ի մարդկանէ
կարէ կալ առաջի քոյդ մեծի զօ-
րութեդ. այլ վասն քրիստոնէիցն`
որ են ընդդէմ օրինաց մերոց, բար-
կացեալ են մեզ ածքն, զի մինչև
ցայսօր կենդանի պահեցեր զնոսա.
Եւ յիշեցուցանէին նմա եթէ ոչ
նոքա ՚ի բանակի անդ անիծանէին
զքեզ: Եւ բազում և այլ ևս հայ

հոյութիւնս խօսէին զնէյն. զօրհա
նապազ զնոսա յաչաց հանէին, և
զմիտս թաղաւորին ածէին 'ի ցա-
սումն բարկութեան մինչև փութա-
ցան վաղվաղակի հեղուլ զարիւն
անմեղացն։ Ետ հրամանն վասն եր
կուցն՝ որ անդէն 'ի կարաւանին
առ իւրն էին Սամուէլ և Աբրա-
համ, զի գաղտ կորուսցեն զնոսա։

Իսկ՝ որք էին 'ի գեղն քաղաքին,
հեռի էին 'ի կարաւանէն իբրև օ-
թիւք հնդետասան. հրամայեաց
ամիրապետական՝ (որում անուն
էր Դենշապուհ) զի յառաջ քան
զնա երթիցէ 'ի քաղաքն, և չարա-
չար տանջանօք խշխեսցէ դատել և
հարցանել և սրով վախճանել։
Այլ զնա մոգպետին յառաջագոյն
յանձն արարեալ էր. որ բազում
անգամ քան զհրամանն արքունի
աւելի չարչարեալ էր։ Քանզի իշ-
խան դենպետ էր ապար աշխարհի.
և առաւել ջերմագոյն էր 'ի մոգու-
թեան

թեն, քան զբազում գիտունս և անգետս զդաւեշական օրինայն։ Նաև զոր մեծ պարծանս համարէին ըստ խուրևանց մոլորութեն կարգի, համանգլեն անուն էր։ Փոխէր և զանպարտ քաշն։ Ուսեալ էր և զղ-պաշտոնիլին և զպարսկավենն։ Զան զի այս հինգ կէշքեն որ գրաւեալ ունին զնա օրէնս մողունն։ Բայց արտաքոյ սոցա՝ է և միւս ևս այլ վեցերորդ, զոր պետմօղն ասեն։ Թուէր ինձ անձինն ևթէ կատա-րեալ իցէ նա գիտութեամբ. և հայէր ընդ երանելեան ևթէ առ ողկտու-թեն մոլորեալ են ՚ի մեծ գիտունս մերմէ։ Ընդ սնոտի կարծիս ՚ի մոլի, և անդադար լինէր ՚ի չարչարել զնա, զի թերևս առ ՚ի չժուժել մարմ-նոյն նեղութեանց՝ լուծայց ինչ ՚ի նո-ցանէ բանս ողոքանաց։ Սան որդ զատ որոշեաց ՚ի նախարարացն զքա-հանայն, և հեռացոյց ՚ի նոցանէ բազմաց ոյն, և էարկ զնա ՚ի ներքս նա-

տուն

տուն մի դէմ խաճարչոյն։ Իսկ հը բանայէր մեզ առն երկու քաշկէնս ժամէ ՚ի ժամ․ և դորակ և կէս ջուր։ Իսկ ամենևին ոչ թողոյր զոք՝ մօտ երթալ ՚ի դուրս բանտին։

Իսկ խորև յաճուրս քառասուն աւուր նեղութեան նեղէր զնա, և ոչ լռէաճ ՚ի նոցանէ բան թուլութեն, այլ իմն էած զմտաւ եթէ ոչ յիւրոց ծառայից գաղտ եղիտ լինչ ՚ի նո-ցանէ, և ՚ի ծածուկ տայէ նմ կերա-կուր․ Երթեալ ինքնին կոչէր զերդ և զդուրս բանտին. և զկար-գեալ առձիկան տայր ցիւր հաւա-տարիմն ասնել նմ։ Արար զայս յաճուրսն հնդետասան։ Սակայն և այնպէս երանելիքն՝ ոչ լինչ շատ պետք տարմեալեցան. այլ՝ մեծաւ համբերութեամբ տանէին զձգնութին. և անդադար սաղմոսիւք կային ՚ի հանապազօրդ պաշտաման. և ՚ի կա-տարել աղօթիցն՝ զուարթային զոհանալով՝ սակաւիկ մի հանգչէին ՚ի

՚ի դեռանախշակի անկողնոյն։

Իսկ պահապանքն որ ՚ի մերոց կողերայն կային, յոյժ զարմացեալ էին ընդ առողջութիւն անհնձան դութն նոյ իւրեւ լսէին անդադար հնչումն ձայնից. վասն այնորիկ պատմեցին յականջս մօրպետին և տանն, ոչ են ալքն այն՝ լոկ առանց մեծի զօրութե. զի եթէ պղնձի մար մինք ունէին նորա, որդ՝ լուծեալ էր ՚ի դէձ խոնարհ անտի։ Բազում՝ ժամանակք են մեր զի յանձն է մեզ պահպանութիւն բանտիս, ոչ յիշեցաք եթէ ՚ի կապելոց ոք՝ ամսօրեայ մի ժամանակ կեցեալ է ՚ի անդ յայդմիկ։ Որդ՝ մեք առեմք քեզ, եթէ առեր հրաման վասն մահու նոյ, և պատճառես՝ դու գիտես. ապա եթէ պահել յանձն առարած քեզ և ոչ դատել զնոսա, չարաչար վասնորդէ կապելոցն. Նա և մեք զահի հարեալ եմք և յոյժ երկնչիմք յորժամ՝ տեսանեմք զայն

զայնովին անհնարին նեղութիւն

Իբրև լուաւ զայս մոգպետն, յարուցեալ ինքնին երթայր 'ի մէջ գիշերին յերդ բանտին, և հայեցեալ 'ի ներքս ընդ մութ գիշերոյն այն ինչ, լսէր նոցա 'ի պաշտամանէն հանդչել. և տեսանէր զանձն իւրաքանչիւր կապելոցն՝ իբր զկանթեղ անշիջանելի վառեալ բորբոքէր: Զահի մեծի հարեալ և ասէ ընդ միտս իւր. զի՞նչ իցեն այս մեծ սքանչելիքս. Աչքն մեր ուրեմն երկեալ էջեալ են 'ի բանտս, և նոցա փառաւորութիւնն լուցեալ բորբոքի: Եւ եթէ նոքա 'ի սոսա ոչ մերձենան, մարդոյ լոկոյ անհնարին է զայսպիսի պայծառութիւն լուսոյ գտանել: Իմ՝ այսպէս լուեալ էր վասն կեշտես այսորիկ եթէ առ յոյժ յիմարութենն մոլորեալ են. և սուտ կերպարանին յաչս տեսէր մարդկան. Թերևս և այս տեսիլ՝ այնպէս ինչ երևեցաւ և ինձ. Եւ ոչ կարէր

հա

համօրէն կայ 'ի մի լեռայն երեւման։

Եթէ մինչեւ նա յայսր 'ի մտաց խորհրդի էր, դարձեալ սուրբքն մխիթարանչէր խշտեաց կանգնեցան եւ կացին 'ի սովորական պաշտամանն։ Յայնժամ ճշմարտեալ դիտաց մարդկան եթէ ոչ յայլոց ասանէր՝ որ երեւեցան նմա, այլ 'ի նոցունց յանձանց փայլէր լուսաճառութիւնն։ Յայնժամ կրկին անգամ ձայնի հարաւ եւ ասէ. ո՞ւմ 'ի կասկածոյն եղեւ պատճառ յայտնութիւն. ես եւ ոչ գիտ զոր ոչ գիտեմ. եւ ոչ լուեալ է իմ 'ի հարցն առաջնոց։ Եթէ քանզի անհնարին շարժեցաւ 'ի մեծ սքանչելեացն, եւ զօրայինն ամ մարմինքն, եւ թմբրեալ կիսամեռ լինէր 'ի վերայ տանեացն մինչեւ ցառաւօտն։ Եւ ընդ ծագել լուսոյն՝ երեւ զօրաւորեալ հիւանդ՝ յարուցեալ երթայր 'ի վանս իւր. եւ այլ ոչ ումեք իշխեաց ամենեւին պատմել զոր ետեսն։

Կո

Կոչեաց առ իւր զպահապանսն և
ասէ ցնոսա. երթայք հանէք զեա
պետալսն 'ի մերձաւորն մի ցամաքա
գոյն, և անդ պահեցէք զնա զգու-
շութի որպէս և ասացէքն. Մի
ոմն 'ի դահճաց անտի իբրև լուաւ
զհրամանսն մոգպետին, փութով
ընթացեալ երթայր իբրև մեծ
լինի աւետիս տանէր նմա. Հրամայ-
եաց ձեզ ասէ՝ ելանել 'ի ցամաք
մերձաւորն մի. արէք վաղվաղակի
և մի հեղգայք. քանզի և մեք իսկ
պատրաստեցուք վասն ձերոյ տառա-
պանացդ.

Իսկ այն Յովսէփ հեզաւոր
սկսաւ խօսել ընդ դահճին և ասէ.
Երթ առ դու ցյիմար անօրէնդ
ծեր. չէ՞ լուեալ քո վասն հանդեր-
ձեալ գալստեան Տեառն մերոյ, և
կամ մի հրաշակերտ ծննդոյն՝
որք մեզ կան պահեալ 'ի սկզբանէ
պատրաստութիւն. վասն որոյ և
դիւրաւ համբերեմք մեծի նեղու-

թեա

թեա առ սէր այն յուսոյ՝ զոր ան-
սանեմք։ Դու բարուք արարեր զի
արդարհատեցեր մեծի նեղութեա
մարմնոյ. այլ ոչ ինչ եմք ձանձրա
ցեալ իբրև զանոնծ ոք, որ չէք
ինչ այլ յոյս 'ի մահի նէր, քան որ
երևինս։ Այլ մեք առ սէրն Ք̄ին
մերոյ ընդ այս յոյժ եմք խնդացեալ.
և կատարեալ պարգևս զայս իսկ
համարիմք. զի ժամանակեան վշտօ
քըս՝ զյանժամանակեան երանու-
թիւնն ժառանգեսցուք։ Եթէ
չինուածոյ իցեմք ցանկացեալ, ու-
նիմք չինուածս յերկինս առանց
մարմնաւոր ձեռագործի, որ ոչ
ինչ երբէք ձեր արքունիքդ առ-
նօքօք։ Այնպէս և համբերձից և
փառաց և անախտ կերակրոյ. զոր
եթէ կամիցի որ առել ձեզ, չհան
դարտէ լսել ձեր տկարութիւնդ.
վասն զի հնութեն կուրութեամբն
չտեսանէք և ոչ լսէք և ոչ իմա-
նայք։ Յայն յաղագս զմեզ՝ զուր
և

և անկրան՝ առանց յանցանաց անո
ղորմն դատիք։ Այլ՝ մեր թագա-
ւորն առատ է և բարերար. և բայց
է դուռն արքայութեն նր. եթէ ոք
կամի գիտել, գիտասցէ համարձակ
'ի դարձելոց յապաշխարութիւն.
չնախանձի և ոչ ընդ ումեք։ Բայց
վասն գիտութեան՝ որ դու հրա-
մայեցեր մեզ առնել, էր մեր իշ-
խանութիւն անդրէն յաշխարհին
մերում՝ չանկանել մեզ 'ի ձեռս
թագաւորին. որպէս և այլքն որ
այլեցան յայսմիկ փորձանաց։
Այլ որպէս կամօք և յօժարութբ՝
եկաք կրել զխոստացուք զվիշտ վասն
գիս, ոչ ինչ զանգիտեսցուք յայս-
միկ ձգանաց, այնպէս կամիմք զի
այլ ևս ծանրացուսցես 'ի վերայ
մեր, մինչև քո չարութեն կամեցե-
յալեացի 'ի մեզ. Օվ եթէ Տէր
մեր՝ որ արարիչ է երկնի և երկրի
և ամ՝ երևելեաց և աներևութից,
և առ սէր խորց բարերարութեն
խո

խոնարհեցաւ առ ազգս մարդկան, և զգեցաւ մարմին չարչարելի, և ոնց ընդ ամ՛ հանդէս աւարինուն, և կատարեաց զամ՛ գործ տնտեսութեն, 'ի կամս իւր մատնեցաւ 'ի ձեռս խաչահանուացն, մահու մեռաւ և եդաւ 'ի գերեզմանի, և զօրութբ. Աստուածութեն իւրոյ յարուցեալ երևեցաւ աշակերտացն և այլոց բազմացն, վերացաւ առ Հայր յերկինս և նստաւ ընդ աջմէ Հայրենի աթոռոյն, և շնորհեաց մեզ զօրութ՛ երկնաւոր զի լսա Նր ամենայն ընութեն՝ և մեք մերով մահկանացու մարմնովս կարիցեմք չարչարակից լինել ամենայն Աստուածութեն, և նա ոչ ևս իւրև զմահկանացուս համարի զմեր մահն, այլ իւրև անմահից հատուցանէ մեզ զվարձս վաստակոց մերոց, որդ փառք համարիմք մեք զչարչարանս զայս առ սէր փոխարինին՝ զոր էարկ առ ազգս մարդկան։

Իւրև

Իբրեւ լուեալ զայս տէր Լանս
Մոդպեան 'ի դաշնաւորելոյ անտի,
խռովեցաւ եւ պղտորեցաւ 'ի միտս
իւր եւ հատաւ քուն յաչաց նորա
զբաղում գիշերս։ Իսկ յաւուր
միոջ յերեկոյն պահուն՝ յարու-
ցեալ երթայր առ նոսա միայնիկ
մնջիկ, եւ ոչ զոք առնոյր ընդ իւր
'ի սպասաւորացն։ Եւ իբրեւ եհաս
'ի դուրս տանն, հայէր ընդ ծակ մի
'ի ներքս եւ տեսանէր ըստ առաջին
տեսլեանն. բայց նոքա 'ի քուն կայ
ին խաղաղիկ։ Հեղաբար կարդաց
յանուանս զերկոսեանն. զի քաջ
իսկ գիտէր զորակերպն։ Եկն 'ի
դուրսն եւ հարցանէր, ո՞վ ես դու։
Ես ինքնին իսկ եմ տէր Մոդպեան,
կամիմ 'ի ներքս մտանել եւ տեսա-
նել զձեզ։ Եւ իբրեւ եմուտ 'ի
մէջ սոցին, ոչ եւս երեւէր նմա նը-
շանն. այլ պատմեաց նմա զերկիցս
երեւումն զարմանչելեացն։ Եւ պա-
տասխանի Ղեւոնդ երէց եւ ասէ,

Ո՜վ որ ասաց 'ի խաւարի լոյս ծա-
գել, որ և ծագեցեր և լուսաւորեցեր
զաներև ոյթ արարածս, նոյն զօրու-
թեամբ և այսօր ծագեաց 'ի խաւար
մտաց քոց. և բացցեն կուրացեալ
աչք ոգւոյդ և տեսցեն զանշիջանելի
լոյս շնորհացն Ս. Յ: Փութա՛ մի
հեղգար, գուցէ դարձեալ կուրա-
ցեալ ընդ խաւար գնասցես:

Եւ զայս լուր՝ ասաց, յառն կա-
ցին ամենեքեան անկեալ 'ի սաղմ-
սէն 'ի քառասուն երկու երորդէ,
առաքեա զլոյս քո և զճշմարտութի-
քո, զի նոքա առաջնորդեսցեն և
ածցեն զմեզ 'ի լեառն սուրբ և 'ի
յարկս քո: Արդարև ճշմարիտ
Տէր առաջնորդեսցէ և ածէ ըզ-
մոլորեալս զայս յանանց ուրախու-
թիւնդ և յանմերժելի հանգիստ:
Ահա նմանեալ է օրս այս՝ սուրբ
չարչարանաց քոց. որպէս ապրե-
ցուցեր զմահապարտ աւազակն 'ի
մահուանէ, և նմա՛ն բացեր զաղ-
խուալ

խեալ դրունսն աղենայ, այսպէս գաւիր և զայս կործանեալ այրս, որ էր պատճառք մահու բազմաց. և արարեր զնա պատճառս կենաց և մեզ և անձին մերում Գոհանամք զքեն Ք՛Ս. գոհանամք և ձայնակիցք լինիմք սուրբ մարգարէին. Ո՛չ մեզ Տէր ո՛չ մեզ. այլ անուան քում տուր զփառս վասն ողորմութեան և ճշմարտութեան քո. զի մի երբէք ասասցեն 'ի հեթանոսս թէ ո՞ւր է ա՜ծ նոցա։ Որպէս և այսօր ևս յայտնի եղև զօրութիւն քո Ա՛ծ՝ 'ի մէջ ապարասան խաւարազգեաց ազգիս։

Իսկ որ ձրի՛ն եղիտ զա՜ծատուր շնորհսն, սկսաւ և նա տալ տեառն ձրին, Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկնեայց. Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞ դողացայց։ Քանզի գիտեմ ճշմարիտ եթէ բազում են այսուհետև թշնամիք իմ, և կամին մերձենալ

և

և ուսեալ զհրամանս իմ։ Բայց դու Տէր իմ. որ եկիր վասն ամենեցուն կենաց, զի դարձցին և կեցցեն առաջի քոյ մարդասիրութեամբ, մի որոշեր զիս 'ի սուրբ դասուցդ՝ յոր խառնեցայ. զի մի ըստ քո փառաց արտաքս ելեալ, չար գազանն բեկանեսցէ զիս։ Մի հայիր Տէր 'ի բազմամեայ անիրաւութեանս իմ, զի մի մոլորեալ 'ի ճշմարիտ կենացդ՝ զրաւուամ անդրէն 'ի կորուստ աշակերտակցեմ. այլ որոց եղէն պատճառ մահու, նոցին եղէց պատճառք կենաց։ Աստանօր՝ որ լինել խոստացեալ պարծէր 'ի մէջ մեծի կարապետանոցս, լինել կորացեալ ամաչեցաւ 'ի մէջ իւրոց աշակերտացն։ Ո՞վ զայս իբրև ասացին, նմին իսկ ետուն կատարել զաղօթսն. և դադարեցին նախահանդերձ մինչև 'ի պահն երրորդ։ Ո՞վ այնպէս՝ խաղաղեալ կացին 'ի քուն ամենեքեան մինչև 'ի ժամ

առաւօտուն։

Իսկ նորա յոտն կացեալ և 'ի քուն ոչ մտեալ. այլ զձեռսն 'ի վեր ամբարձեալ՝ կայր յաղօթս։ Եւ մինչդեռ ընդ երդն պշուցեալ հայէր յերկինս, տունն յանկարծակի լի եղև լուսով. և երևեցան նմա սանդուխք լուսեղէնք, որ կանգնեալ էր յերկրէ յերկինս. և գունդք գունդք զօրաց ելանէին 'ի վեր. և էր ամենեցուն տեսիլն՝ նոր և չքնաղ. ահաւոր և սքանչելի իբրև զտեսիլ հրեշտակաց։ Ունէր ևս զԹիւ համարոյ 'ի միտս իւր զիւրաքանչիւր զնդիցն՝ զոր տեսանէր։ Էր՝ ուր զհազարն, էր՝ ուր զերեսուն և զերից, էր՝ ուր և զերկերիւրոց և զերեքտասանից։ Եւ այսպէս մտադրեալ մերձենայր, մինչ ձանաչել նմա զերկան 'ի նոցանէ, զՎարդան և զԱրտակ և զԽորէնն։ Եւ ունէին լինն պսակ 'ի ձեռին. խօսէին ընդ միմեանս և

 ասէ

սաէրն, աչա եկն էհաս ժամ զի և որքա խառնեսցին ՚ի գունդս մերու Բանզի և մեք սոցա խակ մնայաք․ և զառհաճառաչեայ պատիճս սոցա բերաք։ Նըճ որում ոչ ես մնայաք, ծկն երևեցաւ և խառնեցաւ և եղև խբրև զմի ՚ի զինուորաց ՚Բն։ Մյս երկիցս անգամ՝ երևեցաւ չքնաղ տեսիլս՝ առնն երանելւոյ ։ Զարթոյց զսէն ՚ի քնոյ անտի, և պատմեաց նմա զնմ՝ տեսիլն կարգաւ։

Իսկ նոցա յարուցեալ՝ կային յաղօթս և ասէին․ Տէր Տէր մեր զի սքանչելի անուն քո։ Համբարձաւ մեծ վայելչութի քո՝ ՚ի վերոյ քան զերկինս ։ ՚Ի բերանոց մանկանց տղայոց հաստատեցեր զօրհնութի․ զի եղծցի թշնամին և հակառակորդ։ Զի ոչ ես պատուհեալ է սաեղ թէ, տեսից զերկինս զգործս մատանց քոց․ այլ՝ զի տեսից զքեզ Տէր երկնի և երկրի․ որպէս երևեցար խակ այսօր ՚ի ձեռն սուրբ զօրա

կա

կանայն քոյ՝ հեռաւոր օտարիս, որ անցեալ էր ըստ ամենակալութե͞ն կենաց խելոյ։ Ո՜հ դու Տէր ողորմութե͞ քում պսակեցեր զխրեղէս քո. և գթութե͞ քում եդեր 'ի խորն դիր կործանելոյս. դարձուցեր և խառնեցեր 'ի դասս մեջ քոյ։ Ո՛չ միայն ետես սա զերկինս զգործս մատանց քոց, այլ ետես զերկինս և զբնակիչս նորա։ Եւ մինչդեռ է յերկրիս, խառնեցաւ 'ի բանակս ըխըրաւոր հրեշտակաց քոց։ Ետես և զհողիս արդարոց կատարելոց. ետես և զնմանութի͞ փառաց անե րեւոյթ պատրաստութե͞ցն. ետես և 'ի ձեռն նորա՝ զանշուշտ ռաբունեան, որ հանդերձեալ պահի 'ի ձեռս Ճարտարապետին։ Երանի սմա վասն սուրբ տեսլեանս. և երանի մեզ վասն սորա մեծաւորութե͞ս առ մեզ։ Վասնզի հաստատեալ գիտացաք այժմ եթէ՝ (որում այսպիսի սքանչելիք յայտնին

նին,) մեծ մասն ընկալաւ սա՛ յանըս պատ. քոյ բարութեոյ։ Անսպառ են պարգեւքդ քո․ և առանց խնդրելոյ տաս, ում և կամիս՝ քոյով յորդ և աննախանձ առատութեամբ։ Ոչ եթէ որ ոչս խնդրեն, չարգելուս 'ի սոցանէ, բայց մեզ Տէր ըզդուռն ողորմութեան․ որ 'ի մանկութեան մերմէ ցանկացեալ եմք բարեմասնութե՛ն սիրոյ քոյ։ Զնորադրեալ դաստակերտս քո՝ բարեխօս առնեմք վասն անձանց մերոց, մի ընկղմեսցի նաւ հաւատոց մերոց 'ի մէջ ալէկոծեալ ծովուս մեղաց։

Ո՛չ այսպէս կատարելով յերկար զաղօթսն, յորդ և առատ արտասուս հեղուլին 'ի վերայ անձանց քուրեանց։ Գութս ողորմանաց արկանէին առաջի բարերարին, զի լսելի լիցի ձայն պաղատանաց նոցա և հաստատուն կացցեն 'ի վիշտս ձգանացն, զի մի զրկեսցին 'ի ցանկալի պսակացն՝ զոր ունէին սուրբքն 'ի

ձեռս

ձեռս լուրեանց։ Որպէս և ապշե-ցաւ նոցա 'ի Հոգւոյն սրբոյ, (զի մերձենալ էր ժամանակ կոչմանն նոցա) որպէս զի երթիցեն և աներկիւղ դադարեսցեն 'ի կասկածելի յանկ-կալութենէն, որում համբերէին բա-զում տառապանօք. զի առ հաճա-չէին փոքու՝ հասցեն երկնաւոր մեծութեան, որում և 'ի վաղնջուց խոկ էին ցանկացեալք։

Նա պատմէ, թէ յանձնարարու Մոգպետն 'ի հաւատս՝ խօսին ասորերէն պատգամաբերա-նաց. զորոց լսեալ Եսայապետն՝ փանջէ զնոսա։

Եւ քանզի ինքն Մոգպետան իշ-խան էր աշխարհին, նմա յան-ձին արարեալ էր զկապեալս քաղա-քին. վասն այնորիկ և համարձա-կութիւն ընդ առաքօսն հանեալ տանէր զկապեալսն յապարանս իւր լուծանայր և սրբէր զնոսա 'ի չար-չա

չարանաց լսանելին․ առնոյր զջուր լուացման սրբոյն և արկանէր զնո-րով մարմնովն ։ Ուղղէր 'ի տան խուրում՝ աւազան, և ընդունէր 'ի նոցանէ զիւր մկրտութիւնն։ Հա-ղորդէր 'ի կենդանի Մարմին և 'ի քաւիչ Արեան Տեառն մերոյ Յի Քի։ Բարձր բարբառով աղաղա-կէր և ասէր․ մկրտութիւս այս լիցի ինձ 'ի լուացումն մեղաց իմոց․ 'ի Ծնունդ նորոգութեն վերստին՝ 'ի Հոգւոյն սրբոյ․ և Ճաշակումն ան-մահ խորհրդին՝ 'ի ժառանգութեն երկնաւոր որդէգրութեն։ Կենէր և ըստ մարմնոյ՝ առաջի նոցա սեղան կերակրոյ․ և մխիթարութեն բա-ժակ մատուցանէր նոցա․ և միաբանէր ընդ նոսա 'ի հայլին օրհնութեն։

Այլ թէպէտ և ինքն եհաս յեր կնաւոր բարւոն, և աներկիւղ էր 'ի մարդկան հարուածոյ, սակայն մե ընտանեացն՝ յոյժ ունէր կասկած, զի մի երբէք վնասակարք մատնիցին

յերա

յիրս արքունի։ Սան այնորիկ՝ ծածուկ կոչէր 'ի գիշերի զնախարարսն, (որ 'ի նմին քաղաքին էին 'ի կապանս,) և առնէր ծախս մեծապէս։ Նոքա էին ամենեքեան 'ի մեծի խնդութեն վասն նորա սքանչելեացն՝ որ երևեցաւն նոցա։ Զյիշէին ամենևին եթէ միշտք ինչ անցեալ էին ընդ նոսա։ Բայց 'ի բազմականսայն կարծիք իմն եղեն 'ի միտս որդւոյն վասն երկոցուն մեր, որ էր ընդ նոսա 'ի սուրբ կապանսն. զի 'ի մէջ չինական մարդկան կեցեալ էր. և տգիտացն ևս էր 'ի գրոց մխիթարութէ, հրամայեցին նմա ունել զգլուխ բազմականին։ Նա պատասխանի երանելին և ասէ. զի՞նչ է այդ զոր դուքդ գործէք. և կամ յինէն զի՞ թագուցանէք զծածուկս խորհրդոյդ. ես քան զկրսեր ձեր խոնարհագոյն եմ. և քան զևս փոքունս յաշակերտացն ձերոց տգիտագոյն եմ։ զիա՞րդ կարացից այդմ

տա

տանել։ Այս խոկ մեծ էր ինձ, զի
սուրբ կապանացդ ձերոյ հաղոր-
դեալ եմ. և այսօր եթէ արժանի
համարիք զիս ձերում սեղանոյդ,
կալայք դուք զիւրաքանչիւր տե-
ղիս բազմականիդ. և հրամայեցէք
ինձ զիմ տեղին։ Եւ բռնադատեց
սուրբ Եպիսկոպոսն միաբանութե-
ամ որդւոցն, և 'ի վերոյ քան զամե-
նեսեան բազմեցուցին զնա։

Եւ իբրև բոլորեցան ակումբ
բազմականին և հաղորդեցան ամե-
նեքեան 'ի կերակուրն զուարթու-
թե̃, յայն եկաց սուրբն Յովսէփ
և սկսաւ զուրախութեան նուագն
մատուցանել և ասել այսպէս։ Ու-
րախ լերուք ամենեքեան 'ի Քր̃.
քանզի վաղիւ յայս ժամ լիցի, ա-
հա նստեալ լիցի մեր զմ̃ նե-
ղութիւնս և զչարչարանս զոր կրե-
ցաք։ Եւ փոխանակ սակաւ աշխա-
տութեանս մեր՝ բազմապատիկ հան-
գիստ ունելոց եմք։ Եւ փոխանակ
խա

խաճարային արգելանաց բանտի՝ մտանելոց եւք յերկնից քաղաքն լուսաւոր, որոյ քաղաքի քաղաքապետ ինքն է Քս։ Հանդիսապետ՝ յորում՝ ասպարիսի նախ ինքն առաքինացաւ, առնելով զնշան յաղթութ̃ն։ Եւ այսօր նոյն Տէր է որ յաջողէ մեզ զնոյն նշան ընդունելոյ 'ի փրկութ̃ի անձանց եւ 'ի պարծանս մեծափառ սուրբ Եկեղեցւոյ։ Եւ զոր օրինակ տեսէք դուք զեղբայրս զայս գլուխ բազմականիս մերոյ, այնպէս նախ սա ընդունելոց է փողէ պսակն՝ 'ի ձեռն կատարմանն մերոյ. զի աշաճափիկ եկն եհաս եւ մերձեցաւ առ մեզ թշնամին կենաց մերոց, եւ պակիլ ու չարչարանաց ծառայից Քի։

Զայս իբրեւ ասաց, լուծաւ 'ի նմանէ բանս պնդութ̃ն, որով յոյժ մխիթարեցան ամենեքեան։ 'Ի նը աղօթից ձերոց այսպէս արասցէ ինձ Քս ասէ. եւ կատարեսցէ զեւս

վախ

վախճանի իմոյ յաշխարհէս, ըստ
բանի քում։ Ահա ընդ ասելդ քո՝
ազդումն եղև հոգւոյս իմոյ. և յի
շեցի ես զմարդասիրութիւնն Քսի,
որոյ և գալուստն իսկ նորա յաշ-
խարհս՝ վն մեր մեղաւորացս եղև։
Գթասցէ յիս որպէս և յաւազակն
՚ի ժամ՝ խաչին։ Որպէս նովաւ ըզ
դրունս փակեալ դրախտին եբաց,
և առաջնեցաւ լինել կարապետ այ-
նոցիկ՝ որ անդրէն ՚ի նոյն տեղի
դառնալոց էին յուրախութիւն,
տրասցէ և զիս այսօր Տր Քս սպա
սաւոր մեծաշուք գնդին հրոյ։
Աւանիկ վասն միոյ մեղաւորի՝ որ
դառնայ յապաշխարութիւն, ան-
վախճան լինի ուրախութիւն յեր-
կինս. որպէս զի գտանեն իսկ զկամս
Տեառն իւրեանց։ Քանզի վասն
միոյ մեղաւորի և կորուսելոյ ոչ-
խարի եկն ՚ի խնդիր. վասն այնո-
րիկ՝ և նոքա խնդակից լինին վասն
միոյ դարձելոյ յապաշխարութիւն։

Թե

Թերևս վասն իմ իսկ եկեալ էր մեծ զօրավարին հայոց՝ բազում ոք ընկերակցօքն իւրովք։ Ոչ պսակն վասն ձեր բերեալ էր, այլ զուրախութեան աւետիսն՝ հասարակաց տայր։ Եւ առաւել ևս ընդ իս էին զարմացեալ, զի ոչ ճանաչէին զիս 'ի կերպս իւրեանց, ահա՛ 'ի սուրբ մահուն իւրեանց՝ կամին զի և ես մասն ընկալայց ընդ երանելիսն. Աղաչեմ՝ ողջերդ տեսա՛րք իմ և հարք. աղօթս արարէք 'ի վերայ անարժանութեան իմոյ. զի արժանի եղէց մեծի աւետեացն հասանել, որ 'ի յանսուտ բերանոցդ ձերոց՝ բարբառեցաւ 'ի լսելիս իմ. Արդ՝ փութամ՝ տեսանել զօրն, և յաւուր անդ զժամն եկեալ հասեալ 'ի վերայ մեր. Եւ ե՞րբ իցէ զի ելից 'ի թանձրադանդաղ ձանձրալի մարմնոյս. Ե՞րբ իցէ զի տեսից զքեզ Տէր Յս։ Ե՞րբ իցէ զի անհրկիւղ եղէց 'ի մահուանէ. Ե՞րբ իցէ զի

տգէ

ողխութիւնս իմ՝ հասցէ 'ի կատարեալ դխութիւն։ Օգնեա ինձ Տէր օգնեա ինձ. և կարկառեա զամենազօր աջդ յօգնականութիւն, զի խոստման բանիցս իմոց՝ և գործք արդեամբ կատարեսցին 'ի վերայ մեր. և փառաւոր լիցի յիս 'ի մեղաւորս անուն Տն մերոյ Յի Քի։

Օհ այս իբրև աստ երանելին, յորս կացին 'ի բազմականսն անդ, գոհանայլն ասելով, փառք քեզ Տէր փառք քեզ Թագաւոր. զի ետուր մեզ կերակուր յուրախութիւն, լցո զմեզ հոգւովդ սրբով. զի գտցուք առաջի քո հաճոյք, և մի ամաչեսցուք. զի դու հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր։

'Ի նմին ժամու եղև խորհուրդ մեծ 'ի մէջ նոցա, եթէ զինչ օրինակաւ կարասցեն ապրեցուցանել զՄոգպետն, զի մի լուեալ յարքունիս՝ իբրև զհուր բորբոքեսցի բարկութիւն 'ի վերայ Միացելոցն։

Իւ

Իբրեւ ոչ ինչ կարացին 'ի ժամուն վճարել՝ միաբանութիւն աղօթս ա-բարեալ, յԱծ ապաստան առնէին զկեանս առ հաւատացելոյ։

Իսկ՝ նախարարքն հրաժարեցին 'ի սրբոյն. յորդառատ արտասուօքն եւ ողբալից ուրախութիւն՝ անկեալ յառս նորա՝ աղաչէին մեծաճ պաղատանօք՝ յանձն առնել զնոսա Հոգւոյն սրբոյ, զի մի որք 'ի մէնջ (ասեն) թուլասցեալ եւ ելեալ արտաքս 'ի հաւասար միաբանութենէս, կերակուր լիցի չարաբարոյ գազանաց։ Իսկ՝ երանելիքն միաբան քաջալերէին զնոսա եւ ասէին, զօրացարո՛ւք եղբարք 'ի Տր. եւ մխիթարեցարուք 'ի մարդասիրութիւնն Ածյ, որ ոչ թողու զձեզ որբս. եւ ոչ 'ի բացէ առնէ զողորմութիւն իւր 'ի մէնջ։ Հաւատովք 'ի Քս բազում բարեխօսիւք՝ (զոր ունիմք առ նմա,) ոչ շիջանի վառումն կանթեղաց ձերոյ. եւ ոչ ուրախ

զինի խառնարանէր թշնամին կենաց ձերոց։ Ա՛յլ նոյն Տէր է որ զօրացոյց զառաջին նահատակսն, խառնելով զնս՟ 'ի դունդ հրեշտակաց իւրոց։ Նոցուն սուրբ ոգիք և ա՟մ դասք արդարոց՝ հասանեն ձեզ յօգնականութիւն համբերութե՟ն, զի ընդ նոսին՝ նոցուն պսակացն արժանի լինիք։ Զայս խօսէին ը՟ն նոսա, և զգիշերն ա՟մ սաղմոսիւք 'ի գլուխ տանէին։ Իսկ 'ի ժամ առաւօտուն ասէին ամենեքեան, Ձգեա՛ Տէր զողորմութիւն քո, ոյք ճանաչեն զքեզ. զարդարութիւն քո, ոյք ուղիղ են սրտիւք։ Մի՛ եկեսցէ 'ի վերայ մեր ոտն ամբարտաւանից. և ձեռք մեղաւորաց մի՛ դողացուսցեն զմեզ։ Անդ անկցին ամենեքեան որ գործեն զանօրէնութիւն. մերժեսցին, և այլ մի՛ կարասցեն հաստատիլ։

Ի՛ճ անդէն վաղվաղակի հասին դահճքն 'ի դուռն բանտին, մտին

'ի

ներքս եւ տեսլին որ յառաջ մօտ-
պեալ էր, եւ նմա իսկ յանձն արա
րեալ էր պահել զնոսա, նստէր 'ի
մէջ նոցա եւ լսէր նոցա. նա եւ քա
ջալերէր եւս զնոսա չերկնչել 'ի
մահուանէ։ Իբրեւ տեսլին զմեծ ըս
քանչելիսն դահճիքն, յոյժ զարմա
ցան ընդ իրսն, այլ ոչ ինչ իշխե-
ցին հարցանել զնա. այլ չոգան
եւ պատմեցին դենշապհոյ, որում
յանձն արարեալ էր զչարչարանս
սրբոյն։ Իսկ՝ նա իբրեւ լուաւ 'ի
դահճացն արքունի, զահի մեծի հա
րաւ 'ի միտս իւր եթէ դուցէ եւ
ինքն անձամբ 'ի ներքս լինիցի.
Քանզի ծանօթագոյն էր առնն,
հրամայեաց հանել 'ի բանտէ ան-
տի զամենեսեան կապանօք, եւ հե-
ռացուցանել 'ի քաղաքէ անտի
երկոտասան պարսիկ հրասահաւ.
եւ 'ի ծածուկ խօսէր ընդ Սոդպե-
տին եթէ՝ զի՞նչ պատճառք իցեն
կապանացն նոցա։ Նա պատասխա
նի

նի այրն և ասէ, մի՛ խօսիր ընդ իս ՚ի ծածուկ. և մի՛ լսեր զխորհուրդս լուսոյ՝ ՚ի մէջ խաւարի. զի բայց ին աչք իմ. Որդ՝ քանզի տեսի ըզ լոյսն երկնաւոր. եթէ կամիս լինել խորհրդակից կենաց, հա՛րց զիս յանդիմանն հրապարակաւ, և պատ մեմ՝ քեզ զոր տեսի զմեծամեծս ոյ։

Եւ իբրև լուաւ ՚ի նմանէ զայս և ստուգեաց ես վասն խորոյ մտա-րանութեանն եթէ ոչ քակոի ՚ի որբոցն հաւանութէ, ոչ իշխեաց ձեռն արկանել ՚ի նա, թէպէտ և ունէր հրաման յարքունուստ. այլ փութացաւ և ինքն երթալ պատ-մել թագաւորին ՚ի ծածուկ զայս, որպէս զիարդ և լուաւ ՚ի նմանէ։ Ետ պատասխանի թագաւորն և ասէ ցՄենշապուհ. մի՛ ոք ամենե-ւին լուիցէ զայդ ՚ի քէն. մանաւանդ վասն տեսլեանն մեծի, որ երևեալ է նմա. զի մի՛ տգէտ մարդիկ՝ երկ-մտեալ խաժամանեցին ՚ի մեր հա-

տատուն օրինացս։ Մինչև մեք զայլս կամիմք հնազանդել, թերևս զօգիս դոցեն, իբրև նոցա ոչինչ կարացաք տանել, մեք որ վաղ դատեալք օրինացդ էին, զկնի նոցա մոլորութեանն հետևեցան։ Նաև այն ևս չար է մեզ քան զամ̃, զի ոչ դաւանաքեայ ինչ ոք խոտորեցաւ ՚ի նմ̃ օրէնսն, այլ՝ այր մի համակղեն երևելի ընդ ամ̃ վերին աշխարհս։ Եթէ փայլարիմք ընդնմա, նա տեղեկագոյն է քան զամ̃ վարդապետս աշխարհիս, դուցէ ՚ի հիմանէ խախտեալ աւերէ զօրէնս մեր։ Եւ եթէ դատիմք զնա ընդ այլ չարագործսն, նա և այնքա հռչակեալ եղանի համբաւ քրիստոնէութ̃ նորա, և մեծ անարգանք զկնի դենիս ձգին։ Եւ եթէ սուտ և ս վախճանեսցի, բազում են քրիստոնեայք ՚ի կարաւանին՝ ընդ ամ̃ երկիր ցանեալ ցրուեն զոսկերս նորա։ Սակաւ ինչ էին մեզ անար

գանք առ Տէր մարդիկս՝ ուր մեծա-
րեալ պատուէին ոսկեղէն նաժա-
րացուոց։ Իսկ՝ եթէ մոգուց և մոգ-
պետաց զնոյն պատիւ կրեսցեն,
մեք մերոյն լինիմք քակիչ օրինացս
մերոց։ Նայ այժմ իմ երդումն
առեալ քեզ յանմահ դիցն, նախ
զդառնացեալ ձերն կոչեմ առաջի
քո. եթէ հաճանեսցի սիրով և
զղջացեալ ապաշխարեսցէ զխա-
խարդութիւն նոցա, մեծարեսջիր
զնա պատուովն ըստ առաջին կարգին
և որ մի գիտասցէ զթշնամանս նոր
Ապա թէ ոչ հաճանի և ոչ կամի
անսալ բանից քոց, յորուսջիր ՚ի
վերայ նորա բազում ամբաստանս
յաշխարհէ անտի, զի վնասակար
գտցի յարքունի իրս։ Նաև աշխար-
հաւ փութասջիր ՚ի վերայ յարուսջիր
յայնկոյս, քան զկուրան և զմակու-
րան. և անդ ընկեցեալ զնա ՚ի վե-
րայ մի, և ընկալցի զմահ թշուա-
ռութեն։ Նաև զայլակ դէնան՝ փու-
թա

թանակի կարծեմ ՚ի կենաց աշխարհիս. զի մի՛ դդրդեսցեն զօրէնս աշխարհիս մերոյ: Ո՞չ ի թէ զծարտար Սոգպեան այնպէս երագ. աշակերտեցին, տգէտ մարդիկ զխո՞րդ կարասցեն կալ առաջի նց պատիր խաբէութեանն:

Արդ՝ եւ նստաւ Պենշապուհ արտաքոյ բանակին յատենի, (որ աստացաք) հեռի երկոտասան հրասահաւ. հարցանէր ցՍոգպեան եւ ասէր, իշխանութիւն առի վասն քո՝ ոչ միայն բանիւք հարցանել, այլ ամ՝ հարուածովք տանջանաց: Մինչեւ ձեռն արկեալ եմ՛ ՚ի քեզ. ընկալ զմեծարանս. եւ արհամարհեալ զանարգանս. եւ խնայեալ ՚ի պատուհական ալխոդ: Թո՛ղ անդր ՚ի բաց զքրիստոնէութիւնն՝ զոր ո՛չ ունէիր ՚ի բնէ. եւ դարձի՛ր անդրէն ՚ի մոգութիւն, որպէս զի վարդապետ իսկ էիր բազմաց: Նա պատասխանի երանելին եւ ասէ, ապա_

չեմ

չեմ գքեզ՝ (որ յառաջ իբրև զհարազատ եղբայր համարեալ էիր յաչս իմ, և այսօր թշնամի կատարեալ,) մի՛ ըստ առաջին սիրոյն զթար գույիս. այլ կատարեա՛ 'ի վերայ զկամս չարութեան թագաւորին ձերոյ. և որպէս առեր իշխանութիւն 'ի վերայ իմ՝ դատեա՛ զիս։

Յայնմ ժամանակի իբրև եւես Պետնշապուհ եթէ առ ոչ ինչ զբարպառնալիսն արքունի համարեցաւ, և ո՛չ ողոքանացն երեսս ինչ արար, և քան 'ի ծածուկ՝ յայտնի ևս կամէր եթէ խոսեսցի, կատարեաց 'ի վերայ նմ՝ ըստ խրատուն արքունի։ Եւ գաղտ գողայի ընկեցաւ 'ի հեռաւոր օտարութիւն. որպէս զի ա՛րդ և ուսաւ 'ի վարդապետէն և այլոց։

Եւ հրամայեաց ևս դենշապհյ երկու ընկերակիցս օգնականս. յաճախ գործակալացն՝ զՋնիկանն՝ որ էր մարզպետ արքունի. և զՄովան

վան անդերձաւորսն՝ 'ի ձեռանէ մոլորեալն մոլորելոյ։

Արդ՝ երկոքեան սոքա իւրաքանչիւր սպասաւորօք՝ առին զսպասն յանապատէ, և փոխեցան նոյն չափ և ս հեռաւորսն 'ի միւս և ս դժնդակ տեղի 'ի նմին գիշերի։ Այն զոր 'ի կարաւանէն առեր ոչ թողին տեսանել. ոչ 'ի հայոց և ոչ յամ քրիստոնէից և ոչ ընաւ յարտաքին հեթանոսաց։ Այն սպասաւորքն՝ որ էին 'ի կապելոցն, անդէն 'ի քաղաքին հրամայեցին պահել զգուշութի. զի զհետս նոց մի որք գիտասցէ, ընդ որ տանիցին 'ի մահուն տեղի. մի նոքա և մի ամենեին որք 'ի մարդկանէ։ Այսց՝ այր մի Խուժիկ 'ի զօրացն արքունի՝ որ 'ի ծածուկ ունէր զքրիստոնէութիւն և վիճակեալ էր 'ի դասս դահճացն և կայր 'ի սպասու օրապահացն հանդերձ գործակալսն տանջանարանօքն, եկն եմուտ 'ի գիշերին և խառնե-

ցաւ

ցած 'ի դասս նախարարացն։ Առաջին դասն՝ 'ի միջնոյն կարծէր զնա. և միջինն՝ երրորդին. և երեքեան՝ 'ի միմեանց համարէին, և ոչ ոք 'ի նոցանէ ևհարց թէ դու ո՞վ ես ընդ մեզ. ոչ 'ի տերանցն, և ոչ 'ի սպասաւորացն։

Իբրև հասին 'ի տեղի անապատին՝ (որ ամենևին անբոյս էր 'ի դալարաբեր բանջարոց. և այնպէս առապար դժնեայ էր, զի և ոչ նըստելոյ անգամ տեղի անդ գտանէ նց.) իջին հեծեալքն՝ նախարարքն երեքեան, և հրամայեցին դահճիցն խուրեանց կապել զոտս և զձեռս նց։ Եւ արկին պարանս երկայնս զոտից նոցա, և երկու երկու լծեցան և առին 'ի քարշ. և այնպէս ձգեցին ձողքեցին ընդ ապառաժ տեղիսն քարշելով, զի ամենևին խայծ ոչ մնաց 'ի մարմինս երանելեացն. և ապա լուծին և ածին 'ի մի տեղի։ Թուէր իմն նց այսպէս, եթէ կոկ

զերյուք զխոստութիւն նը. և հնա-
զանդեցուցյուք զբիրտ ապստամբու-
թիւնն. և արդ՝ զինչ որ խօսիմք,
անսայցեն բանից մերոց և առնե-
ցեն զկամս թագաւորին, և ապրե-
լոցին յանհնարին տանջանացն։
Ո՜ զայն ոչ կարացին քաջ իմա-
նալ, եթէ իբրև զքաջ զինուորս
վառեցին զնոսա. և 'ի հրահանգս
կրթութեան վարժեցին զնոսա. և
իբրև զգազանս վայրենիս՝ արիւնա
խանձս ուսուցին զնոսա։ Ո՜ եթէ
ունէին ինչ սակաւիկ մի կասկած
յառաջագոյն, հայեցեալ նը 'ի չա
րաչար վէրս մարմնոց իւրեանց, զա
ռաջին երկիւղն 'ի բայց մերժեցին.
Ակամն իբրև արբեալք անզգայք,
զմիմեամբք ելանել 'ի բանից պա-
տասխանիս. և փութային իբրև
ծարաւիք յաղբիւր, եթէ ո՞ նախ
վաղ զիւր արիւնն հեղցէ յերկիր.

[illegible]

Նէ մինչդեռ յայսմ պատրաստութեան էին սոքա, խօսել սկսաւ ընդ նոսա Դենշապուհ և ասէ. արքայ յղեաց զիս առ ձեզ. ձեր աւեր երկրին Հայոց (ասէ) և կոտորածք զօրացն՝ որ հասին 'ի մերայ, 'ի ձէնջ եղեն վնասքն ձեր. և բազում Նախարարք՝ որ այժմ կան կապանօք չարչարին, վն՛ ձերոյ յամառութեանդ եղև այդ ձեր։ Նայև արդ՝ եթէ կամիք լինել լսել, ասեմ ձեզ. որք ձեր չարչարանաց մահուն պատճառք եղէք, այսօր լերուք պատճառք անձանց ձերոց։ Եւ Նախարարքն որ կան 'ի կապանս, 'ի ձեռս ձեր է իշխանութի արձակել զնո. և աւեր երկրին ձերոյ՝ ձեօք շինի. և բազումք որ վարեալ են 'ի գերուն,

դառ

դատեման անդրէն։ Ո՜հ դուք աչօք ձերովք տեսէք այսօր զորպիսի այր տոհմիկ, զոր Թագաւորն Լիքնին յակամնէ յանոռճանէ ճանաչէր վասն մեծի գիտութեան օրինաց մերոց, և կատարեալ էր յամ դենիս, և մե-ծամեծացս ոմի սիրելի, և գրէ թէ բոլոր աշխարհս կալեալ էր զնմանէ, և վասն զի անարգեաց զդենիմազ-դէն և պատրեցաւ 'ի ձեր տխմար գիտութիւնդ, ոչ ինչ անխայեաց Թագաւորն՝ 'ի մեծ պատիւ նորա։ Ո՛չ երբև զգերի մի զանաշխար-հիկ շիօթակ ալարի զնա. այնչափ յօտարութիւն հեռաւոր, զի ընդ-երթալն խակ ոչ ժամանէ 'ի տեղի պատուհասին խուրս։ Որդ՝ եթէ 'ի բուն դայեկութիւնս՝ վասն պա տոճական օրինայն ոչ խնայեաց 'ի նա, որչափ ևս 'ի ձեզ յօտար աշ-խարհիկս, որ մահապարտ իսկ էք յիրս ալքուենի։ Ո՞ր չիք ինչ այլ ձեզ հնարք կենաց, բայց եթէ եր

կիր

կրպագանիցէք արեգական. և կատարէք զկամս Թագաւորին, որպէս և ուսոյց զմեզ մեծն Զրադեշն: Ի՞ւ եթէ զայդ առնէք, ոչ միայն արձակիք ՚ի կապանաց և ապրէք ՚ի մահուանէ, այլ և մեծամեծ պարգևօք ուղարկիք յաշխարհն ձեր:

Յառաջ մատուաւ Ղևոնդ երէց և կացոյց թարգման զՍահակ եպիսկոպոս: Զիա՞րդ լուծիցուք ասէ երկդիմի հրամանացդ քոց. ահա զերկրպագութիւնդ ետուր նախ՝ արեգականն, և զկատարումն երկրպագութեան՝ ՚ի կամս Թագաւորին ձգեցեր: Անծարեցեր զարեգակն յառաջ ձայնելով զանուն նորա. և մեծացուցեր զԹագաւորդ աւելի քան զարեգակն. յայտ արարեր եթէ առանց կամաց իւրոց սպասաւորէ արարածոցս արեգակն: Իսկ Թագաւորդ ՚ի կամս ազատութեան իւրոյ՝ զոր կամի աստուածացուցանէ, և զոր կամի ծառայեցուցանէ,

և ինքն 'ի ճշմարտութեան վերայ չե՛ է հաստատեալ։ Մի՛ խօսիր ընդ մեզ իբրև ընդ տղայս. զի հաստատեալ կատարեալ եմք, և գիտութիւն՝ ոչ եմք անտեղեակ. ուստի սկսար դու, անտի տաց քեզ պատասխանի. Նախքան զմեզ եղեր պատճառս աւերածոյ աշխարհին մերոյ, և հարուածոց զօրացն արքունի. մեզ մեր օրէնքն այդպէս ոչ ուսուցանեն. այլ յոյժ պատուել հրամայեն զերկրաւոր թագաւորս, և սիրել զնոյոմ՝ զօրութեան մերում. ոչ իբրև զմարդ որք դուզնաքեայ 'ի մարդկանէ, այլ իբրև Ա՟Յ ճշմարտի կալ 'ի ծառայութեան. Իսկ եթէ զկնիմք ինչ 'ի նոցանէ, փոխանակ ընդ երկրաւորիս, զերկնիցն խոստացեալ մեզ զարքայութիւն. Իսկ ոչ միայն զարքանեկութիւն հպատակութեան պարտիմք արկանել նմա, այլ և մահուամբ չափ զանձինս 'ի վերայ դնել սիրոյ թագաւորին. Իսկ ում

յերկ

յերկրիս շնորհիւք իշխանութեան փոխանակել զնա ընդ այլում ոք, այնպէս և յերկինս շնորհիւք իշխանութեան փոխանակել Ճշմարիտ Տէրն մեր՝ ընդ այլում. որ չէք այլ ած բաց 'ի նմանէ: Բայց զայս ասեմ քեզ, որում սակաւիկ մի տեղեկագոյն ես. Ո՞վ 'ի քաջ զօրականէ մտանիցէ 'ի պատերազմ յետոյ. և եթէ զայն արասցէ, ոչ քաջ անուճանի նա. այլ յոյժ վատ: Եւ կամ ո՞ յիմաստուն վաճառականաց՝ ըզպատուական մարգարիտն փոխանակիցէ ընդ անարգ թրուշայի. բայց եթէ յիմարեալ իցէ տգիտութբ, որպէս և ձեր մոլորութն առաջնորդքդ. Միայն պետր զմեզ 'ի բազում առաքինեացն մերոց, և կամիս գողութի աճերել զամուրս խորհրդոց մերոց: Չեմք մեք միայն որպէս և դուք կարծես: Չիք տեղի ունայն՝ ուր ոչ իցէ Թագաւորն մեր Քս: Բայց միայն այնոքիկ են

Թա

Թափուր 'ի նմանէ, որ իբրև զքեզ
ես չարադև իշխան ոք, որք ուրա-
ցեալ էք 'ի նմանէ։ Ո՛վ եթէ զինու
որք աշխարհին մերոյ՝ (որ աշա-
կերտեալ էին մեզ 'ի Քն,) առ
ոտն հարին զահադին հրամանս
Թագաւորին ձերոյ, և զմեծամեծ
պարգևս նո՛ր առ ոչինչ համարեցան,
և զհայրենի տէրութիւն 'ի բաց
կողոպտեցին, չխնայեցին 'ի կին և
յորդիս և 'ի գանձս մարմնաւոր կե-
նաց աշխարհիս, նաև ոչ զորինն
իւրեանց ածին ինչ զմտաւ վասն
սիրոյն Քի. այլ՝ զերկրպագուս ա-
րեգականդ՝ (որ ձեր վարդապետքն
էին,) չարաչար հարուածովք սա-
տակեցին զնոսա, և մեծամեծ չարիս
հասուցին 'ի վերայ զօրայ ձերոյ, և
բազումք 'ի նոցանէ անկանէին մի-
այն 'ի պատերազմի, և այլքն մնա-
ցեալն 'ի պէս պէս փորձութիւնս,
և կէսքն անկան 'ի հեռաւոր օտա-
րութիւնս, և ևս բազմադոյնք վա
րե

ընցան 'ի գերութիւն, և ամենե-
քեան նոքա յառաջնեային քան ըզ-
մեզ յարքայութիւնն Ս. Յ. խառնե-
ցան 'ի դունդ վերին հրեշտակացն
և ցնծան 'ի պատրաստեալ ուրա-
խութիւնսն. յոր հասեալ խառնե-
ցաւ երանելի այրն, զորմէ դու ա-
սես շկօթանկ արարի: Երանի տամ
նմա, և երկրին՝ է որ նա անցանի-
ցէ. և տեղեացն՝ ուր վախճանիցի
նա: Այլ միայն զարքունեօքն ձե-
րովք անցանէ պատուհականութ՟,
այլ և զերկնից լուսաճոլօքն, ո-
րում դուքդ երկկրպագանէք:

Նա պատասխանի մովան անդեր
ձայնեալն և ասէ, ոծք բարերար են
և երկայնմտութ՟ ջանան է ազգի
մարդկան, զի գիտասցեն և ծանի-
ցեն զիւրեանց փոքրութիւնն և
զնոցա մեծութիւնն, և վայելեսցեն
'ի պարգևս աշխարհիս՝ զոր տուեալ
է յիշխանութիւն 'ի ձեռս Թագա-
ւորի. և 'ի բնկանէ նոցա երանէ

հրա

հրաման կենայ և մահու։ Ո՛վ ձեզ ո՛չ է այդպէս իշխանութիւն ընդդիմանալ կամաց նո՛ց․ այլ առնուլ յանձն զերկրպագութիւն արեգական, որ ծառայութիւքն իւրովք լուսաւորէ զտիեզերս ամ՟, և ջերմութ՟ն իւրով հաստատանէ զկերակուրս մարդկան և անասնոց։ Ո՛վ վասն հասարակաբաշխ առատութ՟ն և անսպառ մատակարարութ՟ն՝ անուանեցաւ միհր ա՟ծ․ զի չէք ’ի նմա անխնամութիւն և նենգութիւն։ վասն որոյ և մեք եր կայնամիտ լինիմք ’ի վերայ տգիտութ՟ն ձերոյ։ Քանզի չե՛մք մարդատեացք իբրև զգազանս շաղղակերս և արիւնարբուք։ Խնայեցէք յանձինս ձեր․ և մի խառնէք զմեզ ակամայ յարիւնս ձեր։ Թողէք անդր զառաջին յանցանսն ձեր, և զառաջիկայ իրս ուղղեցէք․ զի և այլոցն վասն ձեր լիցի ողորմութ՟ն ’ի մեծ թագաւորէն։

Նո

Ետ պատասխանի Սահակ եպիս-
կոպոսն և ասէ. իբրև ուսեալ և
յոյժ խրատեալ՝ զգեղեցիկ հոգ-
յանձին ունիս շինութ՛ն աշխարհի
և փառաց թագաւորին. բայց զայս
ոգտաբար ուսուցանես կարի
յոյժ. զի աստուածս բազումս խոս-
տովանիս, և զմի կամն ոչ ասես ա-
մենեցուն: Եթէ վիշտքն առ մի-
մեանս մատուցեալ են, մեք խոնար-
հագոյնք քան զնոսա՝ զիա՞րդ կա-
րասցուք հաճանիլ բանից քոց միա-
բանել զջուր և զկրակ, զի ուսցուք
'ի նոցանէն զխաղաղութ՛ի: Այլև
զարեգակն 'ի տուն ոչ և զկրակ. և
եթէ նմա ոչ մարթի գալ զի մի
աշխարհ 'ի խաւար մնասցէ, յղեա
զդա առ նա զի ուսցի 'ի նմանէ զան-
կարօտութիւնն: Եթէ մի է բնու-
թիւն աստուածոց քոց, հաւասա-
րեսցեն առ միմեանս զուգութի.
լիցի անկերակուր կրակ՝ իբրև զա-
րեգակն. մի խափանեսցին ծառայքն

արքունի 'ի ծախս ռոճկաց սորա։ Սիրէ՝ մինչ անյագ ուտէ, և հանապազ մեռանի. և մինն որ չուտէ, առանց օդոյ նուաղի լոյս ճառագայթից իւրոյ։ Ցրտանայ 'ի ձմերայնի և սառուցանէ զնա՝ դալարութիս խոտոյն. տօթանայ յամառայնի և հրկէզ առնէ զնա՝ կենդանիս։ Եւ որ լինքն յար 'ի փոփոխման կայ, ոչ կարէ հաստատուն կեանս ումեք շնորհել։ Եւ քեզ ոչ կարեմ մեղադիր լինել. որոյ ոչ տեսեալ է զմեծ թագաւորն, պատուհասօրայն մնացուցանէ զերկրպագութիւն։ Իսկ եթէ զայս 'ի հմուտ գիտնոյն արտայցէ, փաղփաղակի մնայ 'ի վերայ հրամայեն։ Սակ վասն արեգականս եթէ կամեսցիս ուսանել, զմշտնարիտն ասացից քեզ։ Նման է նա աշխարհիս արարածոյ։ Ի բազում մասանց մի մասն որոշեալ է։ Կէսքն 'ի վերայ են քան զնա, և կէսքն 'ի ներքոյ նորա։ Ոչ է նա առանձին որ՝

յստակ լուսով. այլ 'ի ձեռն օդոյ՝
հրամանաւ Այ տարածանէ զձա_
ռագայթս իւր. և հրայրն մասամբ
ջեռուցանէ զամ՛գոյացեալս 'ի ներ
քս իւրոյ կայանին: Իսկ մերինք
ոչ ինչ մասն ունին 'ի նորա ձա_
ռագայթիցն. քանզի երբեմն յամին
արկեալ է զլոյսն 'ի գունդ նր՛, և 'ի
վայր կայ հեղու բերանացեալ՝ 'ի
պէտս ներքնոցս վայելչութե: Եւ
զոր օրինակ նաւ մի՝ թուուցեալ 'ի
վերայ ծովային ջուրցն բազմութե,
անգիտութբն գնայ զուգևորուին
'ի ձեռն հմուտ ճարտար նաւապե_
տին: Այսպէս՝ արեգակն 'ի ձեռն
կառավարին իւրոյ՝ ունի զփոփոխ_
մունս շրջանին իւրոյ տարևոր ժա
մանակին: Եւ որպէս այլ մասունք
աշխարհիս հաստատեալ են վասն
մեր կենաց, և գնա երբեմն զմի այլոց
մասանցն՝ առեալ է մեզ յառաջ_
նորդութի լուսոյ, որպէս զլուսին
և զաստեղս և զօդս յարարածուս,
և.

և զամպս անձրևաբերս։ Այնպէս և երկիրս մասանց. զծով և զգետս և զաղբիւրս և զամ՟ պիտանացու ջուրս։ Նոյնպէս և զցամաքայինս ամ՟ պիտոյիւք իւրովք. և զմի ոք՝ 'ի սոցանէ չէ՛ արժան աստուած անուանել։ Ո՛չ եթէ ժպրհեսցի ոք ասել, զանձն տգիտաբար կորուսանէ. և աստուած անուամբն մեծարելով զնոսա նոքա ոչ ինչ օգտեցան։ Միոյ իշխանութեան՝ երկու թագաւորք ո՛չ լինին։ Ո՛չ թէ մարդ քեզ զայդ յանձն ո՛չ առնու, քանի՞ ևս հեռի է 'ի Այ բնութենէ։ Այդպիսի կարգ՝ շփոթեալ է։ Արդ եթէ կամիս ուսանել զճշմարիտն, քաղցրացո՛ զդառնութիւն սրտիդ. և բա՛ց զաչս մտացդ. և մի յարթնութեն՝ կուրութե՛ ընդ խաւար գնար։ Որ անկեալդ ես 'ի խորխորատ, և զամենեսեան կամիս առ քեզ ձգել։ Ո՛չ եթէ քոյքն գան զկնի մոլար վարդապետութեանդ, որ

ոչ

ոչ տեսանեն և ոչ իմանան, մի՛
զմեզ կարծեր դոյն օրինակ. քանզի
քա՛ջ են աչք մտաց մերոց. և որա-
տեսի՛լ եմք մարմնոյս աչօք: Զա-
բարաձս տեսանեմք, և իմանամք
զսա՝ յայլմէ արարե՛լ. և ամենեքեան
ընդ ապականութե՛ան: Իսկ արարիչն
ամենեցուն՝ աներևոյթ է 'ի մարմ՛
նաւոր աչաց. այլ՝ մտաց իմանի
զօրութիւն նորա: Եւ վասն զի ե-
տես զմեզ 'ի մեծ տղխութեան, ո-
ղորմեցաւ մերում անուսումնու-
թեան: Յորում և մեք իբրև զձեզ՝
երբեմն զերևելիս կարծէաք արա-
րիչ, և գործէաք զնմ՝ անաստուածու-
թեամբ: Վասն այնորիկ առ սէր
իւր՝ եկն մարմնացաւ 'ի մարդկանէ,
և ուսոյց մեզ զաներևոյթ Ծնողի
իւր: Սա՛ն՝ զի բարձրացոյց զմեզ
'ի խաչ կախաղանի, և զի մարդիկ
չէին լուսաւորացդ մոլորեալ են,
մերկեաց յարեգականէ զլոյս ձա-
ռագայթից իւրոց, զի եղիցի խա-
ւար

ճար սպասաւոր՝ մարդկութեան նը-
զի որ երբև զձեզ անարժանք էին,
մի տեսցեն զկեանս իւրեանց, և 'ի
մեծի անարգութեան եղիցին։ Այլ և
այսօր որ ոչ խոստովանի զխաչե-
լեալն Ք͞ս, նոյն խաւար մածեալ է
զօգուտ և զմարմնով նր։ Որպէս
և դու իսկ այսօր 'ի նմին խաւարի
կաս, և դեռևս զմեզ չարչարես։
Մեք պատրաստք եմք ըստ օրինակի
Տ͞ն մերոյ. որպէս զհարդ և կամիս,
կատարեա զկամս դառնութեան քո։

Յայնժամ երբև հայեցայ 'ի նա
անօրէնն Դենշապուհ, և ետես 'ի
մեծի ուրախութեան զուարթադէմն
զամենեսեան, գիտաց եթէ ոչ ինչ
դնան առ նոսա բանք սպառնալեաց
և ողոքանացն։ Հրամայեաց զմի ոմն
'ի կրսերագունիցն յառաջ մատու-
ցանել երեց մի Արշէն անուն,
վասն որոյ յառաջ կասկած էին ե-
ղև ոչքցն։ Կապեցին զոտսն և մե-
ծաւ ուժով պնդեցին զձեռսն, մինչ
չև

չև ծարծառուն հատուած ամ՟ ջրացն։ Եւ այնպէս կայր ցմեծ ժամս յան հնարին պրկոցմն։

Եբաց սէրն զբերանն իւր և ասէ, ահա շրջեցան զինև շունք բազում. և ժողովք չարաց պաշարեցին զիս. Ծակեցին զձեռս և զոտս իմ. և փոխանակ բերանոյ իմոյ աղաղակեցին ամ՟ ոսկերք իմ։ Լուր ինձ տ՟ր և լուր ձայնի իմում և ընկալ զոգի իմ ՚ի ժողով սուրբ զօրականին քո, որ երևեցան նորակերտ դաս դակերպին քո Իս որ կրսեր էի յամենեսեան, ողորմեա քո գթացեալ՝ յառաջեցոյց զիս։ Եւ զայս իբրև ասաց, ոչ ևս կարէր բանալ զբերանն յանհնարին ցաւոցն։ Եւ անդէն դահիճքն փայլփայակի հրաման առեալ յերկից նախարարացն՝ սրով հատանել զպարանոց երանելւոյն։ Եւ ընկեցին զմարմինն ՚ի խորխորատ մի ցամաք։

Պատճառ տայ, թէ չէ՞ր ընծայանեցաւ
եղեռնն անօրէն 'ի ճանէց ալեացն։

Ե՛ անդէն 'ի տեղւոջն սկսաւ խօսել Դենշապուհ ը Եպիսկոպոսին և ասէ. յորժամ եկի ես յաշխարհն հայոց, տարի մի և վեց ամիս՝ եհաս ինձ շրջիլ անդ։ Ո՛չ յիշեմ ես ամենևին եթէ բան մի տրտունջ յումեքէ լուայ վասն քո-այնպէս և առաւել ես վասն Յովսեփայ։ զի դա իսկ էր իշխան տան քրիստոնէից. և հաւատարիմ յամենայն իրս արքունի։ Նաև որ մարզպան աշխարհին լեալ էր յառաջ քան զիս՝ երեթային, մեծապէս գոհ էր զաւնէս զայսմանէ. Ե՛ւ ես ինքն իսկ աչօք իմովք տեսանէի, զի երբէ հայր հաստատուն էր համարեալ տան աշխարհին. և անաչառութիւ սիրէր զմեծամեծս և զփոքունս. Արդ՝ փոխանակ ընդձեր՝ ես աղաչեմ զձեզ. խնայեցէք

'ի

'ի պատուհական անձինս ձեր. և մի՛ մնանիք 'ի մահ չարչարանաց ըստ տաժանոյն կարգի, զոր տեսէք աչօք ձերովք: Քանզի եթէ 'ի դոյն միտս յամառութեն կայք, և իմ եղեալ է 'ի մտի իմում՝ բազում չարչարանօք կարծել զձեզ 'ի կենաց ձերոց: Ես գիտեմ 'ի հրապոյրս տանդ այդորիկ եղեալ էք դուք. քանզի ինքն ախտացեալ է մարմնով, և ձեռնարկուն բժշկաց չիք զատեալ առողջութիւն, և հիճանդամ կենօք ձանձրացեալ է, փափաքի 'ի մահ, քան 'ի կեանս:

Ըստ այս ես պատասխանի արն Յովսէփ և ասէ. գովութիւն զոր ետուր նախ եպիսկոպոսիդ և ապա ինձ, յիրաւի արարեր. ըստ կարգի պատուհեցեր զասն ալեացդ. այդպէս իսկ արժան է: Այլ՝ ճշմարիտ ծառայից Այ՝ որ չէ օրէն դիմադարձ լինել երկրաւոր իշխանացս, և ոչ զոք 'ի ժողովրդոց տրտունջ առնել

նել վասն մարմնաւոր փօշաքաղու
թեն։ Նոյն ցածութիւն և հեզութիւն
ուսուցանել զպատուէրանս Ն.Յ.
և առանց խարդախ իմաստութեան՝
խաղաղասէր լինել առ ամենեսին.
և անաչառ վարդապետութիւն՝ առ
մի Տէրն արարածոց առաջնորդել
բոլորեցունց։ Նոյն վասն առնս այ
սորիկ հրապուրանաց զոր ասայեր,
և զայդ ոչ սաեյեր, այլ կարի ըղ
ճշմարիտն ասայեր. զի ոչ իբրև
զօտար ոք հրապուրէ զմեզ. և ոչ
իբրև զպատրող ոք խաբեբայ մոլո
րեցուցանէ զմեզ. այլ յայտ առնէ
զմեզ։ Քանզի մի է մայր մեր Եկե
ղեցի՝ որ երկնեաց զմեզ. և մի է
հայր մեր սուրբ Հոգին՝ որ ծնանէն
զմեզ. զի ո՞րդ համահարք միամօր
որդիք՝ երկպառակք լիցին և ոչ
միաբանք։ Որ քեզ թուէին եթէ
հրապոյրք իցեն, մեր 'ի տուէ և 'ի
գիշերի դոյն խորհուրդ էր, զի ան
քակ ունիցիմք զկենաց միաբանու
թիւն.

թիւնս։ Իսկ եթէ սա ձանձրացեալ իցէ ելանել յախտալից մարմնոյս, առաւել եւս մեք ամենեքեան. զի չեմք ոք ամենեւին որ ունիցի զմարմին առանց ցաւոց չարչարանաց։

Նա պատասխանի Դենշապուհ եւ ասէ. վասն ոչ գիտէք, որչափ երկայնամիտ լինիմ ես ՚ի վերայ ձեր. այս ոչ հրամանաւ արքունի է այսչափ երկայնութեան լինել ընդ ձեզ պայքարաւ։ Այլ յիմէ քաղցրութէ թողացուցի ձեզ. զի չեմ անարգոյն իբրեւ զձեզ. զի անձանց ատելի էք, եւ այլոց թշնամի։ Իսկ զի աղ եւ հաց կերեալ է յաշխարհին ձերում, գութ եւ սէր ունիմ առ աշխարհն։

Նա պատասխանի Ղեւոնդ երէց եւ ասէ. որ առ արտաքինսն գութ եւ սէր ունի, զպատուիրանս Տեառն կատարէ. այլ պարտ էր յիւր ոգին խնայել, զի չեմք անձանց տեարք. այլ է որ համբերս խնդրէ ՚ի մէնջ

եւ

և վասն արտաքնոց և վասն ներք-
նոց։ Այլ զոր ասացերդ, եթէ յի-
նէ՛ն անսամ ձեզ և ոչ է հրամանաւ
Թագաւորին. Եթէ դուք սովոր
էք անսանել ընդ հրամանաւ թա-
գաւորին ձեր, զայդ բարւոք առ-
նէք, զի աւերիչ աշխարհի է, և սա
տակիչ անմեղ մարդկան. բարե-
կամ սատանայի, և թշնամի Այ։
Այլ մեք ոչ կարեմք անսանել
զհրամանաւ մերոյ թագաւորին. և
ոչ զանանց կեանս մեր փոխանա
կել կարեմք ընդ ապականացու պատ
րանս աշխարհիս։ Այլ վասն իմ
զի ասացեր չգտեալ զառողջութ̃ն
'ի բժշկաց, սիրէ զմահ քան ըզ-
կեանս. այդ բանք՝ ոչ այնոցիկ են
որ տեսանեն զնամ չարչարանս աշ-
խարհիս։ Ո՛չ է ցածո՛ զքեզ սակա
ւիկ մի 'ի զայրագին տրամութենէդ,
և եկ զհետ Ճշմարիտ բանից իմոց.
և հայեաց կարգաւ ընդ լոյս աշխար
հիս։ Ո՞րք 'ի մանկանութեանց ու-
նի

նիցի կեանս ան տրտումս. ո՞չ ահա զի են ամ՟ ախտիւք. է որ ներքդ՝ և է որ արտաքդ. ցուրտ և տօթ. քաղց և ծարաւ. և ամ՟ աղքատութիւնք կարօտութեանց. Արտաքդ՝ անիրաւութիւն, յափշտակութի՟, գէճ պղծութի՟ անառակ յարձակմանք. 'Ներքդ՝ ամբարշտութի՟, ուրացութիւն, տգիտութիւն 'ի կամաւոր ազատութենէն. Բայց դու որ զմխիթարս խոտեալ անարգեցեր, թէ չէք իմ 'ի նոցանէ գտեալ զառողջութիւն, չեն ինչ զարմանք. վասն զի մարդիկ են նոքա. Ն՝ ցաւ՟ որում գտցին Հնարս առողջութե՟, և է որ ապստամբէ 'ի Հնարից նց՟. վ՟ն զի ամենեքեան են մահկանացու. այն՝ որ բժշկեն, և որ բժշկին. Այլ՝ երանի, թէ և դուք ըստ բժշկական արուեստին բերէիք զնմանութի՟. զի ոչ փոքր է ճշմարտութիւն նց՟ բժշկութեանն. Քանզի յորժամ տեսանեն նք զք Հիւան-

դացեալ. ո՛չ յապաղեն երթալ առ
նոսա. այլ՝ փութացեալ հնարեն
մատուցանել զառողջութի՛ն։ Մա
նաւանդ եթէ յարքունիս մի ոք 'ի
սիրելեաց թագաւորին ախտանայ-
ցէ, և հասեալ 'ի մեծ հրապարակն՝
տեսանիցէ զբազմութիւն պատո-
ճաճորայն, և զառողջութիւն գե-
ղեցիկ երիտասարդայն. և նա մա-
տուցեալ 'ի սրահն արքունի՝ և
անդ տեսանիցէ զնամ զպատաճո-
րայն զչքնաղ և զաքանչելի տե-
սիլն, ոչ ինչ զարմանայր ընդ հրա-
շակերտ տեսիլն։ Նաև եթէ դա-
հոյք ականակապք լինեն և համակ
ոսկեղէնք՝ (որոց վերայ հեծանողն
անկեալ դնիցի,) չէ ինչ նմա փոյթ
զայնմ՝ ամէ. Այլ 'ի քայց հրամայէ
առնուլ զոսկեհուռ վերարկուն, և
ձեռն 'ի ներքս տարեալ՝ զննէ զնմ
մարմինն, եթէ ջե՞րմ իցէ ընուին.
և եթէ սիրտն 'ի տեղւոյն հան-
դարտ կայցէ. և կամ եթէ լերդն
կա

կակո՛ւղ լիցի. և եթէ չարք երակայն յարմա՞ր լիցին. և ըստ նմին
զդարման բժշկութեն առնիցէ,
շնորհելով նմա զառողջութիւն։
Իսկ արդ՝ եթէ մարդկային բժշկութիւնն՝ այդպիսի գիտէ քամահել
զնմին, և միայն զիւր արուեստն
յառաջ մատուցեալ՝ զգործն կատարէ. Ո՞րչափ ևս առաւել ձեզ
արժան էր (որ զբոլոր աշխարհս ունիք յիշխանութեն,) մեծ հոգ յանձին տանել. նախ զհոգիս բժշկել
յամ ախտից մոլորութեանց աշխարհիս, և մարմնով կային իսկ ձեզ
ամենեքեան 'ի ծառայութեն։ Արդ՝
այժմ զի դուք տիրապետողք, և
զանմահ հոգիսդ՝ մահկանացու արարիք յանշէջ հուր գեհեննին։
Մարմնովդ՝ եթէ կամիք և եթէ
ոչ կամիք, ախտացեալ էք յախտաճորութիւն անառողջութեան, և
զմեզ նախատէք մարմնոց ցաւովք,
որ ոչ 'ի կամս մերոյ ազատութեն է.

այլ՝

այլ՝ որպէս և դիպեցաւ 'ի բնութեա մարմնոյ իւրաքանչիւր մարդոյ։ Տէ՟ր Ճշմարիտ Ա՟Ծ կենդանի և կենդանարար՝ 'ի կամս իւրոյ բարերարութեն՝ եղև բժիշկ հոգւոց և մարմնոց. և նա ինքն 'ի յանձն չարչարանացն իւրոյ՝ բժշկեաց զամ՟ ազգս մարդկան։ Տէ՟ր ես խանդաղատագոյն գթացեալ՝ վերստին ծննդեամբ ծնեալ զմեզ յառողջութիւն անցաւոր և անմեղս, և 'ի ծածուկ հարուածոց զհետ ծակոտաճածս վիշապին ողջացոյց, և արար զմեզ անախտս և անարատս հոգւով և մարմնով, զի եղեւք բնակակիցք հրեշտակաց և զօրաց երկնաւոր թագաւորին մերոյ։ Տէ՟ր քո զայս ոչ գիտացեալ և ոչ վայելեալ յանապական պարգևսն Ա՟Ծ, և ոչ կամիս ուսանել և 'ի մէնջ, այլ և զմեզ ես վրիպեցուցանել կամիս, որում չէք հնար. և մի այլ լեգէ․ այլ և ոչ կարես առնել խել· Ա՟Ծ

վասն

վասն իմոյ ախտալից մարմնոյս առա
ցից ձեզ կարճառօտս։ Խնդամ և
ուրախ եմ յորժամ տեսանեմ՝ ըզ
մարմինս չարչարեալ. գիտեմ զի
զօրանայ յիս առողջութիւն հոգւոյս
իմոյ։ Մանաւանդ զի ունիմ դրա-
ճական զմեծ վարդապետն հեթա-
նոսաց. որ 'ի ցաւս մարմնոյ անձինն
մխիթարէր. և 'ի կռփումն սատա-
նայական՝ մարմնոյ պարծէր և ա-
սէր, զի եթէ տնկակից եղաք նմա-
նութեան մահու նր, որչափ ևս առա-
ւել լիցուք հաղորդ յարութեան նր։
Եւ դու՝ որ ունիս իշխանութիւն
'ի վերայ մեր, դատեա զմեզ ըստ
կամաց բարութեան քո։ Չեմք ինչ
զանդիտելոց յահագին սպառնա-
լեացդ քոց. և ոչ երկնչիմք 'ի դա-
ռըն մահուճանէդ՝ զոր ածելոց ես
'ի վերայ մեր։

Յայնժամ մեկուսացոյց սակա-
ճիկ մի զերանելին 'ի միմեանց, և
միայն առէ ցսուրբ Եպիսկոպոսն.

գոյութիւնն՝ զոր ետու քեզ յառաջ, ո՛չ իմացար զպատիւ անձին քո. յիշեցուցանեմ՝ քեզ զչարիսն զոր գործեցեր դու, զի անձամբ զանձն քո արասցես մահապարտ։ Արդարև դո՛ւ աւերեցեր զատրուշանսն յՌշտունիս. և կամ՝ զկրակն դո՛ւ սպաներ. նաև որպէս լուեայ և ստուգեցի եթէ և զմոգսն դո՛ւ չարչարեցեր. և սպաս պաշտամանն դո՛ւ տարար. Արդ՝ եթէ արդարև դու արեր, պատմեա՛ ինձ։

Իսկ պատասխանի ետ՛ն և ասէ. ո՞րդ կամիս ուսանել զայդ յինէն, եթէ յառաջագոյն գիտէիր։

Դենշապուհ ասէ. այլ է համբաւն, և այլ է ճշմարտութիւնն։ Եպիսկոպոսն ասէ. որպէս կարծես, ասա ինձ։ Դենշապուհ ասէ, իմ լուեալ էր եթէ զա՛մ մեծս յՌշտունիս՝ դու արարեր։ Եպիսկոպոսն ասէ. և զի այդպէս համատեալ հասեր ի վերայ, կրկին զի՞

հարցանես։ Դենշապուհ ասէ․ զճշմարիտն 'ի քէն կամիմ ուսանել։ Եպիսկոպոսն ասէ. ոչ զօգուտ կենաց քոց կամիս ուսանել յինէն. այլ՝ արեանս խմել ցանկան մտաք քո։ Դենշապուհ ասէ. չեմ՝ գազան արիւնախանձ. այլ՝ վրէժխնդիր եմ՝ ածոցն անարգութեն։

Եպիսկոպոսն ասէ. զտարերս համրս՝ աստուած անուանես, և զմարդիկ պատկերակից քո՝ խողխողել կամիս. տալոց ես հատուցանելոց ես վրէժս թագաւորաւն քով յանկաշառ ատենին Ա.Ծ.Յ.Ք. զոր քո չար կամքդ կամին, զայդ ես առեմ քեզ. զատունն՝ արդարև ես աւերեցի. և զմոգսն ես չարչարեցի զանխէ. և զկահ պղծութեն որ 'ի տանն էր, 'ի ծովն ընկեցի. այլ զկրակ՝ ո՞ կարէ սպանանել։ Քանզի ամենիմաստ արարչին արարածոց հոգ խնամոց տարեալ, յառաջագոյն անմահս հաստատեաց զբնութիւն

չորից նիւթոյս ։ Ա՛գէ սպան զու-
զօղ, եթէ կարես. և կամ՝ ապակա-
նեա՛ զհող, զի մի բուսուսցէ զգա-
լարի. փողոտեա՛ զգետ, զի մեռցի։
Եթէ զայդ երկքեան կարես առ-
նել, ապա և զկրակ կարես սպանա-
նել։ Ապա եթէ ճարտարապետն
մե՛ր միաբանեաց զչորից տարերցդ
զանքակութիւն, և ահա՛ գտանի,
բնութիւն հրոյ 'ի քարինս և յեր-
կաթս և յա՛մ տարերս գտնելիս,
ընդէ՞ր ստութ՛ զպարտես զիս,
եթէ դու զկրակ սպաներ։ Ա՛գէ
դու սպան զջերմութիւն արեգա-
կան, զի ունի նա՝ մասն հրոյ. և
կամ՝ առ՛ւր հրամանն, զի մի թափես-
ցի հուր յերկաթոյ։ Մեռանի այն՝
որ շնչէ, և շարժի, և գնայ, ուտէ
և ըմպէ։ Ե՞րբ տեսեր դու զկրակ
գնայուն կամ խօսուն կմ՝ զխոսուն
Արդ՝ զոր կենդանի չէ քո տեսանել,
մեռեալ խոստովանիս։ Քանզի
անթող լի է ամբարշտութեամբ ձեր
քան

քան զնմ հեթանոսայ, որ գիտնագոյն են քան զձեզ· թէպէտ և 'ի ճշմարտէն Ք՜ն մոլորեալ են, զսն խօս տարերս՝ աստուած ոչ խոստովանին։ Որդ՝ եթէ դու անգիտութե՝ կորնչելի ասես զընութի հրոյ, ոչ առնուն քեզ յանձին արարիչ քս. քանզի խառն է դա ամենեցունց։ Պենշապուհ ասէ. ոչ ինչ մտանեմ ես 'ի պայքար քննութե ընդ քեզ վասն բնութե արարածոցս. այլ խոստովանեա ինձ եթէ դու անցուցեր զկրակն եթէ ոչ։ Պատասխանի ետ երանելին և ասէ. որովհետև ոչ կամեցար աշակերտ լինել ճշմարտութե, սակայն ըղկամս հօրն քո սատանայի։ Ես ինձէն մտի խոկ 'ի կրակարանն ձեր, և տեսի զի կային պաշտօնեայք սմ բարշտութե՝ մնոտի կարծեայն ձերոց. և կրակարանն լի հրով՝ առաջի նց բորբոքեալ այրէր։ Հարցի ցնս բանիւք և ոչ գանիւ, եթէ զինչ

զի՞նչ համարիք 'ի միտս ձեր զկրակ պաշտամանս այսորիկ։ Ստուն պատասխանի և ասեն, մեք ոչինչ գիտեմք, բայց այսչափ իմանամք զի տիրութիւն է նախնեաց, և հրաման բուռն Թագաւորին։ Ասեմ դարձեալ ցնոսա, զի՞նչ իմանայք զընութիւն կրակին. արարի՞չ կարծէք եթէ արարած։ Ասեն ամենեքեան միաբան. մեք արարիչ զդա ոչ գիտեմք. նաև ոչ հանգուցիչ աշխատելոյ։ Ձեռք մեր փապարեալ են 'ի կայծնի, և ողունք մեր առեալ են 'ի փայտակրի. աչք մեր գինձացեալ են արտասուօք 'ի կծութէ ծխոյ դորա, և երեսք մեր մրոտեալ են 'ի խոնաւութեն թանձրութէ նորին ծխոյ։ Եթէ շատ մատուցանեմք նմա զկերակուրն, յոյժ քաղցնու. և եթէ ընաւ չըտամք, ընաւ անցանէ և սպառի. և եթէ մօտ երթամք և երկրպագանեմք, կիզու զմեզ. և եթէ ոչ երթամք

թամք մօտ, ամենևին մոխիր դառ-
նայ: Մեր այդպէս համարեալ է 'ի վե-
րայ բնութեան դորա: Ասեմ դար-
ձեալ ցնո. իսկ եթէ լուծեալ է ձեր,
ո՞ր ուսուցեալ է ձեզ զայդպիսի
մոլորութիւն: Նոցուն պատասխա-
նի և ասեն. զի՞ 'ի լսելոյ հարցմանս
ձերդ. այլ հայեաց ընդ առաջի կայ
իս: Օրէնսդիրքն մեր՝ ողումք
մնաց միայն են կուրացեալ. այլ՝
թագաւորն մեր՝ մարմնոյ միայն
ակամբն կոյր է, այլ՝ հոգւովն բր-
նաւ չէք իսկ աչք: Վասն այնորիկ՝
և ես իբրև լուայ զայս 'ի մնդւացն,
յոյժ ողորմեցայ. զի աղխատութէ
զարդարն խօսեցան: Սակաւիկ մի
չարչարեցի զնո զանձին, և նոցունց
իսկ եսու զկրակն 'ի ջուրն ընկե-
նուլ: և այսպէս ասացի: Աստուածք՝
որ զերկինս և զերկիր ոչ արարին,
կորիցեն 'ի ներքոյ երկնից. և այժ
զմոդամն 'ի բաց արձակեցի:

Մատենագիր պատմէ, թէ որպէս խորտակեցան [illegible] ՚ի ձեռս Մ[illegible]. Եւ որպէս նշխարք եղեն ՚ի յետոյ նոցա:

Օայս ամ՝ իբրև լուեալ Դեն-
շապուհ ՚ի բերանոյ սուրբ
Եպիսկոպոսին, անհնարին զահի
հարեալ ՚ի թշնամանաց թագաւո-
րին, և յանարգանաց դենին: Վ՛ն
որոյ՝ և երկեաւ իսկ մատուցանել
զնա ՚ի տանջանս հարուածոց, եթէ
դուցէ այլ ևս մեծ անարգանս
զթագաւորէն տացէ առնել յաւե-
նին: Եւ ՚ի նմա ձգիցին կարծիք
թշնամանացն, զի երկայնմտութե
պայքարեցաւ ընդ նոսա: Եւ քան
զի սուսեր ընդ մէջ ածեալ նստէր
յատենին՝ ահս արկանելով սոցին,
գոչեաց իբրև զառիւծ զայրացեալ,
և հանեալ զսուսերն՝ զազանաբար
յարձակեցաւ ՚ի վերայ երանելւոյն
և եհար զեպիսկոպոսին զաջ ուսն,
և թիկամբն հեր զձեռն ՚ի վայր
ըն

ընկեց։ Եւ նոյն աջեակ կողմ յեր-
կիր անկեալ՝ դարձեալ անդրէն
պատապարէր, առնոյր զաջ ձեռն
՚ի վեր։ Աղաղակեաց մեծաձայն և
ասէ. ընկա՛լ ո՛վ զկամաւոր պատա-
րագս, որ յինձէն զիս քեզ մատուցի
բոլորովին. և խառնեա՛ զիս ՚ի
գունդ սուրբ զինուորացն քոց։
Դարձեա՛լ քաջալերէր զընկերա-
կիցսն և ասէր. համբա՛յ՝ առաքինիք.
եհաս ժամ պսակման մերոյ. խցէք
զաչս մարմնոցդ վայր մի. և այժմ
տեսանէք զլոյսն մեր Քն։ Եւ թա-
ւալելով ընդ արեան անձին իւրոյ
ասէր. օրհնեցից զՏէր յամ ժամ։
հանապազ օրհնութիւն նորա ՚ի
բերան իմ։ ՚Ի Տէր պարծեսցի
անձն իմ. լուիցեն հեզքն և ու-
րախ եղիցին։ Եւ ասելով զսաղ-
մոսս զայս, կատարէր մինչև ցայս
տեղի. բազում նեղութիւնք են
արդարոց, յամէ փրկէ զնոսա Տէր
և պահէ զամ ոսկերս նոցա։

Մինչ

Մինչդեռ կայր յուժ ի մարմնոյն սակաւ մի, իւրով աչօք իսկ հայեցեալ տեսանէր, որ եկեալ իջանէր յերկնից գունդ բազում՝ հրեշտակաց. և վեց պսակ 'ի ձեռն հրեշտակապետին: Դարձեալ և լսէր ևս բարբառ 'ի վերուստ, քաջալերացուցիք սիրելիք իմ. զի ահա մոռացայք զվշտալից զկեանսդ, և հասիք երանելի պսակացդ, զոր ձերով ձգնութեամբդ կազմեցիք: Նոքա դեռ յիւրաքանչիւր գլուխ. զի նիւթ պատճառականն՝ 'ի ձէնջ գործեալ հիմնեցաւ. իսկ ճարտարութիւն գործոյդ՝ յամենասուրբ ձեռացն Քի կազմեցաւ. զոր և 'ի սպասաւորաց դոցա իսկ ընկալեալ՝ ընդ Ստեփաննոսի լինիք պսակակից. Նաև զայն ևս քաջայէս տեսանէր, զի դեռ ևս շողայր սուրն 'ի վերայ պարանոցի երանելեացն:

Զոր իբրև ետես սրբն Ղևոնդ եթէ ոչ ևս զմի մի կամին հարցանել

նել և դատել, այլ միանգամայն հրաման եղև մնհու, առ յերանելին Յովսէփ. մնացէր յառաջեայց դու ընդդէմ սորին. քանզի դուտապարտեալ 'ի մէր ես քան զամենեսեան.

Ո՜վ զայս լսելև տաց, կարդեցին կոյլին մի լաա միջէ. և առ ձեռ տաղնապին սակեղոյ դահճացն, միանգամայն հատին և ընկեցին զպարանոցս երանելեացն՝ առաջի սրբոյ եպիսկոպոսին: Ո՜վ նորա ընդհանել ոգւոյն՝ աղաղակեց և ասէ. Տէր Յս ընկալ զհոգիս մեր ամենեցուն, և խառնեա զմեզ 'ի դասնսիրելեաց քոց:

Ո՜վ միանգամայն կատարեցան ամենեքեան 'ի նմին տեղւոջ: Ո՜վ եթէ զՄողպեան ես (որ հաւատայ 'ի Քս) կամիցիս 'ի համար առ կանել ընդ նա, թուեալ եօթն են. թող զերկուսն ես՝ որ 'ի փառ պետան կատարեցին. և միւս Ովսէս կո

կոչումն Թաւթիկ անուն 'ի յասորեստանի: Բայց անդէն 'ի տեղւոջն վեցս՝ որոց անուանքն այսոքիկ: Սահակ եպիսկոպոս յըռշտունեաց. որն Յովսէփ 'ի վայոց ձորոյ 'ի գեղջէ հողացմանց: Ղևոնդ երէց՝ 'ի վանանդայ 'ի գեղջէ իջաւանից. Մուշէ երէց աղբակոյ. Արշէն երէց 'ի բագրաւանդայ 'ի գեղջէ յեղեգեկէ. Քաջաջ սարկաւագ՝ ուստի եպիսկոպոսն էր, յըռշտունեաց. իսկ երանելին Մովսէսն 'ի նիւշապուհ քաղաքէ. Սամուէլ երէց յայրարատոյ 'ի գեղջէ յարածայ. Աբրահամ սարկաւագ 'ի նմին գեղջէ:

Արդ՝ զվեց սուրբս զպատուսիկ յանապատին՝ ուր կատարեցին, Դենշապուհ և Մոգպետն և Ջնիկան և Մայպետն՝ անդէն 'ի տեղւոջն պահապանս ընտրեցին յիւրաքանչիւր սպասաւորաց, և պահել հրամայեցին զմարմինս երանելեացն

ցա

ցաճուրս տասն և կամ ևս աճելի, մինչև կարաճանն արքունի անցցէ դնասցէ։ Ո՛չ ի մի տաճն համեկղենքն եկեալ բառնայցեն զոսկերս դոցա և բաշխել սփռեսցեն ընդ աշխարհս ամ. յոր մարդիկ ևս առաճել յոր դործեալ՝ մոլորեցին զինի նազովրայ ւոց աղանդին։

Իսկ Խուժինն՝ (զոր յառաջագոյն ասացաք,) զինու հանդերձ ձնայր անդէն ընդ պահապանօն իւրև զմի 'ի նոցանէ։ Այր լի իմաստութը և կատարեալ յամ այլն դիտութեն. սպասէր և դէտակն ունէր եթէ որո՞վ օրինակաւ հնարս գտցէ զոսկերս նոցին գողանալ 'ի նոցանէ։

Իբրև աճուրք երեք անցանէին 'ի վերայ, արհաւիրք մեծ անկանէին 'ի վերայ ամենեցուն. իբրև թմբրեալք և կիսամեռք անյարիրք անկեալ դնէին զերկս աճուրան։ Իսկ 'ի չորրորդումն աճուր՝ երկուք

կուք 'ի պահապանացն չարաչար Ակեցան 'ի դիէն: Պարձեալ հասարակ գիշերաւ չափ՝ ձայնք ահեղք՝ հնչիւնք և թնդիւնք և ոտնաձայնք. 'Ի ներքուստ իբրև զդղրդումն գետնաշարժի՝ երկիրն դողայր 'ի ներքոյ նոցա: Եւ շողիւքն սուսերաց՝ փայլատակունս արձակէին շուրջ զնոքօք: Եւ զամենեսեան զդիակունս՝ կանգնեալ տեսանէին, և զնոյն բանս ասէին, ահագինս բարբառէին 'ի լսելիս նոցա: Մինչև խուձապել նոցա ընդ միմեանս, դեռևս զիրեարս սատակէին: Եւ այսպէս տագնապեալք և ցնորեալք, մինչև այր զընկերի փախուստ չգիտէր իւր որ երթայր: Եւ եկեալ պատմէին Մեծաւ զարմացմամբ զա̄մ անցս չարչարանացն՝ զոր կրեցին նոքա:

'Ի խորհուրդ մտին Նախարարքն Երեքեան, սկսան զարմանալով ցմի միմեանս ասել. զի՞նչ գործեսցուք՝ զի՞նչ արասցուք վասն անքննին

ալան

ազանդոյն քրիստոնէից։ Քանզի
մինչդեռ կենդանի են, զարմանալի
են կեանք իւրեանց. ընչաւետայք
են իբրև զանկարօտս. սրբասէրք
են իբրև զանմարմինս. անաչառք
են իբրև զարդարադատս, աներ-
կիւղ են իբրև զանմահս։ Եւ եթէ
զայն տ̃մ ասեմք իբրև զաղխտաց
իբրև զանդդնելոց, իսկ զայն զի՞
առնիցեմք. զի ցաւոտք տ̃մ 'ի կա-
րաւանի աստ՝ նորօք առողջանան։
Եւ կամ որ մեծս է քան զտ̃մ: ո՞յր
ուրուք դի կանդնեալ երևեցաւ
կենդանեաց. կամ բարբառ բանից
լուաւ ոք 'ի նմանէ. զի սուտ չե՛ն
մեր ապաստանօրքս. մեր մեղէն իսկ
հասեալ է 'ի վերայ ստուգութե
սոցա։ Եւ եթէ կամեցին, էր դոցա
կամաւոր ինչ ազահութե՛ 'ի նեղքս
խառնել, սակաւ մի ակնարկէին
քրիստոնէից 'ի կարաւանիս, զկնե-
խուրջանչիւր մարմնոյ նոցա՝ ոսկի
առնուին։ Պարծեալ և սքբգ որ
'ի

'ի դիմէ չարչարեցին, զի յայլ ժամ ցանոտք չէին մեք գիտեմք, յայտ է թէ այսօր նշան մեծ երևեցաւ։ Եթէ լուռ լինիմք այսպէս, մեզ և անձանց մերոց խիկ կասկած է. և եթէ տանիմք զդոստ առաջի թագաւորին, լսելով նորա 'ի դոյանէ զայդ ամ մեծամեծ սքանչելիս, գուցէ և օրինայս մերոց .քակտումին ինչ հասանիցէ։

Եւ պատասխանի ետ գնդապետն և ասէ ցնոսա. ո՞չ զիս ոստիկան արարին 'ի վերայ ձեր երկոցուն. զի՞ այդչափ նեղեալ տագնապիք յանձինս ձեր. դուք զգործ ձեր կատարեցէք. և զհրաման արքունի 'ի գլուխ տարէք։ Արդ եթէ բանտարայդ յայտնեցին, և հարցափորձ ինչ լինիցին առաջի արքայի, այդ խնդիր՝ մեր մողայց է. դուք անհոգլերուք և մի ինչ ածէք զմտաւ։ Եւ եթէ զարհուրեցայք ինչ յոգիս ձեր, վաղագոյն առաւօտուցն 'ի

դա

դարբինն եկայք. զի վաղիւ անդր մովպետան մովպետ ուստ անդ է, և նոյն հաձեալ հաճանեցուցանէ զմիտս ձեր։

Իսկ խուժիկն իբրև լուաւ զայս նամ, և գիտաց եթէ փոյթ ինչ ոչ է նոցա յայնմհետէ զսուրբ սպանելոյն, փութացաւ փաղփաղակի ծառ տասն այր՝ (զորոց զչափ գիտէր քրիստոնէութեանն.) և հասեալ ՚ի տեղին՝ չէն եղիտ զամենեսեան։ Եւ քանզի կասկած ունէր տակաւին ՚ի նոցունց ՚ի դահճացն, դարձեալ փոխեցին անտի զսուրբսն յայլ տեղիս բացագոյն՝ իբրև երկու հրասահօք՝ Եւ իբրև յանհոգս եղեն, սրբեցին՝ կապեցին զոսկերս երանելեացն, բերին ՚ի բանակն և ունէին ՚ի ծածուկ։ Եւ առ սակաւ սակաւ յայտնեցին. նախ՝ զօրականին հայոց, և ապա բազում քրիստոնէից, որ էին ՚ի կարաւանին։ Եւ զառաջին պտուղ

ընծայիւն՝ մատուցանէին կալեալ Նախարարացն. և անդէն վաղվաղակի արձակեցան նորա 'ի կապանաց իւրեանց. և սպառնալիք մահուանն անցին զնոքօք։ Իսկ հրովարտակք թողութեան առաքեցան յաշխարհն Հայոց։

Այս երանելի Խուժիկն՝ (որ արժանի եղև 'ի ծածուկ սպասաւոր լինել սոցին,) որ ինչ 'ի մահուանէ և այսր ատայան դատակնիք վճիռս այսորիկ, սա երկրորդեաց մեզ զամ կարգաւ։ Իսկ զչարաչար քարշումն, և զհարց և փորձ դատաւորաց, և զիւրաքանչիւր անձանց սոցին պատասխանիս, և զկատարումն մահուան նոցա, և զահագին արհաւիրսն՝ որ 'ի վերայ պահապանացն անկան, և զհեծեծումն քննման նախարարացն երեցունց, և զամփոփումն սուրբ ոսկերացն նոցա՝ ոչ խառն 'ի խուռն 'ի մի վայր ժողովելով, այլ զմի մի 'ի նոցանէ

ուրոյն ուրոյն 'ի վեց տապանակս ժողովեալ էր. և զանուանս իւրաքանչիւր ուսեալ՝ 'ի վերայ տապանակացն նշանակեալ էր: Իսկ զկապանս երկաթիս՝ ընդ իւրաքանչիւր ոսկերս եդեալ էր, քանզի դաշձայն 'ի բաց եդեալ էր. ուր զհանդերձան զիւրաքանչիւր տապանի նշանակեալ էր:

Իսկ կատարեցան սք վեցեքեան՝ սուրբք և ցանկալի մահուամբն իւրեանց. որ օր քսան հինգ էր հրոտից ամսոյ, 'ի մեծ անապատին յապար աշխարհի, 'ի սահմանս նիւշապուհ քաղաքի: Իսկ Քի փառք յաւիտեանս ամէն.

Պատմութիւն վասն խոստովանողաց [illegible] Նորին:

Իսկ՝ աշակերտք երանելեացն 'ի կապանս կային 'ի ներքոյ քաղաքին. եկն դահճապետ մի արքունի,

նի, և եհան զնոսա 'ի քաղաքէ ան
ափ արտաքս։ Եհան 'ի նմին քա-
ղաքէ ասորի քրիստոնեայս որս
հինգ․ քանզի և նոքա 'ի կապանս
էին վասն անուանն Քի։ Եհարց
ցնոս բանիւք, և ոչ հաւանեցան եր
կրպագանել արեգական․ այլ ևս
առաւել 'ի նոյն միտս պնդեցան։
Չարչարեաց զնոս գանիւք․ կուրեաց
զնոցա ունչս և ականջս, և ետ
տանել յասորեստան, զի կացցեն
'ի մշակութեն արքունի։ Եւ նոքա
երթայքն մեծաւ զօրութը․ իւրե-
այն թէ մեծ պարգևս գտեալ 'ի
թագաւորէն։

Որդ՝ եկն դարձեալ նոյն դահ-
ճապետ առ աշակերտս սուրբ սպա
նելոյն․ ընտրեց 'ի նոցանէ երկու՝
որ համեստագոյնքն էին․ առեալ
մեկուսի յայլոցն և ասէ ցնոսա․
զի՞նչ անուանք են ձեր։ Պատաս-
խանի ետ մինն և ասէ․ առ 'ի ծնո
ղաց ինձ Խորեն, և դմա Սերահոմ։
իսկ

իսկ ըստ շնորհատուր կարգին՝ ծառայք Քրիստոսի եմք, և աշակերտք երանելեայն՝ զոր ասացաք։ Նա պատասխանի դահճապետն և ասէ ցնա. իսկ արդ՝ զի՞նչ գործ է ձեր. և կամ բնաւ ո՞յր իսկ ածեալ է զձեզ այսր։ Պատասխանի ետ առ այս սուրբն Աբրահամ և ասէ. զայդ 'ի վարդապետաց մերոց արժան էր ուսանիլ ձեզ. զի ո՛չ դուզնաքեայ ոք էին նոքա։ Այլ ունէին զատոյց ոճածս հայրենիս ըստ արժան բաժակինին. ըստ նմին և սպասաւորս էր՝ որ երբև զմեզ, և էր՝ որ լաւագոյն քան զմեզ. որոց մնուցեալ և ուսուցեալ էր, ընդ նոսա եմք եկեալ։ Քանզի և պատուէր իսկ ունիմք յԱստուածատուր օրինացն մերոց՝ սիրել զնոսա երբև զսուրբ ծնօղս, և սպաս տանել նց երբև հոգևոր տերանց։

Յամեալ դահճապետն և ասէ. իբրև զանխրատ և զաներկիւղ ըն

տոմբակս խօսիս։ Մինչդեռ 'ի խաղաղութեան և յաշխարհի էիք, բարիոք էր. յորժամ' դրուժան եղեն նոքա յիս արքունի և մահապարտ դատան ըստ գործոց իւրեանց, ձեզ չէ՛ր արժան ամենևին մօտ երթալ առ նոսա։ Ո՞չ ուսանէք 'ի մեծ կարաւանիս. յորժամ' որ 'ի սպասաւորայն 'ի դիպահոջ արքունի լինիցի, ուղղ հանդերձ ադամնի և զատեալ և որոշեալ' 'ի բացեայ նաւի միայնիկ, և ամենևին հուպ որք ո՛չ իշխէ երթալ առ նա։ Եւ դու այդպէս իբրև զանյանցի աշակերտ' պարծանօք խօսիս։

Պատասխանի ետ առ այս Խորեն և ասէ. ո՛չ ձեր կարգդ անիրաւէ, և ո՛չ մերս ստութիւ 'Նախարարն յանցաւոր ուստի զպարգևն գտեալ է, այնպէս պարտ էր նմա հպատակ լինել. զի 'ի պատոճոյն ձերոյ և այլ ևս պարգևս մեծամեծս 'ի նմանէ գտանէր։ Արդ'

փո

փոխանակ զի զայն ոչ արար, ձախողակի յետս ընդդէմն պատահեաց նմա։ Եւ մեր վարդապետքն եթէ առ Ա՜ծ յանցուցեալ էին, և կամ առ թագաւորն մեղուցեալ լինէին, նոյն օրինակ և մեք առ նոսա առնէաք. ոչ յաշխարհի մօտ երթայաք, և ոչ 'ի տար աշխարհ այր զհետ նոցա գնայաք։ Արդ՝ քանզի առ երկոքեան կողմանսն՝ արդարութիւն կեցեալ էն, և դուք զուր՝ տարապարտուց սպանէք զնո՜, մեք այժմ ևս առաւել սպասաւորեմք սուրբ ոսկերաց նոցա։

Դարձեալ դահճապետն ասէ. ես յառաջագոյն իսկ ասացի եթէ կարի ստամբակ ոմն ես դու. ահա յայտ եղև աճապլիկ եթէ յա՜մ մք նոսա նոցա խառն էք դուք։ Աբրահամ ասէ. յո՞ր մասս։ Դահճապետն ասէ. առաջին՝ 'ի մահ մողոյն, և ապա՝ յայլսն ա՜մ։ Աբրահամ ասէ. այդ ոչ միայն 'ի մէնջ է, այլ

այլ ըստ կարգի և ձերոց օրինացդ՝ Թագաւորք հրաման տան ձեզ, և դուք 'ի ձեռն ձերոց սպասաւորացդ գործէք։ Պաշտօնական ասէ. 'ի մերձ զծին երդուեալ իմ՝՝ խոստագոյն ես խօսիս քան զվարդապետսն քո, յայտ է թէ և վսեմակարգոյնք ես էք դուք։ Արդ ոչ է հնար ապրել ձեզ 'ի մահուանէ. բայց եթէ երկրպագանէք արեգական, և կատարէք զկամս օրինաց մերոց։ Խորեն ասէ. ցայժմ՝ իբրև զմարդ չարախօսէիր, և արդ իբրև զշուն անպիտան ընդ վայր հաչես։ Եթէ կայր արեգականն ականջ, դու տայիր նմա թշնամանս գնել։ Արդ՝ նա բնութեամբ անզգայ է, և դու չարութեամբ անզգայագոյն ես քան զնա։ Ո՞ւր տեսեր զմեզ պակասագոյն քան զհարսն մեր։ Մի՛ բանիւք ըզփորձ առնուլ կամիր զմեր. այլ՝ հանդէս արա քում չարութեանդ և մերում բարութեանս, և ամենեցուն

գաս

դատանի հայրն քո սատանայ. ոչ մի այն 'ի մէնջ` որ կատարելագոյնք եմք, այլ և որ կարի փոքրիկն թուէցի քեզ, նա դիցէ մէրս սատնիկս յաղի և 'ի մարմին քո.

Ո՜չ այս երբև լուեալ դաւաճանելոյն, սրտմտեալ բարկացաւ 'ի վերայ նորա քարշել չարագոյն քան զառաջինսն: Եւ այնչափ սաստիկ քարշեցին, մինչև կարծիք եղեն եթէ մեռան: Իսկ երբև ժամք երեք 'ի վերայ անցին, դարձեալ խօսել սկսան երկաքեանն և ասեն. փոքր համաբերեմք զանարգանս զայս. և առ ոչ ինչ զցաւս մարմնոյս առ մեծ սէրն Ք.Ի, որոյ կատարեցան հարքն մեր հոգևորք: [illegible]այս մի դլար և դադարեր. այլ զոր ինչ առ նոսայն արարեր, զնոյն և առ մեզ կատարեա: Եթէ չարագոյն թուէին քեզ գործք նոցա, կրկին և զմերս համարեսջիր. զի նոքա բանիւք հրամայէին և մեք գործովք զարգինեան

կա

կատարէք ։

Յայնժամ և ես առաւել զայրանեցայ 'ի վերայ նոցա, և հրամայեաց զմահու գան հարկանել ։ Եւ առ մի մի 'ի նոցանէ վեց վեց այր փոխեցաւ 'ի դահճացն ։ Եւ մինչդեռ կիսամեռք յերկիր անկեալ դնեին, հրամայեաց զերկոցունց ականջսն մօտ կտրել ։ Եւ այնպէս բերեցին՝ որպէս թէ չէցէ լեալ 'ի տեղւոջն ։

Զարթեան որպէս 'ի քնոյ 'ի սաստիկ հարուածոյն. սկսան սպաղատանս մատուցանել և ասեն. աղաչեմք զքեզ քաջ զինուոր Թագաւորիդ. կամ կատարեա զմեզ իբրև զհարսն մեր մահուամբ, և կամ արա զպատուհաս ըստ օրինակի վերջնոցս ։ Զի ահա լսելիք մեր առողջացան զանխատածորութիւնն երկնաւոր, հոտոտելիք մեր դեռևս աստէն 'ի տեղւոջ կանյանցս չարչարանաց. մի՛ կիսապրդեաս

առնել զմեզ յերկնից բարութեան։ Սրբեցեր զմարմինս մեր քարշելով, և զլսելիս մեր կորելով, սրբեա և զհոտոտելիս մեր հոտանելով. քանզի որչափ աղերս առնես ընդ մեզ երկրաւորաւս, գեղեցկագոյնս առնես երկնաւորաւքն։

Նա պատասխանի դահճապետն հեղուք և ասէ. Թէ և այլ յամեմ ես մտն կալով առ ձեզ, կարծեմ թէ և աշակերտեք զիս ի ձեր յամառութիւնդ։ Զի ահա՛ արդ և զխորհուրդս արքունի ի վեր հանեմ ձեզ. ցայդ վայր եղև հրամանն պատուհասից ձերոյ. և ի վերայ դորին պատուհասի՝ երթալ ձեզ յապրեստան, և լինել ձեզ մշակ յարքունիս. զի որ ի ձեզ հայեսցին, մի ի դմին յամառութեն այլք դեսցին ընդդէմ հրամանաց թագաւորին։ Ասեն ցնա երանելիքն. դու զմեր երկիրս կիսագործ թողեր, մեք յարքունի երկիրն՝ կէս մարմ

մարմնով մերով ոչ վաստակելովք. Զայս երբեւ լուեալ դահճապետն, աղաչեաց զզինուորսն որ տանէին զնոսա եւ ասէ. միայն աստի դուք ելէք գնայցէք, եւ հասեալ յասորեստան՝ ուր կամ իւրեանց է, եւ շրջեսցին.

Այս են խոստովանողք հայոց կատարեալք, որ զնեղութիւնն եւ զչարչարանսն խնդութեամբ ընկալան յանձինս իւրեանց. Եւ վասն զի վրիպեցին 'ի սուրբ մահուանէն, սգով եւ տրտմութեամբ երթային զերկայնութիւն ժամանակին. Ոչ ծանր թուէին նոցա կապանք ձեռացն եւ ոտիցն իբրեւ զայն, եթէ ընդէ՞ր չեղաք արժանի հաւասարել ընդ քաջ նահատակսն.

Եւ իբրեւ տարան հասուցին զնոս յերկիրն բաբելացւոց 'ի գաւառ մի՝ զոր Շահուղն անուանեն, թէ պէտ եւ էին յարքունի պատուհասի, սակայն յայտնի եւ գաղտ՝ մեծապէս

ըն

ընկալեալ եղեն 'ի բնակչաց աշ-
խարհին ։ Սակայն երանելիքն և
յայնմ յոյժ տրտում էին լերև-
այն, եթէ սակաւ վաստակեցաք, և
մեծապէս հանգչիմք․ և հանապազ
'ի նմին զղջման կային ։

Իսկ անդէն թևակոխէին տեսա-
նել զսուրբ կապանս նախարարացն,
և լինել սպասաւոր պիտոյից նոցա.
Խմացուցին զայս մեծամեծաց և
փոքունց՝ ազդ առնել 'ի վերայ ամ
երկրին, զի հանձն թուեսցի ամե-
նեցուն՝ 'ի ձեռն մարմնաւոր պի-
տոյիցն կցորդ լինել սուրբ կապե-
լոցն 'ի հեռաւոր օտարութենն. Իսկ
այնպէս՝ ամ յամէ ժողովէին ըստ
իւրաքանչիւր կարի մարդկանն, ոմն
սակաւ և ոմն շատ․ ուր զինչ և 'ի
ձեռս պատրաստ լինէր, եթէ դը-
րամոց և եթէ դաշնականաց, ժողո-
վէին՝ կազմէին՝ տային յերանելեացն՝
տանել նոցա. Իսկ այսպէս յարա-
նեկութեանն կային, մինչև տասն
ամն

ամ՟ն լցած սպասաւորութեանն ։

Ո՛չ վասն զի յոյժ խստագոյնս պահէին 'ի ջերմոջ աշխարհին, և անդադար էին 'ի ձանձրապարհորդութե՟ն ընդ նոյն շաւուղ, ընդ մեշոն և ընդ քաշխար և ընդ ա՟մ՝ տարեստան և խուժադուռն, սաստիկ տապով հարեալ 'ի խորշակէ՝ մեռանէր այն Խորեն․ և աճանդեալ լինէր 'ի բնակչաց աշխարհին ընդ նըմկայն։

Իսկ՝ երանելին Աբրահամ կայր 'ի նմին առաքինութե՟ անդադար․ և զա՟մ տուրս հաճառացելոյն՝ շըրջէր ժողովէր և տանէր 'ի մեծ հեռաստանն, և ինքնին մատակարէր ըստ իւրաքանչիւր կարօտութե՟ն։ Ո՛չ այնպէս՝ յերկարեցաւ մինչև 'ի տասն երկու ա՟մ պատժաւորացն, մինչև ազաչել զնա միաբան ամենեցուն, զի հաճանեսցի երթալ յաշխարհն հայոց․ զի 'ի մասնելընի առ նո, 'ի նմա տեսցեն և զու-

կա

իսպանեան չարչարանաց։ Ո՜ յորժամ մարտիրոսք և խոստովանողք և կապեալք՝ նովաւ տեսանին, նովաւ օրհնի աշխարհն ամ՟։ Նովաւ օրհնին տղայք նորա յաճումն։ Նովաւ ըզգաստանան երիտասարդք նց՟ ՚ի սրբութիւն։ Նովաւ համեստանան ծերք նց՟ յիմաստութիւն։ Նովաւ ուսանին իշխանք նց՟ զմարդասիրութիւն։ Նովաւ գութ անկանի յԼ. Ժ ՚ի սիրտ թագաւորին՝ ջնջել և խաղաղութիւն տանել բոլոր աշխարհին։ Նովաւ Եկեղեցիքն պարծին իբրև կատարեալ և քաջ զինուորաւ։ Նովաւ վկայարանքն զարդարին. նովաւ և վկայքն ընծայեալ բերկրին։ Նովաւ դաշտ և այգի՝ պայծառացեալ ծաղկալից լինին. ոչ յանձրևաբեր ամպոց, այլ ՚ի սուրբ և յարիւնաբուղխ վտակաց. ցանեալք և ցրուեալք սպիտակութ՟ի սուրբ ոսկերացն։ Յորժամ կոխեսցեն ամենավաստակաւք

խոս

խոստովանողին զայնատարած անեղիս պատերազմին, (Թէպէտ և երկիր ըստ բնութեան) յորժամ կենդանի մարտիրոսս ընդ նմա շրջիցի, կենդանի առ կենդանիս երթեալ, ամ աշխարհին կրկին լինի ուրախութիւն: Գիտեմք (ասեն) յորժամ տեսցեն զամ միայնակեացք աշխարհին Հայոց, սովաւ յիշեսցեն զՀոգևոր զունդն պատերազմողաց, որ փոխանակ մեր (ասեն) ետուն զանձինս 'ի մահ, և հեղին զարիւնս իւրեանց 'ի հաշտութիւն՝ պատարագ Ն.Ծ. Սովաւ յիշեն զսուրբ քահանայսն՝ որ խողխողեցան յօտարութեան, և ցածուցին զարտմտութիւն բարկութեան Թագաւորին: Սովաւ Թերևս և զմեր կապանս յիշեսցեն, և աղօթս առնելով խնդրեսցեն յՆ.Ծ. զի գերեդարձ լիցի մեզ անդրէն 'ի հայրենի երկիրն: Քանզի յոյժ անձկացեալեմք. ոչ միայն ըստ մարմնոյ կարօտու

տութ՟ն, այլ՝ առաւել տեսանել զսուրբ եկեղեցին մը և զորբանէր պաշտօնեայն մը, զոր ՚ի նմա կարգեալ հաստատեցուք։ Ո՜վ եթէ մերովս յաջողեսցէ մեզ Տ՜ր երթալ և լնուլ զկարօտութիւն մացելոյն։ Գիտեմք զի և մեզ բանայ Տ՜ր զդուռն ողորմութ՟ն իւրոյ ընդնոյն ճանապարհ երթալ, ընդ որ ոտք սոյս կարապետեն։ Ո՛ այս խորհուրդ խորհելով ածաշնորհ նախարարացն, մեծաւ թախանձանօք ածին զխոստովանօղն ՚ի հաւանութիւն։

Ո՜չ վասն զի ո՛չ էր սովորութիւն երբէք սոյս՝ բարւոյն ընդդէմ դառնալ, ըստ առաջին սովորութ՟նն և յայսմ՝ վայրի փութացած վաղվաղակի կատարել զհրամանն զմիաբան հաւատացելոյն յածային առաքինութ՟ն. եկն եմուտ յաշխարհն հայոց մեծաց։

Փութացան և եկին ընդ առաջ

նոր վաղվաղակի որք և կանայք մեծա
մեծք և ճա՛մ վճռունք և բազմունք
աղաղայ և շինականաց. անկանէին
առաջի, փարէին զոտիւք և ձեռօք
նորին և ասէին. օրհնեալ է Տէր ԱԾ
'ի բարձունս՝ որ առաքեաց մեզ
զհրեշտակ յերկնից՝ բերել մեզ
զաւետիս յարութեան, զի լինիցիմք
ժառանգ արքայութեան։ Ո՛վ աչա
'ի քեզ կերպարանեալ տեսանեմք
զամենեսեան զհրաժարեալսն՝ յու
սով յարութեան. և զկապեալսն՝ ակն
կալութեան արձակելով։ 'Ի քեզ
տեսանեմք և զաշխարհին շինութեան
խաղաղութեան։ Քեւ եկեղեցիք մեր
յնծացեալ բերկրեսցին։ Քեւ և
սուրբ վկայարանքն մեր՝ անդադար
լիցին մեզ 'ի բարեխօսութիւն առ
ԱԾ։ Օրհնեա՛ զմեզ սուրբ հայր
մեր։ դու ես բերան հանգուցելոյն,
խօսեաց ընդ մեզ յայտնի օրհնու
թեամբ, զի յոգնի մեր լուիցուք 'ի ծա
ծուկ զօրհնութիւնս նորին։ Հոր-

ղեցեր ճանապարհ այնոցիկ՝ որ անձկացեալ էին գալ յերկիր իւր-եանց. խնդրեմ յՈ.Տ զի ստէպ ե-կեսցեն զհետ սուրբ կարապետիդ: Ով որպէս հորդեցեր զորդելեալ ճանապարհ երկրի, բայց և յերկինս զդուռն աղօթից մերոց. զի և մեր մեղաւորացս միայն պաղատանք առաջի Ո.Տ 'ի բարեխօսութիւն նոցունց կարելոց: Ով մինչդեռ եմք յեղանելի մարմնիս՝ ող տեսաք զքո զերանելի սրբութիւնդ, տես-ցուք և զսիրելի անձկալին մեր՝ որ 'ի բազում ժամանակաց հարեալ և պաշարեալ եմք յոգի և 'ի մար-մնոս մեր: Արդ՝ հաւատամք յան-սուտ յոյսն մեր, զի որպէս լցեալ կատարեցաւ 'ի քեզ մեծ տեսիլն 'ի սուրբ սէր քո, այսպէս և ընդ-մօտս ունիմք տեսանել զճշմարիտ վկայն ՔԻ՝ որ հանապազ խանդա-ղակաթ եմք 'ի տեսիլն երկնաւոր գեղոյ նոցա:

Բայց

Բայց երանելի խոստովանողն թէպէտ և այսպէս սիրով ընկալեալ եղև յամ աշխարհէն, ոչ ինչ կամեցաւ ամենևին մերձենալ առ որ ըստ մարմնոյ կարօտուն: Այլ խնդրեաց իւր տեղի մի զատ յամ բազմամբոխ ժողովրդոց. և առաքինի եղբարբք երիւք՝ կատարեաց զկեանս իւր մեծաւ ճգնութ: Զոր եթէ կամեսցի ոք ՚ի գիր արկանել, գժուարաւ կարասցէ ասել զկարգ սուրբ առաքինութն նր: Զի եթէ զտքնութիւնն ասիցես, իբրև զկանթեղ անշէջ կայր զամ գիշերս: Իսկ եթէ զսակաւապիտութի կերակրոցն, համարեա՛յ եթէ զանկերակուր հրեշտակաց բերէր զնմանութիւն: Իսկ եթէ զհեզութիւն ցածութեն, ո՛չ զոք ՚ի կենդանեաց կարիցես գտանել նման նմա: Իսկ եթէ զանընչասիրութիւնն կամիցիս ասել, զոր օրինակ՝ չգոյր մեռեալն ՚ի կարասւոյ, նոյն օրինակ

նակ ճշմարտութիւ և առ երանելին
իմաստից։ Անդադական ձայնիւ հա
նապազորդեալ էր 'ի պաշտաման.
և անհատ աղօթիւք միշտ ընդ Այ
'ի բարձունս խօսէր։ Ոչ եղև նա
անհամերոյ, և խռթան ընդոստու-
ցէչ՝ ամ՝ հեղգացելոյ։ Պսրովեցաւ
նոյնաւ ագահութիւն. և կարէ յայ-
ամաչեաց նոյնաւ շռայլութիւն
որկորամոլութեն ։ Առողջութիւն
եղև նա յաշխարհիս հայոց. և բա
զում վիրաւորք 'ի ծածուկ նոյնաւ
գտին զառողջութիւն ։ Եղև նա
վարդապետ կատարեալ՝ վարդապե-
տաց իւրոց. և սուրբ հայր խրա-
տու՝ հօրանց իւրոց։ 'Ի լուր համ՝
բաւոյ նր՝ իմաստնոյան ուղէտք. և
'ի տեսիլ մերձաւորութեան նորա՝
զուարթացան լինէք։ Նահեալ էր
ըստ մարմնոյ 'ի նեղ խցկանն, և ահ
սրբութն նր՝ անկեալ էր զհեռա-
ւորօք և զմերձաւորօք։ Զարհու-
րեցան դևք և փախեան 'ի նմանէ։
Իջին

Իսկին հրեշտակք և բանականք էին զնովաւ։ Յոյնք երանի ետուն մի նի աշխարհիս հայոց. և բազում բարբարոսք փութացան տեսանել զնա մարմնով։ Սիրելի եղև նա՝ սէ րեալ Ս.Գ. և զբազումն ՚ի թշնա մեաց ճշմարտութեն՝ էած ՚ի հաւա նութիւն սուրբ սիրոյ։ Սկիզբն ա֊ ռար առաքինութեն՝ անդստին ՚ի տղայ տիոց իւրոց. և նովին առա֊ քինութը կատարեցաւ՝ ՚ի վախ֊ ճան կենաց իւրոց։ Որպէս ոչ խառ֊ նեցաւ ՚ի կարգ սուրբ ամուսնութե աշխարհիս, այսպէս չեմուտ ընդ մարմնաւոր ախտիւք ում՝ ապակա նացու իրաց աշխարհիս։ Եւ եթէ՝ պարտ է պարզաբար ասել. որպէս փոխանակեաց զպէտս մարմնոյ՝ ընդ պիտանացու հոգևոր իրաց, այսպս փոխադրեալ եղև յերկրէ յերկինս առ Քն Սծ. և նմա փառք յաւի֊ տեանս ամէն։

Ս.Ն.

(Ընծայեալ նախարարացն, որք ժամօք եւ յօժարութեամբ վասն սիրոյն ՔԻ՛ ետուն զանձինս եւ [illegible] 'ի խաղաղն աշխարհէ։)

Յորում նոյն պատմէ, թէ ծանուցեալ ար քային պարսից հաւատացելոցն, մինչ զա մէր [illegible], հաստանէ 'ի [illegible]. Եւ [illegible] ընծայեալ 'ի խաղաղութ։

Յազգէն սիւնեաց՝ երկու եղբարք, Բաբգէն եւ Բակուր։ յազգէն արծրունեաց՝ Մերշապուհ եւ Շավասպ եւ Շնդլին եւ Մեհրուժան եւ Պարգեւ եւ Տաճատ։ յազգէն մամիկոնէից՝ Համազասպեան եւ Համազասպ եւ Արտաւազդ եւ Մուշեղ։ յազգէն կամսարականացն՝ Արշաւիր, Վարազ եւ Թաթ, Ներսեհ եւ Արշամ։ յազգէն ամատունեաց՝ Վահան եւ Աճանձար եւ Սրանակ։ յազգէն գնունեաց՝ Ատոմ։ յազգէն դիմաքսենեից՝ Թաթուլ եւ Սատոյ՝ երկու եւս այլովք ընկերովք։ յազ

յազգէն Անձաւացեաց՝ Շմաւօն և զուարէն և Ռուաճան։ յազգէն Առաւեղենից՝ Փապակ և Սարաղ-դէն և Պաղ․ յԱրծրունեաց տոհմէն՝ Շպրամ․ ’ի տոհմէն Մանդակունեաց՝ Սահակ և Փառսման․ յազգէն Տաշրունեաց՝ Արէն․ յառախոնեան տանէն՝ Նաբիկ և Յոհան։

Այս ԼՆ արք՝ են որ յաճագ նախարարացն, և են որ ’ի կրսերագունիցն․ Սակայն ամենեքեան ըստ մարմնոյ են նախարարազունք. իսկ՝ ըստ հոգևոր առաքինութեան՝ ամենեքեան երկնային քաղաքացիք․ Նէ բազում և այլ ազատ մարդիկ՝ են որ յարքունի տանէ, և են որ ’ի տանէ նախարարացն, նոյնպէս իսկ նիզակակիցք քաջ նահատակացն․ Նէ ամենեքեան սոքա՝ կամօք մատնեցան ’ի սուրբ կապանս չարչարանացն վասն Քի․

Նոյն մեք այժմ ոչ ընդ այս եմք

զար

զարմացնել միայն, զի կամօք չոգան մտին 'ի փորձութիւն, այլ՝ առաւել ընդ այն եմք սքանչացեալ, զի մար դիկ փափուկ՝ իբրեւ զնոսա ընդար ձակատուն բնակիչք ձիւնեղէն լե րանց, եղեն բնակիչք խորշակաբեր դաշտաց։ Որք զօրէն ազատ երէոց շրջէին 'ի մէջ ծաղկաբեր լերանցն, ընկեցան 'ի բոցակէզ աշխարհն ա րեւելից՝ կապեալ ոտիւք եւ ձեռօք։ Հաց նեղուն, եւ ջուր կարօտանաց։ Խուճապարգել 'ի տունէ, եւ անկեալ 'ի գիշերի։ Նմլերարկուք եւ անման կողմնք՝ դադանաբար գետնախշտիք լինէին նմա ամ՝ եւ մեց ամիս։ Այն պէս մեծամէ խնդուլ՝ տանէին զնե ղութիւնն, զի ամենեւին ոչ ոք տրտունջ հայհոյութեն 'ի բերանոց նոյ լռեամ. այլ յորդառատ գոհացո ղութին, բստ նմանութեն բարեկեցիկ մարդկանց՝ որ են յանդպաշտութեն։

Ի՞՛ մինչդեռ էին յայնպիսի նե ղութեն, կարծիք եղեն 'ի միտս Թա

գաճորին, եթէ առ յոյժ վշտին՝ ձանձրացեալ են դառնութեն կե֊նօքն խորեանց։ Յղեաց առ նոսա զմեծ հայրապետն և ասէ. գոն֊եայ յայսմհետէ զգաստացայք յան֊ձինս ձեր, և մի կայք ՚ի նոյն յամա֊ռութե. Պադէք երկիր արեգական, և արձակէք ՚ի չորաչոր կապանացդ. և ունիք անդրէն զիւրաքանչիւր հայրենի կեանս ձեր։ Նոյն պա֊տասխանի երանելիքն և ասեն. առ փոքր ինչ եկեալ հարցանես զմեզ, եթէ արդարև թագաւորին իսկ յղեալ զքեզ։ Երդուաւ նմա հազա֊րապետն և ասէ. չիք այդր բան ա֊ճելի կամ պակաս՝ որ ոչ ՚ի բերա֊նոյ նորա ելեալ է. Ասեն ցնա անդ֊րէն. որք միանգամ աշակերտեալք են ճշմարտութեն, ոչ երբէք փո֊փոխին ՚ի նմանէ. այլ որ ենն, նոյն կան։ Մի թէ յայնժամ առ չիմա֊նալ ինչ պնդեցաք, այսօր ներդու֊թինս իմաստնացայց ինչ զմեզ.

այլ

այլ ո՛չ է այնպէս. այլ՝ զղջումն մտաց մերոց այս է, թէ ընդէ՞ր ը առաջինան չկատարեցաք զկեանս մեր։ Բայց արդ՝ աղաչեմք զքեզ, և քև՝ զթագաւորն ձեր. մի այլ վասն այդպիսի իրաց հարցանէք զմեզ. այլ՝ զինչ եղեալ է 'ի մտի ձերում վասն մեր, կատարեցէք.

Իբրև լուաւ զայս մեծ հազարապետն, յոյժ զուարճացաւ 'ի միտս իւր զմիութիւն հաստատութեան նոցա. Եւ յայնմհետէ սկսաւ արկանել սէր ընդ նոսա իբրև ընդ սիրելիս իւր. Եւ բազում բանիւք ողոքանօք ածէր զթագաւորն 'ի հաճանումն, զի թողութիւն արասցէ նոցա 'ի կապանաց իւրեանց։ Զի թէպէտ և փոխեցաւ նա 'ի գործոյ հազարապետութենէն արքունի, և 'ի բազում իրս գտաւ վնասակար, իւրքնին յանձին իւր կրէր զաւէր աշխարհին հայոց. վասն որոյ և մեծաւ անարգանօք յուղարկեցաւ 'ի տուն իւր.

Սա

Սակայն զկապերլոյն ոչ երբէք չա-
րախոս կամէր լինել մինչև յօր
վախճանի կենաց իւրոց։

Իսկ յերանելեացն բազումք 'ի
Նոյանէ՝ որ մանկագոյնքն էին, ու-
սան զգուշութիւն հայրենի աշխար
հին իւրեանց. և եղև նշոյն հոգև
որ կերակուր, որով զանձինս քա-
ջալերէին և զընկերսն մխիթարէ-
ին։ Եւ այնպէս զմայլեցան 'ի միտս
և յոգիս իւրեանց, զի և որ ծերա-
գոյնքն էին 'ի Նոյանէ, փափկացան
մատաղութեան մանկացան։ Ոչ թէ-
պէտ դպրութն ժամանակն անցել
էին, սակայն բազում՝ սաղմոսս 'ի
բերան առեալ՝ հոգևոր երգակից
լինէին մատաղերամ բազմութեն
մանկտւոյն։ Եւ այնպէս բարձրա-
ցուցանէին զպաշտօն սրբութեան,
մինչև ումանք 'ի դառն դահճացն՝
մեծապէս քաղցրութիւն անկանէր
ընդ լսելիս նց. և որչափ 'ի ձեռս
իւրեանց էր, արտասուօք արքունի
հրա

հրամանին՝ դիւրութիւն առնէին նմա. և սէր խնամոյ ունէին առ ամենեսեան: Նէ թագաւոր անգամ ըղ մարմնաւոր պէտս նմա լնուլին նորա: Մանաւանդ զի նշանք բժշկութեան յԱստուծոյ յաջողեալ լինէր 'ի ձեռս նմա. որպէս զի բազումք 'ի դիւահարաց՝ սրբեցան 'ի նմին քաղաքէ՝ ուր կալեալ կային: Իբրև ոչ գտոյր առ նոսա քահանայ, դիմէին առ նոսա հիւանդք և ախտաժէտք քաղաքին, և ընդունէին 'ի նոցանէ զիւրաքանչիւր ցաւոց զառողջութիւն:

Նաև որ մեծ իշխաննէր աշխարհին, (զորև Հարեւշզամշապուհ անուանեն. և նմա իսկ յանձն էին ամենայն պատժաւորքն.) մեծ անգսդութ սիրոյ էարկ առ ամենեսեան: Ծերս 'ի նոցանէ առ հարս ընդունէր. և զմանկագոյնսն իբրև զսիրելի որդիս գգուէր: Բազում անգամ՝ դրեաց և եցոյց յարքունիս զմիշտ նեղութեան կապելոցն. և

պատն

զառն առն իւրաքանչիւր զբարս ազնուականութեն ցուցանէր նոց առաջի մեծամեծացն։ Տառապէր ջանայր ազգի ազգի հնարիւք, մին չև բազում՝ բարեխօսիւք ածին 'ի հաճան զԹագաւորն։

Հրամայեաց լուծանել զկապանս նոցա. և բառնալ 'ի նոցանէ զսուգ պատուհասին. և տալ նց հանդերձ՝ զօրէն նախարարութե։ Կարգեաց նց ռոճիկ. և զպատրաստութիւն սպառազինութե՝ հրամայեաց յարքունուստ։ Գրեաց և յանձն արար մեծ սպարապետին, զի ընդ զօրս արքունի երթիցեն 'ի գործ պատերազմի։

Իբրև այսպէս կարգեցաւ և կազմեցաւ նոր հրաման Թագաւորին, 'ի բազում՝ տեղիս՝ ուր և հասին, ուռաճելեալ զտան 'ի գործ արուե, մինչև գովուե հրովարտակ վասն նց 'ի դուռն տային։ Որպէս զի քաղցրացաւ խիստ մտաց Թագա-

հօրէն, հրամայեաց զամենեսեան ածել զաւաջեաւ։ Եկին և յանդի ման եղեն Յազկերտի արքայից ար քայի։ Ետես զնա զուարթութբ. խօսեցաւ ընդ նոսա բանիւք խա_ ղաղութե. և խոստացաւ տալ նմ զիւրաքանչիւր իշխանութիւն ըստ հայրենի պատուոյն. և արձակել զնա յաշխարհն օրինօք քրիստոնէ ութե՝ յորոյ վերայ և մեծապէս էին չարչարեալ։

Եւ մինչդեռ անդ էին մեծաւ խըն դութբ շրջէին 'ի կարաւանին ա_ ռաջի Թագաւորին, 'ի նմին ժամա նակի հասանէր վախճան կենաց Թագաւորին՝ յինն և տասն երորդ ամի Թագաւորութեն իւրոյ։ Եւ ընդ հակառակս լեալ՝ երկու որդւք նր 'ի վերայ տէրութեն, կռուէին Սաստկանայր գործ պատերազմին դառնութե զերկուս ամս։

Եւ մինչդեռ նք յայնմ խռովու թե էին, ապստամբեաց և աղուա_

նից

նից արքայ։ Վ՟ զի քեռ որդի էր նց՟. և ըստ կարգի հայրենի հաւատոյն՝ քրիստոնեայ էր յառաջ, և Յազկերտ արքայից արքայ՝ բռնի մոգ արար զնա։ Եւ նորա գտեալ դէպ ժամանակին անձին պարապոյ, հարկեցաւ զանձն 'ի մահ դնել։ Լաւ համարեցաւ մեռանել 'ի պատերազմի, քան ուրացութե՟ ունել զթագաւորութիւնն։ Վ՟ այսր ամի՝ յապաղումն եղև արձակելոյ նց՟ յաշխարհն։

Իսկ կրտսեր որդւոյն յազկերտի զայեակն Ռահամ՝ անուն 'ի մեհրան տոհմէ՝ Թէպէտ և ետես ըզգունդն արեաց ընդ երկուս բաժանեալ, սակայն կիսովն գազանաբար յարձակեցաւ 'ի վերայ երեց որդւոյ Թագաւորին, եհար սատակեաց զգունդն, և ձերբակալ արարեալ զորդի Թագաւորին՝ անդէն 'ի տեղւոջն հրամայէր սպանանել։ Եւ զմնացեալ զօրսն ածէր հաւաներցուցանէր և առնէր միաբանու-

թմ

ամ՝ արեւաց գնդին, և Թագաւորե ցուցանէր զիւր սանն՝ որում անուն էր Պերող։

Ոչ ի Թէպէտ և արեւաց աշխարհին առնէր մեծապէս խաղաղութի, սակայն աղուանից արքայ ոչ կամէր նուաճել անդրէն 'ի ծառայութի։ Նա խրամատեաց զպահակն ձորայ, և անցոյց յայս կոյս զօրսն մազքթաց։ Մխաքանեաց զմեասան Թագաւորս պետանորդեայն, և ընդդէմ եկաց պատերազմաւ արեաց գնդին. և քաղում վնաս արար զօրայն արքունի։ Թէպէտ և երկիցս և երիցս ետուն հրովարտակս աղաչանաց, ոչ լինէր կարայլն ածել զայրն 'ի հնազանութիւն այլ՝ գրով և պատգամօք յանդիմանէր զնա մի զուր աւերածի աշխարհին հայոց Յիշեցուցանէր նմա զմահ նախարարացն և զչարչարանս կալելոցն։ 'Ի վերայ անչափ սիրոյ և մատակոց՝ փոխանակ կեանս առնելոյ՝

զարկ. հատից ասէր։ Մա՛հ լիցի ինձ առէ՛ զի՛նչ չարչարանաց յանձն իմ՝ առնուլ, քան թողուլ զքրիստոնէութի՛ւն։

Իբրև տեսին եթէ ոչ ընդունի և ոչ սիրով կարացին ածել 'ի հաւանութիւն, զանձ սաստիկ ետուն տանել յաշխարհն խաղանդրացւոց։ Այլն զգրունս արանայ, և հանէին զունդ բաղում 'ի հոնաց, և կռուեցան տարի մի ըզ աղուանից աքայի։ Թէպէտ և թօթափեցան և ցրուեցան զօրքն իւր 'ի նմանէ, սակայն զնա ոչ կարացին հնազանդել։ Այլ հարուածք և մեծամեծք հասին 'ի վերայ նր. էր՝ որ կռուէր. և էր՝ որ սպանի չարչարանօք։ Իսկ յայնչափ ժամանակաց ընդերկարել պաշարմանն՝ մեծ կէս աշխարհին աւերեցաւ, այլ ոչ որ 'ի նոցանէ երկմտեալ բաժանեցաւ։

Յղեաց առ նա դարձեալ թագաւորն պարսից. զքերդ իմ՝ առէ

 և

և զքեւ որդիդ 'ի բա՛ց տուր ածել. (զի 'ի քնէ մոգք էին և դու քրիստոնեայ արարեր.) և աշխարհդ քո՛ քե՛զ լիցի: Իսկ' զքանչելի այրն ո՛չ 'ի տէրութեանն մերոյ կամէր, այլ յամենապաշտութեանն: Զմայրն և զկինն եւ տանել, և զաշխարհն բովանդակ 'ի բաց եթող, և ինքն զաճետարանն էառ և յաշխարհէն 'ի բաց կամէր գնալ: Զայս իբրև լուաւ թագաւորն, զեղջ և ապաշաւան կարի անկանէր 'ի մետս նոր. և զամ վասս իրայն' զհարբն իւր տալ արկանէր: Ենստուտ երդումն կնքէր և տայր տանիլ առ նա, եթէ յաշխարհէդ միայն մի՛ գնար' և զինչ ես ասեմ, առնեմ: Խնդրեաց զմանկութեան սեպհականն' զոր հօր իւրոյ շնորհեալ էր նմա 'ի տղայութեանն հազար երդ: Եառ զայն 'ի թագաւորէն, և նստաւ 'ի նմա միայնակեցօք հանդերձ: Եւ այնպէս հնազանդեաց զկինքն յամե-

ոյին

ոյին պաշտամանն, զի և չյիշէր ա-
մենևին թէ և թագաւորեալ էր
յառաջ ։

Յետ այս ամ͂ երկար խռովութեանց՝
որ եղեն մինչև 'ի հինգ երրորդ ամ͂
Պերոզի արքայից արքայի, պատ-
ճառք եղեն չարձակելոյ նախարա-
րացն Հայոց ։ Այլ ռոճկաւ և 'ի
տաճար մտանել յարքունիս՝ մեծա-
պէս առատացոյց քան զամ͂ սովո-
րութիւն ։ Յետ 'ի նմին հինգ երրորդ-
ամին՝ զբաղմանց նց͂ զկեանսն անդ-
րէն շնորհեաց . և այսոյն՝ առ 'ի
յոյժ խոստացաւ յամ͂ վեց երրոր-
դի միանգամայն արձակել զամ͂նե-
սեան կենօք և պատուով ։ և Յիշ͂
անմահ թագաւորին փառք յաւէ-
տեանս . ամէն ։

Բայց 'ի տեղի այլևս՝ պատմել գաւառին:

Վասն տիկնանց բարեպաշտացն վերջն:

Իսկ կանայք երանելեացն և առաքինի կապելոցն և անկելոցն 'ի պատերազմի՝ ընդ ամ աշխարհն Հայոց՝ համօրէն համարել ես ոչ կարեմ. զի բազում այն են՝ զոր ոչ գիտեմ, քան եթէ գիտացեմ: Զի հինգ հարիւրով չափ յականէ յանուանէ ծանուցեմ. ոչ որ միայն ազատազգիքն էին, այլ զբազումս 'ի կրտսերագունից անտի: Նմանեքեան միահամուռ զերկնային նախանձ բերելով, ոչ լինէր ընդ հատերեցան յայնցանէ՝ որ ոչ ծաղկեցին զաշխարհ: Քանզի եթէ ազատազգիքն էին և եթէ մանկագոյնք, զմի առաքինութիւն համատոյ զգեցան:

Ոչ լինէր յիշեցին ամենեքին զանուն փափկութեան մայրենի ապա-

տուն. այլ իբրև մարդիք՝ որ վե-
տամբիւք լեալ լցեն անդստին 'ի
չինական սովորութեանց՝ տանջելով
վարեալ զկեանս աշխարհիս, անդե-
րալոյք և ս քան զնո՝ յանձն առին
զհամբերութիւն վշտաց։ Ոչ միայն
յողբոն մխիթարեալ կային առ ա-
ներևոյթ զօրութիւն յուսոյն յա-
ճախնելից, այլև մարմնոյ նեղութեք՝
առաւել ևս բարձին զբեռն ծան-
րութեն. Ով թէպէտ և ունէին
զիւրաքանչիւր ձեռասուն սպաս-
ճորս, ոչ լինչ երևէր 'ի նն եթէ՝
որ տիկնին իցէ և կամ նաժիշտ։
Մի համդերձ էր հասարակաց. և
միապէս դեռանախշակք երկոքեանն։
Ոչ ումեք ոք անկողնարկ լինէր.
քանզի չձանաչէին իսկ զխտրեցէն
սըն ընտրել 'ի միմեանց վասն միա-
դոյն սեւութե մարմ բարձիւն Ոչ
դոր նոյ խախամբք անուշակարք
առանձինն. և ոչ հացարարք որո-
շեալք 'ի պէտս սպասու ըստ պաշ-
տոյ

տայ կարգի։ Ուր հասարակաց էր
շաբաթամուտն ըստ կարգի միայ-
նակեցաց՝ որ յանճղտս բնակեալ են։

Ոչ որ ունէր ջուր 'ի ձեռս ար-
կանէր. և ոչ կրտսերք՝ առագայ
դաստառակս մատուցանէին։ Չան
կաւ օշնան 'ի ձեռս փափկասուն
կանանց. և ոչ մատուցան եւղ 'ի
գոճարթութիւն խրախութեն։ Չե
դան առաջի սուրբ սկտեղք. և ոչ
մնկան բաժակակալք յուրախութի։
Չեկայ ուրուք նոճիրակ՝ նմա առ.
դուրս. և ոչ կոչեցան պատուա-
կանք յարանց՝ 'ի տաճարս նոցա։
Չյիշեցան նմա եթէ գուցէ որք ա-
մենեքին 'ի բնականութեանց գայեկայ,
և կամ՝ բնաւ՝ 'ի սիրելի հարազատաց։

Փոշոտեցան և ծխոտեցան սրա-
հակք և սրսկապանք նորեկ հար-
սանց. և սարդխտայնք ձգեցան 'ի
սենեակս առագաստաց նմա։ Կործա-
նեցան բարձրագահք տաճարաց
նմա. և խանդարեցան սպասք երա-
խա

խռնաց նմա։ Անկան կործանեցան ապարանք նմա. և տապալեալ աւերեցան ամուրք ապաստանի նոցա։ Չորացան ապաղեցին բուրաստանք ծաղկոցաց նմա և դաշտախիլ եղեն որթք գինէայգեաց նմա։ Աչք իւրեանց տեսին զյափշտակութիւն արարոց իւրեանց. և ականջօք իւրեանց լուան զվիշտս չարչարանաց սիրելեաց իւրեանց։ Աւա՜ն գանձք իւրեանց յուրբունիս. և ո՛չ մնացին ամենեւին զորդք երեսաց իւրեանց։

Տեսինք փափկասունք հայոց աշխարհին՝ որ դրդեալք և գգուեալք էին յիւրաքանչիւր պատեռունս և'ի դահաճորակս, հանապազ բոկ և հետի երթային 'ի տուն աղօթից անձանձրոյթ խնդրել ուխտիւք, զի համբերել կարասցեն մեծի նեղութեան։ Որ 'ի մանկութենէ իւրեանց սնեալ էին նեղուլք զոռարակայ և ամձուլքե-
րէ

րեոց, խոստացուս կենօք լիրև ըզ-
վայրենիս ընդունէին զկերակուրս
մեծաւ խնդութեամբ. և ոչ յիշէին
ամենևին զառաւօրական փափկութիւն:
Սևացեալ ներկան մորթք մարմնոց
նոցա. մի զի ցերեկ արևակէզք էին,
և զամ՝ գիշերան գետնաբնակք: Սաղ-
մոսք էին մշտնջենաւորք մրմունջ
'ի բերանս նոցա. և մխիթարութիւնք
կատարեալ ընթերցուածք մարգա-
րէիցն: Սխրանեցին երկու եր-
կու լիրև ամուք հաւանք և հաւա-
սարք՝ ուղիղ տանելով զակօսն
յարքայութիւնն, զի առանց մեր-
ձելոյ հասցեն 'ի նաւահանգիստն
խաղաղութեան:

Մոռացան զկանացի ակարութիւն.
և եղեն արուք առաքինիք 'ի հո-
գևոր պատերազմին: Մարտ եդեալ
կռուեցան ընդ մեղսն կարևորս.
հատին կարեցին և ընկեցին զմե-
հարեր արմատս նոր: Միամտութեամբ
յաղթեցին խորամանկութեան. և

որ

սուրբ սիրով լուծայցին զկապուտակ ներկուածս նախանձուն․ Հատին զարմատս ապահովութե․ և չորացան պտուղք մահաբեր ոստոց նցա։ Խոնարհութբ կափեցին զամբարտաւանութիւն․ և նովին խոնարհութբ հասին երկնաւոր բարձրութե։ Աղօթիւք բացին զփակեալ դրունս երկնից․ և սուրբ խնդրուածովք իջուցին զհրեշտակս ՚ի փրկութի Յուսով աւետիս ՚ի հեռաստանէ, և փութեցուցին զՔս ՚ի բարձունս։

Այլք՝ որ ՚ի նոսա էին, եղեն մերսային հարսունք առաքինութե, և բարձին յանձանց զնախատինս ապիկարութեն։ Իսկ կանայք կապելոյն՝ կամօք կապեցին զմարմնաւոր ցանկութիւնս, և եղեն կցորդ չարչարանաց ոք կապելոցն։ ՚Ի կեանս իւրեանց նմանեցան քաջ նահատակացն մահուամբ։ Եւ ՚ի հեռաստանէ եղեն վարդապետք մխիթարիչք բանադրեցելոցն։ Սասամբք

իւր

լուսեանց մատակեցին և կերակ-
րեցան. և զկուրգեալ ուռճիկ նոցա
յարքունուստ՝ ամ՚ յամէ թոշակ
առնէին և տային տանել նմ. Նա
րբուն ձիպռաց նմանեցին, որ եր-
գոյն քաղցրութբ՝ առանց կերակ-
րանոց կեան և կենդանի են միայն
զոդն ծծելով, զանմարմնոյն բե-
րեն նմանութիւն.

Բազում ձմերաց հալեցան առա-
նամնէք, եհաս գարուն և եկին
նորեկ ծիծառունք, տեսին և խըռն
դային կենդանաւոր մարդիկ, և
նք ոչ երբէք կարացին տեսանել
զանձկալին լուսեանց. Շողիկք
գարնանայինք յիշատակեցին զպա-
կասէր ամուսնին նմ, և աչք լու-
եանց կարօտացան տեսանել զցան
կալն դեղ երեսաց նմ. Սպառացան
բարակք որսականք, և լռեալ կու-
րացան արշաւանք որսորդաց. Նա
դրօք յիշատակեցան նոքա, և ոչ մի
տօնք տարեկանաց ածին զնն 'ի հե-

ռաս

ռաստանէ. ՚Ի ճաշատեղս նոյա հայեցան և արտասուեցին. և յա՛մ յատեանս յիշեյին զանուանս նոցա. Բազում արձան կանգնեալ էին յանուն նոցա. և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ՚ի նոսա.

Ո՜հ իբրև այնպէս յամենայն կողմանց ալէկոծ լինէին միտք նց, ոչ ինչ կասեալ թուլացան յերկնաւոր առաքինութենէն: Արտաք նոյն երև էին իբրև պրէք սպառօրք և չարչարեալք, և յոգիս իւրեանց զարդարեալք ի մխիթարեալք երկնաւոր սիրովն. Ո՛չ ևս ստորեցին հարցանել զեկեալ ոք ՚ի հեռաստանէ, եթէ ե՞րբ լինիցի մեզ տեսանել զխրեղեան մեր. Այլ՝ այն էին խղճք աղօթից նոցա առ Ած, եթէ որպէս սկսան քաջութեամբ, ՚ի նմին կատարեսցեն լի երկնաւոր սիրովն.

Ո՜հ մեք և նոքա առհասարակ ժառանգեսցուք զքաղաքամայրն

լա

բարեաց· և փառս հանցուք Հօր
և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ
և յաւէտ միշտ և յաւիտեանս յա
ւիտենից· Ամէն։



[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

Համառօտ Ցանկ ԱԷ Գրքոյս Գլխոց՝
համառօտածովքն հանդերձ։

## Գլուխ. Ա։

Յսկզբան առաջնում գլխոյ ցու-
ցանէ, թէ որպէս նշանակելոց է
զպատմութիւնս. և թէ զինչ շա-
հելոց են ընթերցօղքն դոա։ 13

Թէ երբ սկսաւ տիրել հայոց՝
արքայն շապուհ, և յարձակիլ 'ի
վերայ աշխարհային հայոց և յու-
նաց։ 17

Թէ որպիսի կեղծաւորական
հրովարտակով ժողովեաց արքայն
զհաւատացեալս յանդիման իւր.
և զիարդ ընկալաւ զմահ սուրբն
Գարեգին. 24

## Գլուխ. Բ։

(* Երկրորդ՝ զկրայն պատահու-
մին

մին յիշխանէն արեւելից։)

Թէ մինչ զգաց արքայն զյայտնիլն ախտին իւրոյ, պատուէր տայր հաւատացելոցն երկրպագանել արեգական, եւ ունել զաւանդն մոգութեան։ 32

Թէ զկնի մոգուցն խրատուք բարկացեալ Թագաւորն զոմանս ՚ի հաւատացելոցն տանջէ, եւ զոմանս շողոքորթէ։ 40

Թէ որպիսի հարկապահանջութիւն աշխարհագիր արար Թագաւորն ընդ ամ՟ երկիրն Հայոց։ 47

Թէ որպիսի նամակ յղեալ ընդ երկիրն Հայոց հարկէ զնոսա ընկենուլ զաւանդն մազդեզանց։ 50

Թէ ով էք եւ ում եւ որպիսի պատասխանական նամակաւ արհամարհեալ զհեթանոսութիւն նց՟ կշտամբեցին զնոսա։ 55

Թէ ՚ի հասանել պատասխանականն նամակին հաւատացելոց, գըրգռեալ Թագաւորն ՚ի մոգպետացն

ապա

սպառնալեօք կոչեաց զնոսա յերկր
պագութիւն արեգականն։ 80

Թէ զծրպխոն բանս 'ի մէջ բե
րեալ հաւատացելոցն՝ յարգելուն
չարին կամաց, չզանգիտելով ընդա
զնմանէ։ 86

Թէ մինչ զգայլին զներքին խոր
հուրդս չարին, յուսալով յամ որ
զծածուկս գիտէ, առ լռութեն
վախճան՝ որպէս Թէ կատարին ո-
մանք զկամս Նորին յերևոյթս։
Ուստի պարտեալ չարին հեղղը
առ այլ նոցա զպարգևս, և հրամա
տայր մոլուց՝ շրջել զՔրիստոնէ
ութին յաղանդն իւրեանց։ 94

Գլուխ. Գ.

(※ Երրորդ՝ վասն միաբանութեն
տուրք ուխտին Եկեղեցւոյ։)

Թէ հաւատացեալքն այլք՝ 'ի լսել
զչար յանձնառութին ամենց քրիս
տոնէից՝ եկեալ յանդիմանեցին
զնո

զնոսա զանազան բանիւք։ 103

Թէ ազդմամբ զպուժէն դեսպանին հաւատացելոց՝ ժողովեալք գունդն հայոց՝ ՚ի ձեռն միաբանութե և աղօթից յաղթեցին չարաց։ 109

Թէ տագնապեալ մողովեան ՚ի զինուորացն ՆՐՆ առ ՚ի բաց թողուլ զմէձ՞ն ընդ քրիստոնեայս՝ հայթայթէ զբանս առ մարզպանն. որ ոչ անսացեալ նմա՝ յամառել ՚ի նոյն։ 113

Թէ մինչ սկսան սերմանել ըղ չարութիւնս յեկեղեցիս, հաւատացեալքն քաջալերեալք՝ միաբանութե և աղօթիւք յաղթեցին չարացն, առնլով զաւարս ՚ի տալաս ուր Եկեղեցւոյն։ 123

Թէ վերստին ՚ի տոխակել չարացըն՝ ազդ արարին հաւատացեալքն առ կայսրն Թէոդոս զի արասցէ ձեռնտուութիւն. յորոյ յանձնելն հասեալ ՚ի կենէս՝ Թագաւորէ անօրէնն Մարկիանոս։ Իսկ նոքա ու-

նելով միայն զաղօթսն նպաստ, և ս
յաղթօղք գտան։ 68. 70

Թէ լուեալ հայոց զեղեռնուէն
վասակայ, առնեն 'ի վերայ նր բա-
գում հարուածս. և առաքեն զոմն
'ի կայսերայն առ արքայն՝ 'ի նահան
ջումն յանիրաւութենէն։ 77

Թէ կորացեալ ողբայն չար 'ի
վերայ հասելոյն վշտաց, պատրուա
կի գոլ գզջացեալ զի այնու որսայ
ցէ զնա 'ի ձեռն ախորժմանն. զորոց
'ի գխելն զմորձն յինքենէ՝ դար-
ձեալ կատաղի։ 81

Գլուխ. Գ։

(✻ Զորրորդ՝ վասն երկպառակու-
թն իշխանին սիւնեաց և ընկերաց
նորա։) 88

Գլուխ. Ե։

(✻ Հինգերորդ՝ յարձակումն յա
րև ելից։)

Թէ զօրսն գնաեղեալ կորմլին

Վարդան, համոզէ զնոսա առ յու-
սոյն վախճանն։ 97

Թէ յաստապատակել չարայն զօ-
րաց՝ ինքեանք պարտեցան։ Իսկ
երէց Ղեւոնդ 'ի հանդէս հայոց՝ զա-
նազան օրինակս և վայելչաւեղ քա-
ջալերս 'ի սր. գրոց ներ ածէ 'ի կա-
տարած գործոյն հաճատոյ։ 104։

## Գլուխ. Թ։

(☩ Վեց երորդ՝ կրկին անգամ
ընդդէմ կալ հայոց պատերազմաւ՝
Թագաւորին պարսից։)
Թէ ոյք և որքան անկան յեր-
կոցունց կողմանց մարտամուխ ե-
լոլ։ 114. 119

## Գլուխ. Ժ։

(☩ Եօթն երորդ յեղանակ՝ կար-
գադրի դարձեալ առաքինութիւն
հայոց. և չարադոյն ևս երևի անօ-
րէնութիւնն վասակայ չարին։)
Թէ որպիսի աղէտք հասին երե-
րաց

բայց՝ յայլ և այլ տեղիս։ 121

Թէ զիարդ կոչեցան Հաւատա-
ցեալքն յարքայէն 'ի դատ զամբաս
տանելոյն՝ որ 'ի մէջ Ասակաց չա
րին և իւր ներհակին։ 128

Թէ անիծիլ վասակն 'ի դատին
պարտաւոր՝ որպէս պատժեցաւ։ 136

(✠ Սրբոց եօթն եղանակին՝
Ութ երորդ՝ դարձեալ վասն նո-
րին պատերազմին և չարչարանաց
սուրբ քահանայիցն։)

Թէ 'ի վշտագնիլ արքային յանա-
ջող գործոյն՝ հրապուրմամբ սրբա
նեկայն չարին՝ 'ի տանջելն զհաւա
տացեալ զոմանս մոգպետաւ՝ յայտ
նին սքանչանք նմին շահեկանք։ 141

Թէ յընկալնուլ Մոգպետն 'ի
հաւատս՝ խօսին սրբքն զքաջալերա
կանս. զորոց լուեալ Թագաւորին՝
տանջէ զնոսա։ 153

Թէ սրբքն յապառնալեացն իշխա-
նաց

նաց չարին՝ չերկուցեալ, զորպէս բանս յեղծումն աղանդոյ նոցին բարբառին. որոյ և կրտսերն արեամբ վկայէ: 162

Թէ զկարգ թշնամանեցաւ իշխանն անօրէն ՚ի բանից սրբոյն: 170

Թէ որպէս կատարեցան սրբքն ՚ի փառս Ս.Ք. և որպէս նշանք եղեն ՚ի ձեռն նոցա: 179

(✠ Պատմեալ վասն խոստովանող աշակերտաց նոցին:) 185

(✠ Անուանք նախարարացն, որք կամօք և յօժարութեամբ վասն սիրոյն Քի՛ ետուն զանձինս իւրեանց ՚ի կապանս արքունիս:)

Թէ ծանեալ արքայն զքաջութեան հաւատացելոցն՝ մինչ կամէր արձակել զնոսա, հատանի ՚ի կենաց. և թագաւորեալ որդի նր՛ պատուէ զնոսա լուծեալ ՚ի կապանաց: 195

Աստ զկանանց բարեպաշտից վկայէ: 203

Ծանի՛ր, զի [illegible]

էմ՝ էն ՚ի սէրն խոստովանելեաց. և մատ-
ուցեալքն ՚ի մեղս, որք էն ծնեալքելոյ:

## Վերջաբանութիւն վասն սորին Գրքոյս՝ առ Ուսեալս Նորընծայս:

Յայս վերջ քննասիրացդ, զի ՚ի սրբագրութիւն ու դրքոյս՝ թէ պէտ սակս զոմանս ՚ի բառից և ձևոց բանից այլազան ՚ի Հասարակաց՝ մանաւանդ ՚ի Նորոցս օրինակաց, բայց զննեալ մեր գտանին ՚ի յայլոց Նախնեաց նոյնքն և կամ նոցին նմանիքն: Որպիսիք են՝ խօսել, ուսանել, լինել. ՚ի տեղի խօսելոյ՝ խօսիլ, ուսանիլ, լինիլ: Նաև գրեալ կան է անցն անց, բնակեցաւն բնակեաց, արարիքն արարէք, կոչեալն կոչեցեալ, դատեմն դատիմ: Նաև պատահեցին, նմանեցին, դադարեցին՝ ՚ի տեղի ասելոյ՝ պատահեցայ, նմանեցայ, դադարեցայ: Այլ և յամենայն տեղիս գտանին եր կու գոյական անուանք համաձայնք ՚ի

’ի գործնական հոլովման. որոց մինն
է փոխանակ յատկացուցիչ սեռա
կանի միայն։ Ո՛չ ուրեք թէ և
երկու դնին ոչ, բայց է բանն յատ
րասական. յորոց մինն է խրրուլթէ՝
ոչ։ Նաև ամենք անուանք ածա-
կանք՝ որք ասէալք են ’ի բազմաց
լինել ընդ դիմականին համաձայնք,
ապա ուրեք ներհակքն գտանի։
Որդ զի նոքա (այդ ծանուցան) ոչ
թէ յինէն արտադրեցան՝ զորս լի
նէր թէ ըստ նորոյս աւնեյէի, այլ
անաի՝ որ ’ի հեղինակոյն է խակ ար
հեսաի։ Յաղագս որոց կարեոր
վարկայ անձինս նուաստի՝ չայլայել
զանոս Այլն. եթէ ոչ՝ զուգաւա-
զեալս ’ի գրչաց անհրկրայ դաա-
մամբ ըստ խմբս կարի. երկուցել
յՈսաքեքան բանի, թէ որ յաւել-
ցէ, յաւելցին ’ի վերայ նորա հա-
րուածքն եօթնեակ. Այս մինչ ’ի
գիրս ամենս գտանիցի հոլովումն
անուան ուրուք կամ բայի և այլոց

այ

պլապան՝ քան զոր աստ դտան, զոր կարծես դու սխալեալ, դուցէ թէ նա 'ի հնոցն եղեալ. Իսկ թէ յետէն կամ անտեսեալ կամ վրիպեալ, խնդրեմ 'ի ձէնջ առ Տր հայցել ընդ այլոց մեղաց և խմայնոցս զայնց ինձ ներել. զի և դուք հանդիպիցիք թողութեան։

Նաև արդ՝ յայս լիցի և այս, զի հեղինակ սուրբ գրքոյս՝ յակզբան անդ թէպէտ խոստացեալ էր խօսիլ յեօթն եղանակս, և այլ ինչ յաճել 'ի նա, սակայն առ 'ի վանուեն ումանց տաղտկացմանց և 'ի նկրտումին որպէս ախորժմանց՝ զերկարագոյնսն 'ի նոցանէ ըստ զանազանեյն պարբերութեանց խարադրելով սուղեալ համառօտս ցուցի։ Յորս զթիւ չորկեալ և զպատմելն եդէ դիմաճն երրորդաւ. զի մի՛ ըզ ոսկի բանս սէրն՝ յապիկարէս կապարեայ ինչ խառնեալ ձեզ ցուցցի։ Նաև զայսու մի՛ զանց եղիցի, թէ խորա

դիր

գիր հեղինակին հինգ երորդ գըր-
քոյն չէր յօրինակին։ Եւ մեր չե-
ղեւ ձեռնահաս սուրբ գըքոյս
կրկին օրինակաց՝ ունելով զխղճ-
մտաց՝ ոչ սակաւ տարժանեալ եղէ,
թէ գուցէ գլուխն այն՝ պակասեալ
իցէ. թէ և ըստ իմն իմացման խո-
րագիրն այն ինչ սոսկ հատեալ՝
զէթ մեզ երրորդինն է անդր մու-
ծեալ. ուստի ըստ խոստման մերն՝
եդև կարգադրեալ։ Իսկ թէ գու-
ցէ որ սոս ոչ իցէ, ոչ միայն պար-
տիս չդժգոհել այնր մասին աղա-
չեմ և զունեցելոյդ 'ի ձեռին պատ-
րաստ, այլ և մաղթել առ Տէր, զի
և զայն հոգ և որ մատեանս առ 'ի
լուսաւորութեան աչաց մտացն մե-
րոց՝ վերածեսցէ որպէս զարևն 'ի
բարձունս սուրբ Եկեղեցւոյս Հայ-
աստանեայց, որովք զարքայութեն
մարթասցուք նկատել զուղի։ Որ
ում զամենայն հաւատացելս հայց
ժամք սրբուհւոյ Ածածնին և ամե-
նից

նից սրբոյն՝ որոց անուանքն են ՚ի
դպրութեանս, մտանել արժանիս
արասցէ Տր̃ Յս̃ մեր ՚ի փառս ան
ճառ իւրոյ․ որ է օրհնեալ միշտ
ընդ Հօր իւրոյ ծնողին․ և ընդ սբյ
Հոգւոյն ՚ի նոյն հօրէ բղխողին և
նոցուն համագոյակցին․

Ամէն։

Յիշատակարան տպեցուցանողի սորին.

Փառք պատիւ և երկրպագու-
թիւն ամենասուրբ Երրոր-
դութեան և միոյ Աստուածութեան Հօր և
Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ամէն։
Որ և բարեխօսութք. և մաղթանօք
բազմաչարչար հօրն մերոյ սրբոյն
Գրիգորի լուսաւորչին՝ յանդ. ե-
ղեալ աւարտեցաւ տպումն պատ-
մութեան Գրքուկիս այսորիկ. որ
կոչի Եղիշէ պատմագիրք։
Աղաչեմ աստանօր 'ի բարեպաշ-
տօն վայելողացդ միով հայրմերիւ
յիշել 'ի ջերմեռանդ յաղօթս ձեր
զարժանին յիշեցման և զսիրօղն
օգտից և պայծառութեանց ազգիս
մերոյ, զնոր Ջուղայեցի զազնուա
տոհմ Մանուչարեանց բարեպաշ-
տօն և յոգնահանձար այնիւ Պա-
րոն Մարգարն, և զծնօղսն նորին
զԾատուրն և զՄարիամն, որք
արդէն հանգուցեալք են 'ի Տէր.
և

և զեղբարս նորին զմեծարգոյ ազնիւ Պարոն Մխիթարն, զկորովամիտ ազնիւ Պարոն Փիլիպպոսն, և զբարեմիտ ազնիւ Պարոն Յօհաննէսն, և զկողակիցն իւր զբարեպաշտուհի և զշնորհազարդ Կատարինէ տիկինն, նաև զնորաբողբոջ և ծով զօրացեալ զաւակն նորին զանդրանիկ որդէն զբարեմիտ և զերջանկազարդ Պարոն Յօհաննէսն՝ որ և է հարիւրապետ ՚ի մէջ զօրացն Ռուսաց, զՊարոն Փիլիպպոսն, զՊարոն Պետրոսն, զՊարոն Պօղոսն, զՊարոն Անդրէասն, և զամագ դուստր նորին զբարեշնորհ և զքաղցրաբարոյ Կատարինէն, զԵղիսաբեթն, զԱննայն, զՄարիամն, և զՄագդաղենայն, և զ՚ի Տէր հանգուցեալ զաւակն նորին զԱծատուրն, զՄարիամն, և զԱննայն, և զԱլեքսանդրըն, և զԿոստանդինն, և զայլ ամ արեանառու մերձաւորս նորին,

որք

որք են 'ի Հնեմնս, և որք փոխե_
ցեալք են առ ած. վասն զի բարե_
համբաւ և խոհեմագործ ազնուա
կանս ըստ մեծի սիրոյն զոր ունի
առ ազգս իւր, և ըստ գրաւէր բա_
րւոյ իւրոյ՝ որ միշտ բաղձայ լինել_
յազգի իւրում այնք բարիք, որք
գտանին 'ի զանազան ազգս, որոց
բարեացն մի է և այս փոքրիկ գըր
գոյկս՝ արդեամբք և ծախիւք իւ_
րովք հաճեցաւ 'ի լոյս ածել զա
'ի վայելումն հայկազուն բանասէր
ընթերցողաց: Որ և սիրախառ բաղ_
ձանօք հետևի զայլ ևս քան զայս
մեծածախ՝ ազգաօգուտ և հոգե_
շահ գրեանս տպեցուցանել Տնա_
պարդև գոյիւք իւրովք, 'ի յիշա_
տակ ինքեան և իւրայնոյն: Որոյ
զխորհուրդն Տէր կատարեսցէ, և
զփոխարէն բազում բարերարու_
թեանց հազարապատիկ հատուսցէ
աստ և 'ի հանդերձելումն: Բայց
եթէ ուր ուրեք գտանիցի 'ի սմա

սխա

սխալանս լինչ, առ այնս ներել աղաչեմ. քանզի այն ոչ եղեալ 'ի կամաց՝ այլ 'ի վրիպմանէ աչաց. որով հեռև չիք անսխալ՝ բայց միայն Ած. որ է օրհնեալ յաւիտեանս ամէն:

'Ի վախճանի յայտնի լիցի բարեպաշտ ընթերցողացդ: Պատմագիրքս այս, մինչ ոչ էր 'ի կատար հասեալ տպելն. տէր և գործաւոր տպարանիս նախ յիշեալ հեղահօղի Պարոն Գրիգոր Խալդարեանն Ջուղայեցի հանգեաւ առ Քն. յամի տն 1787 'ի յօգոստոսի ութն Սրբ հոգեծին սիրելի որդի և ձեռնասուն աշակերտ, բարեբարեալ պարոն Մկրտումն, քաջաջան աշխատութբ 'ի հոգս տարեալ բառ հեղինակին, առատ հասոյ, որոյ տէր տացէ կորողունի և յիշատակն օրհնութբ եղիցի ամէն:

ՎԵՐՋ.